







ՊԱ-1006 ՊԱ-1004



ՊԱՇՏՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. Է. ԶԱՐԻԱՆՈՒՆԻ



Բ ՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ամենայն Հայոց Կաթողիկոս Ս. Ս. Գևորգ Զ-ի կոնդակը	էջ 3
2. Նոր տարի	5
3. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Ս. Ս. Գևորգ Զ-ի շնորհավորական հե- ռագիրը Տանն Կիլիկիո Շնորհազարդ Կաթողիկոս Ս. Ս. Գարեգին Ա-ի ծննդյան 80-ամյա հոբելյանի առթիվ	8
4. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Ս. Ս. Գևորգ Զ-ի հեռագիրը Տանն Կի- լիկիո Շնորհազարդ Կաթողիկոս Ս. Ս. Գարեգին Ա-ի ծննդյան 80-ամյա հո- բելյանական տոնակատարությունը հետաձգելու մասին	10
5. Բյո՛ւր ողջույն, երկա՛ր կյանք անգուգական եկեղեցական, շեմ հայրենասեր, բազմավաստակ գիտնական արեգարդ Հոբելյարին	11
6. Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ս. Ս. Գարեգին Ա-ի համառոտ կենսագրությունը	14
7. Ս. ՄԱԽԱՍՏԱՆՑ.— Տանն Կիլիկիո Վեհափառ Կաթողիկոս Ս. Ս. Գարեգին Ա-ի ծննդյան 80-ամյա հոբելյանը	19
8. ՀՈՎՍԵԾ ԳՐԻԳՈՐՅԱՆ.— Հիշողություններ Տանն Կիլիկիո Վեհափառ Կաթողիկոս Գարեգին Հովսեփյանի մասին	21
9. Մայր Աթոռ	27
10. ՀԵՄԱՐԱՆՑԻ.— Պողոս առաքյալի բղթերը	29
11. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.— Նկարիչ Վարդգես Սուրենյանցի «Յաղագս վերանորո- գության Տանարին Սբ. էջմիածնայ» գեկուցագիրը	35
12. ՎԱՐԴԳԵՍ ՍՈՒՐԵՆՅԱՆՑ.— Սբ. էջմիածնա վերաշինության խնդիրը	36
13. Վ. ԲԴՈՅԱՆ.— Ստեփան Լիսիցյան	40
14. Գ. ՄՇԱԿՅԱՆ.— Հայ գորաբանական եգիպտոսի մեջ	43
15. Պրոֆ. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ.— Ստեփանոս Դաշտեցու հանելուկները	46
16. Շ. ԷԴ.— Մեսրոպ Թաղիադյան	55
17. Ն. ՇԱՀԱԶԻԶ.— Գևորգ Դոդոխյանը և նրա «Ծիծեռնակ»-ը	59
18. Վ.— Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի ընտրությունները	65
19. Վ. ՄԻՐԱՔՅԱՆ.— Նամակ Երևանից	71
20. Օտարները հայերի և Հայաստանի մասին	74
21. Սովետական Հայաստանում	78
22. Գաղութանայ կյանք	86



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. Գ Է Ո Ր Գ Ա Յ Զ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի

Կ Ո Ն Դ Ա Կ Ը

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ՇՆՈՐՀԱԶԱՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՏԵԱՌՆ ԳԱՐԵԳՆԻ Ա,
ՀԱՐԱՋԱՍԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՍՆԻ ԵՒ ԵՂԲՈՐ ՄԵՐՈՒՄ
ՍԻՐԵԼԻՈՅ ՈՂՋՈՅՆ ՏԻՐԱԽԱՆԴ

Մենք ճանաչում ենք Ձեզ պատանեկության հասակից, որպես Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի ընդունակ, ջանասեր և պարկեշտ ուսանող: Շնորհիվ Ձեր ընդունակության և ջանասիրության՝ Ձեր ճեմարանական ուսման պաշարը հարստացրիք ու կատարելության հասցրիք բարձրագույն կրթությամբ և ամբողջովին նվիրվեցիք Հայ եկեղեցուն և Հայ ժողովրդի հոգևոր անդաստանի մշակման:

Ձեր գործունեության անդրանիկ ասպարեզը ճեմարանը հանդիսացավ, որ երկա՛ր տարիներ գործեցիք, որպես ուսուցիչ և տեսուչ՝ դաստիարակելով հայ մատաղ սերունդը ազգային և քրիստոնեական լայն մարդասիրական ոգով և տվիք Հայ եկեղեցուն և Հայ կյանքին օգտակար գործիչներ:

Ձեր այդ բազմազգաղ աշխատանքների շնորհիվ և այնուհետև՝ իջավ նաև գրական ասպարեզ՝ տալով պատմական, մատենագրական, հնագիտական արժեքավոր աշխատանքներ, որոնց գլուխ գործողը պիտի հանդիսանա Ձեր Հայ Մանրակարչության պատմությունը:

Գործեցիք նաև եկեղեցական-վարչական ասպարեզում՝ վարելով բազմապիսի պաշ-

տոններ և Ձեր վարած բոլոր պաշտոններումն էլ առաջնորդվեցիք միա՛յն ու միա՛յն հայ տարագիր ու տառապլայ ժողովրդին օգտակար լինելու գաղափարով, ուստի և սիրվեցաք ժողովրդից:

Ձեր անցյալ արդյունավետ գործունեությունը, Ձեր ժողովրդասեր և մարդասեր ոգին և հանդեպ Ձեր՝ ժողովրդի տածած սերը առաջնորդեցին Ձեզ դեպի Տանն Կիլիկյա կաթողիկոսական գանը, որ այսօր էլ նույն ոգով գործում եք:

Աննշմարելի չպիտի անցնի ու ընդգծելի է Ձեր գործունեության և այն գիծը, որ Դուք՝ Ձեր գործունեության բոլոր ասպարեզներում, միշտ հավատարիմ եք մնացել Ձեր վաճական ուխտին՝ ամբողջովին նվիրվել Ս. Էջմիածնին, որ մայր է Հայ եկեղեցիներին, որ Հայ ժողովրդի պատմական դաստիարակն է ազգային, կրոնական և մշակութային ասպարեզներում:

Եկեղեցու և Ազգի մշակը չի կարող Հայոց Հայրապետի աչի՛ն աննշմարելի մնալ: Մենք, որպես Պետ Հայ եկեղեցու, որպես Ամենայն Հայոց Հայրապետ, Մեր այս Հայրապետական կոնդակով, ի տրիտուր Ձեր անձնական բարձր արժանիքների, տալիս

ենք Շնորհազարդությանդ անձնական իրավունք՝ կրելու Ձեր վեղարի վերա ադամանդյա խաչ, հավատալով, որ դորանով Մենք Հայ ժողովրդի և Հայ Հոգևորականության ցանկության արտահայտիչն ենք հանդիսանում:

Աստուածային օրհնությունն ենք հայցում

Շնորհի և ողորմություն Տյառն մեր չի սուսի

Քրիստոսի իջցե և հանգիցե ի վերա Ձեր, ամեն:

Ձեզ վերա նույն ոգով և եռանդով գոհագուտ Հայ Եկեղեցու, Հայ Ժողովրդի Հայրենի երկրի:

Մաղթում ենք նաև արեշատություն Դուք տեսնեք Հայ Ժողովրդի և Հոգևորության պատմական իղձերի կատարումիս իսկաբանվեք:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱԹՆ ՀԱՅՈՑ

ՁԵ- . . 28

Տուալ կոնդակս ի 20-ն դեկտեմբերի

1946 ամի Փրկչական

ի տոմարիս Հայոց ՌՅՂԵ

Ցերկաբողոմ ամի Հայրապետութեան Սերոյ

ի Ս. ԷԶՄԻԱՍԻՆ



ՆՈՐ ՏԱՐԻ



Մեծությամբ գիրքը սուգվեց 1946 թվականը: Նա նշանավորվեց որպես հետպատերազմյան խաղաղ շինարարության ու ժողովրդատնտեսության ծավալուն վերականգնման առաջին տարի:

Սովետական ժողովուրդը հպարտ իր հաղթական նվաճումներով ու ինքնավստահ քեփակոխեց նոր տարին. նա լի է վերականգնությամբ 1947 թվականը նորանոր փառապանծ գործերի, նորանոր հաղթական նվաճումների տարի դարձնելու:

Դարերի խորքում անհեռացող 1946 թվականը մարդկային պատմության տարեգրության մեջ հանդիսացավ խոշոր իրադարձություններով հարուստ պատմական մի տարեթիվ:

1946 թվականին մարդկության առաջ իր ամբողջ հասակով ծառացավ աշխարհավեր պատերազմից խաղաղ շինարարության անցնելու բարդ ու դժվարին խնդիրը: Պատերազմի հետևանքով երկար տարիներ խաղաղ աշխատանքից կտրված միլիոնավոր մարդիկ իրենց զինվորական համազգեստը փոխելով նորից կանգնեցին դազգանների կողմին, հերկել սկսեցին անծայրածիր դաշտերը, իջան հողի ընդերքը, մտան գիտահետազոտական լաբորատորիաներ: Սկսվեց երկարատև, դժան ու ծանր պատերազմի հասցրած խոր վերքերի արմատական բուժման, ֆայֆայված ժողովրդատնտեսության, ավերված ու դեռ ծխացող գյուղերի ու քաղաքների վերականգնման հերոսական աշխատանքը:

1946 թվականը հանդիսացավ նաև երկ-

ների ու ժողովուրդների միջև տևական խաղաղության հաստատման տարի. ազատասեր ժողովուրդները իրենց բոլոր ջանքերը գործադրեցին ստեղծված խաղաղությունը տևական դարձնելու համար:

Այսօր էլ դեռ պատերազմի նոր հրձիգները ջանք չեն խնայում մարդկությանը հրելու դեպի նոր աշխարհակործան պատերազմի անդունդի եզրը, պատերազմի ուրվականով բունավորելու նրա խաղաղ ու ստեղծագործ աշխատանքը. սակայն աշխարհի խաղաղասեր ժողովուրդներն, իրենց ավանգարդում ունենալով ազատասեր ու խաղաղասեր սովետական մեծ ժողովուրդին, մարդկության փրկության նավը, հակառակ պատերազմի հրձիգների բոլոր փորձերին, անվարան կերպով առաջ են տանում դեպի բոլոր ժողովուրդների խաղաղության ու բարօրության նավահանգիստը:

Հանրամայտ է, որ պատերազմից ամենից շատ տուժեց սովետական երկիրն, իր ուսերի վրա կրելով պատերազմի ծանրությունը: Սովետական մարդիկ պատերազմի հաղթական ավարտումից հետո անմիջապես և աշխատանքային մեծ էնտուզիազմով ձեռնամուխ եղան երկրի ժողովրդական տնտեսության արագատեմպ վերականգնման գործին. նրանք հերոսական նիզեքով վերականգնել ու վերականգնում են գերմանական զավթիչների կողմից վայրագորեն ավերված գյուղերն ու քաղաքները, գործարաններն ու ֆաբրիկաները, կոլտոգներն ու սովխոզները, միաժամանակ առաջ, վերելքի նոր աստիճանի վրա մղելով երկրի արդյունաբերությունը ու գյուղատնտեսությունը: Սովետական ողջ

ժողովուրդը ստեղծագործ աշխատանքի շտեմեղծված սխրագործություններ է արձանագրում: Ապշեցուցիչ արագությամբ կյանքի են կոչվում մոտիկ անցյալում ավերակների փլակույտների վերածված ու մահվան դատապարտված գյուղերն ու ֆաղաֆները: Այնտեղ, որտեղ դեռ մոտ անցյալում հրանոթներն էին որսառում, մահ սփռելով իրենց շուրջը և ավերակներն իշխում տիրաբար, այսօր հաղթականորեն վեր են խոյացել գործարանային հիաստանը շենքերը ու աշխատանքային շրջող աղմուկն է տիրում ամենուրեք: Կոլխոզային լայնածախալ դաշտերից, հողի ընդերքից, գործարաններից, գիտահետազոտական լաբորատորիաներից ամեն օր բազմաթիվ հաղորդագրություններ են ստացվում տնտեսության, գիտության բնագավառներում սովետական մարդկանց տարած նորանոր հաղթանակների, նորանոր նվաճումների, աշխատանքային սխրագործությունների մասին. նրանք իրենց անձնագոն աշխատանքի շնորհիվ անխոնջ կերպով առաջ են մղում, զարգացման նոր ռելսերի վրա փոխադրում ժողովրդական տնտեսությունն ու գիտությունը: Սովետական ժողովուրդը նոր տարին դիմավորում է լաված աշխատանքի, հետպատերազմյան ստալինյան հնգամյակի առաջին տարվա աշխատանքների հաղթական ավարտի պայմաններում, հնգամյակի բազմահազար նորակառույցների աշտարակների վրա:

Պատմության գիրկն անդարձ սուզվող 1946 թվականը նշանավոր տարեթիվ հանդիսացավ նաև հայ ժողովրդի պատմության համար. սովետական ժողովրդների մեծ ընտանիքի լիիրավ անդամներից մեկը՝ հայ ժողովուրդը ևս ջանք չխնայեց ժողովրդատնտեսության է՛լ ավելի ծաղկման ու բարգավաճման, հետպատերազմյան ստալինյան հնգամյակի նորակառույցների շինարարության համար. քեակոխելով նոր տարին, այսօր հայ ժողովուրդն մի առանձին հպարտությամբ է հայացք նետում հետպատերազմյան հնգամյակի առաջին տարվա գործող նորակառույցների վրա, ինչպիսիք են Երևանի մանուկի գործարանը, կաբելի գործարանը, Կիրովականի կառույցի ու տրիկոտաժի ֆաբրիկաները, Շամշադինի ֆերմենտացիոն գործարանը, Գորիսի տրիկոտաժի ֆաբրիկան, Ստեփանավանի օսլայի գործարանը և ուրիշ շատ ձեռնարկներ: 1946 թվին նոր վերելք ապրեց նաև Հայաստանի

գյուղատնտեսությունը. միլիոնաւեր կոլխոզների շարքն անցան տասնյակ նոր կոլխոզներ: Գիտությունը, արվեստը քեակոխեցին ծաղկման ու զարգացման մի նոր վերելքի շրջան: Հայ ժողովուրդը նոր տարին քեակոխում է Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի բնորոշությունների առթիվ ծավալված նախապատրաստական եռուն աշխատանքների օրերին, հետպատերազմյան հնգամյակի առաջին տարվա աշխատանքները հիմնականում լիովին ավարտած:

1946 թվականը նշանավորվեց հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած պատմական մի խոշոր իրադարձությամբ: 1946 թվին հայրենի հարազատ հողի վրա ում դրին հայրենադարձների առաջին կարավանները. տասնյակ հազարավոր աստանդական ու վտանգալի հայեր, հայրենիքի կարոտը սրմունքում օտար հորիզոնների տակ երկար դեգերելուց հետո, վերադարձան իրենց իղձերի օրհներգ ընդմիջող բոթափելով իրենց ռոներից պանդղիստության փոշին:

Այսօր նրանք հայրենիքում, իրենց հարազատ եղբայրների հետ միասին, մեծ ոգևորությամբ կերտում են իրենց կենսախիղճներկան ու երջանիկ ապագան: Հարազատ հայրենի դաշտերում, գործարաններում, հետպատերազմյան հնգամյակի նորակառույցներում, արվեստի ու գիտության ասպարեզներում նրանք իրենց ջանքերը միախառնում են հայրենիքի եղբայրների ջանքերին:

Շատ նոր տարիներ են նրանք դիմավորել հայրենիքից հեռու, օտար ավերում ու միջատ էլ հայրենիքի կարոտը սրմունքում մտնող սլացել դեպի Արարատի ստորոտում ծաղկող հայրենիքը, երազել այսօրվա երջանիկ օրը և ահա առաջին անգամ նրանք նոր տարին դիմավորում են ոչ քե օտար, անհարազատ հորիզոնների տակ, այլ հայրենի նվիրական հողի վրա, նրա լազուր երկնակամարի ներքո, հարազատներով շրջապատված: Անհուն է հայրենիքի գիրկը դարձած մեր եղբայրների ու բույրերի, սովետական նոր ֆաղաֆաների երջանկությունը ու անսահման նրանց վստահությունը իրենց ապագայի նկատմամբ:

1947 թվին, աշխարհի զանազան ծայրերից ժամանելով, հայրենի սրբազան հողի վրա ում կոնեն տասնյակ հազարավոր նոր հայրենադարձներ: Թող օրհնյալ լինի նրանց հայրենադարձի նամբան:

1946 թվականը Հայ Եկեղեցու կյանքում

հշանավորվեց նրանով, որ Մայր Աթոռի ու սփյուռքում ցրված բեմերի միջև 1945 թվի Ազգային-եկեղեցական ժողովում հիմք դրված կապերն ավելի քան սերտացան: Հայ եկեղեցին արտասահմանում իր բոլոր ուժերը ի սպաս դրեց ներգաղթի հաջող կազմակերպմանը, բազմապիսի աջակցություն ցույց տալով հայրենահավաքի սրբազան այդ մեծ գործին: Հայ եկեղեցին այսուհետև շրջակայումս եռանդով կշարունակի իր աջակցությունը բերել ազգահավաքման, սփյուռքում ցրված պանդուխտ հայության

հայրենիքում համախմբման գործին: Վեհափառ Հայրապետի 1946 թվի կոնդակներն ու շրջաբերականներն այդ առթիվ Հայ եկեղեցու համար արտասահմանում գործողության ծրագրեր հանդիսացան, մեծ շարժով նպաստելով թե՛ Հայ եկեղեցու միասնականության և թե՛ ներգաղթի գործի սատարման:

Մաղթենք, որ Աստուծո աջակցությամբ նոր տարին, 1947 թվականը, դառնա ժողովուրդի միջև տեական խաղաղության հաստատման, ժողովուրդների եղանկության ու բարօրության տարի:

Շնորհավոր նոր տարի և ծնունդ:





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ Տ. Տ.

ԳԵՎՈՐԳ Զ-Ի ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ՇՆՈՐՀԱԶԱՐԳ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա-Ի

ԲԱԶԱՆԱՅՈՒԹՅԱՆ

50-ԱՄՅԱ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 60-ԱՄՅԱ

ԵՎ ԾՆՆԴՅԱՆ

80-ԱՄՅԱ

ՀՈՐԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ

ԲԵՅՐՈՒԹ-ԱՆԹԻԼԻԱՍ

ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ

ԽԱՂ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Ի սրտե ողջունում ենք Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Ա-ի 80-ամյա հոբելյանը:

Բարձր ենք գնահատում Նորա 60-ամյա արդյունավետ գործունեությունը եկեղեցական եւ զբաղմունքային առարկաներում:

Մաղթում ենք արեւելաւորություն եւ հաջողություն Նորա ապագա գործունեության բազմապիսի առարկաներում:

Առաջարկում ենք կարգաւ հոբելյանական հանդեսին Մեր տված կոնդակը Նորա 80-ամյակի առթիւ, որով Նորան անձնապես շնորհւում է վեղարի վերա աղամանդյա խաչ կրելու իրավունք:

ԳԵՎՈՐԳ Զ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

8 հունվարի 1947 թ.
Ա. ԷՋՄԱՆՅԱՆ





Տաճն Կիլիկիո Վեհափառ Կաթողիկոս
Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա.



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ
Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի ՀԵՌԱԳԻՐԸ
ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ՇՆՈՐՀԱԶԱՐԴԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ
Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա-Ի**

ՔԱՂԱՍՅՈՒԹՅԱՆ	50-ԱՄՅԱ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ-ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ	60-ԱՄՅԱ
ԵՎ ԾՆՆԴՅԱՆ	80-ԱՄՅԱ
ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՏՈՆԱԿԱՅԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ	

ԲԵՅՐՈՒԹ-ԱՆԹԻԼԵԱՍ

ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

*Յաժում՝ ենք, որ հոգեյանի տոնակատարութեան մասին
Մեզ ուշ հաղորդեց:*

*Առաջարկում ենք, եթե հնարավոր է, Կիլիկիո Կաթո-
ղիկոս Գարեգին Ա-ի հոգեյանը հետաձգել ավելի մեծ շուքով
կատարելու նպատակով:*

*Հետաձգելու մասին հեռազրոյցներ եւ սպասեցեք զրու-
թեան:*

ԳԵՎՈՐԳ Զ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

8 հունվարի 1947 թ.
Ս. ԷՋՄԻԱՍԻՆ



ՅՈՒՐ ՈՂՋՈՒՅՆ ԵՐԿԱՐ ԿՅԱՆԻ
ԱՆՋՈՒԳԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԱԿԱՆ
ՋԵՐՄ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ
ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԳԻՏՆԱԿԱՆ
ԱՆՋԱՐԴ ՀՈՒՆԵՅԱՐԻՆ
ՈՂՋՈՒՅՆ ԴԻՐԱԿԱՆ ԵՐԿԱՍԵՐԶ ԱՐԱՐԱՏԻ ՍՏՈՐՈՏԻՅ
ՀՐԱՎՈՒՐՅ Ս. ԷԶՐԻՍԺՆԻ ՄԱՅՐ ՏԱՌԱՐԻ ԿԱՄԱՐՆԵՐԻ ՏԱԿԻՅ

Այսօր տուն է խնդրոյան, Սիրիայի և Լիբանանի հայ հասարակայնությունը այսօր տոնում է հանուրի համակրանքին արժանացած մեր ավագագույն եկեղեցականներից մեկի՝ Տանն Կիլիկիո Ս. Տ. Գարեգին Շնորհազարդ Կաթողիկոս Հովսեփյանի բաճառայության 50-ամյա, եկեղեցական, գրական, գիտական գործունեության 60-ամյա և ծննդյան 80-ամյա պանծալի հոբելյանը:

Փառանքը կյանքի ուղի է անցել վսեմաշուրջ Հոբելյարը, կյանքի Մարգր, խոսքի, գրչի շնորհալի վարպետը:

Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանը Հայ եկեղեցու եզակի դեմքերից մեկն է հանդիսանում, եզակի իր եկեղեցաշինարարական, հայրենասիրական, գրական-գիտական գործունեությամբ: Նրա անունը ծանոթ է ոչ միայն հայրենիքին ու հայկական գրեթե բոլոր գաղութներին, այլ և օտարազգի հասարակական ու գիտական շրջաններին: Որպես առաքինի ու շիտակ եկեղեցական, որպես առողջ մտքի ու լայն սրտի տեր անձնավորություն, նա վայելում է ոչ միայն հայերի, այլ և բարեկամ ժողովուրդների սերն ու համակրանքը:

Մեծ է նրա ավանդը Հայ եկեղեցու բարգավաճման և հայ արվեստի, մշակույթի, պատմության ուսումնասիրման գործում:

Տասնյակ տարիներ անձնվիրաբար սպասարկել է նա Հայ եկեղեցուն, մեծ ծառայություններ մատուցելով նրան: Նրա եկեղեցաշինարարական գործունեությունը չափազանց ընդարձակ հորիզոններ է ընդգրկել, սկսած Ս. Էջմիածնից, Թիֆլիսից, Նոր-Նախիջևանից, Գրիմից մինչև Միջին ու Մերձավար

Արևելքի, Եվրոպայի և Նոր Աշխարհի երկրները: Ամենուրեք, ուր այցելել է նա, Հայ եկեղեցին փայլել, նոր վերելք է ապրել:

Սակայն Գարեգին Կաթողիկոսը ոչ միայն ջերմեռանդ եկեղեցապետ է, այլ և շեղմ հայրենասեր: Նրա մոտ եկեղեցասիրությունն ու հայրենասիրությունն անբաժան են: Դա՛րաբաղի սիգապանծ լեռների այս կոռովի զավակը իր արծվային բռնիքով ընդգրկել է աշխարհի գրեթե բոլոր հայաբնակ վայրերը: Նա այցելել է աշխարհի այն բոլոր անկյունները, ուր հայության բեկորներ կան սփռված և իր զգայացունց հատերով, փարոզներով հուսադրել, հայրենիքի սիրով ջերմացրել նրանց հայրենաբաղձ սրտերը, հայրաբար սփռվել վշտերը:

Նա խոսքի մեծ վարպետ լինելով գիտև արագորեն գրավել իր ունկնդիրներին սրտերը, մեծ արվեստագետի հմտությամբ շոշափել նրանց հոգու քրթոնն, նուրբ, գերզգայուն լարերը, պահել նրանց հոգեզմայլ, հափրշտակված վիճակում, իր դիպուկ, նպատակասլաց բառերով արկածել նրանց ներաշխարհը, ներշնչել վսեմ ու ազնիվ գաղափարներ: Նա իր ունկնդիրներին բովում, գերում է իր չափազանց պարզ, վեհա, սրտագրավ, հոգու խորքից հորդող անկեղծ խոսքերով: Իր խոսելու ամբողջ տեղության պահերին նա կառողանում է ոչ միայն մագնիսացնել, լարված վիճակում պահել իր ունկնդիրներին, այլ և տիրաբար իշխել նրանց զգացմունքների վրա: Իր հայրենաշունչ հատերով նա հայ ժողովրդի աստանդական զանգվածները միշտ էլ խանդավառել է հայրենասիրությամբ, բորբոքել նրանց

հոգու խորհում անմար պանված հայրենիքի սիրո կայծերը, հրդեհել նրանց սրտերը հայրենիքի սիրով: Ուր որ եղել է նա, Արարատի նվիրական փեշերից սկսած մինչև հաղադականի ասիերը, Իրանի սարահարթից մինչև Նեղոսի հովիտը, Եվրոպայի երկրներից մինչև Միջագետքի երկրները, ամենուրեք ու ամեն տեղ հայ ժողովրդի աստանդական բեկորներին կոչ է արել արևածաղկի նման երեսով դարձած մեզ ղեկավար Արարատի ստորոտում ծաղկող հայրենիքը, ղեկավար քանկագին Սովետական Հայաստանը, որ հայ ժողովրդի «կենդանության արևն է»:

Քորդորել է աշխարհը «նուրդած մեր Հայրենիքին, Սովետական Հայաստանին, սիրելի նրան սրտի ամբողջ էությունը»: Ու ինքն էլ իր ամբողջ էությունը սիրել է հայրենիքը, ոգեշնչվել նրա հարանուն վերելքով: Հայրենիքից հեռու, բայց միշտ հայրենիքի հետ. Փարիզում քե՛ն Նյու-Յորքում, Եգիպտոսում քե՛ն Կիպրոսում, Անթիլիասում քե՛ն Իսրայելում ու այլուր, ելույթների քե՛ն մենության պահերին նրա աշխարհի առաջ միշտ ուրվագծվել ու ուրվագծվում են խոսքում ու վեհաստեղծ Արարատները, Բաղրամյան Սևանը և իր երջանիկ կյանքը կերտող տաղանդավոր հայ ժողովուրդը: Եվ նրա ակնաչեղերին դեռ հնչում է Մայր Տաճարի զանգերի ղողանջը:

Իսկ երբ իրականացան հայ ժողովրդի վտարանդի գավակների, ինչպես և Գարեգին Կաթողիկոսի, իղձերը ու հայ ժողովրդի պանդուխտ որդիները կարավաններով հայրենիք էին հաճապարհվում, 80-ամյա բոցաշունչ հայրենասեր Կաթողիկոսը հանգիստ չգիտեր. նա շրջապայում էր ամեն տեղ, կազմակերպում ներգաղթը, հայրենադարձի կարավանները մեկիկ մեկիկ նավահանգիստ առաջնորդում, ողջերը մաղթում նրանց:

Գարեգին Կաթողիկոսը, նշանավոր եկեղեցական լինելուց զատ, գրական անխոնջ մշակ, մեծահամբավ գիտնական է հանդիսանում: Մի ձեռքով խաչը, մյուսով գրիչը, այսպես է եղել նա: Նրա մոտ եկեղեցական գործունեությունը միշտ զուգորդված է եղել գրական-գիտական գործունեության հետ: Մենք Գարեգին Կաթողիկոսին հանաչում ենք ոչ միայն որպես սոսկ նշանավոր եկեղեցական անձի, այլ և որպես հայ արվեստի, մշակույթի, պատմության փայծանոթ, լավատեղյակ գիտնականի, որպես պատմաբանի, հնագետի, բանասերի, մատենագրի:

Նրա բեղմնավոր գրչին են պատկանում,

բազմապիսի խնդիրների նվիրված, հարյուրից ավելի ուսումնասիրություններ, որոնք լույս են տեսել զանազան պարբերականներում և չորս տասնյակի հասնող առանձին գրքերով լույս տեսած կամ հրատարակության համար պատրաստ աշխատություններ. դրանք պատմական, հնագիտական, բանասիրական, մատենագրական, արվեստագիտական բնույթ են կրում. դրանցից մի փառահիսր բազմահատոր, սովորածավայ աշխատություններ են ներկայացնում, մեծ մասամբ նվիրված հայ արվեստի, մշակույթի ուսումնասիրությանը:

Ո՛վ կարող է հաշվել, քե՛ն այս անխոնջ գիտնականի ձեռքերը փակի հազար ձեռագրեր են շոշափել ու մատները փակի հազար մագաղաթի ու թղթի թերթեր թերթել, փակի հազար ձեռագրերի վրա նա գլուխ է խոնարհել, տհեղան աշխատանք քափել: Հայ ձեռագրերի այս մեծ սիրահարը հանգիստ չգիտեր. մենք նրան տեսնում ենք և էջմիածնի և՛ Երուսաղեմի մատենադարաններում, և՛ Լեհիզգրադի էրմիտաժում, և՛ Բերլինի, Փարիզի, Նյու-Յորքի, Վենետիկի Վիեննայի ու այլ բազմաթիվ մատենադարաններում:

Ամեն տեղ նրա հետախույզ միտքը պրայրումներ, որոնումներ, վերլուծություններ, համադրություններ կատարելով վերստին կյանքի էր կոչում, կյանքի ուղեգիր շնորհում մեր արժանահիշատակ նախնիների մոռացության մատնված, հնադարյան փոշով ծածկված գործերին: Ձեռագրերի աշխատք Գարեգին Կաթողիկոսի կյանքի տարրերն են կազմել. նրան հաճախ կարելի է տեսնել շրջապատված ձեռագրերով. կարելի է ասել, գրեթե բոլոր հայ ձեռագրերի վրա նրա մատների հետքերը կան դրոշմված:

Սակայն Գարեգին Կաթողիկոսը իր առանձնահատկություն փակվել, մեռնալ ու միշտ ձեռագրերի ծովում ընկղմվել չգիտեր. նա առանձնահատկ ու մագաղաթի և թղթի քանկագին ձեռագրերով սահմանափակվող գիտնական չէր. նա սիրել է՝ շրջապայել ու կարդալ հայ բնաշխարհի լեռնահովիտներում ու լեռնակատարներին առատությամբ սփռված անթիվ ու անհամար «գրքեր» — վանքերի, մենաստանների, եկեղեցիների, տապանաքարերի, խաչքարերի, հնադարյան հուշարձանների վրա եղած արձանագրությունները: Ո՛վ կարող է հաշվել, քե՛ն փակի հազար արձանագրությունների առաջ է կանգնել նա ծավերով, ուսումնասիրել, վերծանել,

ֆանի հազար տապանաբերի, խաչքարերի վրա կոտցել, վանքերի, մենաստանների, եկեղեցիների, ավերված բերդերի, ֆաղաֆների մնացորդ բեկորների վրա տփնել. հնություն ամեն մի բեկոր, ամեն մի ֆար չի վրիպել նրա ուշադրությունից: Այցելել է նա անդեղախոր կիրճերում, անմատչելի ժայռերի կատարներին, մրին անտառների քավումներում ու լեռնածեղայերին առանձնացած հին ու նոր, շեն քե կիսավեր վանքերն ու մենաստանները, դարերի մամուռով զգեստավորված հինավուրց հուշարձանները: Այսպես է աշխատել նա, վկայակոչելով ու ակաճեղ ղեկելով ոչ միայն ձեռագրերին, այլև հնության հուշարձանների խոսուն բեկորներին, որոնք նշմարտացի վկաներն են հանդիսանում մեր անցյալի պատմության: Նրա անվերջ պրպտող, վերլուծող, բաղդատող միտքը այս ճանապարհով կարողացել է անսպառ նյութ կուտակել հայ արվեստի, մշակույթի, պատմության վերաբերյալ: Նրա խորաքափանց հայացքի տակ շունչ ու լեզու են առել ֆարի բեկորները, շատ բան պատմել մեր նախնիների փառավոր անցյալի մասին: Նրա մոգական գրչի տակ վերակենդանացել, նոր փայլ ու արժեքավորում են ընդունել մեր նյութական մշակույթի հուշարձանները, մոռացության մատնված շատ հոյակապ կոթողներ: Նրա ուսումնասիրությունների, այցելությունների հետևանքով հայ մշակույթի շատ արժեքներ են փրկվել կորստյան վերահաս վտանգից: Դարերի փոշու տակ քաղված, անուշադրության մատնված բազմաթիվ ձեռագրեր և մամուլապատված ու անգիտության հետևանքով ոչնչացվող անհամար հուշարձաններ նրա շնորհիվ

ժողովրդի խնամքի ու գուրգուրանքի առարկա են դարձել:

Մեծ է նրա ավանդը հայ արվեստի ուսումնասիրության բնագավառում: Հայ գրչության արվեստի և հատկապես հայ մանրանկարչության ուսումնասիրությունները բացառիկ տեղ են գրավում նրա աշխատությունների փայլուն շարքում: Հայ մանրանկարչության գունազարդ ֆարտեզը նրա աշխատությունների քաղն ու պսակն է կազմում: Այս հոյակապ գործով նա իր արժանավոր տեղն է գրավում: Հայ մանրանկարչության արվեստի ուսումնասիրությունը սերտ կերպով կապված է Գարեգին Կաթողիկոսի անվան հետ. երբ Կոմիտասը հայտնագործեց հայ երաժշտությունը, Թորամանյանը հայ ճարտարապետությունը, Գարեգին Կաթողիկոսն էլ հայտնագործեց հայ մանրանկարչությունը: Բայց այս եռյակի մեջ ամենաբախտավորը հանդիսացավ Գարեգին Կաթողիկոսը, որովհետև նրա երկար տարիների տփնաջան աշխատանքի պտուղները կորստյան չմատնվեցին, մինչդեռ, ինչպես գիտենք, Կոմիտասի հավաքած մի ֆանի հազար երգերը և Թորամանյանի տասնյակ տարիների աշխատանքի արդյունք հանդիսացող նյութերի մեծ մասը կորել են անդարձ, երկու դեպքում էլ քրքական վայրագությունների հետևանքով:

Ի սրտե ցանկանում ենք մոտ ապագայում ավարտված ու տպագրված տեսնել Գարեգին Կաթողիկոսի Հայ մանրանկարչության գունազարդ ֆարտեզը հոյակապ գործը, ինչպես և նրա մյուս գործերը:

Նրկար կյանք ու առողջություն ենք մաղթում մեր արեփառ Հորելյարին:





ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա.Ի ՀԱՄԱՌՈՑ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



անն Կիլիկիո Շնորհազարդ Կաթողիկոս Գարեգին Ա ծնվել է 1367 թվին՝ գյուղական ընտանիքում. նրա ծնողները բնակվում էին Լեոնային Դարաբաղի Մարաղա գյուղում:

Գրաճանաչություն սովորել է սկզբում զանազան գրագետ անձանց մոտ. այնուհետև սովորել է Դարաբաղի թեմական դպրոցում, իսկ 1881 թվին, իր մոր հոգեդբոր՝ Անտոն վարդապետի միջնորդությամբ, ընդունվել է Գևորգյան ճեմարանը: Մանկության հասակից սկսած նա աչքի է ընկել իր ջանասիրտությամբ և բացառիկ ընդունակությամբ: Ճեմարանում սովորելիս դասընկերն է եղել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Զ-ի:

Ճեմարանի դասընթացն ավարտելու տարում, 1889 թվին, սարկավաթ է ձեռնադրվել:

Բարձրագույն կրթություն ստանալու համար 1892 թվին գործուղվել է Գերմանիա, ուր չորս ու կես տարի ուսանելուց և Լայպցիգի համալսարանում քննություն տալուց հետո ստացել է փիլիսոփայության դոկտորի տիտղոսը:

Գարեգին սարկավաթ Հովսեփյանը Գերմանիայից էջմիածին վերադառնալով 1897 թվին աբեղա է ձեռնադրվում ու Գևորգյան ճեմարանի ուսուցիչ նշանակվում:

1900 թվին նա նշանակվում է Թիֆլիսի թեմի առաջնորդական փոխանորդ: Կարճ ժամանակամիջոցում, այստեղ, ժողովրդական լայն խավերում Գարեգին վարդապետն այնպիսի համակրանք է ձեռք բերում, որ թեմի հայ ազգաբնակչությունը մի համախոսական գրությունով դիմում է իրիմյան Հայրիկին ու խնդրում եպիսկոպոս ձեռնադրել նրան և Թիֆլիսի թեմի առաջնորդ կարգել: Սակայն Հայրիկը վաղաժամ է համարում

եպիսկոպոսության աստիճանի շնորհումը և րիտաարք վարդապետին:

1901 թվին Գարեգին վարդապետը հրավիրվում է Երևանի թեմական դպրոցի վերատեսուչ, որպիսի պաշտոնը նա վարում է մինչև 1905 թիվը:

1905 թվին նա նշանակվում է Գևորգյան ճեմարանի վերատեսուչ:

1905—1907 թվականներին վարում է «Արարատ» ամսագրի խմբագրի պաշտոնը:

Իրիմյան Հայրիկի մահվանից հետո կարգվում է Ս. Հովսեփի վանքի վանահայր:

Իզմիրյան կաթողիկոսի օրոք վարում է Խորհրդականի պաշտոնը:

Առաջին համաշխարհային պատերազմի օրերին՝ 1914 թվին, նա նորից նշանակվում է Գևորգյան ճեմարանի վերատեսուչ, որպիսի պաշտոնը վարում է մինչև ճեմարանի փակումը 1917 թվին:

Առաջին համաշխարհային պատերազմի ամբողջ տևողության ընթացքում, լինելով Եղբայրական Օգնության Հանձնախմբի անդամը և մի տարի էլ այդ Հանձնախմբի նախագահը, նա ջանք չի խնայել հայ զաղթականության ծանր փրճակը թեթևացնելու համար:

1917 թվին, Գարեգին վարդապետը եպիսկոպոս է ձեռնադրվում:

1924 թվին Գարեգին եպիսկոպոսն ընտրվում է Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և Միաբնական Ժողովի նախագահ:

1927 թվին միաձայն ընտրվում է Ղրիմի և Նոր-Նախիջևանի թեմի առաջնորդ: Խորեն կաթողիկոսի օրոք դարձյալ ընտրվում է Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և Միաբնական Ժողովի նախագահ:

1934 թվին, որպես կաթողիկոսական նվիրակ Սփյուռքի մեջ, Գարեգին եպիսկոպոսն այցելում է Եվրոպայի և Միջին ու Մերձավոր Արևելքի գրեթե բոլոր հայ գաղութները: Այդ առաքելության ընթացքում նա Ս. էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգության

համար հանգանակում է 40 հազար դոլար: 1936 թվին, նվիրակի հանգամանքով այցելում է ամերիկահայ գաղութները: Ազգային նրբամտության և ժողովրդի կողմից 1938 թվին նա ընտրվում է Ամերիկայի թեմի առաջնորդ, այստեղ նա խոշոր աշխատանք է ծավալում և կարճ ժամանակամիջոցում կարողանում է կարգավորել ոչ միայն թեմի գործերը, այլ և նոր լիցք հաղորդել տեղի գաղութահայ կյանքին: Հայրենական պատերազմի տարիներին նրա գործուն մասնակցությամբ է կազմակերպվում Հայկական Հանձնախումբը, որն ի նպաստ կարմիր Բանակի ու պատերազմից տուժած հայրենա-

ու մասնակցում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությանն ու օծմանը: Այսպիսով, 1897 թվին արեղա ձեռնադրվելով, նա հիսուն տարի անբասիր կերպով ծառայել ու շարունակում է աճող եռանդով ծառայել Հայ Եկեղեցուն, մեծ ծառայություններ մատուցելով նրա վերելքի գործին:

Բացի բոլորանվեր հոգևորական լինելուց Գարեգին Վեհափառ Կաթողիկոսը մեծ հայրենասեր ու խոշոր գիտնական է: Նա իր բազմաթիվ ու բազմապիսի բովանդակություն ունեցող աշխատություններով ձգտել է ոչ միայն հայ հին հիշատակարանները



1945 թվի կարողիկոսական ընտրությանն ու օծման օրերին. Ամենայն Հայոց Կաթողիկոս Ս. Տ. Գևորգ Զ. և Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ս. Տ. Գարեգին Ա. դուրս են գալիս Մայր Տաճարից

կիցների հանգանակում է 120 հազար դոլար, իսկ «Մասունցի Դավիթ» տանկային շարասյան համար 85 հազար դոլար:

1943 թվին Կիլիկյան թեմերի Ազգային Ընդհանուր Ժողովը Գարեգին արքեպիսկոպոսին միաձայն ընտրում է Կաթողիկոս Տանն Կիլիկիո: 1945 թվի ապրիլի 8-ին տեղի է ունենում նրա Կաթողիկոսական օծումը: Օծումից հաղիվ երեք ամիս անց Գարեգին Կաթողիկոսը ժամանում է Ս. Էջմիածին

փրկել կորստից, այլ և նրանց միջոցով արծարծել, բուրբուրել հայրենիքի սերը, խանդավառել ժողովրդի լայն զանգվածները հայրենիքի սիրով, հպարտության զգացմունքներ շնչել նրանց, հայ մշակույթի հոյակապ կոթողների վրայից մոռացության փոշին թոթափելով ու նոր փայլ հաղորդելով նրանց: Օժտված լինելով հոնտորական բնատուր ձիրքով՝ նա ամեն ժամանակ ու ամենուրեք իր հայրենաշունչ ճառերով ժողովրդ-

դական զանգվածները համակել է հայրենասիրական զգացումներով:

Այսօր էլ ջերմ հայրենասեր Գարեգին Կաթողիկոսը ամենայն սրբությամբ կատարում է իր պարտականությունները հայրենիքի հանդեպ, իրեն ենթակա թեմերում գլխավորելով հայրենադարձության գործը:

Բազմաշխատ գիտնական Գարեգին Կաթողիկոսը հանդես է եկել թե որպես անգլուգական գեղարվեստագետ ու մասնագետ հայ արվեստի ու մշակույթի պատմության և հատկապես մանրանկարչության, թե որպես բանասեր ու մատենագիր և թե որպես պատմաբան ու հնագետ: Դեռ ճեմարանում ուսանող եղած ժամանակ նա սկսում

թյուններ, ստվարածավալ աշխատություններ, որոնք մեծ մասամբ զետեղված են «Արարատ», «Հասկ» և այլ պարբերականներում, կամ լույս են տեսել առանձին գրքերով ու հատորներով, իսկ մի ստվար մասն էլ դեռ չի հրատարակված: 1890 թվին «Արարատ» ամսագրում լույս տեսավ նրա «Լուսաւորիչ և Հայաստանեայց եկեղեցի» խորագիրը կրող առաջին հոդվածը, որին հետեւեց նրա բազմաթիվ ու բազմապիսի բովանդակություն ունեցող հոդվածների ու աշխատությունների շարքը: Այսօր էլ այնպիսի Կաթողիկոսը երիտասարդական ավյուրով շարունակում է փոքր ծավալի ուսումնասիրություններ ղեկավարել «Հասկ»-ում,



1945 թվի Ազգային-եկեղեցական ժողովի օրերին. Ամենայն Հայոց Կաթողիկոս Ս. Ս. Գևորգ Զ, Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ս. Ս. Գարեգին Ա և Սրուսաղեմի Պատրիարք Ս. Ս. Կյուրեղ Բ Վեներաբլի պարմեզում:

է զբաղվել հայ բանահյուսության ուսումնասիրությամբ, ժողովրդական վեպի մասին ճեմարանի մոկացի ծառաների պատմածները գրի առնելով: Վեց տասնյակ տարվա պատմություն ունի նրա գրական-գիտական գործունեությունը: Վաթսուն տարվա ընթացքում նրա բեղմնավոր գրչի տակից դուրս են եկել կրոնա-եկեղեցական ու ազգային, պատմա-հնագիտական, մատենագիտական-բանասիրական բազմաթիվ հոդվածներ, փոքր ծավալի ուսումնասիրու-


«Էջմիածին»-ում ու մեկը մյուսի հա.կից լույս ընծայել փր շափազանց շահեկան ստվարածավալ աշխատությունները: Ինչպես տեսանք, ժողովրդական բանահյուսությունը վեհափառին դեռ հետաքրքրել է պատանեկության հասակից. նրա այս տիպի աշխատություններից հիշատակության արժանի են «Սառմայ ծոեր»-ը, «Փշրանքներ ժողովրդական բանահիւսութիւնից»-ը, «Ռոստոմ Զալ»-ը:

Նրա մատենագրական-բանասիրական ու-

սումնասիրությունների շարքը սկսվում է «Խոսքովիկ բարգմանիչ և երկասիրութիւնք նորին» աշխատութեամբ, որին հետևում են «Մխիթար Սասնեցի», «Մխիթար Այրիվանեցի», «Թովմա Մեծոփեցու կեանքը», «Ձագավանից ժողովը» գործերը և դեռ ցարդ անտիպ մնացած Ոսկերեանի, Կիւրեղ Աղեփանդաբեկ, Որոգինէսի հայերեն թարգմանությունները, Ստեփանոս Սյունեցիի «Ջորից Աւետարանաց Մեկնութիւն»-ը և Գրիգոր Մագիստրոսի Թղթերը:

Խոշոր արժեք են ներկայացնում հայ արվեստին ու մշակույթին և պատմության ու

մութեան մէջ» ուսումնասիրությունը, որը նվիրված է ԺԳ-ԺԷ դարերի հայոց պատմության մի շարք հարցերի լուսաբանմանը. այս աշխատության աղբյուր են ծառայել հարյուրավոր ձեռագրերում պահպանված հիշատակարանները, վանքերի, եկեղեցիների արձանագրությունները. Խրոհրդ հատորը պարունակում է 280 արձանագրություն և մոտ 100 ձեռագրերից բաղված հիշատակարաններ: Այս աշխատության պիտի հաջորդեն Որբելեանց և Վաչուտեանց պատմությունները, որոնց նյութերը մասամբ հավաքված ու մասամբ էլ պատրաստված են: Այս



1945 թվին հայրենիք ժամանելով Ս. Ս. Գաբրիել Կաթողիկոսը վերստին այցելում է իր սիրած հուշարձանները

հնագիտության վերաբերող նրա ուսումնասիրությունները. այս շարքին են պատկանում նրա «Նիսբե և ուսումնասիրութիւնք հայ Արուեստի և Հայ Մշակոյթի Պատմութեան»-ը, որի երեք պրակները լույս են տեսել 1935-1944 թվականներին, իսկ չորրորդ և հինգերորդ պրակները ներկայումս պատրաստվում են բազմամաստակ գիտնականի կողմից, նաև երեք հատորով հրատարակված «Խաղրակեանք կամ Պոռնեանք Հայոց Պատ-

շարքին են պատկանում Ն. Մանուկ հիշատակին նվիրված «Հաւուց Թառի Ամենափրկիչը և նոյնանուն Յուշարձաններ», ինչպես նաև «Աղիթեկեանք և նրանց շինարարութիւնք», «Ձ դարի հայ արուեստի լուսաբանութիւնք», «Մի կարևոր ձեռագիր Նի-Նորիի Հանրային Մատենադարանում», «Արագածի գագաթին ի խնդիր Լուսաւորչի Կանքեղին», նաև պատրաստ, բայց դեռ չհրատարակված «Ձեռագրական Յիշատակարանների հաւաքա-

ծնօ՞ւ-ի-երեք ստվար հատորները, որոնք հարուստ նյութ են պարունակում հայոց պատմության, մշակույթի, արվեստի ուսումնասիրության համար: Այս հոյակապ գործի տպագրությունը կսկսվի մոտ ժամանակ-

Սակայն նրա աշխատությունների գլուխ գործոցն է կազմում «Հայ մանրանկարչության գունագարդ ֆարաէզը» որի վրա նա դեռ շարունակում է աշխատել:



Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ս. Տ. Գարեգին Ա. Բեյրութի նավահանգստում ողջերը է մաղթում առաջին կարավանով մեկնող հայրենադարձներին.

ներս: Անտիպ գործերից են նաև «Գրչութեան Առուեստը քին Հայոց մէջ», «Ժէ դարի հայ մանրանկարչութեան և որմանկարչութեան մասին» ուսումնասիրությունները և այլն:

Հուանք, որ Գարեգին Կաթողիկոսի ցարդ անտիպ մնացած չափազանց արժեքավոր գործերը շուտով կհրատարակվեն ու մատչելի կդառնան բոլորի համար:



ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա-Ի ԾՆՆՂԵԱՆ 80-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՑԱՆԸ



յս տարի լրանում է Տանն Կիլիկիո Վեհափառ Կաթողիկոս Գարեգին Ա-ի ծննդյան 80-ամյակը: Էջմիածնի Մայր Աթոռը առաջին հերթին պարտք է իրավունք ունի սրտանց շնորհավորելու յուր վաղեմի միաբանի հոբելյանը, այս անգուգական հայի, որ կրկնակի նշանավոր է իբրև հոգևորական և իբրև աշխարհական-գիտնական:

Լինելով Գևորգյան ճեմարանի սան, բարձրագույն ուսում ստանալով արտասահմանում՝ Մայր Աթոռի այս միաբանը բուռն սիրով սիրել և սիրում է էջմիածինը թե՛ իբրև հասարակ միաբան և թե՛ իբրև առաջնորդ Վրաստանի ու Իմերեթի թեմի և Ամերիկայի Միացյալ Նահանգների, միշտ մեկնույն ձգտումն ունենալով, — ազգը կապել էջմիածնի Մայր Աթոռի հետ: Եվ երբ 1945 թվին Սսի կաթողիկոսական թափուր Աթոռի, որ անջատողական ձգտումներ էին նկատվում, Կաթողիկոս օծվեց, նրա ընտրությունը հանդիսացավ փայլուն հաղթանակ էջմիածնի համար: Եվ հիրավի, վերջին Հայրապետական ընտրությունների ժամանակ ծերունի Կաթողիկոսը այդ ընտրությանը մասնակցելու համար հանձն առավ Երկար ճանապարհ կտրել, էջմիածին գալ և իր ձեռքով օծել նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Անմոռանալի է այս հիշատակը, երբ այս երկու աթոռները հինգ հարյուր տարվա ընթացքում առաջին անգամ շաղկապվում են իրար հետ սիրով և եղբայրությամբ: Նույնպիսի սիրով նա հանձն է առել ներկայումս գրելու և խմբագրելու էջմիածնի վերջին տարիների պատմությունը՝ իբրև հոբելյանական նվեր Հայրապետական Աթոռը Սսից էջմիածին փոխադրվելու 500-ամյակին: Նա

իրավունք ունի սաղմոսագրելի նման բացականչելու. «Եթե մոռացայց զբեզ էջմիածին, մոռացի զիս աջ իմ»:

Բայց Տ. Գարեգինն ավելի հայտնի է, իր ողջ հիանամյա կյանքում, մեր գրականության մեջ իբրև բանասեր ու մատենագիր: Այս բնագավառում նա անխոնջ մշակ է հանդիսանում հայ մասնագիտական գրականության մեջ իր մոտ երկու տասնյակ զանազան բովանդակությամբ աշխատություններով, մեծ մասամբ թարմ և ձեռագրական նյութերից: Նրա առաջին գործերը ազգագրական բովանդակություն ունեն.— «Մասմայ ծոեր»-ի կամ Մասունցի Դավիթի մի տարբերակը Մոկաց բարբառով և «Փրշ-րանգներ ժողովրդական բանահյուսությանից» (Թիֆլիս, 1892 և 1893): Այնուհետև գալիս են զանազան մենագրություններ— Խոսրովիկ քաղմանիչ և երկասիրութիւնք եոբին (Վաղարշապատ, 1903), Մխիթար Այրիվանցի (Երուսաղեմ, 1931), Մխիթար Սասնեցի (Վաղարշապատ, 1898), Ռոստոմ Զալ (Թիֆլիս 1905), Թովմա Մեծոփեցու կեանքը (Վաղարշապատ 1934), Խոտակեաց Սուրբ Նշան (Թիֆլիս, 1912), Մի էջ Հայ Արուեստի և Մշակույթի պատմութեան (Հալեպ, 1930), Պատմական մենագրություններ— Խաղբակեանք կամ Պոռնեանք— երկու մաս (Վաղարշապատ, 1928), Մաղափա Արքեպիսկոպոս Օրմանեանք— երկու տպագրություն (Թիֆլիս, 1908), զուտ մասնագիտական գրվածքներ— Մանրանկարչության արուեստը Հայոց մէջ (Թիֆլիս, 1902), Գրչութեան արուեստը Հին հայոց մէջ, մասն Գ, 95 նմանահանած պատկերներով (Վաղարշապատ, 1913):

Բացի սրանցից, նա ուսանող լեզվով գործ ունի Երկու աշխատություն— Տարալին Օրբելյանի սերունդը և Հայ եկեղեցական

ասեղնագործության նմուշներ (Պետերբուրգ, 1913 և 1916):


Բայց նորա ամենաընդարձակ և կարևորագույն աշխատությունները դեռ չեն տպագրվել: Սիրահար լինելով հայ ձեռագրերի մեջ պահպանված մանրանկարչությանը՝ Տ. Գարեգինը երկար ճանապարհորդություն կատարեց, հետը վերցնելով նկարիչ Թադևոսյանին: Նա այցելեց Երուսաղեմը և ապա շրջեց Փոքր Ասիայի արևմտյան գավառները, ամեն տեղ որոնելով և ուսումնասիրելով պատմական հայերեն ձեռագիրները: Ինքը, Տ. Գարեգինը, արտագրում էր այս ձեռագիրների հիշատակարանները, որոնք պարունակում են անթիվ տեղական հիշողություններ այս և այն տեղում պատահած կարևոր անցքերի, որոնք ոչ մի ուրիշ տեղ չեն նշանակված: Այս հիշատակարանները կազմում են երեք սովոր հատորներ, որոնք դեռ նոր են սկսում տպագրվել Տանն Կիլիկիո կաթողիկոսական տպարանում: Իսկ նկարիչ Թադևոսյանը միևնույն ժամանակ արտանկարում էր գույներով պատահած ձեռագրերի պատկերներն ու յուսանցազարդերը, որոնք մի մեծ ալբոմ կազմեցին: Այս թանկագին գանձերով Տ. Գարեգինը վերադարձավ Մայր Աթոռ: Այստեղ ևս Մայր Աթոռի մատենադարանի ձեռագիրներից հավաքեց նկարներ, որոնցով մտածում էր կազմել մի ընդարձակ ալբոմ

հայ հին նկարչության: Աշխատությունը պատրաստվեց, որ յուր նմանը չունեցող հոյակապ գործ էր, բայց նրա տպագրությունը, տեխնիկական դժվարությունների պատճառով, կարող էր միայն արտասահմանում կատարվել: Շատ երկար տեղեցին բանակցությունները այս կամ այն հրատարակչական ֆիրմաների հետ, մինչև որ վերջապես համաձայնություն կայացավ Բեռլինի մի ֆիրմայի հետ և տպագրությունն արդեն պետք է սկսվեր, երբ հանկարծ ճայթեց վերջին աշխարհակործան պատերազմը: Այնուհետև ինչ եղավ այդ հսկա աշխատության միջակեր շփոթում, հայտնի է միայն, որ նա փրկված է կորստից և ներկայումս գտնվում է Լենինգրադում:

Այսքան կարող եմ ասել, թե Տ. Գարեգինը ոչ միայն միակ և ամենահմուտ մասնագետն է նշել հայ մանրանկարչության, այլ և նրա անմիջեղի հիմնադիրն է, որի հաջորդը ներկայումս չկա:

Մաղթում ենք այս բազմաշխատ մշակին, հայ ազգի այս շնորհալի զավակին, երկար և առողջ կյանք. մաղթում ենք, որ նա բախտ ունենա տեսնելու յուր այս երկար տարիների երկունքների տպագրությունը, որ անշուշտ նրա իղձն է, ինչպես նաև ամեն մի բանիմաց հայի իղձը:





ՀՈՎՍԵՓ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ Վ ԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՄԱՍԻՆ

 Եհափառ Կաթողիկոս Գարեգին Հովսեփյանի ծննդյան 80-ամյա հոբելյանը այնպիսի մի նշանակալից երևույթ է մեր կյանքում, որ բոլորիս սրտերը լցնում է ուրախության զգացմունքով և էլ ամբիշ բազմապատկույթ մեր սերն այդ սքանչելի մարդու հանդեպ:

Մազմամբ գլուղացի, հին Արցախի նահանգից, օժտված բնատուր ընդունակություներով, ունենալով բացառիկ զգայուն և կարեկից սիրտ, նա անցավ ուսման ու կրթության բոլոր աստիճաններով, մինչև բարձրագույնը: Բայց ամեն ժամանակ և ամեն տեղ ու ամեն հասարակում նա մնաց միշտ միևնույնը՝ ջերմեռանդ հավատացյալ հոգևորական, ջերմ հայրենասեր, ազնիվ քաղաքացի, մարդ՝ բառի կատարյալ իմաստով:

Մենք, տղ բախտ ենք ունեցել Գևորգյան հոգևոր ճեմարանում նրան աշակերտել և ապա երկար տարիներ նույն մեծ հիմնարկում նրա տեսչության ներքո ծառայել ու պաշտոնակից լինել և այնուհետև էլ, մինչև 1934 թվին նրա արտասահման մեկնելը, շարունակ շփվել հետը, մեծ փափագ ենք զգում, իբրև սկսնառտես, մի քանի հիշողություններ վեր հանել նրա հարուստ ու բազմաբովանդակ կյանքից, որոնք կարող են նյութ ծառայել նրա կենսագրության համար, ում կողմից էլ այն կազմվելու լինի: Մենք նրա գործունեության մատենագրական, պատմագիտական, հնագիտական մանրանկարչության ուսումնասիրական բնագավառները չենք շոշափի, այլ կտանք ժամանակագրական կարգով նրա կյանքի գլխավոր ուղիագծերը,

որոնք նրան այնքան բարձրացնում են մեր աչքում, որպես ժողովրդական մարդու և առաջինի հովվապետի:

Համարյա հիսուն տարի առաջ, 1897 թվի փարնանը, Գարեգին տարկավազ Հովսեփյանը, բարձրագույն կրթության ստացած, արտասահմանից վերադարձավ էջմիածին: Մենք, 12 ընկերներով, սովորում էինք ճեմարանի Ա լսարանում: Ուսման տարին վերջանալու վրա էր և բնականաբար Գարեգին տարկավազը չէր կարող դասախոսել մեզ մոտ. սակայն նրա համբավն այնքան էր խորածված, որ մեր ընկերներից տմանք անհամբերությամբ զոդված շտապեցին գնալ նրա մոտ, ծանոթանալ հետը և տեղեկություններ բերել նրա մասին: Բոլորն էլ հիացած էին նրանով ու հատկապես շեշտում էին նրա նվիրվածությունը հայ ժողովրդին ու եկեղեցուն:

Չպետք է մոռանալ, որ այդ սև ռեակցիայի տարիներին էր: Ցարական կառավարությունը մի տարի առաջ, 1896 թվի հունվարին, առանց սպասելու նույնիսկ ուսումնական տարվա ավարտմանը, փակել էր Կովկասի բոլոր հայկական եկեղեցական-ծխական դպրոցները, որոնք բացառապես հայ ժողովրդի կուսակներով էին պահվում:

Հաջորդ 1897—1898 ուսումնական տարում, երբ մենք արդեն Բ լսարանի ուսանող էինք, Գարեգին տարկավազը մեծ ոգևորությամբ մեզ հայոց հին մատենագրություն էր ավանդում ու միշտ խորհուրդ տալիս բնագիրների վրա ուսումնասիրել այդ աղբյուրները: Այդ ուս. տարվա աշնանն էլ նա արեղա ձեռնարկվեց: Պետք էր տեսնել նրա անդրանիկ պատարագը. դա մի կատարյալ ողբերգություն էր. նրա նման զգա-

յուն սիրտ ունեցողն ուրիշ կերպ էլ չէր կարող վարվել. ամբողջ պատարագը, մանավանդ ահեղ խորհրդին մերձենալիս, լացով ու արտասուքով անցկացրեց: Դրանից հետո նա կարծես նոր լիցք ստացած ամեն գործում առաջավոր էր հանդիսանում:

Ուսումնական տարվա ընթացքում Գարեգին հայր սուրբը մեզ նախապատրաստում էր գալիք ամառային էքսկուրսիային, որ պիտի կատարեինք Դարալագյազում, Վայոց ձորում. գրականություն էր մատնանշում կարդալու համար, հաճախ գալիս էր մեզ մոտ, որոշ պարզաբանումներ անում, շատադուրում ուսումնասիրման այն օբեկտները, որոնց վրա պետք է ուշադրություն դարձնեինք գլխավորապես. — ժողովրդական անգիր բանահյուսություն, հեքիաթներ, պատմվածքներ, երգեր, տնային կահ-կարասիք, գյուղատնտեսական գործիքներ, տղամարդու ու կանացի հագուստեղեն. ապա աշխարհագրական, պատմական, հնագիտական նյութեր, որոնց մեջ հարկավ, ամենակարևոր տեղը արձանագրություններն էին բռնում: Աշխատանքն այնպես էր դասավորում, որ բոլորս էլ վերը նշված բոլոր աշխատանքները հաջորդական կարգով կատարել կարողանայինք: Մենք, 12 ընկերներս, չորս խմբի պիտի բաժանվեինք. եթե առաջին գլուխում անել մի խումբը, օրինակ, հեքիաթներ գրի առնելով պիտի դառնվեք, ապա երկրորդ գլուխում այդ նույն խումբը ժողովրդի նիստ ու կացը պիտի ուսումնասիրեն, երրորդ գլուխում՝ եղած արձանագրությունները պիտի կարդաք ու գրանցեք տետրում և այլն, այնպես որ մենք ամենքս էլ առաջնորդի ղեկավարությամբ աշխատելով որոշ փորձառություն պետք է ձեռք բերեինք նշված ուսումնասիրությունների բնագավառում: Այս էքսկուրսիայի վրա նրա համար ենք ավելի երկար կանգ առնում, որովհետև Գարեգին հայր սուրբին, առաջին անգամ, իսկապես այս ճանապարհորդության ժամանակ միայն ճանաչեցինք:

Մոտեցավ ցամաքի ժամը. ուսումնական տարին փակվեց. մենք փոխադրվեցինք Ելաբանը և տղոջ պատրաստություններ տեսնելուց հետո, սեփական տրամադրությամբ էջմիածնից, Նրեանի վերջով, ճանապարհ ընկանք դեպի Ղամարլու (վարդերը հիշատակում ենք այն ժամանակվա անուններով): Մեր առաջնորդ Գարեգին հայր սուրբը ձեմարանի միջոցներից ծախսերի համար հետը որոշ գումար էր վերցրել, բայց ի պատիվ մեր գլուխական հայ ժողովրդի, պիտի ասենք, որ 40 օր ամբողջ ճանապարհորդության ընթացքում աննդի համար և ոչ

մի տեղ ոչ մի կտակել չծախսվեց: Ամենուրեք մեզ ընդունում էին գրկաբաց, ամենատեսակ հարմարություններ տալիս, նամանավանդ երբ տեսնում էին, որ մեկ արշավամբի պետք մի վեղարավոր է, Մայր Աթոռից եկած: Մեզ ոչ միայն սննդով էին գոհացնում, և ամենայն պատրաստակամությամբ հայր սուրբի ցույց տված վայրերն առաջնորդում, այլ և այնպիսի նոր, հրաշքով անցնող հարուստ վարքեր տանում, որոնք հայտնի էին միայն տեղացիներին և դեռ անծանոթ գրականությանը:

Այն ժամանակներն այդպիսի մի արշավամբի երևալը մեր գլուխում հազվագյուտ երևույթ էր. մարդիկ հետաքրքրությամբ շրջապատում էին մեզ ու զարմանքով զննում, մինչև որ մենք սկսում էինք խոսել ու արդար տալիս մեր առաջ բացվելու. երբ խմանում էին, տղ մեզնից շատերը գլուխացիներ են, զարմանում էին, թե մի՞թե գլուխից էլ կարող են կրթված մարդիկ դուրս գալ ու երանի էին տալիս մեզ՝ մեր բախտավոր լիճակի համար:

Օգտվելով խոր-Վիրապի վանքի մոտիկությունից, Ղամարլուից գնացինք այնտեղ՝ վանքը տեսնելու համար: Նկատենք, որ Ղամարլուից սկսած ճամբորդում էինք ուսով, ընթացքում մինչև ճանապարհորդության ավարտելը: Մինչև անգամ Գարեգին հայր սուրբն էլ մեծ մասամբ ոտով էր գալիս, որ մեզ ավելի էր քաջալերում ու ոգեվորում: Ճիշտ է, հետո Դավալու գլուխում հայր սուրբը մի ձի գնեց, գլխավորապես մեր ունեցած բեռը բարձրելու համար, բայց նա շատ քիչ էր օգտվում ձիուց ու մեծ մասամբ քայլում էր մեզ հետ ոտով: Այդ ձիուն, որը գնված էր 35 ուրլով, ճանապարհորդության ժամանակ այնպես խնամեցինք ու գիրացրինք Վայոց ձորի սառնորակ աղբյուրների մոտ, հյուսիս խոտավետ արոտներում արածացնելով, որ ճանապարհորդության վերջում, Նոր Բայազետում ծախսեցինք 50 ուրլով, որ և ուրախ ծիծաղել նյութ դարձավ բոլորիս համար: 15 ու այդ անակնկալ օգուտը հայր սուրբը, որպես ճանապարհածախս, բաժանեց նրանց, որոնք նրա հետ էջմիածին չէին վերադառնալու, այլ գնալու էին ամառային արձակուրդի մնացորդն իրենց ծնողների մոտ անցկացնելու:

խոր-Վիրապից վերադարձանք Դավալու ու այնտեղից էլ, հրաժեշտ տալով Արարատյան դաշտին, բարձրացանք Ջնջրու, ուր դնելով մեր ցանկացած գավառը Չմուռանք ասելու, որ Գարեգին հայր սուրբը լուսանկարչական գործիք էլ ուներ. ցերեկը հանած նկարները նա նույն գիշերը

մեզնից երկուսի օգնությամբ պատրաստում էր կարմիր լապտերի լույսի տակ Սովորաբար այդ գործողությունը կատարվում էր վանքերի խորաններում, որոնց նեղ-լիկ լուսամուտները հեշտությամբ կարելի էր լինում ծածկել: Զնչրուից սկսած մինչև ճանապարհորդության վերջը լուսանկարչական գործիքն իր դերի մեջ էր. հետագայում այստեղ պատրաստված նր. կարճերից շատերը լույս տեսան Գարեգին հայր սուրբի «Խաղբակեանք կամ Պրոտշեանք» նշանավոր աշխատության մեջ:

Մենք այստեղ միայն կհիշենք մեզ այցելած վայրերից ամենազվազվորները, որտեղ սովորականից ավելի երկար ենք կանգ առել. Զնչրուից հետո դրանք են՝ Ղարախաշ, Ղաշխա, Էրիի, Վրթանես, Այնազուր, Արփա, Նորավանք (Ամաղու), Խաշիկ, Կորադուզ, Ազատեք, Փաշալու, Փոր, Մարտիրոս, Գնդեմազ, Հերհեր, Ս. Խաշ վանք, Մալիշկա, Բաշքենդ, Ալայազ, Հասանբյանդ, Քարազուխ, Սելիմի քարվանսարա, Աղյաման, Նոյ Բայազետ, Նորադուզ, Սևան:

Օրենցոր ուշադրության արժանի այնքան նորանոր բաներ էինք տեսնում, որ սահմանված 40 օրը շատ ու շատ քիչ էր մի ալպիսի հարուստ ու հետաքրքիր շրջան դիտելու համար: Զնչրուից սկսած մինչև վերջն՝ ամբողջ Վայոց ձորը մի ընդարձակ բնական թանգարան է. ճարտարապետական շենքերի մնացորդների մի այնպիսի հյուսիսայ առատություն կա, որ ոչ միայն Հարաստանում, այլ թերևս Եվրոպայի երկրներում հազիվ կարելի է գտնել նմանը. և այս բոլորը միայն մի գավառում: Հուշարձանների մեծ մասը 11—14 դարերից է մնացել և հատկապես 12—13 դարերից: Որտեղ կարելի էր անմատչելի բերդ շինել, շինվել է, որտեղ կարելի էր վանք, անապատ, մատուռ կառուցել և խաչքար կանգնեցնել, արվել է, տրտեղ կարելի էր կամուրջ գցել, գցվել է. կարծես թե այդ դարերում ապրող մեր պապերը, բարի նախնիներից դրված, իրենց հետնորդների համար ազատ տեղ չեն թողել, որ սրանք էլ իրենց հերթին գալիք սերունդների համար մնալուն հիշատակարաններ թողնեն:

Հապա երկրի գեղեցկությունը. գրչով անկարելի է նկարագրել նրա գունեղ պեսպիսությունը. պետք է անձամբ շրջել ոտով ու սեկիական աչքով տեսնել այդ բարձրաքերձ սարերը, անդնդախոր ձորերը, ճեղքված լեռնախորշերը, մթին քարանձավները, մատղաղ անտառները, գլխադուլն ու վառ ծաղիկներով ծածկված սրանչի մարգագետինները, ստոնորակ մշտաբույս բազմա-

թիվ աղբյուրները, ոլորապստելու փրփրուն գետերը:

Իսկ հուշարձանների բազմազանությունը, հուսկապությունը. բազմաթիվ բերդեր, անհաշիվ վանքեր, մեծ մասամբ կիսավեր, մատուռներ, ժայռերի մեջ փորված եկեղեցիներ ու խաչքարեր, ամենանորը տեսակի առանձին կանգնեցրած խաչքարեր, տապաններ, գերեզմանաքարեր, վամուրջներ և այլն, և այլն: Եվ դարմանալի չէ, որ հիշատակարաններով հարուստ մի այսպիսի վայր ընկնելով, Գարեգին հայր սուրբն բոլորիս աշխատեցնում էր, հորդորում օգտվել հանգամանքից ու մեր վերը նշած ծրագրով շանալ հարուստ նյութ հավաքել: Նա մեզ արժեքավոր ցուցումներ էր տալիս հատկապես արձանագրությունների ընթերցման գործում. շատ հաճախ ձեռքին պահած նախորդների գրանցած արձանագրությունները, մեզ կարդալ էր տալիս իսկականները, պատերին գրածները և համեմատելով նշանակում էր նկատված տարբերությունները, միաժամանակ մեր ուշադրությունը հրավիրելով արձանագրություններում ընդունված կրճատումների ու այլ ձևի միավորումների վրա: Մենք նրա ձեռքի տակ աշխատելով այդ գործում այնքան վարժվեցինք, որ այնուհետև շատ աշխատանքներ ինքնուրույն կեղտով էինք կատարում:

Հատկապես երկար, ամբողջ երեք օր կանգ առանք Նորավանքում՝ Ամաղույում, որովհետև այստեղ ուսումնասիրելու նյութ շատ կար: Դամբարան կոչված մասում հանգչում է պատմագիր Ստեփաննոս արքեպիսկոպոս Օրբելյանի աճյունը. նրա աջ ու ձախ կողմը ուրիշ շատ բարձր հոգևորականների ու իշխանների դամբարաններ կան:

Այստեղ Գարեգին հայր սուրբը մի առանձին հոգատարություն էր ցուցաբերում մեր նկատմամբ, քանի որ գլուղում չէինք, այլ առանձնացված վանքում, ամբիլի ճիշտ վանքերում, քանի որ երեք ջուլ-ջուլ գեղեցիկ շենքեր զարդարում էին այս մեկուսացված վայրը: Նա մեր ապահովության համար մոտակա Ամաղու գյուղից հատուկ պահպան վարձեց իր օգնականով հանգերձ, իսկ սննդամթերքի համար ամենևին նեղություն չէինք բաշում, որովհետև մոտիկ հայ գյուղը հոգացել էր այն:

Մեր ճանապարհորդությունն այնքան բազմաբովանդակ ու հետաքրքիր էր, որ չիմացանք, թե ինչպես Քարազուխից դուրս գալով հրաժեշտ տվինք Վայոց ձորին, Դարազաղաղին ու մտանք Գեղարքունիք: Սեյիմի քարվանսարայում հանգիստ առնելով,

շարունակեցինք մեր ճանապարհը և գիշերելով Ադիյամանում, մյուս օրը մտանք Սուր Բայազետ ու այստեղից էլ անցանք Նորարտուզ: Չմոռանանք հիշել և այն, որ Գարեգին հայր սուրբը ճանապարհորդության ժամանակ արժեքավոր հնություններ էլ էր հավաքում— հին դրամներ և այլ իրեր: Այստեղ Նորարտուզում եկեղեցու մետաքսազործ սրանչիլի հին վարագույրը նրա ուշադրությունը գրավեց և հետագայում նորով փոխարինելով, այն բերել տվեց էջմիածին. այդ վարագույրը թանգարանի ամենագեղեցիկ զարդերից մեկը դարձավ:

Քառասնօրյա ճանապարհորդությունն ավարտված էր, նպատակն իրագործված, արդյունքն ավելի քան բավարար: Մեզ մնում էր այն ժամանակվա ձկնորսական նավով Նորարտուզից դնալ Սևան. հաջորդ օրը, Վարդավառին, նրա ուխտեմ էր: Բայետին հաճելի եղավ Սևանա լճի վրա փորձել մեր առաջնորդի կայունությունը, դիմացկունությունը:

Նորարտուզից ճանապարհ ընկանք ցերեկվա ժամը 1-ին, այն հաշվով, որ 2—3 ժամից հետո լինենք Սևանում. բայց ծովակն սկսեց ալեկոծվել. սղոնեյան քամին մեր նավակը քշում էր դեպի արևմուտք, դեպի ժայռոտ ափերը, այն ինչ մեր ուղղությունը պիտի լիներ դեպի հյուսիս: Երկու նավավարներն էլ սկսեցին անհանգստության նշաններ ցույց տալ ու ամեն կերպ աշխատում էին նավակը հեռու պահել արևմտյան ափերից: Քամին սկսեց մաստկանալ. այնպիսի ալիքներ առաջացան, որ մենք ապրեցինք, թե մի թե փոքրիկ լճի վրա կարող էին այդպիսի ահագին ծովային ալիքներ դուրսնալ: Սակայն Գարեգին հայր սուրբն աննկուն էր. նա մեզ սիրտ էր տալիս, որ ոչինչ չի պատահի, և մեզ ամեն հանգստացնելու համար սկսեց երգել «Մով կենցաղոյս հանապազ զիս ալեկոծէ: Մորկեալ ալիք թշնամին ինձ յարուցանէ: Նաւաւետ բարի, լիւր անձին իմոյ ապաւէն» շարաւիանը, հորդորելով ձայնակցել իրեն: Սակայն բռնեղացող քամին խլացնում էր մեր ձայնը, փակ նավակն ավելի ու ավելի մեծ ուժով էր շարժվում դեպի արևմտյան ափը: Սկսեցին երևալ ստորջրյա ժայռերի ցցուն ծայրերը. մեր նավակը դիպավ նրանց, բայց չծակվեց: Նավավարներն ալալվեցին: Մեզինից ոմանք արդեն փռվել էին նավակի հատակին ու արևս փռնություն հույս չունեին: Նավակը թեթև տաշելի պէս թռչում էր ալիքների միջև, հետո աստիճանի ծոցով ընկնում: Ուժգին ալիքները սկսեցին ներխուժել նավակի ներսը, բայց

մեր առաջնորդը, միշտ ոտի վրա ու հայացքը Սևանին հառած, չէր ընկճվում, փրկության էր սպասում ու երբեմն էլ ցուցումներ տալիս նավավարներին, որոնք կաշվից դուրս էին գալիս նավակն արևմտյան ափից հեռու պահելու համար: Այսպես 5—6 ժամ մաքառելով բնության ահեղ տարրերի դեմ, նավավարները նկատեցին քամու մեղմանալու նշաններ և վերահաս մահվան վտանգի անցում: Նրանց դեմքի վրա ժպիտ խաղաց: Ժպտաց և Գարեգին հայր սուրբը. նավակի հատակին կուշ եկած մեր ընկերները գլուխները բարձրացնելով համոզվեցին, որ վտանգն անցել է: Նավակն այժմ ուղիղ շարժվում էր դեպի Սևանա կղզին, որն արդեն պարզ նկատելի էր. նավավարները պատմում էին, որ նրանք այդպիսի ուժեղ փոթորկի չէին հանդիպել դեռ. նրանք շատ վախեցել էին ստորջրյա ժայռերից, որոնցից շատ կային լճի այդ մասում. ժայռերին զարնվելուց նավակը կարող էր հեշտություն մտնել, ընկղմվել ու բոլորս էլ կխեղդվեինք:

Հրաշքով ազատվելով երբ կղզում ափի իջանք, ուրախագին աղաղակներով մեզ դիմավորեց ուխտավորների մի ահագին բազմություն. բոլորն էլ զգացվեցին, մեր առաջնորդին ու մեզ մահվան ճիւղաններից ազատված տեսնելով. նրանք կղզու վրայից նկատել էին մեր օրհասական պայքարը բնության տարրերի դեմ: Սևանի միաբանները ցնծության մեջ էին տեսնելով Մայր Աթոռի միաբան Գարեգին հայր սուրբին իր աշակերտներով հանդերձ փրկված. ինչպես պարզվեց, նրանք մեր օրհասական վիճակը տեսնելով, խաչ ու խաչվառով աղոթքի էին դուրս եկել, երկնքից փրկություն հայցելով մեզ համար:

Մենք անշափ ուրախ էինք մեր սիրելի ուսուցչի կյանքի փրկության համար. նեղություն, փորձանքի ահեղ ժամերին նա պահպան հրեշտակի պես հովանի եղավ մեզ ու իր անձնական օրինակով քաջալերեց և սովորեցրեց երբեք չընկճվել, շիտալալ, չլքվել: Նրա այս գեղեցիկ հատկությունն անբաժան մնաց նրանից իր հետագա ողջ կյանքի ընթացքում: Ուրիշ փորձություններ էլ վիճակվեցին նրան, բայց նա անսասան մնաց ու արիություն մեզ հաղթահարեց բոլոր փորձությունները:

Հետագա երկու տարիներին Գարեգին հայր սուրբը շարունակեց դասավանդել ճեմարանում, բայց հետո ստիպված եղավ առժամապես բաժանվել ճեմարանից ու իր աշակերտներին:

Գարեգին հայր սուրբը ջերմ սիրով կապված էր նաև Մատենադարանի, ձեռագրատան հետ, որտեղ երկար նստում ու մանրակրկիտ ուսումնասիրություններ էր վիստարում։ Բայց երբ վեհափառն անհրաժեշտ էր համարում նրան մի այլ գործի տալակել, նա անտրտունջ, ամենայն սիրով կտրվում էր իր սիրած աշխատանքներից ու գնում այնտեղ, ուր վեհն էր հրամայում։ Այսպես 1900 թվին նա, մի տարի ժամանակով, գնաց Թիֆլիս, իբրև թե մի ժամանակավոր կառավարիչ ու մնաց մինչև նոր թեմակալ առաջնորդի նշանակումը։ Երևանի թեմական դպրոցը տեսուչ չունի։ Նրա հոգաբարձությունը հարմար թեկնածու չէր գտնում և ահա այդ հոգաբարձության խնդրանքը իրիմյան Հայրիկը համարում է, որ Գարեգին վարդապետը Երևան տեղափոխվի ու ստանձնի դպրոցի տեսչությունը։ Նրա տեսչությունը Երևանի թեմական դպրոցում տեղեց երեք տարի, 1901—1904 թ. թ.։ Խոսք չկա, որ նրա օրոք դպրոցը բեղմնավոր աշխատանք կատարեց։ Երեք տարի հետո դպրոցի հոգաբարձությունը, զիջելով վեհափառի ցանկությունը, մի հարմար տեսչացու գտավ Գարեգին վարդապետին փոխարինելու համար և նրան մեծ պատվով ճանապարհ դրեց էջմիածին։

Հայագետ Կ. Կոստանյանից հետո Գևորգյան ճեմարանին հարկավոր էր մի փորձված ու հմուտ ղեկավար։ Խրիմյան Հայրիկը միակ հարմար թեկնածու համարեց Գարեգին վարդապետին և վերջինս ամենայն հնազանդությամբ հանձն առավ ճեմարանի տեսչի պատասխանատու պաշտոնն ու 1905—1906 ուստարին փակեց զգալի նվաճումներով։

Այնուհետև Գարեգին հայր սուրբին մենք մեծ մասամբ տեսնում ենք Մայր Աթոռում, զլխավորապես Մատենադարանում աշխատելիս։ Նա միաժամանակ ուսուցչություն էր անում թե՛ ճեմարանում և թե՛ Երևանի թեմական դպրոցում, էջմիածնից շաբաթական երեք անգամ Երևան մեկնելով։ Հիշենք նաև, որ Գարեգին հայր սուրբը մշտական աշխատակից էր հանդիսանում հայրապետական պաշտոնական «Արարատ» ամսագրի, ուր նա միշտ լուրջ ուսումնասիրություններ էր զետեղում մեր հարուստ սնդյալի շատ ու շատ խնդիրների վերաբերյալ։ Նա, իբրև ձեռնհաս միաբան, վարել է նաև ս. Հոփսիմեի վանքի վանահայրությունը, Գևորգ Ե-ի կաթողիկոսության օրոք երկար տարիներ ապրելով այնտեղ։

Իր զիտական աշխատությունների և ուսումնասիրությունների առնչությամբ ամառները նա հաճախ էր ուղևորվում արտասահ-

ման։ Երբ բռնկվեց առաջին համաշխարհային պատերազմը, Գարեգին վարդապետը գտնվում էր Թուրքիայում, Սեբաստիայում, ուր գնացել էր տեղում գտնվող ձեռագրերն ուսումնասիրելու համար։ Նա մեծ դժվարությամբ կարողանում է հասնել Սև ծովի Սամսուն նավահանգիստը, այնտեղից էլ Բաթումի ու ապա էջմիածին։

Հարյուր հազարավոր տղամարդիկ կտրվելով իրենց հարազատներից ու աշխատանքից մեկնեցին պատերազմի դաշտը։ Տաճկական ռազմաճակատը շատ մոտ էր. սարսափելի լուրեր էին պատում, խոտվելով հսկ ժողովրդի հանգիստը։ Հայ ժողովուրդը նորից պիտի տրորվեր, ոտնակոխ լիներ սահմանի երկու կողմում էլ։ Ռուսական բանակի ղեկավարներից նահանջը համեմատաբար քիչ թվով (10-15 հազար) դադարեցնեց բերեց էջմիածին, այն էլ մեծ մասամբ Բագրևանդից, Ալաշկերտից։ Հայ ժողովուրդի առատ նյութական աջակցության շնորհիվ Մայր Աթոռը կարողացավ պատսպարել նրանց։ Զգալուն սրտի տեր Գարեգին հայր սուրբը չէր կարող անտարբեր մնալ այս աղետի հանդեպ։ Ռուսական բանակի առաջխաղումից հետո նա կտրուկ միջոցների դիմեց և զբաղակալներին վերադարձրեց իրենց տեղերն, ապահովելով նրանց սննդամթերքով։ Բայց շատ կարճ տևեց այդ։ 1915 թվի հուլիսին լսեցինք, որ ռուսական բանակի նորից նահանջում է և նրա հետ միասին ղեկավար Կովկաս է շարժվում ամբողջ Վասպուրականի հայությունը։ Ի՞նչ էինք սպասում և ինչ ստացվեց։ Վասպուրականի հովասուն վարերին սովոր ժողովուրդը, հուլիսյան շոգերին, գաղթի ամենադժնդակ պայմաններում, հավաքվում էր Արարատյան տաճակեղ դաշտում, խոնվում էջմիածնի շուրջը, միակ փրկությունը նրանից սպասելով։ Քանի՜-քանի՜ հազարավոր տղամարդ ու կին, մանուկ ու ծեր զրկվեցին կյանքից։ էջմիածինը իսկույն օգնություն կազմակերպեց, գոնե ողջ մնացածների կյանքը փրկելու համար։ Կազմակերպվեց եղբայրական օգնություն, որը զլխավորելու նշանակվեց Գարեգին վարդապետը։ Զանազան վայրերից շատ հայ մտավորականներ էին գալիս էջմիածին հայ ժողովրդի փրկության գործի կազմակերպմանը մասնակցելու համար։ էջմիածին եկավ նաև մեր մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, որը ամառալին երկու շոգ ամիսներ մնաց էջմիածնում՝ հորդորելով ամեն ինչ մի կողմ դնել և զբաղվել միմիայն ժողովրդի փրկության գործով։

Կլիմային անսովոր լինելու հետևանքով

սկզբում տասնյակներով, ապա հարյուրներով մարդիկ էին մեռնում օրը: Գարեգին հայր սուրբի կարգադրությամբ ժողովուրդը էջմիածնից տեղափոխվեց նախաբեռնային շրջանները, որն ունեցավ իր բարերար ազդեցությունը: Նվազեց մահացությունը: Ծեմարանն իր հարակից բոլոր շենքերով տրամադրվեց հիվանդների ու սրբ. Երեխաների տեղավորման համար: 1915—1916 ուս-տարում ճեմարանն իր սաների համար փակ մնաց, բայց դրա փոխարեն հազարավոր որբ երեխաներ փրկվեցին: Գարեգին հայր սուրբը մոռացած հանգիստ ու քուն, գիշեր, ցերեկ զբաղված էր հայ ժողովրդի ֆիզիկական դոյուքությունը փրկելու գործով և նա սորոշ չափով հասավ իր նպատակին. գաղթած ժողովրդի մեծ մասը փրկվեց. հետագայում որբերն էլ տեղափոխվեցին Երևան ու այլ վայրեր և ճեմարանը 1916—1917 ուս. տարում վերսկսեց իր աշխատանքը: Գարեգին հայր սուրբի տեսչության այս շրջանում, չնայած պարենային սուղ պիճակին, ուսանողության սննդի գործը լավ էր կազմակերպված, շնորհիվ նրա եռանդուն ջանքերի: Հանդուցյալ Գևորգ Ե. կաթողիկոսը 1917 թվի դարնանը Գարեգին վարդապետին եպիսկոպոս ձեռնադրեց իր մատուցած անթիվ ծառայությունների համար:

1917—1918 ուս. տարին սկսվեց խռովահույզ պայմաններում. նորից լուրեր էին պտտում նոր քաղթի ու թուրքական արշավանքի մասին. ստեղծվել էր մի կացություն, որն անհնար էր դարձրել խաղաղ դպրոցական աշխատանքով զբաղվելու: 1917 թվի դեկտեմբերի վերջին ճեմարանը փակվեց և ջենքը անցավ գինյուրական իշխանության ձեռքը: Այդ տարիներին Գարեգին Սրբառանին տեսնում ենք ամենուրեք, ժողովրդի մեջ, ուր նա ջանք չէր խնայում թեթևանելու նրա տանջանքները:

1920 թվի աշնանը, երբ թուրքները արշավեցին Հայաստանի վրա, Գարեգին սրբազանը հանգիստ նստել էջմիածնում չէր կարող: Նա մեկնում է Կարս. սակայն, ոգբախտաբար նյատեղ, Կարսի ժողովրդի հետ միասին, նա գերի է ընկնում թշնամու ձեռքը: Գերի միճակում անգամ, նա կարողանում է մասամբ մեղմել թշնամու վայրագություններն ու բազմաթիվ անձանց ու որբերի փրկել:

Այս մեծ փորձությանն էլ դիմացավ Գարեգին սրբազանը և, ինչպես հետո ինքն էր պատմում, մի տեսակ հրաշքով անսպասելիորեն ազատվելով, գալիս է էջմիածին, ուր վերջապես հանգստություն է գտնում նորահաստատ սովետական իշխանության հովանու ներքո, իր կրած այնքան տառապանքներից հետո:

Միանգամայն ապահով լինելով հայ ժողովրդի բախտավոր ապագայի նկատմամբ և սրտանց ողջունելով սովետական կարգերի հաստատումն ու դարավոր կապերի վերականգնումը Ռուսաստանի հետ, Գարեգին սրբազանն այնուհետև հանգիստ սրտով նվիրվում է իր ընդհատված գրական աշխատանքները կարգի բերելու և ավարտելու գործին: Այս կապակցությամբ սրբազանն 1934 թվին ուղևորվում է արտասահման, որտեղ և հետագայում ի տրիտուր իր փառավոր վաստակների, ընտրվում է Տանն Կիլիկիո կաթողիկոս:

Արտասահմանում գտնվելով նա ջերմ կապ է պահպանում Մայր Հայրենիքի ու Մայր Աթոռի հետ, որոնք նրա ողջ կյանքի իմաստն են կազմել: Հայրենական մեծ պատերազմի տարիներին, նրա ջերմ կոչերին արձագանքելով, Սփյուռքի հայությունը իր առատ նվերներով աջակցեց մեր քաջարի Կարմիր Բանակի հաղթանակին:

1945 թվի ամռանը Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությանը մասնակցելու համար Կիլիկիո Նորընտիր Շնորհազարդ Կաթողիկոսն անձամբ եկավ էջմիածին, հանդիսադիր եղավ Նորընտիր Ամենայն Հայոց Վեհափառ Գևորգ Զ Կաթողիկոսի սուրբ Օծման արարողությանը, հրավարտն առավ Հայաստանից, օրհնեց ու վերադարձավ իր Աթոռը:

Մի հետագարձ հայացք ձգելով նրա կյանքի բոլոր էտապների վրա, իրավամբ կարող ենք ասել, ահա մի բեղմնավոր կյանք, որ պատկանեց մեզ բոլորիս, հայ ժողովրդին, հալ եկեղեցուն:

Նրա ծննդյան 80-ամյա հոբելյանի առթիվ ցանկանք բոլորս էլ, որ Տանն Կիլիկիո Գարեգին Վեհափառ Կաթողիկոսը երկար ապրի և մխիթարվի Մայր Հայրենիքի, Մայր Աթոռի ու հայ ժողովրդի ծաղկման և բարգավաճման հետագա բուռն վերելքով:



Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ

Հունվարի 1-ին Ամանորի առթիվ Մայր Տաճարում Ս. Պատարագից հետո կատարվեց Հայրապետական հանդիսավոր մաղթանք Վեհափառ Հայրապետի ներկայությամբ: Ս. Պատարագից հետո Մայր Աթոռի միաբանությունը ներկայացավ Վեհափառ Հայրապետին իր շնորհավորանքը մատուցելու նշք տարվա առթիվ:

Հունվարի 6-ին, Ս. Ծննդյան տոնի օրը, Մայր Տաճարում Ս. Պատարագ մատուցվեց և ժողովրդի հոծ բազմության ներկայությամբ կատարվեց ջրօրհնյաց հանդեսի արարողությունը: Տաճարում ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ամանորի և Ս. Ծննդյան տոնի առթիվ Վեհափառ Հայրապետի անունով շնորհավորական հեռագրեր են ստացվել Տանն Կիլիկիո Շնորհազարդ Կաթողիկոսից, Նրուսաղեմի Պատրիարքից, Պոլսի Պատրիարքի Տեղապահից, ՍՍՌ Միության և արտասահմանյան թեմերի Առաջնորդներից ու բաղմաթիվ հավատացյալներից:

Ս. Վարդանանց զորավարաց և 1036 վկայից տոնի օրը Մայր Տաճարում Ս. Պատարագ մատուցվեց և հոգեհանդիսատ կատարվեց ազգի ու հավատի համար նահատակվածների հիշատակին:

Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. Վարդանանց տոնի օրը էջմիածնի Հոգեվոր ճեմարանում տեղի ունեցավ գրական-գեղարվեստական երեկույթ: Օրվա նյութի շուրջը բանախոսեց ճեմարանի դասատու Ա. Դիլոյանը: Արտասանություններով հանդես եկան ուսանողները: Հաջող ելույթ ունեցավ Իրանից ներգաղթած պատանի ջութակահար Առաքելյանը: Հանդեսի վերջում Տ. Նիկողոսյան քհն. Բավեյանի ղեկավարությամբ երգեցիկ խումբը կատարեց Հայկական հիմներ:

Երեկույթին ներկա էին Հոգևոր ճեմարանի դասատուական կազմը, վանքի միաբանությունը և հյուրեր:

Շիկագոյի Հայաստանյայց Ս. Գրիգոր Լուսավորիչ ֆինդեցվո հոգևոր հովիվ Վահրամ ծ. վրդ. Նազարեթյանը և հոգաբարձության ատենապետ Խ. Զեբանյանը, ատենադպիր Վ. Միքայելյանը ու զանազապահ Մ. Մանվելյանը Ամանորի և Ս. Ծննդյան տոնի առթիվ Վեհափառ Հայրապետի անունով իրենց հղած շնորհավորական գրությամբ միաժամանակ հայտնում են, որ եկեղեցին ներգաղթի սուրբ ու վսեմ գործին տրամադրել է հինգ հարյուր տարբեր:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ. Հայրապետական Կոնդակով, տրված 1946 թ. 7 դեկտեմբերի, իր գոհունակությունն է հայտնել Ս. էջմիածնի Հիմնադրամի Լոնդոնի Կեդրոնական Հանձնաժողովին և շնորհել, երկար տարիների բարեխիղճ աշխատարար:

տանքի համար, նույն Հանձնաժողովի նախագահ Տ. Կարապետ Տիլպերին Ս. Լուսավորչի Ա կարգի ադամանդազարդ շքանշան:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ Հայրապետական կոնդակով, տրված 1946 թ. 7 դեկտեմբերի, իր գոհունակությամբ է

հայտնել Ս. Էջմիածնի Հիմնադրամի Լոնդոնի Կեդրոնական Հանձնաժողովի Գործադիր Մարմինն-ին և շնորհել Գործադիր Մարմնի նախագահ Տ. Հ. Մելքումին Ս. Լուսավորչի Ա կարգի ադամանդազարդ շքանշան, ի տրիտուր նրա երկար տարիների քարեխիղճ գործունեության:


Պ-ՐՆ Բ. ԲԱՔԱՂՅԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱՔՈՒ

Սիրիայի հայ հասարակական գործիչ պ-րն Բ. Բաքալյանը, հայրենիք՝ Սովետական Հայաստան ժամանելով, երկիցս այցելեց Մայր Աթոռ ու երկիցս էլ արժանացավ Ամենայն Հայոց Հայրապետի սիրալիկ ընդունելությանը:

Վեհափառը, բարձր գնահատելով պ-րն Բ. Բաքալյանի հասարակական ազգագրատ գործունեությունը՝ հատկապես ներգաղթի մարդում, Հայրապետական կոնդակով շնորհեց նրան Ս. Լուսավորչի Ա կարգի ադամանդազարդ շքանշան:

Պ-րն Բ. Բաքալյանի անվամբ տրված կոնդակում Ամենայն Հայոց Հայրապետը հետևյալ տողերն է արձանագրում ներգաղթի մասին.—

«Ներգաղթը ներկա Հայ կյանքի խոշորագույն երևույթներից գլխավորն է. նա մեր անցյալ թշուառ կյանքի անսկի թեքումն է դեպի բախտավոր կյանքը. նա ազգահավաքման սկիզբն է դնում հայրենի ձրկրում, որը պիտի նպաստե Հայ ժողովրդի աճման, զորացման և նրա կուլտուրական վերելքին, նաև պիտի ծառայի նորա արդար դատի ի-



Բ. Բաքալյան

րացման: Յուրաքանչյուր հայ ազգասեր և հայրենասեր մարդու բնական ու բարոյական պարտքն է նպաստել այդ ազգաշեն շարժմանը:





ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԹՂԹԵՐԸ



Պոլոս առաքյալն իր ընդարձակ
զործունեության ընթացքում
միշտ կենդանի կապ է պահել
իր նորահաստատ քրիստոնյա
համայնքների հետ և հարկ եղած ժա-
մանակ նրանց հետ իր պրած թղթե-
րով է խոսել, ամեն անգամ հան-
դես գալով քրիստոնեական սկզբունքների
պարզաբանողի, մեկնիչի դերում և միաժա-

մանակ խրատելով նրանց ու հորդորելով
Քրիստոսի ճանապարհով ընթանալ: Թղթերը
գրել է նա իր ճանապարհորդությունների
ընթացքում՝ զանազան քաղաքներից: Այդ
թղթերի թիվը տասնչորս է: Թղթերից մի
քանիսը զանազան անձանց է ուղղված:
Մենք կտանք այդ թղթերից յուրաքանչյուրի
ամենաէական մասերի համառոտ բովանդա-
կությունը, որոշ տեղերում նաև բնագրի ա-
մենացայտուն տեղերը՝ թարգմանաբար:

ԹՈՒՂԹ ԱՌ ՀՈՒՄԱՅՆՑԻՍ

Այս թուղթը Պոլոս առաքյալը գրել է
Հռոմի նորադարձ համայնքին՝ Կորնթոսից:
Ողջունելով նորադարձ քրիստոնյաներին,
գոհունակությամբ հիշատակում է նրանց
հավատի մասին, որ ամեն տեղ պատմվում է,
և ցավ է հայտնում, որ շատ անգամ է
ցանկացել այցելել ու մխիթարել նրանց,
բայց չի հաջողվել: Այս թղթում նա
գլխավորապես կանգ է առնում հա-
վատի՝ քրիստոնեական կրոնի այդ
կարևոր կողմի վրա—օրինակներ է բե-
րում, թե ինչպես հնումը ևս կենդանի հա-
վատը հրաշքներ է գործել: Աբրահամն ու
Սառան թեև զառամյալ հասակ ունեին, բայց
սրտանց հավատացին Աստծուն, իրենց տըր-
ված ափետիքին՝ շատ ու շատ ազգերի հայր
դարձնելու մասին ու զավակ ունեցան: Այնու-
հետև նա գրում է.— Ինչպես նրանք հավա-
տացին, այնպես էլ մենք պետք է հավա-
տանք, որ Աստված Հիսուսին հարություն
տվեց, նախօրոք մատնելով շարժարանքների
ու խաչելության մեր հանցանքների համար:
Հիսուս հարություն առավ մեզ արդարացնե-
լու և անմահ կյանք պարգևելու համար: Արդ
ո՞վ կբաժանի մեզ Քրիստոսի սիրուց, նեղու-
թյուն թե՞ անձկություն, թե՞ հալածանք,
թե՞ սով, թե՞ մերկություն, թե՞ վիշտ, թե՞
սուր. հաստատ համոզված եմ, որ ոչ մահ և
ոչ կյանք, ոչ հրեշտակներ և ոչ իշխանու-
թյուններ, ոչ նրանք, որ ներկայումս գոյու-
թյուն ունեն և ապագայում լինելու են, ոչ

զորություններ, ոչ բարձրություն և ոչ խորու-
թյուն և ոչ այլ ինչ արարած կարող է մեզ
բաժանել Աստծու, մեր Տեր Հիսուս Քրիստո-
սի սիրուց:

Այնուհետև մի շարք խրատներ տալուց հե-
տո ասում է.— Հուսով խնդացեք, նեղության
համբերեցեք, հաճախ աղոթեցեք, հյուրասի-
րության սովորությունը հարգեցեք, օրհնեցեք
ձեր հալածիչներին, օրհնեցեք և մի՛ անի-
ծեք: Խնդալ խնդացողների հետ, լալ լացող-
ների հետ, ոչ ոքի չարի փոխարեն չար չհա-
տուցանեք, բոլոր մարդկանց նկատմամբ
բարի մտադրություններ ունեցեք. եթե հնա-
րավոր է, բոլոր մարդկանց հետ խաղաղու-
թյամբ ապրեք: Եթե չո թշնամին քաղցած է,
հաց տուր նրան, և եթե ծարավ է, ջուր տուր
նրան. այս անելով հրո կայծակներ կկուտես
նրա գլխին: Մի՛ հաղթվիր չարից, այլ հաղ-
թիր չարին բարիով:

Նորաբողոք քրիստոնեության համար շատ
կարևոր խնդիրներից մեկն էլ պետության
հանդեպ բռնելիք դիրքն էր: Պոլոս առաք-
յալն իրեն հատուկ հատակությամբ ըմբռնում
էր պետության հանդեպ անպայման հնազան-
դություն ցուցաբերելու սկզբունքը և այս
առիթով շարադրում է հետևյալ նշանավոր
տողերը.— Ամենայն անձ, որ իշխանության
ներքո է, հնազանդության մեջ թող մնա, ո-
րովհետև իշխանությունն ուրիշ ոչ մի տեղից
չէ, բացի Աստծուց և որովհետև կան, Աստծուց
կարգված են: Այսուհետև ով հակառակ է

մնում իշխանությունը, Աստծո հրամանին է հակառակ լինում. իշխանությունները երկյուղալի են ոչ թե բարի գործերի համար, այլ շարժումն են չվստահող իշխանությունից, բարիք գործիք և նրանից գովություն կրնադուռնա, որովհետև Աստծու պաշտոնյա է քեզ դեպի բարին առաջնորդելու, իսկ եթե շարիք գործես, վախեցիր, որովհետև եզրու չի կապել սուրը մեջքին. նա Աստծու սպասավոր է, վրեժխնդիր լինելու և բարկություն թափելու նրա գլխին, ով շար բաներ

կանի: Այս պատճառով հարկ է հնազանդ լինել, ոչ միայն բարկություն չբերելու համար, այլ և խղճի մտաց համար: Արդ, հատուցեք յուրաքանչյուրը ձեր պարտքերը: Որին հարկը՝ հարկը, որին մաքսը՝ մաքսը, որին երկյուղը՝ երկյուղը, որին պատիվը՝ պատիվը, այնպես՝ որ ոչ ոքի առաջ պարտական չմնաք, բացի միմյանց սիրելուց:

Թղթի վերջում խոստանում է այցի գնալ նրանց և մի փոքր հանգստանալ այնտեղ:

ԱՌ ԿՈՐՆԹԱՅԻՍ ԱՌԱԶԻՆ ԹՈՒՂԹ

Այս թուղթը Պողոս առաքյալը գրել է Եփեսոսից: Թղթում նա հավատացյալներին հորդորում է միաբան լինել միմյանց հետ և հեռու մնալ հակառակությունից, որովհետև ինքը լսել էր, որ ոմանք իրենց անվանում են Պողոսյան, մյուսներն՝ Ապոլոսյան, երրորդները Կեփայան և չորրորդները Քրիստոսյան, միջոցով ամենքն էլ հավատացյալներ են ի մի Հիսուս Քրիստոս, ուրեմն և ո՛չ մի բաժանում կամ հերձված չպիտի լինի նրանց մեջ: Հիշեցնում է, որ ինքը միշտ ամենուրեք քարոզել է Քրիստոսի ուսմունքը, որի համար բազմաթիվ նեղություններ է քաշել, քաղցել է ու ծարավել, մերկ մնացել ու շարժարկել, անհանգիստ եղել, սեփական ձեռքերով հաց վաստակել, շատ անգամ էլ քրիստոնեաբար ներել ամեն բան. եթե բաժանում էին, նա օրհնում էր, հալածում էին, չէր դժգոհում, հայհոյում էին, աշխուժ էր և այս բոլորը հանուն Քրիստոսի, որի առաքյալն էր ինքը:

Այնուհետև հատկապես հորդորում է հեռու կենալ զանազան ախտերից, ինչպես օրինակ պոռնիկությունից և աշխատել միշտ նմանվել Քրիստոսին, որ զգեցավ ամենը, ինչ որ մարդկային է, բացի մեկից: Քրիստոս սիրո քարոզիչ էր, այդ պատճառով էլ սերը պիտի թափավորե ամենուրեք. այս առթիվ մեծ ոգևորությամբ նա շարադրում է հետևյալ նշանավոր տողերը. — Եթե մարդկանց կամ հրեշտակների լեզուներով խոսելու լինեմ և սեր չունենամ, կլինեմ աս իբրև մի սղդիս, որ հնչում է, կամ իբրև ցնծող, որ

դողանջում է: Եվ եթե ունենամ մարդարեություն և գիտենամ բոլոր խորհուրդները ու բոլոր գիտությունները, և եթե ունենամ լրիվ հավատը մինչև իսկ լեռները շարժելու և սեր չունենամ, ոչինչ եմ: Եթե ամբողջ ունեցածս տամ աղքատներին և իմ մարմինը տրամադրեմ ալրելու ու սեր չունենամ, ոչ մի օգուտ չեմ ունենա: Սերը երկայնամիտ է, քաղցրացնում է, չի նախանձում, չի գոռոզանում, չի հպարտանում, հանդուգն բաներ չի անում, չի որոնում յուր սեփականը, չի դժգոհում, չի մտածում շար բաներ, չի ուրախանում անիրավության վրա, այլ ուրախանում է ճշմարտության վրա: Ամեն բանի դիմանում է, ամեն բանի հավատում է, ամեն բանով հուսադրվում է, ամեն բանի համբերում է: Արդ մնում են հավատ, հույս, սեր, այս երեքը, և սրանցից մեծը՝ սերն է:

Ապա հիշեցնում է, որ փնջը քարոզել է այն, ինչ ընդունել է, այսինքն թե Քրիստոս մեռել ու թաղվել է մեր մեղքերի համար և ապա հարություն է առել ու երևացել շատերին, ինչպես իր բոլոր աշակերտներին՝ առաքյալներին, այնպես էլ հինգ հարյուրի չափ այլ անձանց, իսկ ամենավերջը իրեն՝ Պողոսին, այսպիսով նա խոստովանում է, որ փնջը ամենահետինն է առաքյալներից, որովհետև մի ժամանակ հալածելիս է եղել Աստծու եկեղեցին: Ապա խոսքը դարձնելով Քրիստոսի հարությանը, հանդիմանում է նրանց, ովքեր ասում են թե մեռելներին հարություն չկա:

ԱՌ ԿՈՐՆԹԱՅԻՍ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ

Այս թուղթն առաքյալը գրել է Փիլիպից: Հայտնելով քարոզությունների ժամանակ Ասիայում կրած իր նեղությունների մասին, միևնույն ժամանակ հազորդում է, որ ինքը երբեք չի ընկճվել նեղ օրերին, այլ միշտ հուսացել է առ Աստված, որից և փրկության ճանապարհ գտել: Այնուհետև զգուշացնում

է, որ նոր քարոզիչներ ևն հայտնվել, որոնք իբր թե շատ նեղություններ են քաշել քարոզական ասպարեզում ու հիմա դրանցով պարծենում են: Եթե պարծենալու մասին է խոսքը, ապա ինքն ավելի իրավունք ունի պարծենալու, երբայցի՝ են, ե՛ս էլ. իսրայելացի՝ են, և՛ս էլ. Աբրահամի զավակ են,

և՛ս էլ... Քրիստոսի պաշտոնյանն էր են, ես առավել եւս. եթե ծառայութիւններով, ավելի. եթե ծեծի ենթարկվելով, եւս առավել. եթե բանտով, ավելի քան նրանք. եթե մահ-վամբ, բազում անգամ: Հրեաների կողմից հինգ անգամ, ամեն անգամ քառասնից մեկով պակաս անգամ ծեծ վերաներեք անգամ ձաղկեցա, մի անգամ քարկոծ եղա, երեք անգամ նախաբեկութիւն ենթարկվեցա, դիշեր ու ցերեկ անդունդների մեջ տառապեցի, ճանապարհներին բազում անգամ վշտեր՝ գետերից, վշտեր՝ ավազակներից, վշտեր՝ ազգիցս, վշտեր՝ հեթանոսներից, վշտեր՝ քաղաքում, վշտեր՝ անապատում, վշտեր՝ ծո-

վում, վշտեր՝ սուտ եղբայրներից, վշտեր՝ աշխատանքի, գործի և տքնութեան ժամանակ բազում անգամ, քաղցի, ծարավի և պահքի ժամանակ բազում անգամ, ինչպէս և ցրտին ու մերկութեան ժամանակ: Այլ նեղութիւնները մի կողմ թողած, խաժանը շարունակ գլխիս էր կոտորւթում. բացի այդ նաև բոլոր եկեղեցիների հոգսերը: Եթե կարիք կա պարծենալու, ես տկարութեամբս միայն կը պարծենամ: Աստծուն հայտնի է, և չեմ ըմտում, որ Դամասկոսում հատուկ հսկողութիւն ունեին, որ բռնեն ինձ: Պատուհանի միջից, պարսպից վանդակով կախվեցի և փախա նրանց ձեռքից:

ԹՈՒՂԹ ԱՌ ԳԱՂԱՏԱՅԻՍ

Այս թուղթն առաջալը գրել է Հոռոմից: Թղթում զարմանք է հայտնում, թե զաղատացիք որքան փոփոխամիտ են, որ հաճախ ենթարկվում են ուրիշ նոր քարոզիչների ազդեցութեանը, որոնք միայն խռովութիւն են սերմանում ու պառակտում առաջացնում. ապա հարաբարում է, որ եթե մեկն ավելի բան ավետարանի, քան ինքը Պողոսն է ավետարանել, թող նզովյալ լինի: Քաղաքում խկական ավետարանն իրենն է, որ ստացել է Հիսուս Քրիստոսի հայտնութիւնից. և այստեղ համառոտակի պատմում է իր դարձը և հեթանոսների մտտ ավետարանիչ դառնալը, այլ և այն, թե ինչպէս Քրիստոսի առաքյալների մեջ համաձայնութիւն է կայացել, որ ինքն իր աշակերտների հետ միասին հեթանոսների մեջ քարոզի, իսկ առաքյալները հրեաների մեջ:

Այնուհետև անդրադառնալով թլպատութեան խնդրին, հայտնում է, որ նորադարձ քրիստոնյաների համար դա պարտադիր չէ, որովհետև Քրիստոսի հավատի համար թլպատութիւնը ոչ մի դեր չի խաղում, այլ գլխավորը Հիսուս Քրիստոսի քարոզած

ուսմունքին հավատալն է, քանի որ բոլորն էլ Աստծու որդիներ են, խտրութիւն չկա ոչ հրեայի և ոչ հեթանոսի, ոչ ծառայի և ոչ ազատի, ոչ արջի և ոչ էգի մեջ, որովհետև ամենքն էլ մի են ի Քրիստոս Հիսուս: Ապա հիշեցնում է, որ բոլոր օրենքները, որոնք սահմանված են մարդկանց կենցաղավարութեան համար, մի գլխավոր նպատակ ունեն՝ սիրիք քո ընկերոջը, իբրև քո անձը: Բացատրելով մարմնի և հոգու ցանկութիւնների տարբերութիւնը, նա մեկ-մեկ թվում է մարմնի և հոգու գործերը: Մարմնի գործերը՝ շնութիւն, պոռնկութիւն, պղծութիւն, դիժութիւն, կոռապաշտութիւն, կախարդութիւն, թշնամութիւն, հեռ, նախանձ, բարկութիւն, հակառակութիւն, երկպառակութիւն, հերձված, շարակամութիւն, սպանութիւն, արբեցութիւն, անառակութիւն: Իսկ հոգու պտուղներն են՝ սեր, խնդութիւն, խաղաղութիւն, երկայնամտութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հավատ, հեղութիւն, ժուժկալութիւն: Վերջում պատկերում է բարիք գործելուց շնանձրանալ, և ամենքի նկատմամբ բարիք գործել:

ԹՈՒՂԹ ԱՌ ԵՓԵՍԱՅԻՍ

Այս թուղթը Պողոս առաքյալը գրել է Հոռոմից: Գոհունակութիւն հայտնելով եփեսացիների քերականոց հավատի մասին, այնուամենայնիվ անհրաժեշտ է համարում որոշ հրահանգներ տալ նրանց, թե ինչպէս պետք է պահեն իրենց հասարակութեան մեջ և ընտանեկան կյանքում. այսպէս օրինակ պահանջում է ստութիւնից ձեռք քաշել և միշտ ճշմարտութիւն խոսել միմյանց հետ, մանաւանդ հեռու կենալ գողութիւնից և սեփական ձեռքի աշխատանքով վատապակել ապրուստի հացը: Ամեն մի դառնութիւն, բարկութիւն, սրտմտութիւն, աղա-

ղակ և հայհոյութիւն պիտի վերանան մեջ տեղից իրենց ողջ շարութեամբ հանդերձ և փոխարենը քաղցրութեամբ ու սիրով վարվեն միմյանց հետ: Դառնալով ընտանիքին, ասում է. — Կանայք թող հնազանդ լինեն, իրենց ամուսիններին, իբրև տիրոջ, որովհետև տղամարդը կնոջ գլուխն է, ինչպէս Քրիստոս եկեղեցու: Ինչպէս անկեղեցին հնազանդ է Քրիստոսին, նույնպէս և կանայք իրենց ամուսիններին ամեն բանում: Ամուսիններ, սիրեցեք ձեր կանանց, ինչպէս Քրիստոս սիրեց իր եկեղեցին. տղամարդիկ պարտավոր են սիրել իրենց կանանց, ինչպէս

իրենց մարմինը. ով իր կնոջը սիրում է, իր անձն է սիրում: Այդ պատճառով թող թողնի տղամարդն իր հորն ու մորը և գնա իր կնոջ ետևից և կլինեն երկուսը մի մարմին: Որդի՛ք, հնազանդ եղբք ձեր ծնողներին. պատվիր քո հորն ու մորը. հայրե՛ր, մի զայրացրեք ձեր որդիներին, այլ մեծացրեք նրանց Տիրոջ խրատով և ուսմամբ: Մահացե՛ք, հնազանդ եղբք ձեր մարմնավոր

տերերին և սրտի մտքը ծառայեցե՛ք իբրև Աստծուն և ոչ թե իբրև մարդկան: Իմացած եղեք, որ ձեզանից յուրաքանչյուրն ինչ բարիք որ գործի, նույնը կընդունի Տիրոջից, թե ծառան և թե ազատը: Եվ դո՛ւք, տերեր, նույնն արեք նրանց նկատմամբ. իմացեք, որ թե նրանց և թե ձեզ Տեր կա երկնքում, որի առաջ աշառությունը գոյություն չունի:

ԹՈՒՂԹ ԱՌ ՓԻԼՊԵՑԻՍ

Այս թուղթը գրել է Հռոմից: Ողջունելով փիլիպեցիներին և իր սուրախությունը հայտնելով, որ նրանք իր քարոզած ճանապարհով են ընթանում, միաժամանակ հարտնում է նաև, որ ինքն այժմ գտնվում է անազատ վիճակում, կապանքների մեջ, բայց հույս ունի մոտիկ ապագայում այցելել նրանց ու մխիթարել ավետարանի տգով: Իր կապանքներից շի նեղվում, այլ պատրաստ է ամեն ինչի դիմանալ, միայն թե Աստծու գործը հաջողություն ունենա և Հիսուս Քրիստոսի անունը փառավորվի: Քրիստոսին նա ընդունում է կյանք իր համար և նրա համար մեռնելը շահ. բայց դժվարանում է որն ընտրել, երկուսից էլ նեղվում է. ազատվել այս երկրավոր կյանքից և Քրիստոսի հետ լինել, առավել լավ է համարում, բայց այստեղ, երկրի վրա, մարմնի մեջ մնալն էլ կարևոր է համարում նրա համար, որպեսզի նորից տեսնի նրանց և իր քարոզությամբ մխիթարի:

Անդրադառնալով թյապատության հարցին առաջալը բացորոշ կերպով դատապարտում

է բոլոր նրանց, որոնք նորադարձ հեթանոսներից պահանջում են թլպատվել. բայց մարմնի այս երևույթական պարծանքը ոչ մի նշանակություն չունի, իսկ եթե այդ քարոզող հրեաները դրանով պարծենում են, ապա առավել ևս ինքը իրավունք ուներ պարծենալու. թլպատությամբ ութօրյա, Իսրայելի ազգից, եբրայեցի եբրայեցուց, օրենքի կողմից փարիսեցի և ալեքսանդրական ճախնդիր հրեից բոլոր օրենքներին, որ մի ժամանակ Աստծու եկեղեցին հալածել էր, բայց այժմ իր իղեայր Քրիստոսն է և նրա քարոզածները նյութ են հանդիսանում իր քարոզների համար, ուստի նա հետևյալ կերպ է հորդորում.

— Այսուհետև, եղբայրներ, ինչ որ ճշմարտությամբ է, ինչ որ պարկեշտությամբ է, ինչ որ արդարությամբ է, ինչ որ սրբությանմբ է, ինչ որ սիրով է, ինչ որ բարի համբավ ունի, ինչ որ առաքինությամբ է, ինչ որ գովությամբ է, նրա մասին մտածեցե՛ք: Ինչ որ սովորեցիք և ընդունեցիք ու լսեցիք և տեսաք իմ մեջ, այն արեք և խաղաղության Աստված կլինի ձեզ հետ:

ԹՈՒՂԹ ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍ

Առաջալն այս թուղթը գրել է Հռոմից: Հորդորելով կողոսացիներին հաստատուն մնալ իրենց ընդունած հավատի մեջ, նորից խրատներ է տալիս նրանց և պատվիրում. — Սպանեք այսուհետև ձեր երկրավոր անդամները, դեն ձեզ պառնկություն, պղծություն, արատ, չար ցանկություններ, ագահություն, որ է կռապաշտություն. թողա՛ցե՛ք ձեր վրայից բարկություն, սրտմտություն, չարություն, հայհուդություն, խեղկատակություն, մի ստեք միմյանց, հանեցե՛ք հին մարդն իր գործերով և հագեք նորը՝ նորոգված Արարչի պատկերի նման և զիտու-

թյամբ, ուր չկա ոչ հրեա և ոչ հեթանոս, թլպատություն և անթլպատություն, օտարագգի և բարբարոս, սկյութացի, ծառա, ազատ, այլ ամենուրեք և ամեն բանում Քրիստոսն է: Հագեք այսուհետև իբրև Աստծու ընտրյալներ, սրբեր և սիրեցյալներ, գութ, ողորմածություն, քաղցրություն, խոնարհություն, հեղություն, երկայնամտություն: Ներել միմյանց, շնորհել մեկմեկու, եթե որեւէ բանի կարիք ունին, և այս բոլորի վրա, իբրև գլխավոր ունենալ սեր, որը կատարելության գոդն է:

ԱՌ ԹԵՍԱԼՈՆԻԿԵՑԻՍ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ

Այս թուղթը Պողոս առաքյալը գրել է Աթենքից: Այս թղթում հատկապես շեշտում է, որ թեոսաղոնիկեցիք չեմեռանդ հավա-

տացյալներ են, որով նրանք օրինակ կարող են ծառայել Մակեդոնիայի և Աթալիայի հավատացյալներին: Հիշեցնում է իր քարոզու-

թշուանները և թե ինչպես ինքը նրանց համար եղել է դայակ, տիկ մանուկներ է սնուցանում ու ախքան է սիրել նրանց, որ պատրաստ է եղել նույնիսկ իր անձը զոհաբերել նրանց համար: Հիշեցնում է նաև, որ ինքը գիշեր-ցերեկ ձեռքի աշխատանքով իր ապրուստը հոգացել է, որպեսզի նրանցից ոչ մեկի վրա չծանրանա և լինի օրինակ նրանց համար:

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿՅԵՍ ԵՐԿՐՈՐԻ ԹՈՒՂԹ

Այս թուղթը նա գրել է դարձյալ Աթենքից: Գոհություն հայտնելով թեապոնիկեցիների հավատի մասին, որը բանի գնում ավելի է աճում և որի համար էլ նրանք հալածանք են կրում շատերից ու նեղությունների հանդիպում, առաքյալը մխիթարում ու հորդորում է նրանց էլ ավելի ամուր մնալ իրենց հավատքի մեջ ու կրքեր չընկճվել:

Ապա խոսքը դարձնում է այն մասին, թե նրանցից ոմանք աշխատանք արդեն խոտովության մեջ են ընկնում և դարձնում Հիսուս Քրիստոսի երկրորդ գալստյան առթիվ և իբր թե իր կողմից գրված թղթովն էլ ասվել է, թե եկել-հասել է Տիրոջ օրը: Հանգստացնելով նրանց այս մասին, նա բացատրում է, որ Տիրոջ գալստյանը ամեն ժամ պետք է պատրաստ լինել, բայց ոչ թե պարապ-ուսուրալ շրջելով և սխալ հասկանալով արդ ահավոր օրվա համար պատրաստ լինելը, այլ միշտ կենցաղավարելով առաքինությանը և շարունակելով զբաղվել ամենօրյա սովորա-

վերջում նորից հորդոր է կարդում առաքինի և սրբանվեր կյանք վարել, պարապությունից հեռու կենալ, միշտ նշխարել, պնդակալան ձեռքերով, ինչպես ինքը պատվիրել է և պարկեշտությամբ կենցաղավարել, որպեսզի Քրիստոսի ահավոր դալստյանը պատրաստ դիմավորեն:

կան աշխատանքով: Այս առթիվ նա հիշեցնում է. — Դուք ինքներդ գիտեք, թե ինչպես պետք է նմանվեք մեզ, որովհետև երբեք հանդգնաբար չենք վարվել ձեզ հետ և ոչ էլ ձեր որևէ մեկի հացը կերել, այլ ջանք թափելով և աշխատելով գիշեր ու ցերեկ բանում էինք, ձեզանից ոչ մեկի վրա չծանրանալու համար. ոչ թե իրավունք չունեինք, այլ որպեսզի մեր անձն օրինակ դարձնեինք ձեզ ու մեզ նմանվեիք դուք էլ, որովհետև ձեզ մոտ եղած ժամանակն իսկ այս էինք պատվիրում ձեզ. թե ով չկամենա աշխատել, չպետք է էլ ուստի: Այլ ձեզանից ոմանց մասին խոսում ենք, թե անկարգ են պահում իրենց, ոչ մի գործ չեն անում, ծուլաբար դատարկ շրջում են: Այդպիսիներին պատվեր ենք տալիս և աղաչում. Տեր Հիսուս Քրիստոսի անունով, որ խաղաղությանը աշխատեն և իրենց հացն ուտեն: Այլ դժբաղդ, եղբայրներ, մի ձանձրանաք բարիք գործելուց:

ԱՌ ՏԻՄՈԹԵՈՍ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ

Այս թուղթն առաքյալը գրել է Լավդիզիայից: Թղթում Պողոս առաքյալը մանրամասն խորատներ է տալիս Տիմոթեոսին, որը մնացել էր Եփեսոսում, թե ինչպես պիտի վառավարի նորադարձ համայնքը, ինչ ակզորներ ենթադրվ պիտի դեկավարվի, հիշեցնելով նախ և առաջ, տր բոլոր պատվիրանների մեջ զբաղվելու պիտի սերն է, բոլոր սուրբ սրտից, բարի մտքից և անկեղծ հավատից: Այնուհետև պատվիրում է աղթել բոլոր մարդկանց համար, մանավանդ թագավորների ու իշխանների համար, որպեսզի մեր կյանքը վարենք խաղաղությամբ և հանդարտությամբ, աստվածապաշտությանը և սրբությանը: Տղամարդիկ աղոթելու իրենց ձեռքերը պիտի վեր բարձրացնեն առանց բարկության և երկմտության, իսկ կանայք իրենց անձը պիտի դարդարեն խոնարհությամբ, ակնածությամբ ու զգաստությամբ և ոչ թե թանկագին քարերով կամ ոսկեհուռ հանդերձներով: Եպիսկոպոսի մասին խոսելով, պարզաբանում է, որ նա պետք է լինի ա-

նարատ, մի կնոջ ամուսին, հեզ, խոնարհ, պարկեշտ, հյուրասեր, ուսուցիչ: Իր տան մեջ իսկ նա բարի վերակացու պետք է լինի և իր զավակներին հնազանդության մեջ պետք է պահի ամենայն պարկեշտությամբ. ապա եթե մեկն իր տանը չկարողանա վերակացու լինել, ինչպես կարող է Աստուծու եկեղեցուն խնամակալ լինել: Սարկավազները պետք է լինեն պարկեշտ և ոչ թե խաբեբա, գինեսեր, աչքածակ: Ենթին մխիթարի իբրև հոր, երիտասարդներին իբրև եղբայրների, պառավների իբրև մայրերի, մանկամարդների իբրև՝ բույրերի՝ ամենայն սրբությանը: Պատվիրելով, որ շահի, արծաթասիրության հետևից չընկնեն, ասում է. — Աշխարհը ոչ մի բան չբերիք և ոչ էլ մի բան կարող ենք տանել, այլ ունեցածով պետք է բավականանալ: Պատվեր տուր այս աշխարհի մեծատուներին, որ չհպարտանան և հույսները սնտուի մեծության վրա չընեն, այլ Աստծու վրա, որ մեզ ամեն բան տալիս է առատապես վայելելու համար:

ԱՌ ՏԻՄՈԹԵՈՍ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ

Թուղթն առաքյալը գրել է Հռոմից: Դարձյալ խրատներ և հրահանգներ է տալիս քրիստոնյալի կյանք վարելու համար: Երկրորդ անգամ ցանկություններից փախիլ և դեռ արդարություն, հավատի, սիրո, խաղաղության, սրբության հետևից, իսկ հիմար և անխելք խնդիրներից հրաժարվիր: Իմացիր, որ նրանցից կոփվեցին են ծագում: Բայց Տիրոջ ծառան չպետք է կովի, այլ պետք է լինի հեզ բուրդի նկատմամբ, ուսուցիչ, ոխ չպահող, հանդարտությամբ խրատի հակառակողներին: Դու հետևիր իմ վարդապետությանը, առաջնորդությանը, հավատին, սիրությանը, համբերությանը, հավանքներին ու շարժարաններին, որոնք պատահեցին ինձ Անտիոքում, Իկոնիոնում և Լյուստրոսում: Ինչպիսի հավանքների համբերեցի և բուրդից փրկեց ինձ Տեղը: և բուրդ նրանք, որ կողոպտեցին աստվածապաշտությանը ապրիլ, հավանքի մեջ պիտի մնան: Ես այսուհետև եմ նվիրված եմ Աստծուն և իմ վերադարձի ժամանակը հասել է: շիտակ պատերազմ մղեցի, ընթացքս կատարեցի, հավատս պահեցի: Այսուհետև ինձ մնում է ակնկալել արդարության պսակը, որը ստանալու եմ Տիրոջից:

ԹՈՒՂԹ ԱՌ ՏԻՄՈՍ

Առաքյալը Տիմոսին ուղղած թուղթը գրել է Նիկիայոսից: Տիմոսը, որ կրեոսացիների առաջին եպիսկոպոսն էր, Պողոս առաքյալի կողմից թողնվել էր Կրետեում՝ այնտեղ գործելու համար: Թուղթը մի շարք հրահանգների ու խրատների է պարունակում, որ առաքյալը հանձնարարում էր կատարել: Քեզ նրա համար թողի Կրետեում, որ եթե մի բան պակաս մնացած լինի, ուղղես և քաղաքացիների համար երեցներ նշանակես: Եպիսկոպոսը պետք է անարատ լինի, որպես Աստծու տնայտես, ոչ հանդուգն, ոչ բարկացող, ոչ թշնամատ, ոչ ծեծող, ոչ աչքածակ, այլ հյուրասեր, բարեկամ, խոնարհ, արդար, սուրբ, ժուժկալ: Դու խոսիր, ինչպես վալել է ողջամիտ վարդապետությանը, որ ծերերը լինեն

զգաստ, պարկեշտ, խոնարհ, հավատի, սիրո, համբերության և ժուժկալության մեջ ողջամիտ, որ պառավները նույնպես զգաստության և վալելու կենցաղավարության մեջ լինեն, ոչ թե բանասեր, ոչ թե դինեմոլ, այլ բարեխրատ, որպեսզի զգաստացնեն երկրասարդ կանանցը, որ սրանք սիրեն իրենց ամուսիններին, լինեն որդեսեր, խոնարհ, սուրբ, անարատ, բարեգործ, հնազանդ ամուսիններին: Նույնպես և երկրասարդներին հորդորիր, որ խոնարհ լինեն, ամենքին անձր օրինակ դարձնելով: Հիշեցրու նրանց, որ իշխանություններին և պատվություններին հնազանդ ու հպատակ լինեն և ամեն տեսակ բարի գործի համար միշտ պատրաստ լինեն:

ԹՈՒՂԹ ԱՌ ՓԻԼԻՄՈՆ

Այս թուղթն առաքյալը գրել է Հռոմից: Թուղթը հետաքրքիր է այն տեսակետից, որ նրա նյութը Փիլիմոնի ծառա Ոնեսիմոսն է, որը Պողոս առաքյալի քարոզության շնորհիվ քրիստոնյա էր դարձել և մնում էր առաքյալի մոտ: Վերջինս սրան ետ է ուղարկում իր նախկին տիրոջ՝ Փիլիմոնի մոտ: Առաքյալը խնդրում է նրա հետ այնպես սիրով լինել, ինչպես փնթը՝ ծերացած Պո-

ղոսը, որ այժմ կապանքների մեջ է Հիսուս Քրիստոսի համար: Ոնեսիմոսի համար խնդրում է ընդունել ոչ թե որպես ծառա, այլ որպես եղբայր և նրան ընդունելով, նույնն է որ իրեն՝ Պողոսին է ընդունում: Ուղարկելով Ոնեսիմոսին, իր սիրելի զավակին, նա հավատացած էր, որ իր գլխից էլ ավելին կանի:

ԹՈՒՂԹ ԱՌ ԵՐԱՍՅԵՑԻՍ

Այս թուղթը առաքյալը գրել է Իտալիայից: Թուղթը մի բացատրական գրություն է, որտեղ հին կտակարանից բերած բազմաթիվ վկայությունների հիման վրա հաստատում է, որ մարգարեների գտնված Քրիստոսն արդեն եկել է ու մարդանալով և մարդկանց մեջ շրջելով, քարոզել է անպաշխարհ-

թյուն, հրաժարում ամեն տեսակ մեղքերից ու հավատ, ճշմարիտ հավատ առ ինքն: Այս հավատը, սրտանց հավատը եղել է և առաջ, որը մեծամեծ հրաշքներ է գործել: ու բերում է մի շարք օրինակներ իր այդ միտքը հաստատելու համար:

ՃԵՄԱՐԱՆՑԻ

ՆԿԱՐԻՉ ՎԱՐԴԳԵՍ ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻ „ՅԱՂԱԳՍ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻՆ ՍԲ. ԷԶՄԻԱԾՆԱՅ“ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ

«ԷԶՄԻԱԾԻՆ» ամսագրի 1946 թ. հունիս-հուլիս միացյալ համարում «Մայր Տաճարի վերանորոգության շուրջը» բաժնում տպագրված նյութերը, Տարագրոսի «Մի քանի խոսք էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգության մասին» հոդվածը և խմբագրության ծանոթագրությունը առիթ տվին ինձ պրպտումներ կատարելու Հայկական ՍՍՍՊ Գեոտական Կենտրոնական Արխիվում գտնվող «Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիվանը» ներկայացնող ֆոնդի գործերում, որի արդյունքն եղավ այն, որ ինձ հաջողվեց հայտնաբերել հայ նշանավոր նկարիչ Վարդգես Սուրենյանցի «Յաղագս վերանորոգության Տաճարին Սբ. Էջմիածնայ» վերառությամբ նրա կրող զեկուցագիրը, որի կարևորությունը նկատի առնելով, անհրաժեշտ ենք համարում հրատարակել այն: Նկարիչ Վ. Սուրենյանցի այդ զեկուցագիրն ուղղված է եղել

Մատթեոս Բ կաթողիկոսին, սակայն սխալմամբ տեղադրված է եղել Մատթեոս Ա կաթողիկոսի գործերում: Այդ զեկուցագրից երևում է, որ Մկրտիչ կաթողիկոսը (երիմյան) Վարդգես Սուրենյանցին հրավիրել էր էջմիածին՝ Տաճարի վերանորոգության խնդրով զբաղվելու համար. ի պատասխան այդ հրավերի նշանավոր արվեստագետ Վ. Սուրենյանցը մի ընդարձակ զեկուցագիր էր ուղարկել երիմյան Հայրիկին, որի մեջ մանրամասն շեքագրել էր իր տեսակետները և պայմանները Տաճարի վերանորոգության վերաբերյալ. սակայն, ինչպես գրում է Սուրենյանցը, երիմյան Հայրիկից ոչ մի պատասխան չի ստացել: Մեր պրպտումները վերոհիշյալ ընդարձակ զեկուցագիրը ևս գտնելու ուղղությամբ տարաբախտարար միջն ջոխ ապարդյուն են անցել:

Զեկուցագրի առաջին էջի վրա հետևյալն է գրված—

«Նորին Վեհափառութեան կաթողիկոսին մերոյ և Հայրապետին Ամենայն Հայոց Տեառն Տեառն Մատթեոսի Երկրորդի

Ամենախոնարհ զեկուցումն յաղագս վերանորոգութեան Տաճարին Սբ. էջմիածնայ.

Վարդգես Սուրենյանց:


Հաջորդ էջում զեկուցումն վերադրված է «Սբ. էջմիածնայ վերաշինության խնդիրը» Զեկուցագրի վրա տարեթիվ չի նշանակված:

Անհրաժեշտ ենք համարում հիշատակել, որ «Սբ. էջմիածնայ վերաշինության խնդիրը» խորագիրը կրող այս զեկուցագրում հայ նշանավոր արվեստագետ Վարդգես Սուրենյանցը համառոտակի շարադրել է իր տեսակետները հայկական հնագույն այդ Տա-

ճարի վերանորոգության մասին, միաժամանակ խտրորեն քննադատության ենթարկելով ճարտարապետ Շտերնի Տաճարի վերանորոգության համար կազմած նախագիծը: Նա կանգ է առնում նաև Տաճարի վերանորոգության մի շարք կարևոր խնդիրների վրա, որոնք ակտուալ նշանակություն ունենալով հանդերձ՝ կարող են օգտակար և ուսանելի լինել:

ՎԱՐԴԳԵՍ ՍՈՒՐԵՆՅԱՆՑ

ՍԲ. ԷԶՄԻԱԾՆԱ ՎԵՐԱԾԻՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ*)



տւրք էջմիածնա վերաշինու-
թյան խնդիրը նոր չէ, այլ դա-
շատ հին խնդիր է, և որքան
հնացել, այնքան էլ ծանրացել
է, կյանք ստանալով գլխավորապես կաթո-
ղիկոսական ընտրութեան միջոցին:

Մասնավոր վերանորոգութիւններ կա-
տարվել են Մակար ու Մկրտիչ կաթողիկոս-
ների օրով, բայց այդ վերանորոգութիւննե-
րը եղել են առանց մի տրոշ ծրագրի, մի-
միայն գործնական նպատակներով, և ավելի
ոճի ավերման՝ քան վերականգնելուն են ծա-
ռայել: Մակար կաթողիկոսը այդ հարցի
կարևորությունը վերջում թեև զգաց, բայց
դժբախտաբար մի մեծ սխալ գործելուց հե-
տո միայն: Հայկական տաճարի ամենաբնո-
րոշ մասերից մեկը և անհրաժեշտ պատ-
կանելիքը անպայման նորա պատմանդանն
է. դա մի՞ սրբատաշ քարից շարված և երեք,
կամ երեքմեկ և ավելի, աստիճաններից
կազմվող բարձրություն է, որի վերա խորտա-
կերպով կանգնած է տաճարի շենքը, իբրև
վկայ մեր նախնայց բարձր գեղարվեստական
զգացմունքին, իբրև կոթող՝ մեծ դժվարու-
թյամբ ձեռք բերված և դարերի ընթացքում
ծաղկեցրած քաղաքակրթության: Դա այն
պատմանդանն է, որի վերա հին հելլենացիք
և կառուցանողն էին իրենց սքանչելի տա-
ճարները և որը մենք ժառանգել ենք հին դա-
րերից՝ իբրև անգին գոհար, որով պի-
տի պարծենանք, որովհետև նա գործնական
պիտույքից չէ առաջ եկել, այլ միմիայն
զուտ, անարատ գեղեցկության պահանջի
քննադրումն է նորան հնարել: Մա-
կար կաթողիկոսին հասկացրել էին,
որ դա մի բոլորովին ավելորդ
ու անօգուտ բան է և կարելի է նո-
րան հեռացնել առանց տաճարին մեկ վնաս
տարւո, — ի՞նչ փուլթ, որ տաճարը ամեն
բանից առաջ — մի գեղարվեստական երկա-
սիրություն է... Բայց սխալը կատարելուց
հետո Մակար կաթողիկոսն ինքը տեսավ ու
հասկացավ, որ պետք չէր այդպես վարվել և
մտադրվեց երկրորդ անգամ վերաշինել տա-
ճարը ավելի ընդարձակ ծրագրով և այդ դի-
տավորությունը և ես, նվաստս ներկա ու
մասնակից էի:

Լավ միտքս է, ինչպես եկավ Տփլիսից
ճարտարապետ պ. Շտերն իր օգնականներով
և մոտ երկու-երեք շաբաթվա երկունքից հե-
տո, ծնեց վերջապես վերաշինության ընդ-
հանուր նախագիծը: Այդ նախագիծով վերա-
շինությունը պիտի նստեր հարյուր ու քսան
հազար ուսուցիչ: Հիշում եմ նաև, ինչպես Մա-
կար կաթողիկոսը մի մանկան պես ուրա-
խացավ, երբ մակարդակներից երևաց, որ
տաճարի պատմանդանը իր աստիճաններով
հանդերձ վերադարձ կանգնած է: Բայց դրա-
նից հետո շուտով Մակար կաթողիկոսը վախ-
ճանվեց և վերաշինության խնդիրը դարձավ
երկրորդական, իսկ նորա համար նշանակ-
ված գումարի մնացորդը ծախսվեց ուրիշ
նորանոր շինությունների կառուցման վերա,
անհշխատության երկար օրերում:

Մկրտիչ կաթողիկոսի օրով խնդիրը նորից
կյանքի կոչվեց և հանգուցյալ Հայրիկը հան-
գուցյալ Սահակ Ժամհարյանի միջոցով ինձ
հրավիրում էր Սբ. էջմիածին դարձյալ այդ
խնդիրը զբաղվելու: Այդ սիրալիկ հրավե-
րին ես, նույն պ. Սահակ Ժամհարյանի խոր-
հրդով, մի ընդարձակ գեղեցումով պա-
տասխանեցի, որի մեջ բացատրում էի, թե
ինչպես եմ ես հասկանում վերաշինության
գործը և թե հանձն կարող եմ առնել այդ
պատասխանատու և շատ պատվավոր գործը
միմիայն այն դեպքում, եթե նորանք ևս ինձ
հետ համաձայն և համամիտ գտնվին այդ
գործի մեջ: Պատասխան չստացա:

Պայմաններս շատ բնական ու հասկանա-
լի էին այդպիսի դեպքերի համար և այն է —
ես վերանորոգության ձեռնամուկս լինելու
համաձայն էի ոչ այլ կերպ, եթե ոչ բարձրա-
ձայն, հրապարակորեն և հայտնի կերպով.
խնդրում էի իրավունք նախագծերիս նկար-
ներն ու ուրվագծերը հանդես հանել գեղար-
վեստի մեծ կենտրոններում՝ Մյունխեն,
(Մյունխեն. Մ. Խմբ.), Փարիզ և ապա
Մոսկվա, Պետերբուրգ ու Տփլիս,
յսել մասնագետների քննադատություններ.
հասկացողների կարծիքներ և ապա, միայն
ձեռք զարնել իրագործելու:

Սա ուզում էի հպարտանալ, պարծենալ այդ
հանձնարարությունը. վերանորոգումը այն
ժամանակ ղեկ միմիայն տաճարի ներսին էր
վերաբերում: Ծարադարապետ Շտերնի պատ-
րաստած մակարդակը շատ բնորոշ նախադի-
էր, մի օտարական ճարտարապետին հատուկ
թերություններով, ճարտարապետի, որը հա-

*) Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ 57,
գործ 197, ԼՂ 22-27:

կական ոճը իր սրտի մեջ բաժանել էր իր հավանած ու շահավանած տարերքին, առանց շրջանների ու դարերի խտրության: Նորա անհոգ ու անզգա վարժությունը ամենալավը այն է, որ էջմիածնա տաճարի շենքը մեկ ընդհանուր ձևի գա և մեկ ձուլվածք ներկայացնե, դրսից Կովկասի սովորական Վիր-Հայկական նորագույն եկեղեցիներին նմանելով, և եթե հարկն ստիպե, նաև Անվճ 10-րդ դարու քանդակներով զարդարել:

Միայն մեզ՝ հայերիս է հասկանալի, թե այդ վերաբերումն ինչ աստիճան չոր ու ցամաք է: Ինչ կասկած, որ պիտի զղջայինք, եթե այդպիսի մի սր-խալ կատարվեր և այն ժամանակ ի՞նչ Պրոմեթեոսի կրակով հարուցանեինք Սր.

էջմիածնա պատերի պատմական նշանակությունը:

Մի՞թե տեղիք ունինք տարակուսելու, որ մեր բազմերախտ հայրապետները, ձեռնարկելով նորոգություններ և փոփոխություններ Մայր տաճարի մեջ, ոգևորված են եղել ամենագեղեցիկ նպատակներով. նորանք չեն հասկացել միայն ոճի կարեւորությունը և վերաշինությունները կատարել են միմիայն գործնական նպատակներով: Նորանք չեն իմացել, որ ճարտարապետական երկասիրությունը մի ուսման միջոց է և կամ շարական, և նորա շափը խախտել ու վանկերի թիվը փոխել մի վարպետի քիմքով— չէ կարելի: Բայց այդ անգիտակցական սխալները, նորանց հեղինակների դիրքին ու ժամանակի ոգուն շնորհիվ, պատմության էջեր են դարձել: Ի՞նչ անենք, երբ կյանքի բովանդակությունը աղքատանում է, կենսական նպատակները թուլանում են, նվազում է նաև ստեղծագործության ուժը: Բայց ժամանակը—այդ նրազգաց մեծ գեղարվեստագետը, հավաքում է ազգի ժպիտը, արտասուքը, արյունը և համեմատ նորանցով գեղարվեստի նաև համեմատ երկասիրությունները, դարձնելով նորանց գեղեցիկ ու անմահ պատմական կոթողներ: Եվ ինչ որ ներելի է մեր հայրա-

պետների միամիտ շերմեռանդությանը— մի դիտակից ճարտարապետի կողմից դառնում է կատարյալ հանցանք և մեկնվել կարող է միմիայն նորա անհարազատ ու անհոգ վերաբերվելով: Նորա ի՞նչ փութի է որ—

«Նորա հառաչք են հայրենյաց Նորա շերման սրտես ի բաց»:

Սկանառես էի, թե ինչպես վերաշինվում էր Վենետիկի դատական պալատը և Վալենսիո կաթոլիկեն (Սպանիա).—կամավ այդ շենքերն եմ օրինակ բերում, որովհետև առաջինը մի բազմաթիվ ռճերի խառնուրդ է ներկայացնում, բյուզանդականիցը սկսած մինչև գոթականն ու վերածնության ոճը. իսկ վերջինը, այսինքն Վալենսիո կաթոլիկեն, ունի մի հարավային ճակատ հռոմեական ոճով, հյուսիսային—գոթական, արևմտյան—տասն և յոթերորդ դարի բառքը, իսկ արևելյան ճակատին կպած է արքեպիսկոպոսական պալատը—վերածնության ոճով, որ ամեն մեկ շինող իր դարի ոճովն է նորան շարունակել, դարձնելով տաճարն այսպիսով մի քարացած պատմություն իր անցկացրած դարերի:

Հայտնի բան է, եթե նորա վերաշինությունը Շտերնի պես

ճարտարապետի հոգացողությանը հանձնված լինեք, պիտի ամբողջ շենքը մի ընդհանուր ոճի բերվեր, բայց թե ի՞նչ ոճի, այդ օտար ճարտարապետի անհոգ ճաշակը պիտի որոշեր: Ով որ տեսել է Փարիզի մոտ գտնվող Մեն Դենի եկեղեցին հռոմեական կամ ոճով, որը 1140 թվականի շենք է, անշուշտ շատ զառմացած կլինի, թե ինչպես լավ է պահպանվել այդ հույակապ միջնադարյան տաճարը: Այո, լավ է պահպանվել, որովհետև նորա վերաշինողը եղել է աշխարհահռչակ Վիոլե Լը Դյուբլե՝ յոթամասնական թվականներին. ինչպիսի տիրով, երկյուղածությամբ ու հաղթանքով այդ մեծ ճարտարապետը, հին քարերը նույնությամբ ընթորինակելով, վերականգնել ու



Վարդգես Սուրենյանց

դարձյալ հնի տեղն է դրել: Տաճարն իրավ որ այնպիսի տպավորություն է թողնում, ասես ոչ ոք նորան չէ դիպել, այլ նա ինքը հնացել է առանց մաշվելու: Դա այն տաճարն է, որտեղ քի մեջ այլ թագավորական շիրիմների, նաև մեր Լևոն վեցերորդի գերեզմանն է գտնվում:

Այժմ, հայտնի բան է, հարց է ծագում, թե ի՞նչ պետք է ուրեմն անել: Նախ և առաջ պետք է հետաքրքրվել թե Եմրոպայի մեծամեծ թանգարաններում դանձվող գեղարվեստական հնավուրց երկասիրությունները ի՞նչ եղանակով են վերանորոգվել և թե նախքան վերանորոգվելը ի՞նչ դատողությունների ու վեճերի առիթ են տված նախապես:

Կարելի է շատերիս համար զարմանալի և նոր երևա, որ օրինակ աշխարհահռչակ Ռաֆայելի պատկերները արդեն փրկուհիք կտավ են փոխել, նորանց ներկերը շատ տեղ ամբողջ տարածության վերա բոլորովին թափված են եղել և վերականգնվել են հմուտ վարպետի անխնայ ջանքով: Ու հիմա այնպիսի տպավորություն են գործում, ասես ամենևին մնաց չեն կրել համաճարակ ժամանակի գրկում և այդպես էլ համարյա բոլոր մնացյալ փր ժամանակակից նկարիչների գործերը: Մարմարե հնադարյան արձաններից շատերը հողի տակից փորված, հանված են եղել գրեթե կտրտած շաքարի դրոթյան հասած ու նորոգվել են կտոր կտորի կպցնելով և պակաս տեղերը նույնությամբ լրացնելով:

Այդ արձաններից շատերի պակաս անդամներն իր ժամանակին դարձել են համալրողական փոխարինության նյութ, որի մեջ մասնակցել են աշխարհի ամենամեծ փմաստունները: Այդպես գործորինակ Լաոկոոնի արձանախմբի մեջ պակասող ձեռքը զարկ է տվել հռչակավոր գերմանական փիլիսոփաբանաստեղծ Լեսսինգի երկասիրությանը, որը ողջ Եմրոպայի բերան է սերտում և որը ծառայում է իբրև օրինակ այդ տեսակ քննադատության: Այդ գրքի մեջ, որը կրում է արձանախմբի անվամբ «Laokoön» վերնագիրը, մեծ քերթող-փիլիսոփայն առաջարկվում է իր դատողությունները, թե ինչու Լաոկոոնի աջ ձեռքը պետք է նորա պարանոցին դիպչի և ոչ դեպի աջ փողով պարզվի, ինչպես կարծում էին ուրիշները:

Նաև մեզ օրով, դեռ նոր, մի քանի տարի առաջ Գերմանիո կայսեր հրապարակ, Փարիզի Լուվրում գտնվող Մեյսոնի Աստղիկի երկու պակաս բազմակները ընդհանուր համակրողական քննադատության նյութ էր դարձած:

Նույն Գերմանիո կայսեր առաջարկությամբ Բեռլինում վերաշինվել է հին հելլենական Բերգամյան տաճարը, որի առանձին բեկորները Բեռլինի ազգային թանգարանում էին գտնվում: Այդպես են վարվել միշտ մի նշանավոր հնություն վերանորոգելիս, և ի՞նչ կատարած, որ այդպես ևս պետք է վարվել մի պատմական գեղարվեստական հնություն վերանորոգելիս: Պետք է հավասար պատվով վերաբերվել ինչպես դեպի շենքի ոճը, նույնպես և նորա քարերի շարվածքի բոլոր առանձնահատկությունները: Պետք է չենք ամենայն ջանքով ուսումնասիրվի իր տեղում—նախքան մակարդակը կազմելու նախապատրաստությունները:

Պետք է ամենայն ուշադրությամբ դիտել ու նկատել ամեն մի մանրամասնություն, որպեսզի հեշտ կարելի լինի նորան նույնությամբ վերականգնել:

Շատ անգամ նույնիսկ աննշան երևացող մանրամասնություն կարող է զարկ տալ հնագույն, նախկին ձևերի գյուտին:

Հայտնի բան է, որ սրա համար պետք է հառաջագույն լավ տեղյակ լինել շենքի պատմությանը: Մեծ զգուշությամբ պաշտպանելու է շենքի ձևը, խուսափելով շատ ճարտարապետներին հատուկ հակումից—ամեն տեղ իրանց սիրած ոճը մտցնել:

Պետք է զգուշանալ նաև ամենահին ձևերը վերականգնելու չափազանց մեծ եռանդից: Ավելի ուշ շինված համալիրները, ինչպիսիք են այս դեպքում Զանգակատունը, Իջման տեղը, Թանգարանը, Խորաններն ու Սեդրանները, ամենայն ջանքով պիտի պաշտպանվեն: Նորանք զարդարված են տաճար և ներկայացնում են մի որոշ գեղարվեստական շահ և բացի այդ, վկայագրում են, իբրև հիշատակարաններ, տաճարի երկար պատմությունը:

Վերականգնվելու են անպատճառ մեր օրով աղավաղված մասերը—որոնք ոչ դուրսաբերված, այլ հանումի նշանակություն են ունեցել:

Իմ փորին համոզմունքով Սք. Էյմիածնյա տաճարի թե՛ ներքին և թե՛ արտաքին ձևերին դիպելը անհերքելի մեծ սխալ է:

Տաճարը պիտի այնպես վերանորոգվի, որ մարդ չիմանա, որ նորան ձեռք է դիպել և այնպես տպավորություն գործե, իբրև թե ընդհանրապես նորան մնաց չէ հասած եղել անողոր ժամանակի շնչից: Սք. Էյմիածնյա տաճարի արտաքին ձևերը չպիտի խախտվին և ի մի շենք ձուլվին հետևյալ պատճառով՝

Սբ. Էջմիածնա տաճարի շենքը երեք զանազան ժամանակ շինված մասերից է բաղկացած: Բուն տաճարը, որը երևում է վեց կամ յոթներորդ դարու շենք է, ապա 1627 թվին Մովսես կաթողիկոսի ակամած ու փլուզում և նշխարաբեկությունների ավարտած զանգակատունը արևմտյան ճակատին կաթողիկոսի թանգարանը արևմտյան ճակատին կապած: Այդպիսով տաճարը դարձել է վկա ազգի մտավոր դարգացման երեք զանազան շրջանների. նորա մանկ մասը պատմության էջ է դարձել, որի տողերը բանաստեղծություն-գեղարվեստորեն վիպասանում են ազգի թե՛ բախտավոր օրերի և թե՛ մեծ տառապանքների մասին. նորանք պատմում են ազգային քաղաքակրթության ելևէջների վեպերն հին դարերից սկսյալ մինչև մեր օրերը: Նորանք մարմնացյալ հիշատակարաններ են իրանց դարերի աշխարհայեցողությունը պարունակող: Կյանքը կազմված է ժպիտներից ու արտասուքներից, որոնք պատմության միջոցով ավանդվում են սերնդից սերունդ ժամանակի ճարտար ձևերից անցնելով: Ո՞ր պատմություն արտագրողը իրավունք ունի նորա էջերից ջնջել Ներսիսի կամ Կալիդոսյանի անունները միմիայն այն պատճառով, որ դրանք իր բառով ու չարի հասկացողությանը չեն համապատասխանում: Բացի այդ, ամենքիս հայտնի է, որ մի ճարտարապետական երկամբության գեղեցկությունը կախված է անտարակույս նորա առանձին մասերի փոխադարձ հարաբերությունից— ճարտարապետության հոգին նորա ներդաշնակ ամբողջությունն է: Երբ ավագ տաճարի շենքն ստեղծող ճարտարապետը ձեռնամուխ է եղել իր գեղարվեստական երկասիրությանը, նա ի նկատի է ունեցել որոշ չափի ու ձևի դռներ ու պատուհաններ և վերջապես խստիվ մտածված դմբեթ, որն իր չափերով— բարձրության մեջ ու տրամագծով— ներդաշնակում էր շենքի չափերին ու ձևերին:

Հաջորդ դարերում հառաջացած նորագույն մասերը, իմաստուն բախտի բերմամբ, տարբեր ոճով լինելով, ավագ շենքի համա-

չափությունը ու ներդաշնակությունը չեն խախտել— միջին շենքը մնացել է միջին շենք, իսկ նորան կապած երկու հավելվածները որոշ դաշնակցությամբ ստորոգվել են նորան: Տաճարը դարձել է ուսանողի երեք տներից կազմված:


Այժմ երևակայենք այդ բոլորն ի մի շենք ձուլված— նախ և առաջ գմբեթը անտարակույս պիտի փոքր դա, աղոթեն իր շափերից դուրս եկած շենքի համար, և անպատճառ տեղից շենքված պիտի հայտնվի— առաջին ճարտարապետի բոլոր հանձարն ու վաստակը, նորա նվիրական ճաշուկը և վարպետությունը պիտի անդունդը գլորվին... Շենքի դռները, պատուհանները և ընդհանրապես բոլոր ճարտարապետական անդամները որոշ թշնամական դիրք պիտի ընդունին ընդհանուրի դեմ և ամբողջը պիտի դառնա մի տարօրինակ, անճաշակ զանգված: Գեղեցկության և շենքի ակդրնական տեսքի մասին և ոչ խոսք կարող է լինել. պատերը որքան էլ զարդարվին Անվուժ յոթյան սովորական դարձած քանդակներով, իրանց արտաստվոր ու ապօրինի չափերի շնորհիվ կմնան միշտ անպաճույճ ու անընկալ:

Այս համառոտ գեղեցկումը ներկայացնելով, ես պարտքս համարեցի ցույց տալ գլխավորապես, թե ի՞նչ նախապատրաստական հոգսերով պիտի զբաղվի Սբ. Էջմիածնա միաբանությունը, դեռ դործի իրագործումը վարպետ և սակայն սրակաս տեղյակ ճարտարապետների ձեռքը հանձնելը:

Այն հանձնաժողովը, որը պիտի ծրագրեր կազմելու հոգսն իր վրա առնեն, պիտի անպատճառ այստեղ հիշված պայմանները ծրագրի մեջ մտցնեն ու ստիպողական դարձնեն:

Միմիայն այս կերպ վերաշինելը կարող է կանոնավոր և օրինավոր համարվել, որովհետև նա միայն կիրվեն ավերածից ու աղավաղումից մեր սրտերի համար թանկագին գեղարվեստական դոհաբը, որը շունի իբ հասակակիցը և նմանը ամբողջ աշխարհում և որի գինը մենք դեռ ապագայում պիտի հասկանանք:





ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՑԱՆ

Ստեփան Լիսիցյանը պատկանում է հայ գիտական-մանկավարժական ասպարեզի գործիչների ավագ սերնդին: Նա բազմակողմանի պատրաստությունը օժտված անձնավորություն էր:

Բազմադան է եղել նրա գործունեության ասպարեզը. նա հայ իրականության մեջ հանդես է եկել որպես մանկավարժ, մանկական գրող, դասագրքերի հեղինակ, աշխարհագրագետ, պատմաբան, լեզվաբան, ազգադրագետ, հրատարակիչ և այլն:

Ավելի քան 60 տարի նա անձնվիրաբար ծառայել է հայ ժողովրդին, իր լուսման մղտնեւում նրա գանձարանը:

Ստեփան Դանիելի Լիսիցյանը ծնվել է Թիֆլիսում 1865 թվին, բժշկի ընտանիքում: Նա մանկություն հասակից սկսած արդեն աչքի է ընկել իր արտակարգ ընդունակություններով: Միջնակարգ կրթությունն ստացել է Թիֆլիսի գիմնազիայում: 19 տարեկան հասակում, 1884 թվին, նա ավարտում է գիմնազիայի դասընթացը՝ արժանանալով մեդալի:

Գիմնազիան ավարտելուց մի տարի հետո նա ձեռնարկում է գրելու իր առաջին մանկական պիեսան «Բաջ զինվորները» խորագրով, որը հանդիսանում է առաջին մանկական պիեսան ռուսահայ իրականության մեջ:

1885 թվին Լիսիցյանն ընդունվում է Օդեսսայի համալսարանի պատմա-գրական ֆակուլտետը: 1887 թվին նա Օդեսսայից տեղափոխվում է Վարշավայի համալսարանը: 1889 թվին ավարտական դիսերտացիա պաշտպանելով ավարտում է Վարշավայի համալսարանը և ստանում պատմական գիտությունների թեկնածվի գիտական աստիճան: Համալսարանում Լիսիցյանը քաղաքացի արժանանում է խրախուսիչ պարգևների՝ ուսման գործում իր ցուցաբերած լավագույն աշխատանքների համար:

Տեղափոխված հայրենի ժողովրդին ծառայելու ձգտումներով Լիսիցյանն ավարտելու՝ պես թողնում է Վարշավայի համալսարանը և վերադառնում հայրենիք, չնայած համալսարանի ռեկտորատի թախանձանքներին՝ համալսարանում մնալու և աշխատելու:

Հայրենիք վերադառնալուց նա հրավիրվում է էշմիածնի Գևորգյան ճեմարանը ուսուցչի պաշտոնով: Այստեղ սակայն նա երկար չի մնում և 1891 թվին թողնում է ճեմարանը:

1894 թվից սկսած մինչև 1915 թվից Ս. Լիսիցյանն աշխատում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում դաստիարակչի պաշտոնով: Երկարամյա մանկավարժական գործունեության ընթացքում Լիսիցյանը դուրս է մղում հնացած ու հետամնաց մանկավարժական մեթոդները և նրանց փոխարեն մտցնում ուսուցման նորագույն մեթոդներ:

Լիսիցյանը 1911 թվին փոխելով Կատարիների աշակցությանը Թիֆլիսում հիմնադրում է երկսեռ լիկերալ Վիսիցյան գիմնազիան: Ահա այստեղ արդեն նա հնարավորություն է ունենում լիակատար կերպով կիրառելու 20-րդ դարու եվրոպական մանկավարժության լավագույն ուսումնա-դաստիարակչական նորագույն մեթոդները:

Այս շրջանում էլ Լիսիցյանը ձեռնամուխ է լինում նշանավոր մանկավարժ-հոգեբանների արժեքավոր աշխատությունների թարգմանությանը. նրա կողմից թարգմանված շատ գրքեր իր ժամանակին խոշոր դեր են խաղացել մանկավարժ-դաստիարակների համար:

Լիսիցյանի աշխատանքային նուանդն աչքի է ընկնում էր, որ նա կարողանում էր միաժամանակ մի քանի ասպարեզներում հանդես բերել իր բազմակողմանի կազմողությունները. նա կենդանի հանրագիտաբան էր. հաճախակի նրան էին դիմում մանկական գրքերի մասին ու բանաստեղծներ, պատմաբաններ ու լեզվաբաններ, մանկավարժներ ու հրատարակիչները և շատ շատերի համար նա դրեթե մինչև մահն էլ մնաց որպես ուսուցիչ:

Իր անվան գիմնազիայում Լիսիցյանը տիկին Կատարինի հետ միասին տարիներ շարունակ կրթեց ու դաստիարակեց մի սերունդ, որի ներկայացուցիչները հետագայում նշանավոր հասարակական-քաղաքական և գիտական գործիչներ դարձան: Այդ գիմնազիան փնտրվարդյան ուսուցիչի հետո

հանձնվեց «Общество единения семьи и школы» ընկերությանը, իսկ Վրաստանում սովետական կարգեր հաստատվելու պահից այն վերածվեց տեխնիկումի, որի դիրեկտորն էր Ստ. Լիսիցյանը մինչև նրա փակման տարին — 1924 թիվը:

1924 թվից Լիսիցյանը նշանակվում է Վրաստանի Լուսժողովրդատնի կից Գիտական խորհրդի անդամ:

1921—1922 թվականներին Ստ. Լիսիցյանը նաև դասախոսություններ էր կարդում Թիֆլիսի պոլիտեխնիկ ինստիտուտում:

1924 թվին Լիսիցյանը Թիֆլիսից տեղափոխվում է Երևան, ուր նշանակվում է Լուսժողովրդատնի մեթոդ-բյուրոյի անդամ և Պետական համալսարանի դասախոս:

Ստ. Լիսիցյանը ակտիվ մասնակցություն է ունեցել «Աղբիւր Տարազ»-ի 1892—1893 թվերի հրատարակման գործին: Նա հանդիսանում էր այդ տարիների «Աղբիւր Տարազ»-ի փաստական խմբագիրը, սակայն ցենզուրայի կողմից նրա դեմ հարուցված հալածանքները ստիպում են նրան թողնել այդ աշխատանքը:

1905 թվին Ստ. Լիսիցյանը իր կնոջ՝ Կատարինեի հետ միասին նախաձեռնում են մանկական

հանրահռչակ «Հասկեր» ամսագրի հրատարակմանը: Նրանք համատեղ խմբագրում էին ամսագիրը, որի հրապարակ զալը հայտնի է, թե որքան մեծ նշանակություն ունեցավ հայ մանուկների գեղարվեստական դաստիարակության համար: Այդ ամսագրում տպագրվում էին Ս. Լիսիցյանի գողտրիկ մանկական պատմվածքները:

Ծնորհիվ իր մանկավարժական մեծ պատրաստության, հմտության և փորձառության, ինչպես նաև գեղազուտական նուրբ ճաշակի, մեր մանուկների մեծ բարեկամը կարողացավ իր շուրջը համախմբել ժամանակի լավագույն մանկական գրողներին՝


Հովհաննես Թումանյանին, Աթաբեկ Խնկոյանին, Սիմեոնին, Հայրապետ Հայրապետյանին, Աղայանին և շատ շատերին, որոնք «Հասկեր»-ը դարձրին մեր մանուկների ամենասիրելի ամսագիրը: Ս. Լիսիցյանը ջանք չխնայեց «Հասկեր»-ը իր կողման բարձրության վրա դնելու. «Հասկեր»-ը ամենայն հանդուրժումը մրցում էր այն ժամանակները Անդրկովկասում հրատարակվող մանկական ամսագրերի հետ:

Ս. Լիսիցյանը մեծ ծառայություն է մատուցել նաև հայագիտությանը: Նրան շատ է հետաքրքրել հայ ժողովրդի ծագման հարցը, որի շուրջը նա բազմաթիվ դասախոսություններ է կարդացել Թիֆլիսի զանազան հաստատություններում, Երևանի Պետական համալսարանում, Ակադեմիայում:

Իրենիով բազմախառ ազգագրագետ Երվանդ Լալայանի ազգագրական տրբադիցանների անմիջական շարունակողը, Ս. Լիսիցյանը սովետական օրերին զխավորել է, մինչև իր մահը, Պետական Պատմական Թանգարանի, ներկայումս իր անվան, ազգագրական բաժնի աշխատանքները: Իր նրկարատե ազգագրական ուսումնասիրությունների հիման վրա նա գրել է մի

շարք աշխատություններ, ինչպես օրինակ՝ «Ջանգեղուրի հայերը ազգագրական տեսակետով» սովոր հատորը, «Լեռնային Ղարաբաղի հայերը», «Քսենոֆոնի ճանապարհորդ Հայաստանի վրայով» և այլն: Այս աշխատություններն ունեն ազգագրական-աշխարհագրական-պատմական մեծ արժեք և ցանկալի է դրանք տեսնել հրատարակված:

1930 թվից սկսած Լիսիցյանը, ազգագրական նյութերի գրառման և նյութական մշակույթի նմուշներ հավաքելու նպատակով, կազմակերպել է մի շարք գիտական արշավանքներ դեպի Ախալցխա, Մեղրի-Աղուլիս,



Ստ. Լիսիցյան

Հոռի, Ղարաբաղ, Աշտարակ, Նոր Բայազետ և Դարալագյազ: Կարճատև բազմաթիվ այցելումներ է կատարել ուրիշների նմանօրինակ աշխատանքները տեղեկրում ղեկավարելու կամ անհրաժեշտ ցուցմունքներ տալու նպատակով: Հաճախ էլ հեռակա կարգով ղեկավարել է այդ աշխատանքները:

Ս. Լիսիցյանի թե՛ գրի առած և թե՛ հավաքած նյութերը խոշոր ներդրում են հանդիսանում և՛ դիտության, և՛ Պատմական թանգարանի համար: Լիսիցյանի հավաքածուն, երկանդ Լալայանի հավաքածուների հետ միասին, լարձրարժեք նմուշներ է պարունակում:

Ինչպես նախորդ, այնպես և իր, հավաքածուների նկատմամբ ծերունագաղղ գիտնականը ցուցաբերում էր անսահման հոգատարություն: Նա այդ հավաքածուների վրա դիտում էր որպես մի աղբյուրի, որից շատ բան ունի քաղելու հայագիտությունը: Նա շարունակ աճն կարծիքի էր, որ չի վարող լինել ազգային ճշգրիտ պատմություն, առանց ազգագրության տվյալների ուսումնասիրության: ամեն մի հնագետ, ասում էր նա, իր ուսումնասիրությունների, որոնումներին ու պեղումների ժամանակ անխուսափելիորեն հարկադրված է դիմելու ազգագրությանը: Ազգագրությունը, ուսումնասիրելով արդի հայ ժողովրդի նյութական կուլտուրան, հնարավորություն է տալիս բացահայտելու մեր ժողովրդի անցյալի կուլտուրայի պատմության ցարդ մուժ մնացած կողմերը:

Իր Ձանգեղուրի հայերը մեծածավալ աշխատության մեջ պրոֆ. Լիսիցյանը զարգացնում է մի շարք նոր տեսակետներ, որոնք միանգամայն նոր խոսք են հանդիսանում հայ ազգագրության տեսական կոնգրեսների բնագավառում:

Մենք ունեցել ենք մի շարք ազգագրագետներ, որոնք մինչ Լիսիցյանը, ոչ մի տեսական խնդրով չեն զբաղվել: Լիսիցյանը լրացնում է մեր ազգագրության հենց այդ բացը: Նա իր մի քանի աշխատություններում ամփոփել է հայ ազգագրության մասին համառոտ տեսական ուրվագծեր: այս մասին նա, որպես հատուկ դառնթաց, դասախոսել է Պետական համալսարանում:

Նրա կողմից ազգագրությանը մեծ նշանակություն տրվելուն հնք պարտական: Նաև «Ազգագրական հարցարանի»-ի հրապարակ գալը, որը լույս տեսավ մահվանից քիչ առաջ, 1946 թվին:

Ստ. Լիսիցյանի մասը ու խոշոր աշխատությունների, ինչպես և թարգմանություն-

ների քանակը 200-ից անցնում է: Դրանց մեջ աչքի ընկնող տեղ են գրավում աշխարհագրության դասագրքերը:

Գիտական-մանկավարժական երկարամյա բեղմնավոր գործունեության համար Հայկական ՍՍՌ կառավարության կողմից Ստ. Լիսիցյանին շնորհվել էր գիտության վաստակավոր գործչի կոչում, իսկ ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության կողմից նա պարգևատրվել էր Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով:

1945 թվի աշնանը, Հայկական ՍՍՌ կառավարության որոշման համաձայն, պրոֆ. Ստ. Լիսիցյանի ծննդյան 80-ամյակի կապակցությամբ, Պետական համալսարանում կազմակերպվեց փառավոր հոբելյանական հանդես, ուր վաստակավոր գիտնական-մանկավարժ ականատես եղավ հայ աշխատավորության, հայ ինտելիգենցիայի իր նկատմամբ տածած ջերմագին զգացմունքների արտահայտություններին, ոյոնք խորապես հուզեցին նրան:



1947 թվի հունվարի 4-ին, մոտ 82 տարեկան հասակում, վախճանվեց բազմավաստակ մանկավարժ, գիտության վաստակավոր գործիչ Ստեփան Լիսիցյանը:

Հունվարի 8-ին, Ուտուցի տանը, բարձր պատվանդանի վրա հանգչում էր նրա մարմինը: Երևանի մտավորականությունը հրաժեշտ էր տալիս գիտության անխնոջ մշակին: Պետական համալսարանի, ինստիտուտների տասնողությունը վերջին հրաժեշտն էր տալիս սիրելի դասախոսին:

Ժամը չորսին, Սիմակ Սահակյանի դամբանական ճառից հետո, Լիսիցյանի դագաղը իրենց ուսերի վրա բարձրացրին նրա մերձավորներն ու աշակերտները: Թաղման թափորը շարժվել սկսեց Ստալինի անվան պողոտայով: Բազում պսակներ, դագաղի հետևից շարժվում էին ուսանողության, մտավորականության, աշխատավորության շարքերը:

Հանդարտ ճոճվում է գիտնականի դագաղը փո աշակերտների ու մերձավոր բարեկամների ուսերի վրա:

Գերեզմանոց, պանթոն: Ահա այն թումբը, որի տակ հանգչում է մեծ Աբեղյանը:

Դամբանական ճառ է ասում պրոֆեսոր դոկտոր Արարատ Ղարիբջանը: Նվ... իջնում է դագաղը նվազի տիտու հնչյունների տակ...

Հարազատները, բարեկամները, մերձավորները, բոլորը, բոլորը վերջին հրաժեշտն են տալիս հավիտյան բաժանվող կուլտուրական մեծ գործչին...

Երկու թումբ՝ Աբեղյան, Լիսիցյան:

ՀԱՅ ԶՈՐԱԲԱՆԱԿՆԵՐ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԵՋ



ատմութիւնը կվկայի, թե արաբական նվաճումի օրերեն ի վեր Եգիպտոսի զինվորական գաղութներուն մեջ հաճախ գործոն մասնակցութիւն ունեցած է հայ տարրը, որ տասնյակ հազարավոր մարտիկներու կողքին տաղանդավոր ռազմագետներ և զորագլուխներ տված է բուրգերու երկրին:

Դեռ Փրկչական 639 թվականին, երբ արաբական զորաբանակը Պաղեստինէն ճամբա կելլէր Եգիպտոսը դրամիլու առաջադրութեամբ, արշավախումբի վարիչներէն մեկն էր Վարդան անուն իսլամացած հայ մը՝ դրոշակիբի սատիճանով, որ ընդհանուր հրամանատար Ամրուկ Աս զորավարին աջ բազուկը հեղավ պատերազմական գործողութիւններուն մեջ: Եվ այս հայորդին ոչ միայն նշանավոր հանդիսացավ իր քաջագործութիւններով, այլ ան, շնորհիվ իր լեզվագիտութեան և հրնարամտութեան, անվերայ մահն մը ազատեց արաբ ընդհանուր հրամանատարը:

Եվդոքիոս կոչված Իպն էլ Պաթրիդ*) կը պատմէ արդարեւ, թէ 640-ին, երբ որ արաբական և բյուզանդական թանակներուն միջև վճռական ճակատամարտը կմղվէր Աղեքսանդրիո առջև, քաղաքի աշտարակին վրա կատարված հակահարձակումի մը պահուն արաբական բանակի պարագլուխներէն Ամրուկ Աս, դրոշակիբ Վարդան և Մեսլեմե Պին Մոխալլետ գերի կլինան բյուզանդացիներուն ձեռքը և կառաջնորդվին քաղաքի կա-

ռավարիչին մօտ: Այս վերջինը, որ չէր ծանշար ներկայացող գերիներուն ինքնութիւնը, կսկսի նախ հարցաքննել Ամրուկ Աս զորավարը և տրված պատասխաններէն կը ռահելով, որ պարզ զինվոր մը չէր իր առջև կանգնող անձը՝ կհրամայէ մօտը կեցող պահակին, որ զայն դիտատես:

Վարդան, որ հունարէն գիտեր, կհասկնա տրված դաժան հրամանը և իր տերը ազատելու անմիջական ճար մը մտածելով, ապտակ մը կիջեցնէ արաբ ընդհանուր հրամանատարի երեսին, առարկելով՝ թե իր պարզ զինվորի հանգամանքով Ամրու իրավունք չունի տուաջ նետվելու և առաջին խոսողն թլլալու, երբ անդին դիբքով և աստիճանով իրմէ բարձր երկու հոգիներ կանգնած էին կառավարիչին առջև: Վարդանի անսպասելի ելույթը ուշի կերէր դանդաղարժ և հաստափոր Մեսլեմէն, որ հասկնալով վայրկյանին լքելութիւնը՝ վտանգէն փրկվելու համար առասպել մը կհնչանա: Եռանդամ խումբին պետը ըլլալու պատրանքը ներշնչող այս արաբը խոսքը կառավարիչին ուղղելով կըսէ, թէ իրենք պարզ զինվորներ են և արաբ հրամանատարութեան կողմէ իբրեւ բանբեր ղրկված են համանազ կան հաշտութեան մը մասին բյուզանդացի կառավարիչին տրամադրութիւնը շոշափելու համար: Ապա կապիւլացնէ, թէ Օմար խալիֆան հրահանգ ղրկած է արաբ ընդհանուր հրամանատարին, որպէսզի վերցուի Աղեքսանդրիո պաշարումը և հաշտութիւն կնքվի բյուզանդացիներուն հետ, և թէ կառավարիչը եթէ բարեհաճի ազատ արձակել զիրենք, արաբ բարձրաստիճան զինվորականներ բաղկացած նոր պատգամավորութիւն մը պիտի ներկայանա հաշտութեան պայմաններու մասին վերջնական կարգադրութիւններ ընելու համար....

Վարդանի ապտակը և Մեսլեմէնի մեղրա-

*) Մեսլեթ (Մալէթ) քրիստոնէաներուն Աղեքսանդրիո Պատրիարքը՝ Եվդոքիոս, որ արաբական գրական աշխարհին մեջ Իպն էլ Պաթրիդ կոչվի, ապրած է Փրկչական 877 թվականէն մինչև 940: Բժշկական և կրօնական երկերու կարգին ան գրի առած է ընդարձակ տարեգրութիւն մը, որ մեծ վարկ կվայելի և Յանկագին աղբյուր մը կնկատվի պատմագետներու մօտ:

ծորան խոսքերը կմոլորեցնեն բյուզանդացի կառավարիչը, որ ակնարկված բարձրաստիճան զինվորականները ձեռք ձգելու հեռանկարին տարվելով՝ ազատ կարծակի երեք գերիները, որոնք անմիջապես կուղղվին դեպի արաբական բանակավայրը: Բայց երբ որ ասոնց անվնաս վերադարձին առիթով ուրախության աղաղակներ կբարձրանան արաբական բանակին, բռնվեցին այն ատեն միայն կհասկնան, թե խորամանկ Վարդանի ծուղակը ինչպիսի՞ արար ընդհանուր հրամանատարը ձեռքի փախցուցած են...

Կարծե հոս հիշել, թե ըստ երևույթին դրոշակիր Վարդանեն զատ Եւրիշ հայ մարտիկներ ալ մասնակցեի են Եգիպտոս արշավող արաբական զորաբանակին: Իր տեղագրական տեղեկություններուն մեջ՝ Մագրիզի *) կհիշե արդարեւ, թե Եգիպտոսի նվաճումին մասնակցեի են 500 բռնվեցին: Ի՞նչ ազդեցություններու կպատկանեին այս բռնվեցինը և ի՞նչ տոկոս կկազմեի հայ տարրը տրված թվին մեջ, քանի որ արաբ մատենագիրներ հաճախ «բռնվեցին» անունը կուտան հույնի, հայու և դեռ՝ բյուզանդական կայսրության մաս կազմող ուրիշ ժողովուրդներու: Դրժբախտաբար Մագրիզի չի տար մեզի այս թանկագին տեղեկությունը, այնպես որ այսօր հնարավորություն չունինք թվաբանական ճշտությամբ պատասխանելու վերի հարցումներուն: Բայց եթե հաշվի առնենք կարգ մը հատկանշական դեպքեր և տվյալներ, կրնանք առանց հերքվելու վարի 100-են մինչև 150 գնահատել արաբական արշավախումբին մասնակցող հայերուն թիվը:

Հայերու զինվորական ուժը տիրական դիրք ստացավ Եգիպտոսի մեջ Յաթիմինքոտ օրով միայն, երբ Մուսթանսըր խալիֆայի մատնավոր հրավերին վրա հայերն բաղկացած զորաբանակով մը Եգիպտոս եկավ հայազգի Պետր էլ Ճեմալի և վեզիրությունյան բարձր պաշտոնը ստանձնեց 1072-ին**):

Առյուծափրոտ հայը իր ուժեղ բանակին կռիված անխնա հալածեց և հարվածեց

*) Բագրիտուն էլ Մագրիզի ժն դարու մատենագիր մըն է, որ հեղինակած է պատմագրական, բանասիրական և կրոնական մարզեր շոշափող բազմաթիվ գործերու Նշանավոր է Քիթապ էլ Մավազ Վել իթիպար Ֆի Ջիրը իլ խիթաթ Վել Ասարա (Գիրք Հորդորանքի և Խորհրդածության Նոր Վարդերու և Հնու-թյուններու Հիշատակության Մասին) անուն իր տեղագրական հսկա գործը, որ ծանոթ է Եգիպտոսի Մագրիզի անունով:

**) Արաբ պատմագիրներին ոմանք 1073 կամ 1074 թվական կուտան այս թվականը:

շարագործներն ու խոռվարար տարրերը, մինչև որ հաջողեցավ կարգն ու կանոնը վերահաստատել անկարգության մատնված երկրին մեջ, և վերջ տալ այն ահեղի սովին, որ ամեն օր տասնյակ հազարավոր կյանքեր կհնձեր անմեղ ժողովուրդին:

Բայց ձգենք, որ արաբ մատենագիրը ինք պատմե հայ վեզիրին և իր զորաբանակին ձեռքով կատարված սխաղագործությունները. —

«Հիճրեթի 465 (Ք. 1072) թվականին — կգրե Մագրիզի, — ճումատա Ուլայի լրանալուն երկու գիշեր մնացած, շորեքշաբթի երեկո եկավ Պետր և հաջողեցավ ձեռքալավել պետության բոլոր էմիրները...: Անոր ազդեցությունը զորացավ այս կերպով և հեղինակությունը մեծցավ: Ոսկեճամուկ վերարկու նվիրեց իրեն Մուսթանսըր խալիֆան և անոր հանձնեց սուրի և գուշ վեզիրությունը: Գատինը, քարոզիչներ և ալլ պաշտոնատարներ անոր ձեռքին տակ դրվեցան և անոր պատվանոցնեքուն վրա բարդվեցավ «Բանակներու Հրամանատար, Մահմեդական Գատիններու նահապար և Հավատացյալներու Քարոզիչներուն Առաջնորդ» տիտղոսը:

«Ան. շարագործները հետապնդեց և մեկ հատ խակ չձգելով մահացուց: Մըսրի ավազաններին, գատիններին և վեզիրներին շատերը մեռցուց: Ապա քնաց Ստորին Եգիպտոս, հոն դառնալով Լավաթինը*) անխնա ջաղդեց, անոնց Կնքերը գրավեց. խոռվարարները հալածեց և զանազան մահացումներով ոչնչացուց: Ապա անցավ արևելյան ցամաքը և սպաննեց անհամար շարագործներու Հետո իջավ Աղեքսանմար դրիտ, Երբ հոն խմբակ մը ապստամբած էր իր էլ Ալհատ**) որդիուն հետ: Հիճրեթի 477 (Ք. 1084) թվականի Մուհամմադ ամսուն քանի մը օր պաշարեց քաղաքը, մինչև որ բռնի գրավեց զան, բնակիչներն շատերը սպաննեց և բռնագրավուած քրթումով Աթթաթինի մզկիթը***) շինեց: Ապա քաղեց դեպի Վեզիր Եգիպտոս, պատերազմեցավ ճումահա և Մաալալա կոչված արաբ ցեղախումբերուն դեմ, որոնց մեծ մասը ոչնչացուց: Անգնահատելիորեն առատ

*) Արաբ ցեղախումբի մը անունն է:

**) Թաղրիպիրտի կվկայ, թե Պետր էլ ձևավոր այս անաթման զավակը, որ զենք վերցուց իր հորը դեմ, մահվան պատիժին ենթարկուած է հորը ձեռքը իյնալի ետք:

***) Աղեքսանդրի թաղերն մեկուն անունն է: Ակնարկված մզկիթը կանգուն կմնա մինչև այսօր:

հարստություն մը ձեռք ձգեց և անով բարեկամեց շրջանին խանգարված կացությունը...

«Պետք էլ ձեռնարկի թագավորներու իշխանությունը ունեցավ նգիպտոսի մեջ, այնպես որ անոր առջև Մուսթանսըր Կալիֆան հեղինակություն չունեցաւ: Ան Կնքնագրովս վարեց գործերը և ամենալավ կերպով կանոնավորեց: Խիստ պատկառազորու, մեծապես հարգված և ահարկու՝ ան նգիպտոսի մեջ այնքան մարդ սպանեց, որուն համարանքը Արարիչը միայն կրնա գիտնալ: Արդարեւ, Տամրեթի, Աղեքսանդրի, Ղարալիյի, Շարգիյի, Վերին նգիպտոսի քաղաքներուն, Աստանի, Գահիրեի և Մուսթի մեջ սպաննուածներն դուրս ան Պաշտան նահանգի ժողովուրդին միայն մոտավորապես 20 հազար հոգի մահացուց: Այսու հանդերձ, ան խաղաղեցուց, շենցուց և բարեկարգեց երկիրը, որ ավրուած և քանդված էր տեղացի շարագործներուն ձեռքով...»

Հայկական զորաբանակը իր գոյությունը պահեց Պետք էլ ձեռնարկի հաջողող հայ վեզիրներու օրով, կարևոր տարր մը կազմեց արաբներն, մաղղրալիներն և սևամորթներն բաղկացած եգիպտական բանակներու կողքին և մերթ հաջող ու երբեմն ալ անհաջող ընդհարումներ ունեցավ խաչակիրներուն հետ: Հայկական զորաբանակը մեծ փառատացավ և Կիլիկիո կողմերին բերված թարմ ուժերով մեծապես զորացավ նգիպտոսի հայ վեզիրներին Վահրամ Պահլավունիի օրով*): Եթե հավատանք Հաֆիզ Կալիֆայի կողմից Սիկիլիո այն առնետան քրիստոնյա թագավորին ուղղված պաշտոնագրի մը վկայության, Վահրամ հաջողած է 20 հազարի հասցնել նգիպտոսի հայկական հեծելազորին ու հետևակազորը կազմող զինվորներուն թիվը: Արդարեւ պատմական տեսակետե մեծ արժեք ներկայացնող այս ընդարձակ վավերագրին մեջ, որում հարազատ

պատճենը կուտա մեզի Գալաշանտի*), Հաֆիզ Կալիֆան ի մեջ այլոց հետևյալը կգրե Վահրամի ձեռքով կազմված հայ զորաբանակի մասին.

«...Իր (իմա՝ Վահրամ Պահլավունիի) կողմից զբաղված դադունի թղթակցություններով և ետքն երևան հանված հայերն նամակներով Վահրամ կանչել տվավ իր ընտանիքին ու ազգականները, իր ազգակիցներն ու ցեղակիցները: Ասոնք եկան հետզհետե, մինչև որ ձիավոր և հետևակ 20 հազար հոգի հավաքվեցավ, մեջն ըլլալով իր երկու հիդրոդրոնները**» և իր գերդաստանին դեռ ուրիշներ...

Հայուն անունը պանծացնող զինվորական այս ուժեղ կազմը առաջին հարվածը ստացավ 1137-ին, երբ Վահրամի վեզիրության վերջին օրերուն հակահայ հալածանք մը ծայր տվավ նգիպտոսի մեջ՝ Հաֆիզ Կալիֆայի իսկ դրդումով, հալածանք մը, որուն հետևանքով հայ զինվորներն շատեր հետքան նգիպտոսին և ապաստան գտան Կիլիկիո կողմերը: Հայկական տկալացած բանակին վերջնական հաշվահարարը տեղի ունեցավ սուլթան Սալահատինի օրով, երբ Ֆաթիմիներու իշխանության անկումին ետք Ալեքսանդրիոյ իշխանությունը հաստատվեցավ նգիպտոսի մեջ: Կարգ մը քաղաքական դրդապատճառներով, որոնց հիշատակությունը երկար պիտի ըլլար, Սալահատին, եգիպտական ուրիշ բանակներու կարգին, ցրեց նաև հայկականը և այս պարագան Պաղտատի խալիֆային հաղորդեց ընդարձակ տեղեկագրով մը, որուն պատճեն կառնենք նույնպես Գալաշանտիի գործին մեջ:

Այս համառոտ հղվածին մեջ մենք շոշափեցինք այն ժամանակաշրջանը միայն, որ կհասնի մինչև Ֆաթիմիներու անկումը, մինչդեռ հայ մարտիկը նգիպտոսի զինվորական ասպարեզին մեջ խիստ ուշագրավ դեր կատարած է նաև Ալեքսանդրիոյ, Մամուրիներու և օսմանյան սիրապետության շրջաններուն: Բայց այս մասին հաջորդ հոլովածով:

*) Վահրամ Պահլավունի, զոր Պահրամ էլ էրմենի կողմից արար մատնագրերն, քննորդին է Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսին և հորեղբայր Ներսես Շնորհալիի: Ան նգիպտոսի վեզիրության պաշտոնը ձեռք ձգեց 1135-ին՝ զենքի ուժով, բայց շուտով հետևած տալ իր քրիստոնեական հավատը դրանալու առաջարկներուն, ավելի քան տարի մը երկրին վարչական իշխանությունը վարել ետք ստիպվեցավ ձգել պաշտոնը:

*) Շիհապետին Գալաշանտի ժն դարու մատնագիրն մըն է: Ունի Սորէ էլ Աշա (Հավուրի Արշալույսը) անուն հոյակապ գործ մը, որու մեջ պատմական տեղեկություններու կարգին հեղինակը հավաքած է արժեքավոր վավերագրներու հարազատ պատճեններ:

**) Ակնարկություն կընէ Պահլավունի տոհմին Վահիկ և Շահաէի, որոնք նգիպտոս գաղով պահ մը պետական պաշտոն վարած էին Վահրամի օրով:

ՍՏԵՓԱՆՈՍ ԴԱՇՏԵՑՈՒ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԸ



Իջնադարյան մեր հարուստ մատենագրությունը շատ աղքատ է հանելուկներով: Մեզ հայտնի են միայն մի քանի հեղինակների կազմած հանելուկները՝ Ներսես Շնորհալու, Հովհաննես Նրզնկացու և ոման Իգնատիոսի: Վերջին երկու հեղինակների հանելուկները դեռ չեն հրատարակված (ներառել հայտնի են ՀՍՍԻ Մատենադարանի ձեռագիր ընդօրինակություններից), քսկ առաջինի հանելուկների մեծ մասը կրոնական բովանդակություն ունի:

Հանելուկներ անցյալում, անկասկած, եղել են: Կան տվյալներ, որ նրանք շատ սիրված են եղել միջնադարյան Հայաստանում, սակայն չեն պահվել, որովհետև մեր գրիչներն այդ կարգի մատենագրական երկերի վրա նայել են տրպես թեթև գործերի և չեն ընդօրինակել: Սակայն, աքնուկածնալիով, մեկ մեկ, առանձին ձեռագրերում, գլխավորապես գրական, գիտական բովանդակություն ունեցող ժողովածուներում, պատահում են չուսումնասիրված հանելուկներ՝ մեծ մասամբ անհեղինակ: Մենք մեր ներկա հոդվածում մեր ընթերցողներին ցանկանում ենք ծանոթացնել Ստեփանոս Դաշտեցու հանելուկների հետ, որի մասին, որքան մեզ հայտնի է, ոչ ոք դեռ չի խոսել:

Ստեփանոս Դաշտեցին մեր մատենագրության մեջ հայտնի անձնավորություն է: Նրա վրա կանգ են առել Մ. Չամչյանը^{*)}, Դ. Ալիշանը^{**)}, Տաշյանը^{***} և ուրիշներ: Նրա մասին ամբողջական բերլիդգրաֆիա ունի մեծանուն գիտնական Հ. Աճառյանը՝ իր

^{*)} Մ. Չամչյան, Պատմություն հայոց, 3 հատ., Վենետիկ 1876 թ., էջ 749:

^{**)} Դ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ 1890 թ., էջ 494:

^{***} Հ. Տաշյան, Յուզակ հայ ձեռագրաց մատենադարանի ի վիճակ, 1895 թ., էջ 131, 133, 642 և այլն:

«Անձնանունների բառարան»-ում (Ստեփանոս Դաշտեցու անվան բառարանը ընկած պարունակվում է բառարանի 4-րդ հատորում և դեռ չի հրատարակված, սակայն հեղինակը մեծ սիրալիրությամբ իր ձեռագիր աշխատությունը տրամադրեց մեզ օգտվելու):

Ստեփանոս Դաշտեցին 17-րդ դարի վերջում և 18-րդ դարի սկզբներում ապրած հեղինակ է: Նրա անունով մեզ հայտնի են մի շարք աշխատություններ, որոնցից առանձնապես արժեքավոր է «Համառոտ ընձեռումն վիճաբանութեան» ընդդէմ հերձուածողաց ազգին հայոց»¹ սա բաղկացած է երեք գրքից, որոնցից առաջինը կոչվում է «Մաղախ փշրանաց», երկրորդը՝ «Կոշակ ճշմարտութեան» փակ երրորդը՝ «Խնդիր ուղղութեան»: Այս աշխատությունը, փաստորեն, ուղղված է Հովհաննես Մրքուզի՝ «Գիրք վիճաբանութեան ընդդէմ լատինաց, յունաց և երկաբընակաց» աշխատության դեմ, որն առաջին անգամ հրատարակվել է 1687 թվին²): Ստեփանոս Դաշտեցին իր «Ընձեռումն վիճաբանութեան» աշխատությունը գրել է 1700 թվին, Մրքուզի հրատարակությունից 13 տարի հետո: Նշված ընդօրինակության երկու ընդօրինակությունն է հայտնի մեր Մատենադարանում № 8111/968 և № 8746/5421 ձեռագրերում: Առաջին ընդօրինակության մեջ նա ունի հետևյալ վերնագիրը. «Գիրք վիճաբանութեան տեառն Յովհաննիսի վարդապետի Զուլֆայեցույ (Մրքուզ կոչեցելոյ), ընդդէմ կաթողիկէ եկեղեցւոյն լատինացւոց և յունաց երկաբնակաց և պատասխանատութիւնք Ստեփանոսի մեղապարտ ծառայի Դաշտեցույ»: Մեր Մատենադարանի ընդօրինակություններում հայտնի են Ստեփանոս Դաշտեցու այլ աշխատությունները և՛ «Համառոտ պատմութիւն և անունք որ-

¹ Հովհաննես Մրքուզի այս աշխատությունը հրատարակված է Նոր Զուղայում: Նա հետադարձ վերահրատարակվել է ևս երկու անգամ:

դոց թաղաւորաց Օսմանցոց», որին կցված է Հնդկաց պատմութիւնը*), «(Ստեփանոսի) Ոսիւ շարադրեալ անունք թագաւորացն Օսմանցոց», «Ոստնաշարութիւն դեղշուկի վերայ նոր Զուլայեցոց» և «Միծաղելոյ վարսաղ Ստեփաննոսի Դաշտեցոյ», որոնք ընդօրինակված են ՀՍՍՌ Մատենադարանի № 1786 ձեռագրում, որտեղ գտնվում են և Ստեփանոսի հանելուկները:

ՀՍՍՌ Մատենադարանի № 1786 ձեռագիրը պատմագիտական նյութերի ժողովածու է: Նա ընդօրինակված է 1722-1723 թվերի ընթացքում, հավանական է, Մարտիրոս դի Առաքելի կողմից: Մարտիրոս դի Առաքելը առևտրական մարդ է եղել, իր հետ ունեցել է ներկա ձեռագիր-տետրը և ուր որ արժեքավոր մի բան է տեսել, ընդօրինակել է ձեռագրում: Երևում է, որ ձեռագիրը եղել է Հնդկաստանում և Պարսկաստանում: Զեռագիրը գրված է խառը նոտր գրով: Այս ձեռագրի վրա մենք կանգ ենք առել մեր մի հոդվածում, որ տպագրվել է ՀՍՍՌ Մատենադարանի «Գիտական նյութերի ժողովածու»-ի մեջ**):

Ստեփանոս Դաշտեցու մեզ թողած երկերից երևում է, որ նա իր ժամանակի աշխարհ, լեզուներ գիտցող և բավականաչափ դարգացած անձնավորություններից մեկն է եղել: Երևում է, որ նա եղել է վաճառական: Իր «Հակաճառութեան» մեջ (ե՛նդիք ճշմարտութեան» մասում) նա փղեալականացնում է այն քաղաքականությունը, որը վարում է Տոսկան դուքսը Լիվորնիա նավահանգստում՝ հրավիրելով ալդորեզ զանազան ազգի վաճառականների: Այդ կապակցությամբ նա արդարացնում է Արշակին՝ Արշակվան կառուցելու համար, որը, իբր թե, Արշակի համար ծառայելու էր որպես վաճառականական կենտրոն***):

Որպես առևտրական մարդ, որ շրջադայել է զանազան երկրներ, զբաղվել է մշտապես զանազան առևտրական գործարքներով, լավ իմացել է մի շարք լեզուներ: ՀՍՍՌ Մատենադարանի № 1786 ձեռագիրը, որից մենք հրատարակում ենք Դաշտեցու հանելուկները, պարունակում է նույն հեղինակի «Մի-

ծաղելոյ վարսաղ Ստեփաննոսի Դաշտեցոյ» չափածո մի գործը, որը երգիծանք է իր ձեռք վրա՝ գրված հայատառ աղբրեղաներին: 15—18-րդ դարերից, ընդհանրապես, մի քանի ձեռագրերում շատ կան հայատառ աղբրեղաներին չափական գործեր, որոնք մեծ արժեք են ներկայացնում հայ-աղբրեղանական գրացի ժողովուրդների գրական փոխհարաբերության պատմության համար, սակայն, ցավալի է ասել, որ նրանք պատշաճ ձևով հայագիտության կողմից դեռ չեն ուսումնասիրված և վեր չեն հանված:

Այդ տեսակետից հետաքրքիր են նաև Ստեփանոսի հանելուկները: Ամեն մի հանելուկի կողքին, որը շրջա տողից է բաղկացած, ունի լուսանցքում բացատրություն՝ թե ինչին է վերաբերում տվյալ հանելուկը: Եվ որպեսզի հանելուկը վերծանելիս ընթերցողը մտածել, չարաբովել կարողանա, հանելուկի այդ բացատրությունը գրված է վրացերեն: Նման վրացերեն բացատրություններ ունի ձեռագրում հանելուկին նախորդող նյութը՝ «Տղայական ճարտասանութիւն» վերնագրով, որն, անկասկած, նույնպես Դաշտեցուն է: Դաշտեցին հարց է դնում աշակերտի առաջ. «Կենաց եմ պատճառ, և մահու առիթ, մերձ եմ յԱստուած և ոչ հեռի ի Սատանայէ» և վրացերեն պատասխանում է (հոգի) *): Այսպիսով, պարզվում է, որ Դաշտեցին գիտցել է վրացերեն, և հայերեն գրված իր հանելուկներն ու ճարտասանությունը վերծանել վրացերեն: Ակամա մարդ հիշում է անմահ Սայաթ Նովային, որը միաժամանակ կատարելությամբ տիրապետել է հայերեն, վրացերեն և աղբրեղաներին լեզուներին և երգել միաժամանակ այդ երեք լեզուներով: Պետք է ասել, որ դրա համար այդ երգերը բարեբեր հոգ ունեցել են: Բախտակից Անդրկովկասի այս երեք ժողովուրդի երգերը իրար հարազատ են հնչել և հավասարաշափ սիրվել երեքի էլ կողմից, ուստի և զարմանալի չէ, որ Սայաթ Նովան իր ժամանակի համար բացառություն չի կազմել: Դրա լավագույն ապացույցը մեզ տալիս են Ստեփաննոս Դաշտեցին և բազմաթիվ այլ հեղինակներ, որոնք սպասում են ուսումնասիրության: Այստեղ տեղին է հիշել ակադ. Ն. Յ. Մառի՝ բանասեր Գ. Տեր-Մկրտչյանին գրած նշանավոր խոսքերը, որ հայ-վրացական բարեկամությունը, նրանց ազգակցությունը հնից է գալիս, և որ այդ խիստ կարևոր հարց է ու նա դրանով ցան-

*) Սա մշակված և հրատարակության համար պատրաստված է ապիրանո Ս. Մելիք-Բախչյանի կողմից:

**) Ա. Արրահամյան, Մարտիրոս դի Առաքելի ժամանակագրությունը, (տես ՀՍՍՌ Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու էջ 93—100):

***) Տես այս մասին Ղ. Ալեքանի «Ալբաբա»-ը, էջ 494:

*) ՀՍՍՌ Մատեն. ձեռ. № 1786, թ. 53 ա:

կանում է առանձին գրադրվել *): Այդ ուղղությամբ այժմ շնորհակալ գործ են կատարում պրոֆ. Մելիքսեթ-Բեկը, դոց. Աբուլաձեն (Թբիլիսիում), դոց. Ս. Երեմյանը (Երեվանում), գիտական աշխատող Տեր-Գրիգորյանը (Բազմում) և ուրիշները:

Ստեփանոս Դաշտեցու հանելուկներն արժեքավոր են մեզ համար և իրենց աշխարհիկ բովանդակությամբ: Ոչ ոք կարող է ժխտել Շնորհալու հանելուկների արժեքը, որոնք իրենց տեսակի մեջ մեր մատենագրության համար հետաքրքիր նորություններ են հանդիսանում: Սակայն Դաշտեցու հանելուկները Շնորհալու համեմատությամբ, իրենց բովանդակությամբ ավելի աշխարհիկ են: Բացի այդ, Դաշտեցու հանելուկները կազմված են ավելի սրամիտ: Հետաքրքիր է, որ Դաշտեցու որոշ հանելուկներին նյութը — նոր ժամանակներում գործածվող իրերից են վերցրված — ժամացույց (մեխանիզմով), հրացան, կողմնացույց և այլն:

Հայ ժողովրդի պատմության և գրականության պատմության համար պակաս արժեք չեն ներկայացնում Դաշտեցու նոր ջուղայեցիներին ուղղված պար-

սավական խոսքերը, որ մենք բերում ենք հանելուկների հավելվածում: Այստեղ Դաշտեցու քննադատությունը չի ուղղված նոր ջուղայեցիների դեմ ընդհանրապես, այլ նրա բարձր խավերի, հատկապես առևտրականների դեմ, որոնք, ինչպես Դաշտեցին է ասում, «մարդու միտը ուտում են հում հում», «մոծակ դարձել արիւն են ծըծում» և «ինչ ծակ տեսնում, ոսկով են լցնում»: Այս տեսակետից, Դաշտեցու այս պարսավական խոսքերը սոցիալական շատ խորը իմաստ են պարունակում իրենց մեջ և որոշ չափով հիշեցնում են Ֆրիկին: Ցանկալի է, որ մեր գրականության պատմության մասնագետները լուրջ ուշադրության առնեն Դաշտեցու այս պարսավական չափածո գործը:

Դաշտեցին իր գրական երկերով հանդես է եկել այն ժամանակ, երբ սկսում էր նախապատրաստվել միջին դարերի և նոր հասարակության սահմանագիծը, իսկ նման կարգի քննադատական գործերը հատուկ են անցման այս շրջաններին: Այս հանգամանքը պարտավորեցնում է մեզ լուրջ ուսումնասիրել Ստեփանոս Դաշտեցուն:

ՀԱՆԵԼՈՒԿ

ԱՐԱՐԵԱԼ ՈՒՄԵՍՆԷ ՍՏԵՓԱՆՈՍԷ ԴԱՇՏԵՅԻՑ

54 ր 11. Թէպէտ շարժիմ և տամ շարժել, բայց ոչ ըզգամ.

Յամ համայնից ցույց տրակաց և ինչ որ տամ,
Երեւիմ և ոչ երեւիմ փոփոխապէս,
Յերթեկացն օր ըստ օրէ առնում զհանդէս**):

(Թեև շարժվում և շարժվել եմ տալիս, բայց չեմ զգում,
Ցույց եմ տալիս իսկությունը ես ամենքին, ինչ չեմ տալիս,
Երևում եմ փոփոխապես ու չեմ երևում,
Երթեկաց հանդեսներ եմ միշտ ստեղծում):

2. Թռչիմ իբրե զարագ թռչուն, բայց ոչ ուտեմ,
Ի յանասնոց շնչաւորաց՝ մերկ, և չուտեմ,
Ամբարձ ոտիւք, պարզեալ անձամբ, շեշտ ընթանամ,
Բայց թե ըզշունչ ոչ առնուցում՝ անշարժ մնամ:

(Թռչում եմ արագ թռչունի նման, բայց չեմ ուտում,
Մերկ շնչավոր անասուն եմ և չեմ ուտում,
Վերամբարձ ոտքերս ծավալած շեշտ ընթանում,
Բայց որ շունչ չեմ առնում, անշարժ եմ մնում):

3. Յանզգայլէ միոյ շարժիմ առհասարակ,
Պարտք ատամանցս՝ որք եմ քաղում և յոյժ բարակ,
Չունիմ զձեռս և եմ անշունչ, և ոչ տեսանեմ,
Բայց զշրջանս ժամանակաց ձեզ ցուցանեմ:

ՆՅՅԺԺԺ
(Ժամացույց)

*) Ն. Յա. Մառի նամակները Գ. Տեր-Մկրտչյանին (Հրատ. մեր կողմից 1944 թ.):

**) Ընթերցողներին մատչելի դարձնելու համար անհրաժեշտ ենք համարում Դաշտեցու հանելուկները ղուղընթացաբար թարգմանել աշխարհաբար:

(Անդգա մեկից շարժում եմ առհասարակ,
Ատամաշարք ունիմ բազում և շատ բարակ,
Զուսիմ ձեռքեր, անշունչ եմ ես և չեմ տեսնում,
Ժամանակի շրջաններն եմ ձեզ ցուցադրում):

տութի
(Հրապարակ)

Փոր իմ երկայն, և խորխորատ ունիմ ընդ իս,
Հուր և երկաթ է ապուրն իմ իբրև զմիս,
Կայծի միտոյ յո հանդուրժեալ իսկոյն պայթեմ,
Թէ և զամուրս իցէ հանդէպ իսկոյն վայթեմ:

(Փորն իմ երկար է և ունիմ խորր խոսս,
Կերակուրս հորն ու երկաթն է ինչպես միս,
Մի կայծի անգամ չհանդուրժած ևս պայթում եմ,
Ամուր բան հանդիպելիս դատարկվում եմ):

ფეხბურთი
(V ხეობა)

5. Փոքր և շնչին եմ կենդանեաց, և եմ նրաատ,
Բուսականաց զհոտոտունն եմ յոժ գգաստ,
Կերակուր մի չէանց բնաւ ի կոկորդիս,
Բայց թագաւորք ցանկան ուտել զավելորդն իմ:

(Փոքր, չնչին կենդանի եմ ու նվաաստ եմ,
Բուռյանի մեջ հոտոտելու շատ զգաստ եմ,
Կերակուր բնավ չի անցել կոկորդովն իմ,
Բայց թագավորը ցանկան ուտել ավելորդն իմ):

სპრევუნის თვკლი
(ზხრამჩი ახრამ)

6. Հանգույն սերմանց եմ անկենդան նաև անշունչ,
Որքան կամիս մեռեալ մնամ միշտ անմոռունչ,
Ի մեռելոց կենդանանամ ե անլապտուտ եմ,
Յաւելորդացրն իմ հանդերձ փառաց կոտորեմ:

(Մերմբերի նման անկենդան եմ և շունչ չունեմ,
Որքան կամենաս մեռած կենամ միշտ անմեռունչ,
Մեռելներին կենդանանում և անկուշտ եմ,
Ավելորդությունից փառքի հազուստ եմ կուտակում):

სიყვარული
(*უხე*)

7. Զերմ և սաստիկ եմ և վառիմ որպէս զհուր,
Եւ ի նկարչացն նկարիմ իբրև զկոյր,
Զի զարտուս ի յղճալեաց ոչ ճանաչեմ,
Բնաւից պատժոց որք պատահինն ոչ ամաչեմ:

(Զերմ եմ սաստիկ և մատնվում եմ հուրի նման,
Նկարել ենք քիչ պատկերվում եմ կուլտի նման,
Յանկացածիս արատները չեմ ճանաչում,
Ոչ մի պատժից, պատահելիս, չեմ ամաչում):

55 ა II
მაკრატელი
(*შკრათი*)

8. Զերթ գպտունիկ կին մի եմ ես համաքատակ,
Հանդէպ միմեանց երկու և լայն ունիմ զօղ
Երբ Իօղն իմ դնեն զմատ իսկոյն խաղամ
Ծամեւօրս իմ, վուշ և զկտաւս հատեալ աղամ:

(Պոռնիկ կնոջ նման եմ համաքառտակ,
Երկու լայն օղբեր ունիմ իրար տակ,
Օղբերի մեջ մատ դնելիս ես խաղում եմ,
Ծամելիքս փուշ կտալիս է, որ աղում եմ):

Եցմնո
(Ասեղ)

9. Եղ յօղն իմ կոթ մի երկայն ի լուռ կացի,
Զփոխարէնն հազար ծակ նովաւ բացի,
Մինչ զի եղեալ կոթն յօղէս իսպառ հատաւ,
Եւ զեղ և մուտն իմ ընդունէր վուշ և կտաւ*):

(Ամրացրին ինձ երկար կոթուն և լուռ կացի,
Ու նրանով հազարավոր անցքեր բացի,
Մինչև որ դրած կոթունս իսպառ վերջացավ,
Եւ և մուտքս ընդունում էր վուշ ու կտավ):

Քոնմանո
(Կայծաքար)

10. Հարիւր ամօք թէև մնամ ի մէջ ջրոյ,
Նրբ թօթափեմ՝ զկայծակունս թափեմ հրոյ,
Ի դաւակացն իմոց փախչին մէգ և խաւար,
Ինչ տւտեն աղինք համայն զոսպ և ձաւար:

(Հարյուր տարի էլ որ մնամ ջրի տակին,
Թափահարվեմ՝ կրակի կայծեր ես կթափեմ,
Զավակներիցս փախչում են միշտ մեզն ու խավար,
Իմ տակ ուտում են ամենքը ոսպ ու ձավար):

Տարջ
(Հայելի)

11. Իբրև զքարինս եմ անկենդան, և ոչ քայլեմ,
Պայծառութեամբ իբր արեգակն կու փայլեմ,
Եմ նկարիչ ճարտարագոյն յոյժ անվրէպ,
Զոր ցուցանենն՝ կրեմ ի յիս, լինին հանդէպ:

(Քարի նման անկենդան եմ և չեմ քայլում,
Պայծառությամբ արեգակի պես եմ փայլում,
Նկարիչ եմ ճարտարագոյն խիստ անվրէպ,
Յուցադրածս ունենում եմ դեմ հանդէպ):

Շիլո
(Ոջիւ)

12. Կարիմ ասիլ որդի մարդոյ, բայց ոչ եմ մարդ,
Զի թարց մարդոյ ոչ գոյանամ, շուտեմ զյարդ,
Արին և միս է ապուրն իմ, ախ ևս հում,
Զտիւ և զգիշեր ծարավ եմ արեան ձերում:

(Կարիմ կոչվել մարդու որդի, բայց դեռ մարդ չեմ,
Առանց մարդի չեմ գոյանում, հարց չեմ ուտում,
Միս-արյունն է կերակուրն իմ և այն էլ հում,
Գիշեր-ցերեկ ծարավ եմ արյան ձերում):

Յնդամանդի յեթ
(Կողմնացույց)

13. Ի յաստեղաց լերկուց պահեմ զգիծն իմ անշարժ,
Զի նաւապետք առ ի նաւել քս տամ զվարժ,
Որքան մանրին աչքան երկուս ունիմ զծայր,
Ի հիւսիսոյ և ի հարսոյ առնիմ զդարձար:

(Երկու աստղի միջի գիծս անշարժ եմ պահում,
Նավապետաց ցույց եմ տալիս վարժ նավարկում,
Որքան մանրացնեն՝ աչքան էլ երկու ծայրեր ունեմ,
Դեպի հյուսիս, դեպի հարավ է դարձարն իմ):

Կիրոմիտի Միտելի
(Որդան կարմիր)

14. Մեռեալ եմ ես և չորացեալ, նաև մերկ եմ,
Սրտի արեամբս իմ վարդափոյնն կու ներկեմ,
Մէջ որակաց պատուեալ լինեմ համայն ազանց,
Զի թարց արեանն իմոյ շունչն զոյն գերազանց:

*) Այս և նախորդ հանելուկի մեջ կային մի քանի անցենդուր բառեր, որոնք մենք փոխել ենք հո մապաասխան բառով:

Մեռած եմ ես և շորացած, նաև մերկ եմ,
Սրտի արյամբս ես վարդազուն կներկեմ,
Գութաների մեջ ամենքի մոտ իմ պատվազուն,
Չունի ոչ ոք առանց արյանս գերազանց գուն):

Մոսկովի
(Քրաղաց)

15. Կառուցեալ կամ մերձ հոսանց, նոքօք պարիմ
Ատամամբք իմ, երբեմն հողմօք կառավարիմ,
Չունիմ զերբան, միշտ անդադար տան ինձ ուտել,
Եւ զաւելորդն յորովայնիս ինքեանք կուտել:

(Կառուցված եմ հոսանաց մոտ, նրանով եմ պարում,
Ատամներովս իմ, երբեմն հողմով եմ կառավարվում,
Բերան չունեմ, բայց անդադար տալիս եմ ինձ ուտել,
Եվ ստամոքսիս ավելորդն փնձ մոտ կուտել):

55 բ II
Ռոսիական
(Քառալար նվագարան)

16. Ըստ համարի տարերեցն ունիմ ականջս անլուր,
Նոյնքան տանիմ դուրս ի փորէս զաղիս իմ դուր,
Ի մէջ երկուց բազկաց խոսիմ, անգիր և անտառ,
Հանդերձ մատամբ ձեռացն իմոց երգեմ պայծառ:

(Տարրերի հաշվով շատ ականջներ տանիմ,
Փորիցս դուրս աչքան էլ ձիգ աղիքներ ունիմ,
Երկու բազկաց մեջ եմ փոստում անգիր, անտառ,
Ձեռքիս մատներովը երգում եմ պայծառ):

Յուրա
(Տկճոր)

17. Ի յուտոյէ շորկոտանոյ ըսքանչանամ,
Ի բերանոյն կթեմ զկութ և միշտ թանամ,
Ձի գոյն կթոյն յոյժ կարմիր, պարզ և յստակ,
Երբեմն եթէ բազկէն կթես՝ կթի նոյն պակ:

(Ուտող շորքոտանուց եմ քանչանում,
Բերանից եմ կթում կիթս ու միշտ թացանում,
Գութանը կթվածի խիստ կարմիր է, պարզ և հստակ,
Երբեմն բազկից է կիթը, կաթն է նույն տեսակ):

(Ե)ճնոց
(Մոմ)

18. Յերկուց ծնողաց անգգայիցն ունիմ զծնունդ՝
Յիւղ և ի ճարպոյ, և կտաւէ առնում զսնունդ,
Եմ փոխանորդ արեգականն, և ոչ ընթանամ,
Ի հատանիլ գլխոյս կրկին կենդանանամ:

(Երկու անգգա ծնողներիցն է ծնունդն իմ,
Յուղից, ճարպից և կտավից է սնունդն իմ,
Արեգակի փոխանորդն եմ և չեմ շարժվում
Կենդանանում, երբ գլխակտոր եմ լինում):

Մոսկովի
(Գրքի երես)

19. Ընդ կայսերաց և րստրկաց խօսիմ անյագ,
Քարոզատու և ուսուցիչ եմ յոյժ արագ,
Շրթանց փմոց բխեն իմաստք, զոր միշտ բանամ,
Բայց զոր ասեմն և քարոզեմն ոչ հասկանամ:

(Կայսրաց ու րստրկաց հետ եմ խոսում անկշտաբար,
Քարոզատու ուսուցիչ եմ ստեղծաբար,
Մշտաբայ շրթունքներիցս իմաստություն է հորդում,
Բայց ինչ ասում, քարոզում եմ, չեմ հասկանում):

Գրքի
(Փուլքս)

20. Առևտրութիւն շնչալ ունիմ և եմ անկենդան,
Բազմաց գործոց եմ բանական, և երբեմն անբան,
Երբ շունչ առնում ի բերանոյս, փչեմ ներքէն,
Այնքան ուժեղ՝ իբր զնօտոսն և զվառէս:
(Շունչ քաշելու առևտուր ունիմ, անկենդան եմ,
Շատ բաների գործածական՝ երբեմն և անբան եմ,
Բերնիցս շունչ փչելիս ներքեից եմ ես բաց թողնում,
Եվ այնքան ուժեղ, որքան նոտոսը և վալռենը):

ՈՏՆԱՇԱՐՈՒԹԻՒՆ ԳԵՂՋՈՒԿ Ի ՎԵՐԱՅ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԵՑԻՈՑ
ԱՍԱՅԵԱԼ ՍՏԵՓԱՆՈՍ ԴԱՇՏԵՑԻՈՑ

65 ր 11

1. Շինիս դաստուրն¹ և ծէսն էս այ,
Որ օտարի տնազ² կանեն,
Ինչ կու խօսին՝ շատ կէսն էս այ,
Որ օտարի տնազ կանեն:
2. ՆուստաՅ շինիս զօվլու դարար³,
Ստերն քան ըզգետ վարար,
Ինչ կու խօսին՝ ազգի զարար⁴,
Դեռ օտարի տնազ կանեն:
3. Բարուն հիւանդ, առ շարն չաղ,
Ղազունց⁵ տան ժիր, ժամումն կաղ,
Ներսն չարիք, դուրսն ծիծաղ,
Դեռ օտարի տնազ կանեն:
4. Քուրդի փող տան կեռիք սրեն,
Տափիկ⁷ տափիկ հիմքեր բրեն,
Ինչ տեսել չեն սուտ սուտ գրեն,
Դեռ օտարի տնազ կանեն:
5. Դուրսն դմակ, ներսն դանակ,
Ամեն շարիք հաղար գունակ,
Թամամ երկրում վատ օրինակ,
Դեռ օտարի տնազ կանեն:
6. Քուրդին սիրում, եղբորն ատում,
Ոխն սրտում պիրկ պատատում⁸,
Դատմունքն ողջ մեղքօվ դատում,
Դեռ օտարի տնազ կանեն:
7. Քանի հայ այ տան պատէ պատ,
Ով քուրդացա՛ւ ազաթն է շատ,
Մօլին հետ սէր, պատրոն⁹ հետ վատ,
Դեռ ուրիշի տնազ կանեն:
8. Երբ բան ունեն՝ ոտաց հող ան,
Դէմ դէմ կանգնեն սուտ սուտ դողան,
Յերբ պոծանեն զօռթ տան սողան,
Դեռ ուրիշի տնազ կանեն:

*) Խոսքը «նոտոս» և «վալռեն» կոչվող
քամիների մասին է:

1. Դաստուր — օրենք, սովորութիւն:
2. Տնազ — ծաղր:
3. Նուստա — որտեղից է:
4. Զուվլու դարար — կարգ ու կանոն:

5. Զարար — վնաս:

6. Ղազի — մահմեդական կրօնավոր:

7. Տափիկ — գաղտուկ:

8. Պիրկ պատատում — ամուր կապում:

9. Պատրի — լատին բարոգիչ:

9. Ողորմորան¹⁰ եկ օղէս հորը¹¹,
Մին ժամ ոսպ տան մին ժամ ապուր,
Էգան¹² թակեն փստնս¹³ տուր
Դեռ ուրիշի տնազ կանեն:
10. Ում խեղճ տեսնեն կը տան մահւամ¹⁴,
Էն էլ կանչէ գլխիդ դուամ¹⁵,
Չուր¹⁶ դարդակեն շինեն դուամ¹⁷,
Դեռ ուրիշի տնազ կանեն:
11. Ով մեկն ասաց՝ կը տան քացի,
Չուամ¹⁸ դու ասիր ես չասացի,
Սաբաբ դառնան մանտան¹⁹ հացի,
Դեռ ուրիշի տնազ կանեն:
12. Ով անմեղնայ իւրէնց թաղին,
Ուժով փութ տան շինեն դաղին²⁰,
Յետնէն զօռթ տան կուշտ ծիծաղին,
Դեռ ուրիշի տնազ կանեն:
13. Ով որ պաքին²¹ լզեց թանն,
Թամամեցաւ նորա բանն,
Ինչ բամբաս կա՝ ժամատանն
Դեռ ուրիշի տնազ կանեն:
14. Ամեն սրտում լաք հազար²² քէն,
Մինն դէս քաշէ, մինն դէն,
Ամեն ծակից թուռու²³ ձէն,
Դեռ ուրիշի տնազ կանեն:
- 66 ա Ո 15. Ո՞ւմ կայ կարդալ, կամ ո՞ւմ կայ ջանք,
Մեծ ու պատիկ աստուածաբանք,
Վանքն է քուրդի արծաթահանք,
Դեռ ուրիշի տնազ կանեն:
16. Աշքար պաք²⁴ նն, շատ կէսն ծում,
Մարդի միսն ուտում հում հում,
Մոծակ դարձել արուսն ծըծում,
Դեռ ուրիշի տնազ կանեն:
17. Գիր գրող են՝ կետ չեն տալիս²⁵,
Բանն հացի հետ չեն տալիս,
Ում ձեռն ընգաւ յետ չեն տալիս,
Դեռ ուրիշի տնազ կանեն:
18. Ով մի կաթ թան քսեց շուրթն,
Կեռքով դուս դուս կըտան բուրթն,

10. Ողորմորան — ողորմի հորը:

11. Հոր — հյոր:

12. Էգան — երկրորդ օրը:

13. Փստն — ճաշկերութի համար արած հանդա-
նակութուն:

14. Մահւամ — սպեղանի:

15. Ղուամ — ծառայեմ:

16. Չուր — մինչև օրս:

17. Ղուամ — ծառա, ստորուկ:

18. Չուամ — թե:

19. Մանտան — կտոր:

20. Ղաղին — ծիծաղի առակա:

21. Պաքին — պատին:

22. Լաք հազար — բազմահազար:

23. Թուռու — տեսակ-տեսակ:

24. Պաք են — պառ են:

25. Կետ չեն տալիս — կետեր չեն դնում:

- Ինչ փուշ բան կայ գցենք քուրդն,
Դեռ ուրիշի տնազ կանեն:
19. Մօլին փուր տան²⁶ մեջտեղ ցըցեն,
Ինչ ծակ տեսնեն սակով լցեն,
Բեղերն սրեն, ձեռներն կցեն,
Դեռ ուրիշի տնազ կանեն:
20. Սրտերն լի խութ²⁷, լեզվինն կով,
Օտար հախն²⁸ կեռքով տան պօկ,
Լեզվումն ջոկ, սրտինն ջոկ,
Դեռ ուրիշի տնազ կանեն:
21. Հրմներ ունես՝ ասաց բրեն,
Սուտ սուտ մազարատ²⁹ նստին գրին,
Մին թաս գինու չոք³⁰ տեղ մհրեն³¹,
Դեռ ուրիշի տնազ կանեն:
22. Քալանթարին³² սուտ սէր գցեն,
Բաներ վապ տան մէջն գցեն,
Դեռ չեն դրել շուտ վէր գցեն,
Դեռ ուրիշի տնազ կանեն:
23. Ողջ քուրդի են գցել ձեռն,
Աստուած ջինեկ կէռ ու մէռն³³,
Պիտի ջինէս դուրս գոյ նեռն,
Դեռ ուրիշի տնազ կանեն:
24. Քալանթարն են դրել դէնն,
Քուրդ դարուղի³⁴ հետն այ ձէնն,
Դափով զուռնով բերեն շէնն,
Դեռ ուրիշի տնազ կանեն:
25. Շամբայ³⁵ դրկից թե չէր Զուղայ,
Չոմին³⁶ կանչում քուրդ դարուղայ,
Խրէնց էրզին ջինում բուղայ³⁷,
Դեռ օտարի տնազ կանեն:
26. Ծուռն մեկնեն³⁸, մեկն³⁹ ծոռն,
Երբ երես տաս, դուրս կու թռն,
Կենտ կու հազան, ջուխտ կու...
Դեռ օտարի տնազ կանեն:
27. Ստեփան, աչքումդ ունես գերան,
Ոչ շոմին ես⁴⁰ ոչ փրփերան⁴¹,
Մեղայ ասա հազար բերան,
Չում ուրիշի տնազ կանես:

26. Փուր տալ — բամի տալ, ուտեցնել

27. Խութ — արգելք, խորթ ու բորթ

28. Հախ — վարձ, աշխատավարձ

29. Մազարատ — վնասակար գիր

30. Չոք — շորս

31. Մհրեն — կնքեն

32. Քալանթար — գյուղապետ

33. Կեռ ու մեռ — ծոռտիկ

34. Դարուղայ — ոստիկան

35. Շամբ — Զուղայի հարևան գյուղը

36. Չոմին — ինչո՞ւ են

37. Բուղա — ցուլ

38. Մեկնեն — մեկնաբանեն

39. Մեկն — մեկնածու

40. Շոմին ես — սպանաղ ես

41. Փրփերան — դանդաղ



ՄԵՍՐՈՊ ԹԱՂԻԱԴՅԱՆ



այդ դրականության դարգացման պատմության մեջ նշանակալից դեր է խաղացել ուսումնականության զարգացումը, որին հայ երիտասարդությունը սկսել էր ծանոթանալ դեռ 1820-ական թվականներից: Եվ հենց այս 20-ական թվականներից մեր իրականության մեջ մի նոր ու թարմ հոսանք առաջացավ, որը նախնական մի փորձ էր ունենում և եվրոպական դրականության, ֆրանսիական լուսավորչների գաղափարների ազդեցության առաջին ճեղքերը: Հին դրականության կաշկանդիչ սահմանները և դրականությունը դուրս բերելու դեպի կյանք, դեպի մարդը, դեպի լուսավոր գաղափարների աշխարհը:

Այդ շարժման առաջին երկու ներկայացուցիչներն էին Հարություն Ալամդարյանը և Մեսրոպ Թաղիադյանը: Ալամդարյանից հետո Թաղիադյանը մեր մտավոր վերածնության ավելի ուշագրավ ներկայացուցիչն է: Նրա ստեղծագործություններն իրենց վրա կրում են XIX դարի 30—40-ական թվականների հայ հասարակական կյանքի ազդեցությունը:

Այդ ժամանակաշրջանում հայ պատմության մեջ դարձանք էր սկսվում. դեպի ուսումնական և եվրոպական միտքը: Այդ դարձանքն ըստ էության սկսվեց Ալամդարյանով և ապա Թաղիադյանով:

Թաղիադյանը հանդիսացավ ավելի ուշագրավ դեմք, ավելի ստեղծագործ միտք և դրա հետևանքով նախորդից ավելի շատ հալածվեց:

Մեսրոպ Թաղիադյանը ծնվել է Երևանում, 1803 թվին: Նրա մանկությունը եղել է դառն ու անհրապույժ: Զրկվել է հարազատ հորից և ենթակա է եղել մոր դաժան վերաբերմունքին: Մայրը տառներկու տարեկան Մեսրոպին ուղարկում է Էջմիածին՝ ժառանգավորաց դպրոցում կրթություն ստանալու նպատակով:

Երբ 1821 թ. Եփրեմ կաթողիկոսը պարս-

կական լիջխանությունից հալածված փախչում է ուսական սահմանը, իր հետ ունենալով եպիսկոպոսներ ու միաբաններ, արքանց հետ միանում է նաև Մեսրոպը:

Թաղիադյանը Հին Նախիջևանում ընդունում է սարկավազության աստիճան և շարունակում ճանապարհը նրանց հետ մինչև Հաղպատ:

Այստեղ կաթողիկոսից հանձնարարական նամակ ընդունելով Հնդկաստանում գտնվող Պողոս եպիսկոպոսի անունով, Թաղիադյանը Պարսկաստանի վրայով ուղևորվում է Հնդկաստան:

1823 թվին նա հասնում է Կալկաթա Պողոս եպիսկոպոսը այդ ժամանակ գտնվում էր Դաքա քաղաքում: Թաղիադյանն ստիպված այցելում է և Դաքա քաղաքը, որտեղ հանդիպում է եպիսկոպոսին:

Հանձնարարական նամակը նրան հանձնելով Թաղիադյանը նորից պեթրադանում է Կալկաթա և մտնում Հայոց մարդասիրական ճեմարանը: Այստեղ Թաղիադյանը Աբրահամ ծ. վարդապետի միջնորդությամբ ընդունվում է Հիբրիի անդլիական բարձրագույն դպրոցը անգլերեն սովորելու նպատակով:

Այստեղ նա մտնում է շուրջ չորս տարի: Ընդարձակվում է նրա մտահորիզոնը, սովորում է զանազան գիտելիքներ. նա սովորում է նաև պարսկերեն, հոմեոսեն և լատիներեն:

Թաղիադյանն այնուհետև սկսում է զբաղվել թարգմանություններով: Թարգմանում է դրքեր լատիներենից և անգլերենից հայերեն: Առաջին հերթին նա թարգմանում է Ռիչնալդ Հիրթի «Պաղեստին» գրվածքը:

1828 թվին, երբ ուսական դոքորը դրավեց Երևանը, Թաղիադյանը մի ընդարձակ նամակ ուղարկեց իր համաքաղաքացիներին՝ երևանցիներին:

Այս կարևոր փաստաթուղթը վկայում է Թաղիադյանի ուսական օրինատաքիան և այն մեծ հույսերն ու ակնկալությունները, որ նա կապում էր Հայաստանի նվաճման հետ Ռուսաստանի կողմից: Այդ նամակում

Թաղիադյանն իր համաքաղաքացիներին խորհուրդ էր տալիս Երևանում մի դպրոց բանալ, որ երեխաները «դատարկ քուշեքումը» ման չդնեն:

Սակայն Թաղիադյանի նամակը, դժբախտաբար, մնում է անհետևանք: 1831 թվին նա վերադառնում է էջմիածին: Այստեղ նա ստանձնում է վանքի ժառանգավորաց դպրոցի ղեկավարությունը, որտեղ, սակայն, երկար ժամանակ չի մնում: Նա կրկին հաստատվում է Կալվաթյում և իրեն նվիրում գրականության. թարգմանություններ է անում, կազմում է դասագրքեր, այլ և այլ ձեռնարկներ, գրում է շարժած գրվածքներ, վեպեր, սկսում է հրատարակել սկզբում «Ազգասէր», ապա՝ «Ազգասէր Արարատեան» լրագիրը:

1857 թվին նա Թուրքից ճանապարհվում է դեպի Պարսկաստան՝ Նոր Զուղայում ուսուցչություն անելու նպատակով: Սակայն դեռ չհասած Նոր Զուղայ, ճանապարհին, Շիրազ քաղաքում 1858 թվի հունիսի 10-ին վախճանվում է հայրենիքի անկախության ու ազատության տենչը սրտում:

Թաղիադյանի գերեզմանի վրա փորագրված է հետևյալ տապանագիրը.

«Մեսրոպ Դավթեան Թաղիադեան,
Պերճ վարժապետ, մեծ գիտնական,
Վսեմ քերթող մատենագիր,
Հանգիստ առնու այս թուխ դամբան:
Զքեզ հայոց գիտնոց կաճառ
Պատվասիրէ միշտ սիրտավառ.
Եւ նոր Զուղա և Կալկաթա
Ոչ մոռացին զքեզ խապառ»:

Թաղիադյանը բառի իսկական իմաստով լուսավորիչ էր Նոր միակ նպատակն էր լուսավորել հայ ժողովուրդը, դպրոցներ բանալ, լրագիր հրատարակել, գրքեր տպագրել, գիտություն տարածել:

Թաղիադյանը որպես մանկավարժ Գրեկանների համար կազմել է իր ժամանակի համար շատ արժեքավոր այբբենարան՝ «Մեսրոպեան այբբենարան» անունով:

Բացի վերը նշված մասնագիտությունից Թաղիադյանը նաև պատմագիր էր: Նա գրել է Հայաստանի պատմության նվիրված մի հատոր, «Ճանապարհորդութիւն ի Հայաստան», որը նրա թողած ժառանգության մեջ առանձին արժեք ունի:

Այստեղ Թաղիադյանը նկարագրում է էջմիածինը, նրա ներքին կյանքը, միաբանություն անդամների հարաբերությունները, ցավերն ու փնտրվածներն իրան դնելով: Այս գրքի մեջ է, որ Թաղիադյանը հանդես է գալիս ճորտատիրության դեմ:

Նա ապրել է որոնումներ, երազանքներ:

Աշխատել է լուծում տալ մեր ժողովրդի ազատագրման հարցերին և այդ լուծումը նա տեսել է հայրենասիրական ազգային շարժման և լուսավորության մեջ:

Այստեղից էլ նա, որպես առաջավոր իդեալների արտահայտիչ, հանդիսացել է 30-40 թ. թ. լուսավորիչներից մեկը:

Թաղիադյանը ցույց տալով, թե եվրոպացիները որքան մեծ առաջադիմություն են կատարել գիտության ու արվեստի մեջ և հայերը որքան հեռ են մնացել, առաջարկում է թոթափել հինը և հետևել նորին, լուսավորության: Այստեղ լսվում է արդեն մի շատ ծանոթ ձայն, կարծես Աբովյանն է խոսում. «Ա՛խ, քի՛մ լաւ քաղաքացիք, ա՛խ հոգիս հարա՛յն կանչում, հին փմորն թողեք, նոր, ազգի լուսավորութեան և պայծառութեան հետևեցե՛ք»...

Թաղիադյանը տխրությամբ է խոսում հայ կնոջ մասին, որն իր մայրենի լեզվից բացի ոչ մի օտար լեզու չի փմանում: Սակայն, ընդհակառակը, նա հիացմունքով է խոսում անգլիացի և ֆրանսիացի կանանց մասին, որոնք 6-7 լեզու կարող գիտեն, իսկ հայ կինը նույնիսկ չգիտե գրել, կարդալ իր մայրենի լեզվով:

Ահա այս առիթով է, որ Թաղիադյանը իր «Սիրելի Սիրվարդ» բանաստեղծության մեջ ասում է.

—Ասա, ափսոս որ կարդալ չես գիտում,
Սիրածիդ գրածն սրտում չես գրում,
Քեզ համար պատրաստ է ագնի

գիտութիւն

Եթէ շուտ կամենաս իրար գտանեմք»:

Թաղիադյանի ազգային ստեղծագործություններից քաջ հայտնի է, «Տէր կեցոյ դու զՀայաստան» բանաստեղծությունը, որը շատ վաղուց երգվում էր ժողովրդի մեջ:

Այս բանաստեղծության մասին հիացմունքով է արտահայտվել մեծ դեմոկրատ Միքայել Նալբանդյանը:

«Ըթե հնար ունենայի ես, ամենասուրբ պարտականություն կընենի ամեն մի հայի վերա, անգիր ուսանելու այս երգը: Մինչև այսօր իմ կյանքի մեջ չեմ տեսած կամ լսած մի այսպիսի երգ. ահա բուն ազգային երգ: Խեղճ Թաղիադյանց. խաղաղություն քո հոգուն, շարժարկեցար, շարժարկեցար ազգի լուսավորության համար, բայց չհաջողվեցավ քեզ, որպես և շատերին, տեսանել քո մարգարեական ազդու քարոզության պտղաբերությունը մեր ազգի մեջ» (Նրկեր 1 «Մեռնահարցով»-ի ծանոթություններին):

Թաղիադյանը սիրել է աշխատավոր ժողովրդին, հայ շինականին: «Մոս և Սոնդիպի» պոեմում նա ասում է.

«Ընդ հիւղ աղփաթին
Առանել հաճիմ
Քան ընդ արփունիս
Տաներան քաջին.
Մարդ քանի պարզ կեայ,
Անի սէր նորա:
Քայց ընդ նոխորեան
Ոխն յանկանայ»:

Թաղիադյանը սիրել է ժողովրդական բանահյուսությունը, ֆոլկլորը, նա սիրել է ժողովրդական կարճ ու սրամիտ առածներն ու ասացվածքները: «Սոս և Սոնդիպի»-ի մեջ նույնպես գործ է ածել ժողովրդական առածներ ու ասացվածքներ: Ահա մի տեղ նա գրում է.

«Այլ փորձոյն բողի
Առնել խելացի.
Քայց զի՞նչ խելին ճառ
Կամ սեին օճառ»:

Այս տողերը, անշուշտ, Թաղիադյանը վերցրել է ժողովրդական բանահյուսությունից:

Թաղիադյանը խտրություն չէր դնում հայի և օտարի մեջ, և սա նրա համար աշխարհայացք էր: Սոս և Սոնդիպի, հայ և հնդկուհի: Երկու տարբեր ազգ, երկու տարբեր կրոն: Նա այն համոզումն ունի, թե սերը ազգություն և կրոնի տարբերություն չի ճանաչում: Այն հարցին, որ տրվում է Սոսին, թե դու հայ, նա՞ հնդկուհի, ի՞նչպես կարելի է սիրել միմյանց:

«Ազգ ազգի ներհակ,
Աղանդ՝ աղանդոց»...
Սոսը պատասխանում է.
«Երբ սիրա ընդ սրտի
Սիրով շողկալի,
Ոչ ազգ, ոչ աղանդ
Անդ ունի գտելի»: (էջ 103).

Թաղիադյանը ցավով է խոսում այն բանի մասին, որ հայեր, այն էլ հայրենասեր հայեր շատ կան, բայց դժբախտաբար նրանք մնում են տառապանքի մեջ.

«Հան երկինս զԲել, զՇամիրամ, զԱղեքսանդր, զԱրտաշիր Սասանեան, զՅազեկերտ, զԹեմուրլանկ, զԱբբաս Մեծ և զնաղիր Շահ խուժարուժ արենարբու զօրօք իրեանց. և ահա անմարմին հրեշտակք, անգամ զարհուրեալք, յահէ նոցա երկիր թօթափին. այն ինչ Հայք, այո՛, հայրենասէր Հայք՝ տակաւին կան և մնան տառապանօք ի հողս հայրենեաց իւրեանց»:

Խոսելով իր ապրած ժամանակաշրջանի, իր ապրած դարի մասին Թաղիադյանն ասում է.

«Այս դար արուեստից դար է, և ոչ բռնութեան: Այն ինչ այլք միայն արուեստունիլ կարեն և զնիւթ արուեստին յայլուստ հայթայթեն, մեք գրեթէ դամենայն պատրաստի ունիմք յաշխարհի և ի տան մեւրում»...

Թաղիադյանը հիացմունքով է խոսում ուսաների մասին, որովհետև նրանք ազատագրեցին Հայաստանը և Երևանը պարսիկների լծից:

Նրա աշխարհայացքի մեջ սերը դեպի ուսաները, ուսն ազատասեր ժողովուրդը, հայ ժողովրդի մեծ բարեկամ ժողովուրդը, փաստ է:

Թաղիադյանի ստեղծագործությունների մեջ առաջնակարգ տեղ է գրավում «Սոս և Սոնդիպի» պոեմը: Ոչ միայն լեզվով, այլև կառուցվածքի մի քանի առանձնահատկություններով պոեմը հորինված է դասական գրվածքների հետևողությամբ: Այդ իմաստով նրան պետք է դասել հայկական կլասիցիզմի ներկայացուցիչների շարքը: Սակայն կամի ուրիշ կողմ, որ թույլ չի տալիս այդ գործն ամբողջությամբ կլասիցիզմի արտահայտություն համարել. դա նրա բովանդակությունն է և այն հարցերը, որ արծարծված են պոեմում: Պատռելով կլասիցիզմի կաշկանդիչ ձևերը նա մոտենում է այն նոր գրականությանը, որ մենք ունեցանք հետագա տասնամյակներում: Սոսը սիրում է Սոնդիպիին, սիրում ամենաշեքն ու անկեղծ սիրով: Նա իր անկեղծ սիրուն վկայակոչում է Շամիրամին, Պարիսին, Պերամին և այլն: Այստեղ արդեն մեր առաջ պատկերանում են հին հունական աստվածները՝ Պերում-Պրիամոսի որդի Պարիսը, որը որպես դատավոր եկավ Հերայի, Աթենասի և Աստղիկի միջև որոշելու, թե ո՞վ է նրանցից արժանի ռսկի խնձորին: Մեր առաջ է մի ամբողջ համաստեղություն աստվածների:

«Թող քեզ Շամիրամ
Որ գայս Հայաստան,
Ի խնդիր խաղի՞ն՝
Ողողեաց յարեան:
Կամ դէպք Պարիսայ
Ընդ իւր Հեղինեայ...
Եվ ապա

Սամփսոն, Դալիլա
Պերամ ընդ Թաղեա
Եւ Բիւրք ընդ Նոսին
Թող լիցին վկայ»:

«Սոս և Սոնդիպի» պոեմի լեզուն վերամբարձ է: Սոսը, որ վահճվահյան տոնի ժամանակ հուզվում է մտատանջության մեջ առանձնացած, չէր մասնակցում տոնախմբում:

բովանդակ և խրատականքին, հանկարծ տեսնում է Աստղիկ աստվածուհուն:

«Ողջոյն քեզ», — ասաց,

Դժխտյ լուսերես:

Թէ հոգեղէն ես, ի՞մ այդքան փայլեւ,

Եւ քէ հրեղէն՝

Ուստի՞ մարմին քեզ,

Ասաց պատանին:

Եւ գոյգ ընդ ձայնին՝

Հպէր ի համբոյր

Այտաց Անմահին: (Էջ 14).

Թաղիադյանը միտումավոր կերպով Սոսի բերանում դրել է հարուստ, բայց ոչ վերամբարձ լեզու: Այնինչ աստվածուհու՝ Աստղիկի ոճը վերամբարձ է, շեշտավոր և հրամայական: Այդ բոլորին նա ասում է.

«Ինձ հուպ մառչես ցաւ,

Ժպիւրհ մահացու,

Ում ծնին աստուածք

Քո երկրպագու» (Էջ 15):

Սոսը շատ տեղերում արտահայտվում է ժողովրդական լեզվով, հանգեցնում, ինչպես նաև նմանահնչունությամբ: Այսպես՝

«Մին՝ այսպէս խուճիկ

Մին՝ այնպէս մեջիկ.

Մին հազ նագելով՝

Դործ առնէ հերիք» (Էջ 16):

Սոսի համամարդկային զգացմունքները բավական խորն են: Նա ինչ երազում է Հայաստանի համար, նույնը Երազում է Հրնդկաստանի համար: Նա ներքին ողբերգութուն է ապրում, լսելով հնդկ ժողովրդի կրած վիշտն ու տառապանքները, որ պատճառում են մի խումբ անհատներ իրենց ցանկություններին բախարհություն տալու համար:

«Որք զաշխարհ հեղկաց

Քամեցին յաբանց

Լոկ վասն կտի

Ցանկութեանց իրեանց»:

Թաղիադյանի ստեղծագործության վրա ազդել են նաև կլասիկ հունական պոուզները: Այդ երևում է կլասիկ վահեկական տոնի նկարագրության մեջ:

Կլասիցիզմի ազդեցությունը նկատելի է նաև Թաղիադյանի «Առեղծ Աֆրոդիտայ և Բեզոնի յիմարի» բանաստեղծության մեջ, որ գրված է Կալիթայում: Այս բանաստեղծությունը գրելիս հեղինակը որպես նյութ օգտագործել է անտիկ գրականությունը: Թաղիադյանի այս բանաստեղծության հերոսուհի Աֆրոդիտան խոսում է բարձր, վերամբարձ ոճով, հարուստ լեզվով:

«Ղեաց, դժնեայդ Հեփեստես,

Մեծա դարբին սեւեւս,

Ձի քո բաժին է դարբնոց

Եւ ոչ հեշտալին իմ ծոց».. (Էջ 66):

Այս բանաստեղծության մեջ գործում են նաև Աֆրոդիտեն, Անգելը, Մուգան, Բեզոն Հեփեստացիալը և այլք:

Թաղիադյանի այս բանաստեղծության մեջ գործածված դիցաբանական անունները՝ ինչպես Աֆրոդիտեն, Անգել, Հիմեն և այլն, դրժվար հասկանալի են դիցաբանության անծանոթ ընթերցողի համար:

Թաղիադյանը մեծավ օտարության մեջ: Ժամանակակիցները նրան չգնահատեցին նրա կենդանի ժամանակ: Միայն մահից հետո նրան ըստ արժանվույն գնահատեցին Միքայել Նալբանդյանը և Ստեփանոս Նազարյանը: Նա այն լուսավոր փարոսն էր, որից լույս էր առնում ապագա տասնամյակների հայ հասարակությունը և այն ճանապարհի սկիզբն էր, որը ձգվում էր մինչև Արտվան:

Նպատակ ունենալով լուսավորել ժողովրդին՝ Թաղիադյանը դառավ միայն գրականության աշխարհիկ բովանդակությունը, բայց անկարող եղավ հաղթահարելու գրաբարը, որը գրականությունը ժողովրդի սեփականությունը դարձնելու, նրա շահերին ծառայելու տեսակետից՝ ամենամեծ խոչընդոտն էր: Ժամանակի այդ մեծ պահանջը Թաղիադյանը չըմբռնեց: Թաղիադյանի ստեղծագործության թույլ կողմն է այդ: Դրա վրա առանձին տաշարություն է դարձրել Միքայել Նալբանդյանը, որը մեծ կարծիք ունի Թաղիադյանի մասին: Նալբանդյանը դարձանում էր, որ եվրոպական կրթությունն ստացած Թաղիադյանը, լուսավոր դադարափարնեփ տեր մարդ, գործածելով «հին և մեծած լեզուն», չի հասկացել, որ, «խոսելու կամ գրելու խորհուրդը այն է, որ ժողովրդը կարդա և բան հասկանա»:

Մխիթարյանները ձգտում էին վերականգնել հինգերորդ դարի ոսկեդարի գրաբարը: Այդպիսի մի փորձ արավ նաև Թաղիադյանը «Սոս և Սոնդիպի» պոեմում: Թաղիադյանը, երբեմն միայն անդրադառնալով ժողովրդական լեզվին՝ միշտ հարազատ մնաց գրաբարին: Բայց Թաղիադյանի գրաբարը Մխիթարյանների խրթին լեզուն չէր: Նրա գրաբարը ավելի պարզ էր, ժողովրդին ավելի հասկանալի:

Այս բոլորով հանդերձ, Թաղիադյանի ստեղծագործության արժեքը բավական մեծ է: Նրա մի շարք բանաստեղծությունները մեծ ավանդ են հայ գրականության ոսկե ֆոնդում: Նրա անունը հավիտյան սիրելի կմնա հայ սրբերում:

Շ. ԷԴ.



ԵՐՎԱՆԻ ՇԱՀԱԶԻՉ

ԳԵՎՈՐԳ ԴՈՂՈՒՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ „ԾԻԾԵՌՆԱԿ“-Ը



եր գրականության մեջ Գևորգ Դողոխյանի մասին շատ սակավ ու կցկտուր տեղեկություններ են հաղորդվում: Դողոխյանն ամբողջ հայությանը հայտնի է դարձել միայն իր «Ծիծեռնակ» երգով, որն այնքան է ընդհանրացել, որ զետեղված կարելի է տեսնել բոլոր հայ երգարաններում և լսել այնտեղ, որտեղ հայ երգն է հնչում ընդհանրապես: Սակայն այս երգը ևս կասկածի է ընթերցվում, թե պատկանի է իսկապես Դողոխյանի գրչին, թե՞ մի ուրիշի գրչի գործ է և թյուրիմացաբար միայն վերագրվել է նրան:

Մերայել Միանսարյանի «Քնար Հայկական»-ում Դողոխյանի մասին հաղորդված տեղեկությունները, բժիշկ Լևոն Տիգրանյանի «Գեղմանական Դարպաս Բամալսարանը և նրա հայ ուսանողները» գրվածքում նրան նվիրված մի քանի տողերը և Հովհաննես Սպենդիարյանի, նրա մահվան առթիվ գրած, կենսագրական տեղեկությունները մինչև այսօր վերջնականապես չեն պարզել Դողոխյանի իսկական գրական դեմքը և փարատել այն կասկածները, որոնք գոյություն են ունեցել հայ գրականագետների շրջանում նրա «Ծիծեռնակ»-ի վերաբերմամբ:

Դողոխյանի անձի անհայտության և նրա «Ծիծեռնակ»-ի այդքան երկար ժամանակ կասկածանքի տակ մնալու պատճառը պետք է վերագրել այն հանգամանքին, որ ինքը՝

Դողոխյանն իր երկաբառե կյանքն անց է կացրել մեկուսացած, հեռավոր հայ գաղութներից մեկում՝ Զրիմի Սիմֆերոպոլ քաղաքում և յուր «Ծիծեռնակ», «Զինվորի երգը», «Հարբած մարդու երգը», «Հայոց երգեր», «Սերն ու գինին», «Քնար Հայկական»-ում հրատարակելուց հետո, այլևս հանդես չի եկել հայ մամուլի մեջ ու յուր «Ծիծեռնակ»-ի շուրջը ծագած խոսք ու զրույցի, արտահայտված կասկածների մասին ինքն անձնապես չի արձագանքել, այլ բավականացել է միայն սրա, նրա բերնով հարևանցի բացատրություններ տարել:

Վերջերս միայն մեր ձեռքն անցան հանգուցյալ Դողոխյանին պատկանած թղթերն ու ձեռագրերը, որ նա կտակել էր իր մահից հետո հանձնել յուր մտերիմ բարեկամ Հովհաննես Սպենդիարյանին, լիազորելով նրան հրատարակել իր անտիպ գրվածքները, եթե նա կկամենար. սակայն ինչ ինչ պատճառներով Սպենդիարյանն ի կատար չէր ածել նրա կտակը և թղթերը հանձնել էր Պետական Թանգարանին:

Մեր բարեկամ Սպենդիարյանը այդ թղթերը մեզ հանձնելով, Թանգարանում պահելու համար, իրավունք է տվել մեզ ձեռագրերը օգտագործելու գրական նպատակներով, ինչպես որ մենք կկամենանք: Օգտվելով այդ հանգամանքից, մենք ուսումնասիրեցինք թղթերը և ձեռագրերը, և մուծ մնացած ու կասկածանքի տեղիք տվող խնդիրների վերաբերմամբ եկանք որոշ եզրակացությունների, որոնց մասին հարկ ենք հա-

մարում իրազեկ դարձնել մեր գրական աշխարհին:

Բայց նախ ծանոթանանք Դոդոխյանի կյանքին, օգտվելով նրա վաղեմի ընկեր Աղեքսանդր Ռոտինյանցի ինքնաձեռագիր կենսագրական ակնարկներից ու ծառայության ցուցակից՝ «АТТЕСТАТ»-ից, որոնք պահպանվել են նրա թղթերի մեջ, Հովհաննես Սպենդիարյանի վերոհիշյալ կենսագրականից, որ առաջին անգամ տպագրվել է «Արթուր» հանդեսի 1912 թվի հուլիս-օգոստոս միացյալ համարում և մեր անձնական տեղեկություններից, որ մենք հավաքել ենք Նոր-Նախիջևանում հանգուցյալ Առաքել Բահաթրյանից և նրա կնոջից՝ տիկին Եվգինե Դեմիրճյան-Բահաթրյանից, որոնք վաղեմի ծանոթությամբ ու բարեկամությամբ կապված լինելով Դոդոխյանի հետ, շատ բան գիտեին նրա մասին*):

Դոդոխյանը ծնվել է 1830 թվի փետրվարի 19-ին և յուր վաղ մանկության տարիներն անց է կացրել Սիմֆերոպոլի շրջակայքում, որտեղ նրա հայրը՝ Աստվածատուր Դոդոխյանը մի փոքրիկ կավածք է ունեցել և պարապել է գյուղատնտեսությամբ:

Գևորգը ընտանիքի մեջ անդրանիկն է հանդիսացել. նա ունեցել է իրենից փոքր երեք եղբայր ու մի քույր:

Գևորգն իր առաջին գրաճանաչությունը սովորել է Սիմֆերոպոլի եկեղեցու տիրացվից. այնուհետև ընդունվել է քաղաքի պետական տարրական դպրոցը ու այնտեղից էլ փոխադրվել գիմնազիան և, վերջապես, այդտեղից էլ 1842 թվին, 12 տարեկան հասակում ուղարկվել է Լազարյան ճեմարանը, որտեղ նա տեսնել է Գրիգոր Աղափիթյանի, Պետրոս Սիմոնյանի, Աղեքսանդր Ռոտինյանցի ու մյուսների ժամանակ:

Դոդոխյանը մի զվարթ, վառվռուն, աչքաբաց տղա է եղել, օժտված ասելու, խոսելու, նյութակեղծ բնական ընդունակությամբ. նա սուր դիտողության տեր է եղել և գյուղութային ըմբռնելով ու նկատելով յուր ընկերների, ռաուցիչների ու դաստիարակների թերություններն ու ծիծաղելի կողմերը, սովորություն է ունեցել այդ մասին առականորեն ու զվարճալի պատմություններ կազմելու ու պատմելու ընկերների շրջանում. նա դրան-

ցով զվարճացրել է նրանց ու ինքն էլ զվարճացել. իր այս ընդունակության շնորհիվ նա շուտով դարձել է յուր ընկերների սիրելին ու հետագայում էլ կյանքի մեջ եղել է ամեն մի ընկերության, ուր բախտը ձգել է նրան, սիրելի անդամը և ամեն մի տան, ուր հաճախել է նա, ցանկալի հյուրը: Նրա զվարճալի պատմություններից ընկերների հիշողության մեջ մնացել է «Կլեկլի ուստան», որն Ռոտինյանցի ասելով, այնքան ծիծաղաշարժ է եղել, որ աշակերտները անզուսպ ծիծաղից լաց էին լինում, թույլաբար ու հատակին փռվում:

Նա ճեմարանի հառաջագնի աշակերտներից չի եղել. թույլ է եղել, նամանակահատված լեզվից և հատկապես գրաբարագիտությունից, որն այն ժամանակները Լազարյան ճեմարանում ուսման գլխավոր առարկաներից մեկն էր հանդիսանում. այնուհամենայնիվ նա իր ընկերներից հետ չի մնացել ու նրանց հետ միասին ավարտել է ճեմարանի ուսման դասընթացը 1848 թվին և ստացել ավարտման պատշաճ վկայական:

Նկարելու բնական ընդունակություն ունենալով, նա իր ամբողջ ազատ ժամանակը նվիրում էր նկարչության, հաճախ վարպետորեն ծաղրանկարներ պատրաստելով և ցույց տալով ընկերներին զվարճալի պատմություններ անելու միջոցին: Իր այդ ընդունակության համար էլ, ճեմարանն ավարտելուց հետո, նա մեկնում է Պետերբուրգ՝ Գեղարվեստից ճեմարանն ընդունվելու, սուր՝ այդ ժամանակ դասավանդում էր նաև նրա Կրկրացի Հովհաննես Այվազովսկին:

Իր շրջապատը մանրազննին դիտելու ընդունակությամբ օժտված Դոդոխյանը, գիշերօթիկ դպրոցից մայրաքաղաքի կյանքի էռուզեռի մեջ ննդվելով, բնականապես զգում է հիսնական թվականների Պետերբուրգի գրական ու հասարակական հոսանքներից, ընդարձակում փր մտահորիզոնը, զարգացնում աշխարհայացքը, ընթերցանությամբ լրացնում իր գիտության պաշարը և նրբացնում իր գեղարվեստական ճաշակը: Այստեղ նա ծանոթանում է տեղի հայ հասարակության աչքի ընկնող անդամներին— Աղաթոն Աքիմյանի, նկարիչ Քաթանյանի, Միքայել Միանասրյանի, հարուստ վաճառական Պողոսյանի և մյուսների հետ, հաճախելով դրանցից շատերի տները:

Դոդոխյանին չի հաջողվում ընդունվել Գեղարվեստից ճեմարանը, բայց նա երեք տարի մնում է Պետերբուրգում, 1848—1851 թվի, և շատ նեղվում չքավորությունից. եղել են դեպքեր, երբ նա նյութականի սղու-

*) Նրա կենսագրությունը վերհիշելու մեջ հարկավոր է, որպեսզի պարզ լինի մեր ասելիքները նրա գրվածքների մասին ընդհանրապես և «Ծիծեռնակ»-ի մասին մասնավորապես:

Դոդոխյանի մասին տես և Սպենդիարյանի հոդվածները «Մշակ» 1908 թ. № 129, 1912 թ. № 69, 1913 թ. № 277:

թյունից դրդված, շնչին վարձատրության մը ստիպված է եղել դպրության պաշտոն վարել եկեղեցում և երջապես Մ. Միանսարյանի միջնորդությամբ նրա վրա ուշադրություն են դարձնում Աղաթոն Աբիմյանը և Պողոսյանը ու թողակ նշանակելով ուղարկում Դորպատ՝ աշխտեղի համալսարանում ուսանելու համար*):

1851 թվին Դոդոխյանը, Ռոտինյանցի հետ միասին, ժամանում է Դորպատ, որտեղ այդ ժամանակ 20-ի չափ հայ ուսանողներ կային, մեծ մասամբ կաղարյան ճեմարանն ավարտած պատանիներ: Սրանք Աբովյանի ու Նաղարյանի օրինակին հետևելով ուսանում էին զանազան մասնագիտություններ և նպատակ էին դրել ուսումն ավարտելուց հետո վերադառնալ հայրենիք ու իրենց գիտելիքներն օգտագործել հայրենիքի բուսավորության գործի համար: Մի տարի Դորպատում մնալուց հետո, Դոդոխյանը և Ռոտինյանցը հաջողությամբ քննություն են տալիս գրականությունից ու գերմաներեն լեզվից և ընդունվում համալսարան, համարվելով «կամերալ» գիտությունների մասնաճյուղի ուսանողներ:

Ուրախ և անտրտում են անցնում նրա ուսանողության առաջին տարիները հայ ուսանողների շջանում, որոնք հետևելով գերմանացի ուսանողների օրինակին, կազմել էին մի հայկական ընկերական շրջան, փոխ առնելով նրանցից ուրախ, զվարճալից ուսանողական վեցադի հետ միասին, նաև մայրենի լեզվով խոսելու, երգելու ու հայ-

րենիքին ծառայելու համար պատրաստվելու սկզբունքը:

Ուսանողական շրջանը բարերար աղբյուր էր ունեցել Դոդոխյանի վրա ամեն տեսակետից և գլխավորապես նրա մեջ հայրենասիրական զգացմունքի հասունանալու, հայերեն սովորելու ու մտածելու տեսակետից: Այդտեղ նա սովորել է վարժ խոսել ու գրել ժամանակի հայերեն գրական լեզվով, ինքնաձևանաշողություն է ձեռք բերել և գիտակցաբար ու լրջորեն պաշապել, կարդացել է հայ հին հեղինակներին, հարգատեղի տալով փոքր հայերենագիտության պաշարը*):

Հայ ուսանողների մի խոշոր մասն ապրում էր գերմանացի ինժեներ Զիգելի տանը, Պետերբուրգյան փողոցի վրա, որտեղ մի ժամանակ ապրել էին խաչատուր Աբովյանը, Ստ. Նաղարյանը, հետագայում էլ Ավագյանը, Պետրոս Սիմոնյանը, Գաբրիել խաչատրյանը, այդտեղ էլ այդ ժամանակներն ապրում էին վահան Ասկարյանը, Հովսեփ Միրիմանյանը, Հակոբ Տեր-Միքայելյանը, Գևորգ Աբիմյանը և մյուսները: Շաբաթը մի անգամ հայ ուսանողները հավաքվում էին այդտեղ, վիճաբանում, քննում զանազան խնդիրներ ու հետո էլ ուրախանում, դարե՛ղ խմում, աղմկում, իրենց երիտասարդական առողջ ծիծաղով լցնելով բնակարանը, որի հետևանքով էլ գերմանացիք սովորություն էին դարձրել փողոցը կոչել «Հայկական» — Armenienstrasse.

Այդտեղ, այդ տան մեջ ահա բնակություն է հաստատում նաև Դոդոխյանը, որն իր ընկերացիներ ու զվարճաչներ բնավորության շնորհիվ, շուտով գրավում է ընկեր ուսանողների սերն ու հարգանքը: Դորպատի ուսանող Գևորգ Բարխուդարյանցի «Մի հատված իմ անտիպ յիշատակալուսանից», որը պատկերվել է «Տարազ»-ի 1911 թվի համարներում, մենք իմանում ենք, թե ինչպես են սովորել Դորպատում հայ ուսանողները, ինչպես են անցկացրել իրենց օրերը, ինչպես են դարե՛ղ խմել ու երգել իրենց նոր հորինած ու թարգմանած ուսանողական երգերը: Այդ տան մեջ էլ առաջին անգամ երգվել են հայկական *gaudeamus*-ը «Ուրախացու՛մ ուրեմն, մինչ երիտասարդ եմ», որ թարգմանել էր լատիներենից խ. Ավագյանը, «Հայոց գինի» — բաժակներ առնունք, եղբայրք, լի՛-լի՛ բաժակներ գինով, որ հորինել էր Ռ. Պատկանյանը, «Հա-

*) Պետերբուրգում Դոդոխյանն ապրել է Գրիգոր Աղափիրյանի բնակարանում, եկեղեցու բակում, և նրա խորհրդով էլ ուղարկվել է Դորպատ:

Գրիգոր Աղափիրյանը հաշտարխանցի էր. նա, ավարտելով կաղարյան ճեմարանի դասընթացը, Պետերբուրգի եկեղեցու հաղվին 1849 թվին ուղարկվել էր Դորպատի համալսարանը՝ հոգևորական դասնալու պայմանով: Նա համալսարանում գրվել էր «կամերալ» բաժնի ուսանող, բայց հատկապես ուսանել էր աստվածաբանություն, և դեռ չավարտած համալսարանը, վերադարձել էր Պետերբուրգ ու հոգևոր կոչումն ընդունել:

Այն ժամանակ, երբ Դոդոխյանը նյութականի սղության պատճառով չկարողացավ մտնել Գեղարվեստի ճեմարանը, և ապրում էր Աղափիրյանի բնակարանում, Աղեքսանդր Ռոտինյանցը կաղարյան ճեմարանի դասընթացն ավարտելով, նույնպես գալիս է Պետերբուրգ, իշխանում դարձյալ Աղափիրյանի տանը: Այդտեղ է ահա, որ նա և Դոդոխյանը, լսելով Աղափիրյանի գովասանքը Դորպատի մասին և հետևելով նրա խորհրդին, որոշում են զնալ Դորպատ ու մտնել այնտեղի համալսարանը:

*) Տես Աղեքսանդր Ռոտինյանցի «Դորպատի հայ ուսանողաց կեանքից թուղցիկ յիշողություններ», «Արձագանք», 1892 թ., № 107, 108, 109:

յոց աղբիկներ, ձեր հոգուն մատաղ», որ գրեւ էր Հովսեփի Միլիմանյանը: Այդտեղ էր գրվել առաջին անգամ և Դոդոխյանի «Մի-
նեռնակ»-ը, և, վերջապես, այդտեղ է միշտ կարդացվել հաշատուր Աբովյանի «Վեր-
նայատունի»-ն, որի վազմած ձեռագիր օրի-
նակը գտնվել է Աբովյանի աշակերտ Դևոդ
Աբովյանի ձեռքին, որ հետո նա հրատարա-
կել է Թիֆլիսում:

Ուսանողական ուրախ ժամանցի հետ միասին Դոդոխյանն իր ուսանողության վերջին տարիներում նաև շատ դառնություններ է ճաշակել։ Նրա բարբարոս Աղաթոն Աթիմյանի մահվան հետեանքով, դադարել էր թոշակի առաքումը, որ նրան ուղարկվում էր ամսե-ամիս Պետերբուրգից։ Նրա նյութական սուղ վիճակի մասին լուր է տրվում Մկրտիչ Մանասարյանին, որն շտապում է օգնության հասնել նրան, վճարելով պարտքերը և մի որոշ գումար էլ թոշակի նշանակելով, մինչև որ նա ավարտելով իր ուսումն, գործ կգտնի։

1859 թվին Դոդոխյանն ավարտում է համալսարանի կամերալ բաժինը, որ քաղաքական գիտությունների իրավաբանական բաժնի մի առանձին ճյուղն էր վաղմուտ*): Մի կարճ ժամանակամիջոց անգործ մնալուց հետո, նա դաստիարակի, կամ ինչպես այն ժամանակներն էին ասում, «գութներյորի» պաշտոն է ստանձնում հարուստ կալվածատեր զզլարցի Կարապետ Քալանթարյանի ընտանիքում, որի 17 հազար դեսյատին տարածությունը կալվածքը գտնվում էր Գեորգևկ քաղաքի մոտ և լկոշվում էր Մասյով—Կուտ:

Այդուհետև նա ապրում էր իր սաների հետ ամառները, իսկ ձմեռները նրանց հետ միասին փոխադրվում էր Պյատիգորսկ, երբեմն էլ ճանապարհորդում զանազան վայրեր:

Նրա դաստիարակչական աշխատանքը տևում է ամբողջ յոթը տարի և պատկվում հաջողությամբ: Նա լավ ըմբռնելով իրեն հանձնված մանուկների հոգեբանությունը, կարողանում է ստեղծել իր և նրանց միջև ընկերական բնույթ կրող հարաբերություն, որի շնորհիվ շուտով զրավում է նրանց սերնու հաջգանքը ու դրա միջոցով էլ հաջողությամբ ավարտում իր դաստիարակչական աշխատանքը:

1867 թվին նա թողնում է Կր դաստիարակի պաշտոնը ու փոխադրվում Ղրիմ՝ յուր հոր կալվածքը, որտեղ օգնում էր հորը նրա

գլուղատնտեսական աշխատանքների մեջ։
Հետո նա փոխադրվում է Սիմֆերոպոլ ու
իր բազմապիսի ընդունակությունների շնոր-
հիվ լավ ընդունելություն գտնում հայ հա-
սարակության շրջանում։ Այստեղ նա, ջերմ
մասնակցություն ցույց տալով հասարակա-
կան գործերին և վարելով Հայոց ծխական
դպրոցի հոգաբարձուի պաշտոնը, մայրենի
լեզվի տարածման ու պահպանության
պաշտպան է հանդիսանում այդ հեռավոր
հայ գաղութում։

Այդ ժամանակները Սիմֆերոպոլի թաթարացի ուսուցչական սեմինարիայում սոսեսի պաշտոնը վարում էր հանգուցյալ մանկավարժ Առաքել Բահաթրյանը, որ Լազարյան ճեմարանի լիկեոնական դասընթացն ավարտելուց հետո գնացել էր արտասահման և Գերմանիայում ուսել մանկավարժություն: Բահաթրյանը, ծանոթանալով Դոդոխյանի հետ և մշտապես հանդիպելով նրան Դեռվելթյանի ընտանիքում, որի երեք դստերը հետ ամուսնացած էր ինքը, հավանում է նրան և ուսսաց լեզվի ու թվաբանության դասատվի պաշտոնն առաջարկում իր խնամքին հանձնված դպրոցի նախապատրաստական ու առաջին դասարաններում, որ և սիրով ընդունում է Դոդոխյանը: Այնուհետև, 1881 թվին Բահաթրյանի Թիֆլիս, Ներսիսյան ազգային հոգևոր դպրոցի փոխադրվելուց հետո էլ, Դոդոխյանը շարունակում է պաշտոնավարել նույն դպրոցում, որ 21 տարի աշխատելուց հետո, 1877-ից մինչև 1898-ը, ծերություն պատճառով հրաժարվում է պաշտոնից, ստանալով տարեկան 600 ռուբլի կենսաթոշակ:

Առաքել Բահաթրյանը աշխատանքի ըն-
թացքում ավելի մոտ ճանաչելով Դոդոխյա-
նին և ծանոթանալով նրա մանկավարժական
հայացքներին ու դասադասության եղանա-
կին, որոնք շատ չէին ապրոքեղում իր հա-
յացքներից ու եղանակից, մտերմանում ու
հաստատուն աիրով կապվում է նրա հետ,
փոխադարձաբար աիրվելով ու հարգվելով
նրա կողմից: Օտար դպրոցի այդ երկու
հայ ուսուցիչներին մտերմանալուն նպաս-
տում է և նրանց երկուսի մոտիկությունը
Իսկուտյն Դեռվեթյան ընտանիքին, որի փե-
սան էր մեկը, իսկ մյուսը վաղեմի անխար-
դախ բարեկամը:

Հասկանալի է, թե ինչ վիշտ պիտի պատճառեր Պոդոլսկային իր սիրած բարեկամի ծանր հիվանդությունն ու վաղահաս մահը՝ «սարկոլոմա» 1883 թվ. փետրվարին*): Նրա թոթերի մեջ գտնվում են երկու ոտնավոր.

*) Тополушкы «Атестат»-к шык шыкшк к.
«Окончил курс в Юрьевском университете со
званием действительного студента дипломатиче-
ских наук 1859 г. декабря 11 дня».

*) Բաճաթրյանի մասին տես Վարժարանի մանկավարժական ամսագիրը, դիրք 7, 1883 թ.:

որոնցից մեկը նվիրված է Բահաթրյանի հիշատակին, և իբրև տապանադիր, պիտի փոքրագրվեր նրա մահարձանի վրա, իսկ մյուսը՝ նրա այրի Եվգինե Բահաթրյանին, իբրև

մխիթարանք։ Ավելորդ չենք համարում բերել այստեղ հիշյալ մի բանի տող տապանադիրը և նվերը—

«Ի զուր եմ, ի զուր դառն լաց ու սուգ,
կյանք ննջեցյալին չեն տալ արտասուք։

Գիտության սիրո զոհեցիր դու վաղ
Քո մատաղ կյանքը։ Հանգիր աստ խաղաղ,
Մանկավարժության պատուական մշակ,
Կեցցե անմոռաց քո լույս ճիշտակ։

Նվեր Ե... Բ... Ն

Ուր ցավն մեծ է,
Անդ Աստուած մերձ է։

Ես քո պառնառով, ո՛վ էակ ազնիվ,
Կրում եմ ցավեր անհամար, անթիվ,
Քո դժբախտության ցավալի օրեն
Մտիս վերհերը բացուեցան նորեն։

Ա՛խ, ի՞նչ անեի, հոգյակ իմ ազգին,
Որ քեզ երջանիկ տեսնեի կրկին...
Հարուստ եմ անշափ սիրով ես միայն,
Բայց քեզ օգնելու ի՞նչ շահ ունի այն։

Ես պաղատում եմ Տիրոջ ծնկաշոք,
Որ վերադ նայի գթառատ աչոք,
Որ տա քեզի ույծ նորա սուրբ աջը
Կրել անտրտունջ քո ծանր խաչը։

Հուս՛ա, որ մի օր անսահման կամօք
Կը մեղմացնե Տերը քո մորմոք...
Որ կը հեռակի, չը կա տարակույս,
Թանձր խավարին մի օր պայծառ լույս։

Պետական պաշտոնյա դառնալուց հետո էլ նա չի հրաժարվում հասարակական գործունեությունից և շարունակում է իր հոգաբարձության գործը Հայոց դպրոցում, իր եղանակով աշխատանքի, հոգատարության, դպրոցի նյութականի ու բարոյականի խիստ հսկողության շնորհիվ նախանձեղի օրինակ հանդիսանալով ամենքին, մանավանդ ուսուցիչներին ու մյուս հոգաբարձուներին։ Զիշտ է, նրա այդպիսի խիստ ու անողորմ վերաբերմունքը դպրոցում դժգոհություններ էր առաջ բերում, տեղիք տալիս անվերջ բամբասանքների, նամանավանդ ծուլ ու իրենց պաշտոնին ու կոչման ան-

արժան ուսուցիչների, հոգաբարձուների և անգիտակից մարդկանց կողմից, բայց նա բոլոր ասե-կոսեների դառնությունները ճշակելով հանդերձ, մնում էր անդրդվելի ու մինչև վերջին հնարավորությունները պաշտպանում էր հասարակության շահերը։

Այդ բամբասանքների, որոնք շոշափում էին մինչև իսկ նրա անձնական կյանքը՝ խոտը ու գրուցի ատարկա դարձնելով նրա մերձավորությունը Դեմվելեյան ընտանիքի հետ, աղբյուրը ցույց տալու նպատակով է եղել, որ նա գրել է իր «Իմ հանգանք» ոտանավորը, որը պահպանվել է նրա թղթերի մեջ—

Նորից մեռակ, նորից անխնամ
Ամենից քողած ես պիտի մեռնի.
Այս օրից հետո իմ բաժինն է սուղ
Հուսահատություն, լաց ու արտասուք։

Փոխանակ բարձր հատուցին ինձ չար
 Եվ հալածեցին անխիղճ, չարաչար.
 Անեծֆ, հայնոյանֆ և գրպարուքուն
 Միմիայն եղավ իմ վարձատրություն:

Գիտեմ ես, գիտեմ- ինչ է իմ հանցանք,
 Ի՞նչից է բխում այդպես հալածանք,
 Նոցա պիղծ կուտքը Ոսկի հորք առած
 Չուզեցի պաշտել ես, իբրև Աստուած:

Չար հարուստներին, որք, այրի գրկող,
 Չուզեցի խնկել և անվախ ասի գող.
 Խենթ իմաստակին չուզեցի ես կեղծ
 Անուանել գիտուն կամ բանաստեղծ:

Երբ որ տգիտությամբ հայ վարժարան
 Լոկ թղթախաղի, պարի դարձավ տուն,
 Ես բոլոր ուժով եյա հակառակ,
 Որ սրբարանը չանեն խայտառակ:

Հասարակության վրա բարեբաղդ ազդեցու-
 թյուն էր թողնում նամանավանդ նրա սուր
 ու վճռով երգիծանքը, որով ցույց տալով իր
 շրջապատողներին գեղեցկի, բարու, առաքի-
 նության ճանապարհները, անխնա խարա-
 դանում էր հասարակության մեջ բուն դրած
 ախտերը, մոլորությունները, ապաստաբա-
 նական ձգտումները:

Նրա թղթերի մեջ պահպանվել են երկու
 նույն ծաղրանկար, որոնցից մեկը պատ-
 կերում է ժամանակի տարադին համապա-
 տասխան ահագին կրոնոլիկով զգեստ հա-
 դած, զուգված-զարդարված մի կին, մի


ձեռքում ամպհովանի, մյուս ձեռքին վեր-
 նազգեստը, և երկար ընշանցքով ու
 պարզ հագնված մի տղամարդ, կողք-
 կողքի փողոցով քայլելիս: Նկարի վերևը
 գրված է. «Քիչ մը հեռուէն քալէ, էլիկա ե-
 դածք թող շիմանան»: Այս գրչանկար ծաղ-
 րանկարը առնված է Սիմֆերոպոլի հայ հա-
 սարակության իրական կյանքից: Մյուսը
 մատիտանկար է և ներկայացնում է մի հայ
 կին ու օրիորդ, երկուսն էլ մեծ կրոնոլիկ-
 ներով, դեկորատի, տգեղ և արծվաքիթ. սրա
 տակը գրված է.—

«Հայոց աղջիկներ, ի՞նչ անուն տամ ձեզ.—
 Հրեշտակ անուանեմ— հրեշտակ չեմ տեսել,
 Թե մառդ անուանեմ, բեղամաղ կանեմ,
 Ուրեմն ի՞նչ անեմ, մոլորյալ եմ ես»:

Իր երկարատև գործունեության ընթաց-
 քում Դոդոխյանը թեև չի այցելել հայ մտա-
 վոր կենտրոնները, բայց միշտ հետևել է
 հայրենիքի և հայաբնակ կենտրոնների
 կյանքին, հայ պրականության, կարդացել

հայ պարբերականները, հայ հեղինակների
 ընտիր երկերը և ինքն էլ գրել է, բայց չի
 հրատարակել:

(Շարունակելի)





ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1947 թվի փետրվարի 9-ը հայ ժողովրդի նորագույն պատմության համընդհանուր օրերից մեկն է հանդիսանում:

Ավելի քան երկու ամիս Սովետական Հայաստանի երջանիկ քաղաքացիները նախապատրաստվում էին այդ համաժողովրդական տոնին: Արևալուռ Հայաստանի ողջ աշխատավորությունը՝ բանվորները, կոլտնտեսիկները, փնտելիգենցիան աշխատում էին փետրվարի 9-ը դիմավորել ժողովրդական տնտեսության, գիտության, արվեստի ապարեզներում ձեռք բերված նորանոր նվաճումներով:

Այնքան էր ավելի քան ութ տարի ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի առաջին ընտրություններից: Ստեղծագործ աշխատանքի, հոյակապ շինարարության ու վերելքի ութ տարիներ: Սովետական Կոնստիտուցիայի բոլոր արևի ճառագայթների տակ է՝ ավելի ծաղիկը ու հասակ է քաշել մեր Երիտասարդ ռեսպուբլիկան, անճանաչելիորեն, փոխվել առնական է դարձել նրա դեմքը: Այդ ութ տարվա ընթացքում բարդավաճել են ռեսպուբլիկայի քաղաքներն ու գյուղերը, նոր ու հզոր վերելք են ապրել արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, գիտությունը, արվեստը:

Այդ ութ տարիները նշանավորվեցին պատմական խոշոր փրկարարություններով: Սովետական ժողովուրդը ենթարկվեց մարդկային պատմության մեջ անօրինակ մեծագույն փորձություններից մեկին՝ դերմանաֆաշիստական մանդալների ուխտադրուժ հարձակմանը: Սակայն, Հայրենական Մեծ Պատերազմում սովետական անուսուրիկ ժողովուրդը, հանձարեղ ստրատեգ Ստալինի գեղամարտությամբ, ջախջախեց ոչ միայն գեղամական, այլև ճապոնական դավթիչներին ու սովետական այ դո՛ւրս հաղթանակներն ծածանվել սկսեց և՛ թշնամու որդի՝ Բեռլինի, և՛ հեռավոր Կուրիլյան կղզիների վրա:

Այդ մեծ փորձության տարիներին հայ ժողովուրդը ևս լարեց իր բարոյական ու ֆիզիկական բոլոր ուժերը, և իր ջանքերը միաստունելով ողջ սովետական ժողովրդի ջանքերին, ակտիվ կերպով մասնակցեց հաղթանակի դարբնմանը, հաղթանակ, որն ապահովեց հանուր մարդկության հետպատերազմյան խաղաղ ու ստեղծարար աշխատանքը: Հայրենական պատերազմի ծանր օրերին թիկունքում աշխատող հայ ժողովրդի զավակները աշխատանքային սխրագործություններով պատվված անձնագործ աշխատանքի բազում օրինակներ տվին. թիկունքում հայ կանաչ փոխարինեցին ռազմի դաշտ մեկնած իրենց հարազատներին ու հերոսական աշխատանքի շնորհիվ մեծապես օժանդակեցին գյուղատնտեսության և արդյունաբերության առաջընթացին: Պատերազմի տարիներին հայ ժողովուրդը ևս մեծ զրկանքներ կրեց, բայց նա չթուլացող տեմպով շարունակեց վերելքի ուղիով առաջ մղել արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը. արդյունաբերական նոր ձեռնարկներ երևան եկան, արտադրանքի նշո տեսակներով:

Այդ ութ տարիների ընթացքում Հայաստանի գեղադիր լեռնահովիտներում ու լայնադիր դաշտերում ծխալ սկսեցին նորակառուց շատ գործարանների փրկամերձ ծխնելույզները. ամենուրեք բարձր ու դուհնեց կառուցողների մուրճերի, կազմների հարմածներից միահյուսված հողեզմալ երգու թե ծաղիկուն քաղաքներում, ինքուստիակ ալ օգահներում, թե Առաքառյան և Շիրակի լայնածավալ ու բնորոշ ուսարներում, թե կապուտայա ու Գենջ Սեանի գետափերի տեղերն, թե Սուրբառ աշտառհի սմոնոսիտր ձորերում, թե հոտի քնդեղում, ամեն տեղ ու ամենուրեք յուր ստեղծարար շինարարության հաղթական վերելքի օայլերն ուռնում:

Այս ութ տարիների ընթացքում ընդարձակվել ու ամեն ուղղությամբ ծավալվել է

Երևանը, Հայաստանի ինդուստրիայի այդ բաբախուն սիրտը, գեղատեսիլ վարդագույն մայրաքաղաքը. մի քանի տարի առաջ քաղաքի սահմաններից դուրս գտնվող վայրերն այսօր ծածկվել են տասնյակ նոր գործարաններով. լրիվ կամ մասամբ անցել են գործող ձեռնարկների շարքը նորակառույց շատ գործարաններ ու ֆաբրիկաներ, ինչպես օրինակ Կաբելի, Ավտոդողերի, Կոմպրեսորների, Մոտորանորոգման, Ավտոդետալի, Մահուդի, Կահուլքի, Ժամացույցի և այլ գործարաններ. քաղաքի միայն Ստալինյան ուսյունը, որ ութը տարի առաջ տնկեր 25 արտադրական ձեռնարկություն, այժմ ունի 72-ը: Մի շարք գործարաններ էլ վերակառուցվել, ընդարձակվել ու վերասարքավորվել են:

Մակայն Երևանը երջանիկ բաղադրություն չի կազմում. փողովակ է ռեսպուբլիկայի նաև մյուս քաղաքների պատկերը. դեռ հեռվից, նկատվող ծխացող Երկնահույժ ծխնեւալդների տեսարանից, արդեն զգացվում է այդ քաղաքների ինդուստրիալ սրտի հզոր բախումը:

Խոշոր ինդուստրիալ օջախների են վերածվել Լենինականը, Կիրովականը, Ալահավերդին, Ղափանը և այլ վայրեր: Գործող գործարանների շարքն են անդել գալուիտի գործարանը Լենինականում, Կորդի գործարանը Կիրովականում. Ալահավերդում հիմնականում ավարտվել է իր մեծությամբ Միության մեջ երկրորդը հանդիսացող Սուպերֆոսֆատի գործարանը, թողարկվել է Հոկտեմբերյանի Կոնսերվի հսկա գործարանի առաջին հերթը, որն անցյալ տարում տվեց մեկ միլիոնից ավելի պայմանական տոնի պահածո, իսկ յոթվ գործարկվելուց տարեկան կտա 25 միլիոն տոնի պահածո. մոտ օրերս գործել կսկսեն Շաքարի գործարանը Սպիտակում և ուրիշ այլ գործարաններ: Հայաստանի գործարանները ներկայումս տալիս են 500 անուն արդյունաբերական արտադրանք:

Սա դեռ Հայաստանի այսօրն է, իսկ վաղը ծխալ կսկսեն հետպատերազմյան հընդամյակի հսկա նորակառույցները՝ Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատը, Ալյուսինիումի գործարանը, ազոտային պարտանյութերի, հրակայուն աղյուսի, պոլիմիլիացնատալի, հախճապակու, էլեկտրոլիզի, փոքր հիդրոէներգիաների և այլ շատ գործարաններ:

Վերելք է ապրում նաև գյուղատնտեսությունը. անցած ութը տարիներում նա էլ

ավելի է զինվել առաջավոր մեքենայական տեխնիկայով. 1000-ից ավելի կոմբայներ են աշխատում այսօր մեր սոցիալիստական գյուղատնտեսության դաշտերում. 38 մեքենա-տրակտորային կայաններ են սպասարկում գյուղատնտեսությանը. մեծ չափերով աճել է ցանքատարածությունը, տեխնիկական կուլտուրաների՝ բամբակի, ծխախոտի և այլն մշակույթը. խաղողի այգիների տարածությունը անցել է 16 հազար հեկտարից. միայն 1946 թվին կոլխոզնիկները տնկել են 1000 հեկտարից ավելի նոր խաղողի այգիներ: Շնորհիվ նոր ագրոտեխնիկայի կիրառման զգալիորեն բարձրացել է բերքատվությունը:

Հատկապես մեծ ծավալ են ընդունել ջրառողովման աշխատանքները. տասնյակ հազարավոր հեկտար ջրազուլի ու ամալի տարածություններ այսօր ծածկվել են փարթամ այգիներով, տեխնիկական կուլտուրաների ցանքանով. միայն Հայրենական պատերազմի տարիներին ոռոգելի են դարձվել 18 հազար հեկտար տարածություն. դարերով պապակած հողի մարմինը ցանցվել է այսօր բազմաթիվ մանր ու խոշոր ջրանցքներով, որոնք արյունատար երակների նման կենսահույս են ներարկում, կյանքի կոչելով նրան: Զրառողովմամբ նախատեսվող շահագործում հանդիսացել է ամենադժվարին խնդիրը և եթե այն ժամանակներն այդ ասպարեզում աշխատում էին միայն երկու մասնագետ, ապա անցյալ տարում աշխատում էին 355 մասնագետ:

Զրառողովման հարցերը սերտ կերպով շաղկապվում են հիդրոկառուցումների հետ: Սևանի, այս բնական միջկարի ջրամբարի, դարերով կուտակված ջրերն այսօր կրկնակի կիրառություն են գտնում. մի կողմից Սևանից բխող Զանգվի սահանքներում կուտակված անսպառ հիդրոէներգիան կյանք է հաղորդում մեր գործարաններին ու ողողում մեր քաղաքներն ու գյուղերը լույսերի հեղեղով, մյուս կողմից նրա ջրերով իրենց ծառայել են հագեցնում մեր դաշտերը: Զքնաղ Սևանը, կասկադի սանդուղքներից դահալված ժրեն ներքև սլանալով, ողջ Հայաստանը ողողելու է էծանագին հիդրոէներգիայի ահռելի պաշարներով: Դեռ լրիվ չօգտագործված վիթխարի սեյս տնի Սևանը. նրա բոլոր հիդրոկայանները միատն տարեկան արտադրելու են երկու և կես միլիարդ կիլովատտամ էլեկտրական էներգիա: Այդ վիթխարի ուժի մասին գաղափար կազմելու համար բավական է հիշել, որ եթե այդ կայանների կա-

տարած աշխատանքը մարդկային ուժով կատարվելու, օրական անհրաժեշտ կլինեին 17 միլիոնից ավելի բանվոր: Այդ կայաններից աշխատում են Երևանի ու Քանաքեռի կայանները: Ներկայումս խոշոր աշխատանքներ են ծավալվել կասկադի երկու կայաններում՝ Լճալի, որը կառուցվում է գետնի տակ, 60 մետր խորությամբ և յուր տեսակի մեջ առաջինն է աշխարհում և Գյումուշի, որը կասկադի ամենամեծ կայանն է ու ՍՍՌՄ-ում կառուցված ու կառուցվող լեռնային հիդրոէլեկտրակայանների մեջ ամենախոշորագույնը: Լճալի հիդրոէլեկտրակայանը ջահագործման պիտի հանձնվի այս տարվա վերջին: Բացի այս խոշոր հիդրոէլեկտրակայաններից, առաջ է տարվում նաև մանր հիդրոէլեկտրակայանների կառուցումը: Օգտագործվում են Հայաստանի լեռնազետակների, սրբնթաց լեռնավտակների, քաղաղահող արվակների ու սահանքավոր ջրանցքների հիդրոէներգիան: Երևանի Գյուլգործիքների գործարանը արդեն յուրացրել է փոքրիկ հիդրոէլեկտրակայանների արտադրությունը և անցյալ տարում թողարկել է 30 միկրոֆես: Այս էլեկտրակայանները աշխատում են ավտոմատիկորեն, առանց սպասարկող անձնակազմի և բռնում են ընդամենը ութ քառակուսի մետր տարածություն ու պահանջում են անքան ջուր, որքան ամենապարզ ջրաղացը: Այդպիսի միկրոֆեսներ այժմ հաջողությամբ աշխատում են Ալավերդու Ահնիձոր, Մարց գյուղերում, Բասարգեչարի շրջանի Մեծ Մազրա գյուղում և հինգ այլ վայրերում: Այս տարի ռեսպուբլիկայի կոլխոզները կառուցելու են ևս այդպիսի 15 փոքր հիդրոէլեկտրակայաններ:



Արմատապես փոխվել է և հայ գյուղի դեմքը: Մեր մոտիկ անցյալի գրողների նկարագրած խուլ ու խավար գյուղը պատմության գիրկն է անցել անդամ: Սովետական իշխանությունն ամրապնդել է փրկվել, ծաղկել ու անձանալիորեն փոխվել է հայ գյուղը. նախկին հյուղերը փոխարինվել են կոկ, կղմինդրածածկ տների, ծուռ ու նեղ ճանապարհներով՝ կանոնավոր, ուղիղ, ծառազարդ փողոցների: Մեր գյուղերը ներկայումս ունեն հանգստյան գեղեցիկ պուրակներ, բարեզարդ գյուղական հրապարակներ. միայն վերջին երեք տարվա ընթացքում բարեկարգվել են 1700 գյուղական փողոցներ ու հրապարակներ, կառուցվել 215 նոր պուրակ: Նախկինում տգիտության մեջ խաբսափող ու հետամնաց գյուղերը դարձել են կուլտու-

րայի օջախներ. տարրական ու միջնակարգ դպրոց, մանկապարտեզ, մանկամուտք, ալիմ, գրադարան, թատրոն, կինոսրահ, ռադիոհանգույց, հիվանդանոց, ծննդատուն, առանաբուժարան, ագրոսպասարկման կետեր, լաբորատորիաներ ներկայիս մեր գյուղի անբաժանելի սեփականությունն են կազմում: Հայաստանի գյուղական վայրերում ներկայումս գործում են 629 գյուղական աղյուղ՝ 1938 թվի 484-ի դիմաց և 201 գրադարան: Ապա գյուղական ինտելեկտը: Այսօրվա մեր գյուղում կարելի է հանդիպել մի քանի տասնյակ ուսուցիչների, ագրոնոմների, բժշկիկների, դերասանների և այլն: Վերջինք թեկուզ անմահ Մուրացյանի նկարագրած Ջիբուխու գյուղը, որն այժմ Մոլավգյուղ է կոչվում, բայց փոխվել է ոչ միայն նրա անունը, այլ և նրա ողջ ներքին էությունը. գյուղի տների 60 տոկոսը նոր է կառուցված, գյուղն ունի միջնակարգ դպրոց՝ 450 սովորողով ու 16 ուսուցչով, տնի երկու մանկապարտեզ, մանկամուտք, բուժկայան, առանաբուժական կայան, գրադարան, որի 215 ընթերցողները մի տարում ընթերցել են 2000 փոքր, ալիմ, որն ունի 400 տեղանոց հանդիսարան, ստանում է բազմաթիվ թերթեր ու ամսագրեր և ունի իր առանձին գրադարանը. աղյուղին կից գործում են երգի, պարի, թատերական, կերպարվեստի և այլ շատ խմբակներ: Կուլտուրան հսկայաթափ արագությամբ ներխուժել է մեր գյուղերը: Եթե Մուրացյանը մի օր Մոլավգյուղի շենքից ներս մտներ, նրա ապշեցուցիչ կերպարանափոխությունից շվարած կմնար, չէր հավատա իր աչքերին ու կկասկածեր, որ դա նախկին Ջիբուխուն է:

Իսկ գիշերները լեռնալանջերին կոթնած և հովիտներում ու դաշտերում փռված մեր գյուղերը ողողվում են էլեկտրալույսերով, շրջապատող բնության հետ կազմելով մի ներդաշնակ, հեթաթային սքանչելի գեղեցկություն. լեռնակատարներից դիտողը գերվում, գյուղիցվում է այդ վեհասքանչ տեսարաններից:

Աճել է մեր գյուղը և՛ կուլտուրապես, և՛ տնտեսապես. միլիոնատեր կոլխոզների թիվը անցել է հիսունից:



Վերելքի նոր աստիճանի վրա են բարձրացել նաև գիտությունը, արվեստը, գրականությունը: Հայրենական պատերազմի տարիներին հիմնադրվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիան, որը հանդիսանալով

մեր ռեսպուբլիկայի գիտական մտքի կենտրոնը, այսօր միավորում է 30 գիտա-հետազոտական օջախները. այս կարճ ժամանակամիջոցում Ակադեմիայի շուրջ համախմբված գիտնականները կատարել են մի շարք բարձրագույն ուսհիմնարկների թիվը. ներկայումս ռեսպուբլիկան ունի 13 բարձրագույն ուսհիմնարկ 1938 թվի 8-ի փոխարեն, նաև 51 տեխնիկում: Ութ տարվա ընթացքում Հայաստանի բարձրագույն ուսհիմնարկներն ու տեխնիկումները պատրաստել են 18730 բժիշկ, ինժեներ, մանկավարժ, գյուղատնտես, տնտեսագետ, արվեստի աշխատող և այլ մասնագետներ: 1938 թվի համեմատությամբ կրկնապատկվել է միջնակարգ դպրոցների թիվը և քառապատկվել մանկավարժների թիվը. ներկայումս զանազան մասնագիտությամբ 12215 մանկավարժ է աշխատում ռեսպուբլիկայի քաղաքային և գյուղական դպրոցներում, ուր սովորում են 276 հազար աշակերտ, որ կազմում է ռեսպուբլիկայի ազգաբնակչության մոտավորապես մեկ հինգերորդ մասը: Ռեսպուբլիկայի ստացիոնար բուժհիմնարկներում ներկայումս աշխատում են 1432 բժիշկ: Գրադարանների թիվը 1938 թվի 130-ից հասել է 1050-ի, 2 միլիոն 730 հազար գրքի ֆոնդով: Թատրոնների թիվը հասել է 29-ի, 1938 թվի 20-ի փոխարեն:

Ութ տարվա ընթացքում կոշտոր նվաճումներ են ունեցել նաև մեր գրչի, վրձինի, քարժառական հնչյունների վարպետները. նրանք նոր ու բարձրագույն ստեղծագործություններով, մոնումենտալ երկերով հարստացրել են հայ գրականությունը, երաժշտությունը, կերպարվեստը և այլն:

Փետրվարի 9-ը հայ ժողովրդի համար է՛լ ավելի նշանակալից դարձավ նաև այն հանգամանքի շնորհիվ, որ ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի ընտրություններին առաջին անգամ մասնակցեցին նաև արտասահմանից, օտար ու հեռավոր ափերից հարազատ հայրենիք վերադարձած տասնյակ հազարավոր հայրենաբաղձ հայեր, սովետական նոր քաղաքացիներ, որոնք իրավազուրկ ապաքաղաքացու վիճակում երկար տարիներ զեզերել են պանդխտության մեջ, ճաշակել գաղթականության դաժնությունները ու հայրենատուր սրտերով երազել այս օրը:

Մեր հայրենադարձ եղբայրները հայրենիք ժամանելու առաջին օրվանից իսկ հնարավոր

լուծյուն ստացան օգտվելու Ստալինյան Մեծ Կոնստիտուցիայով սահմանված բոլոր բարիքներից՝ աշխատանքի, կրթության, հանգստի, իշխանության Գերագույն օրգանում ընտրվելու և այլն ընտրելու ու այլ բազմապիսի իրավունքների: Հայրենադարձ բոլոր հայերն աշխատանքի են տեղավորվել ռեսպուբլիկայի քաղաքներում ու գյուղերում. միայն Միկոյանի անվան սովխոզում աշխատանքի են տեղավորվել 529 մարդ, որոնց համար ստեղծվել են նյութական ու կուլտուրական բարեկեցիկ պայմաններ: Մեծ աշխատանք է կատարված ներգաղթած հայերի կրթության գործը կազմակերպելու համար: Ներգաղթած հայերի 6800 երեխա սովորում են ռեսպուբլիկայի տարրական ու միջնակարգ դպրոցներում, 520 հոգի գիշերային դպրոցներում, 200-ը բարձրագույն ուսհիմնարկներում, 650 պատանի ֆաբրիկաներում և արհեստագործական ուսումնարաններում, իսկ անբաժանելի ժողովրդի մեծ մասնակցությունը 6500 ներգաղթածներ վերացնում են փրենց անգրագիտությունը. փոքրահասակ երեխաները տեղավորված են մանկապարտեզներում ու մանկամսերներում: Հայրենադարձներից շատերը, ինչպես օրինակ, բանաստեղծ Հ. Ղուկասյանը, ստախանովսկան Օ. Խաչոյանը, Վ. Բոյաջյանը, Վ. Ուղունյանը և ուրիշ շատերը առաջադրվել են տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ ու աշխատել են օրինակելի կերպով: Իսկ հայրենադարձներ՝ բժիշկ Գևորգ Մանուչակյանը, Արտաշատի շրջանի կոլխոզնիկ Մաթևոս Խաչատրյանը և Լենինականի Մաի կոմբինատի բանվոր Մարտիրոս Կարաբաճակյանը առաջադրվել են Հայկական Գերագույն Սովետի դեպուտատության թեկնածու:

Հայրենիքի կարոտը սրտում պանդխտության մեջ տառապող Մարտիրոս Կարաբաճակյանը, այս 48-ամյա մարդը, իր երջանկությամբ գտավ միայն հարազատ երկրում. ծնվել է նա Թյուրքիայի Արաբկիր քաղաքում, դազադաքործի ընտանիքում: 15-ամյա հասակից, հոր մահվանից հետո, ընտանիքի ամբողջ հոգը բարդվում է նրա տանին և նա ստիպված թողնելով ուսումը դառնում է կոշկակարի աշակերտ, իսկ հետագայում էլ բանվոր: 1923 թվին հարյուրավոր ուրիշ ընտանիքների հետ միասին նա գաղթում է Սիրիա, որտեղ շարունակում է իր շարքաշ կյանքը. նա վաղուց երազում էր հայրենադարձության մասին և երբ սկսվեցին արձանագրությունները, առաջին արձանագրվողներից մեկը եղավ: Այժմ իրական

նացել է նրա վաղեմի իղձը, հայրենիք դառնալու օրից նա աշխատում է Լենինականի Միկոյանի անվան Մսի կոմբինատում, վաղելիով ամբողջ կոմբինատի աշխատողների սերն ու համակրանքը:

Մաթևոս Խաչատրյանը Իրանի Հոսեփնաբադ գյուղից է. տասնչորս տարեկանում, կորցնելով ծնողներին, որբացավ նա և բաժնակության մտավ կալվածատեր Վեբիլ խանի մոտ: Չորիմանալով խանի մոտ կատարած ստրկական աշխատանքին, տարիներ հետո թողել ու հեռացել է, ուրիշ տեղերում բախտ որոնելու համար. շատ տեղեր է թափառել նա, բայց բաժնակրի անազատ կյանքը նրան երջանկություն չի բերել և ոչ մի տեղում, տարիներ հետո երբ նա նորից վերադարձել է հայրենի գյուղը, զազազած կալվածատերը ոչ միայն նրան չի ընդունել, այլ և խլելով նրան ժառանգություն մնացած ալգին, զբրկել է ապրուստի վերջին հնարավորություններից: Այժմ նա Վորոշիլովի անվան կոլխոզի անդամ է. նրան տրամադրել են բնակարան, տնամերձ հողամաս: Պետությունից ստացած 25 հազար ռուբլի վարկով նա շուտով իր համար նոր տուն կկառուցի: Խաչատրյանը ցերեկներն աշխատում է այգիներում՝ օրական երկուսից երեք նորմա կատարելով, իսկ երեկոները դպրոց է հաճախում, քիմիական գիտություններ վերացնելու համար. իր գալու օրից սկսած, չորս ու կես ամիս հայրենի հարազատ հողի վրա աշխատելով, նա իր աշխօրերի դիմաց ստացել է 20 փութ հացահատիկ, 50 կիլոգրամ շիբ, 130 լիտր գինի, 3100 ռուբլի փող, շատ յուղ, պանիր, բանջարեղեն և այլն. այդքան մեթերներ չէր ունեցել նրա ընտանիքը մինչև այսօր: Խաչատրյանն արդեն 60 տարեկան է, բայց նրա կյանքը դեռ նոր է սկսվում:

Գևորգ Մանուշակյանը հայրենիք է վերադարձել առաջին կարապետով և որպես բժիշկ աշխատանքի է տեղափոխվել ժամանման առաջին իսկ օրից: Նա իր ուժերը նվիրել է մեր երկրի ծաղկման ու բարգավաճման, ժողովրդական առողջապահության գործի բարելավման:

Բժիշկ Գևորգ Մանուշակյանը թրքական հայաժանքներից ու հետապնդումներից խուսափելով ստիպված է եղել թափառել օտար երկրներում. նա ապրել է Մերձավոր Արևելքի ու Արևմտյան Նիլոպայի շատ քաղաքներում, եղել է Եգիպտոսում, Սիրիայում, Պաղեստինում, Ֆրանսիայում և այլուր. նա շատ երկրներ է տեսել, շատ ժողովրդների հետ շփվել, բայց իրեն երջանիկ է զգացիլ

միայն սովետական հողի վրա ոտք կոխելուց:

«Եթե մի տարի առաջ ինձ ասեին, թե Հայաստանում կառաջագրվեմ ժողովրդական կառավարության դեպուտատության թեկնածու, դա անիրագործելի, հեքիաթային երազ կթվար ինձ,— ասում է բժիշկ Մանուշակյանը,— բայց մինչ դեռ արտասահմանում մեր երազներն ամեն օր խորտակվում էին, բախվելով իրականությանը, սովետական աշխարհը, դարձավ այն ավետյաց երկիրը, որտեղ իրականությունն են դառնում մարդու իրավաբան անհրաժեշտությունները: Պատասխանատվության զգացմունքն է համակում մեզ: Մենք մեր ապագան կերտողներն ենք և պետք է այնպես աշխատենք, որ յուրաքանչյուր օր, յուրաքանչյուր ժամ հանդիսանա ծառայություն մեր սքանչելի սովետական հայրենիքին»:

Երեկվա իրավագուրկ ու հայրենազուրկ մեր հայրենադարձներն այսօր անհուն երախտագիտությամբ են համակված. ահա ինչ է գրում «Արծաթագործ» արտելի հայրենադարձ բանվոր Վարազդատ Բոչայանը. «Ընդամենը մի քանի ամիս է, որ կգտնվիմ մայր հայրենիքի հողի վրա և որպես լիրավ սովետական քաղաքացի կվայելեմ Ստալինյան Կոնստիտուցիայով տրված աշխատանքի, հանգստի, կրթության և մյուս բոլոր իրավունքները: Սովետական հայրենիքում ապահով կյանք ստեղծվեց ընտանիքիս համար: Վերադառնալով Բուդաբեայից ես անմիջապես աշխատանք ստացա»:

Երևանի Կիրովյան №41 ընտրական օկուրգի հանձնաժողովի անդամ հայրենադարձ պրոֆեսոր զոկտոր Տեր-Վարապետյանն ասում է. «Մեզ համակում է խորին պատասխանատվության զգացմունքը: Մեզ մեծ մտահոսություն ցույց տրվեց. դեռ կես տարի էլ չի անցել, որ մենք ոտք ենք դրել հայրենի հողի վրա և ահա եղբայրական հիմունքներով մասնակցում ենք Հայաստանի Գերագույն Սովետի ընտրություններին... մենք կնվիրաբերենք մեր ամբողջ ավունը, մեր բոլոր ուժերը սովետական մեծ հայրենիքի արժանավոր զավակները լինելու համար»:

Երևանի քաղաքի մեխանիկական գործարանում աշխատող Բեյրութից ժամանած վարպետ Մովսես Ղևնյանն ասում է. «Մենք կարող ենք վեր բարձրացնել մեր երկխանիքին ու ցույց տալ նրանց վաղվա օրը»:

Թաթևի շրջանի Զիթհանքով գյուղից հայրենադարձ կոլտոգնիկ Գաբրիել Շիրվանյանը գրում է. «Իրանում համազրուցվեցինք ինձ «աղքատ Գաբրիել» էին անվանում, չնա-

յաժ իրենք հարուստ չէին ինձնից: Ես ոչ մի սեփականություն չունեի, բացի անվերջ հաց պոռացող յոթը երեխաներից, որոնց կերակրելու համար աշխատում էի գիշեր ցերեկ: Միծաղելի է, երբ ինձ հարցնում են, թե ի՞նչ իրավունքներով էի օգտվում: Արդեն չորս ամիս է, ինչ ապրում եմ ծաղկող Հայաստանի հարազատ հողի վրա. բոլոր երեխաներս ձրի սովորում են միջնակարգ դպրոցում, մայրենի լեզվով, ես ու կինս աշխատում ենք կոլխոզում և արդեն տնենք 280 աշխար: Ողջ սովետական ժողովրդի հետ մենք էլ սպասում ենք մեծ տոնին, Գերագույն Սովետի ընտրության օրվան:

Միկոյանի շրջանի ընտրողների մեջ ամենահասակավորը հանդիսանում է Իրանից մերցերս հայրենիք եկած Գասպար Բաբայանը: Նա ծնվել է 1822 թվին ներկայիս Թյուրքահայաստանում. նրա հիշողության մեջ դեռ թաղում են անցած դարի առանձին իրադարձությունները: «100 տարի ես երազել եմ իմ ժողովրդին տեսնել ազատ ու իրավահավասար,— ասում է նա,— իրականացել են իմ երազները: Մեր հայր տա բարեկամ ընկեր Ստալինն ընդմիջտ ազատագրեց իմ սերունդը՝ 62 որդիներիս, թոռներիս ու սքրանց զավակներին ու թոռներին: Նրանք Սովետական մեծ Միության ազատ քաղաքացիներն են այսօր: Իմ կյանքի 125 տարվա ընթացքում ես այժմ միայն ճանաչեցի իսկական, երջանիկ կյանքը: Սովետական Հայաստանում, հարազատ հողի վրա ես իմ ձայնն ուրախությամբ կտամ մեր դեպոստատության թեկնածուին»:

Փետրվարի 9-ն է. լույսը դեռ չի բացվել. սովորաբար այս ժամերին ամենուրեք անդորրություն ու խաղաղություն է տիրում. սակայն այսօր խախտվել է այդ բնականոն կարգը: Հայաստանի քաղաքներում ու գյուղերում անսովոր ու հաճելի առաջնություն է տիրում. քաղաքների ու գյուղերի փողոցները լեփ լեցուն են կենսաուրախ մարդկանցով. ցնծում է ողջ Հայաստանը. սքանչելի ներաժշտության կենսաթրթիւ հնչյուններով պարուրվել են քաղաքներն ու գյուղերը. տոնական շքեղ տեսք է ընդունել ռեսպուբլիկան, դրոշագարդված են նրա քաղաքներն ու գյուղերը: Դեռ լույսը չբացված, մարդիկ խումբ խումբ, հաստատ քայլերով, շտապում են դեպի իրենց ծանոթ շենքերը, դեպի լույսերով ողողված ընտրական տեղամասերը: Երջանիկ ընտրողներից յուրաքանչյուրը շտապում է տեղամաս, որպեսզի ինքն առաջինը մոտե-

նա քվեատուփին: Ընտրական տեղամասերում հավաքվածները երգում, պարում, զըվարճանում են մինչև կգա քվեարկության ժամը:

Ժամը 6-ն է. ընտրական տեղամասերում քվեատուփերին են մոտենում երջանիկ ընտրողները. այդ նվիրական պահին Հայաստանի բոլոր քաղաքներում ու գյուղերում քվեատուփերի մեջ են իջնում առաջին, ընտրական բյուլետենները:

Քվեարկությունն սկսված է... քվեարկում է ողջ Հայաստանը... շարան շարան քվեատուփերին են մոտենում բանվորները, կոլխոզնիկները, ծառայողները, գինվորականները, տնտեսագիտները, մեր երկրի անվանի մարդիկ, արդյունաբերության, գյուղատնտեսության առաջավորները, գիտության, արվեստի անվանի ներկայացուցիչները, Հայրենական պատերազմի քաջարի վետերանները, հայրենադարձ սովետական նոր քաղաքացիները: Բոլորի դեմքերը շողում է երջանկությամբ: Քվեատուփերին մոտենում են նորանոր ընտրողներ, բազմապիսի պրոֆեսիայի տեր անձինք, հետպատերազմյան հնգամյակի նորակառույցների ստալանովականներ, երիտասարդներ ու ծերեր, որոնց մեջ և 100-ից բարձր տարիք ունեցողներ: Անվերջ շարքերով քվեատուփերին են մոտենում արևալուստ Հայաստանի բերկրավի ներկան ու կենսաշող ապագան կերտողները:

Հուլիս է մեր հայրենադարձ եղբայրների մասնակցությունը քվեարկության. Երևանում ահա քվեատուփին է մոտենում Նատանյանների ընտանիքը՝ ծնողները երեք որդիների հետ միասին. ընտրական բյուլետենն ստանալով հայրն ասում է. «Անյապի երջանիկ եմ զգում ինձ, անշափ երջանիկ, որ արժանացել եմ հարազատ հայրենիքում այսպիսի իրավունքի». ապա նա համբուրում է բյուլետենը, բարձրացնում գլխից վերև ու նոր ձգում քվեատուփ. ընտանիքի անդամները հետևում են նրա օրինակին: Լեփնակաճում քվեատուփին է մոտենում սովետական նոր քաղաքացի՝ ջութակահար Աստիկ Ուղուրյանը. ուրախության արցունքները աչքերին նա հուզված ասում է. «Իմ կյանքի այս նվիրական, երջանիկ ու անկրկնելի պահին անհուն շնորհակալություն եմ հայտնում հայր Ստալինին, նրան, ով ինձ նման հազարավոր պանդուխտ հայերին հայրենիք տալու թույլտվություն պարգևեց: Երևանում քվեատուփին է մոտենում 100-ամյա Շահգալա Աղամյանը, որը մի ամբողջ դար տառապել է սովթանական գեհնում և Արաբիայի օտար երկնքի տակ. դողդողուն ձեռքերով բյուլետենը քր-

վեատուսի իշնցնելուց հետո այս զառամյալ կիներ ձեռքերը երկինք պարզած, աղոթք էր մղում, երկար կյանք մաղթում Առաջնորդին:

Քվեարկությունը շարունակվում է... քվեատուսիներին են մոտենում ամբողջ Երևանը, լենինականն ու Կիրովականը, Լոռին ու Զանգեզուրը, Արարատյան դաշտն ու Սևանը, ամբողջ Հայաստանը, իսկ այնհեր Արարատն ու Արագածը, հայ ժողովրդի տխրության ու երջանկության այդ լուռ վկաները, ի տես հայ ժողովրդի այս մեծ ցնծության, համաժողովրդական տոնի, ժպտում են սրտահույզ:

Գիշերվա ժամը 12-ն է. ընտրությունները վերջացած են համարվում. ռեսպուբլիկայի ընտրական տեղամասերում հանձնաժողովները բաց են անում քվեատուսիներ, հաշվում են բյուլետենները: Բազմաթիվ բյուլետենների վրա մակագրություններ կան, որոնցով երջանիկ ընտրողներն իրենց երախտագիտության խոսքն են ուղղում մեծ Ստալինին. ահա դրանցից մեկը.—

ԹԱՆԿԱԳԻՆ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆ

Այսօր իմ կյանքի ամենաերջանիկ օրն է, որովհետև կնոջս ու եղբորս հետ միասին առաջին անգամ մեր կյանքում մասնակցում ենք մեր հայրենիքի իշխանության դերագույն օրգանի ընտրություններին:

Մի քանի ամիս սրանից առաջ, մենք անբաղձալի թափառականներ էինք, օտարություն մեզ բացահայտ ատելալիս առտահայտությանց նշավակ ու մարդկային իրավունքից զուրկ: Իսկ այժմ վերադառնալով մեր հայրենիքը՝ Սովետական Հայաստան, դարձել ենք լիիրավ քաղաքացիներ, իմ սիր-

տը լցված է փրկատաղիտական ու հպարտության անբացատրելի զգացմունքներով դեպի Ձեզ, որպես բազմաշարչար հայ ժողովրդի ու Հայաստանի ազատարարի:

Իմ ձայնը տալով Ձեզ՝ ձայն տված կլինեմ հանուն 50 հազար ներգաղթող ու մեկ միլիոնից ավելի արտասահմանյան հայերի ազգային-քաղաքական բաղձանքների օգտին, Հայաստանի բարգավաճման և սովետական ժողովուրդների եղբայրությունը, հզորությունն ու երջանկությունը կերտող մեծ Առաջնորդին, Ձեզ և Ձեր հաջողությունների օգտին, հարազատ ընկեր Ստալին:

Մ. Ս. ՏԻԳՐԱՆՅԱՆ

9/2 47 թ., Երևան

Բյուլետենները հաշված են. ձայնի իրավունք տնեցող 713.240 մարդու ընդհանուր թվից Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի ղեկավարտների ընտրություններին մասնակցել են 713.164 մարդ, որը կազմում է ցուցակագրված ընտրողների ընդհանուր թվի 99,99 տոկոսը: Կոմունիստների և անպարտականների ստալինյան բոլոր թեկնածուների օգտին քվեարկել է 711.747 մարդ, որը կազմում է քվեարկության մասնակցողների ընդհանուր թվի 99,81 տոկոսը: Երևան քաղաքում 147.682 մարդուց Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի ղեկավարտների ընտրություններին մասնակցել է 147.652 մարդ. կամ ցուցակագրված ընտրողների ընդհանուր թվի 99,98 տոկոսը: Ընտրվել են 269 ղեկավարտ, որոնցից 203 կոմունիստ և 66 անպարտական. ղեկավարտների մեջ կա 75 կին:

Վ.

Վ. ՄԻԲԱՔՅԱՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

Սիրելի Նիկոլ!

Այսօր մասնակցեցինք ընտրություններին: Փետրվարի 9-ը Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի ընտրությունների օրն է: Այսօր Հայաստանի տքնաջան ժողովուրդը նորանոր հաղթանակներով է դիմախոսում երկրի իշխանության Գերագույն օրգանի ընտրություններին:

Ընտրությունների բարոյա-քաղաքական նշանակությունը շատ մեծ է, մասնավորապես մեզ, ներգաղթյալներին համար. հազիվ մի

քանի ամիս կլինի, ինչ ապրում ենք սովետական ազատ հողի վրա, բայց արդեն լիիրավ քաղաքացիներ ենք, ու որպես այդպիսին օգտվում ենք Ստալինյան Կոնստիտուցիայի բոլոր բարիքներից:

Զառամած, 60 երկար ու ձիւղ տարիների բեռան տակ կբաժ, մայրս առաջին անգամն իր կյանքում պիտի մասնակցեր ընտրություններին:

Ինչպես գիտես, կինը մեզ մոտ, Պարսկաստանում զուրկ է ընտրելու և ընտրվելու իրավունքներից, իսկ այստեղ, Սովետական Միության մեջ այլ է բոլորովին դրությունը:

Մայրս դողդոջուն քայլերով դիմում էր դեպի քվեատուփը՝ իր քվեն տալու կոմունիստների և անպարտիականների բլոկի օգտին:

Ես այդ ժամին ուշադիր հետևում էի նրան. մորս անդորր դեմքի վրա խաղում էր երանուխյան քաղցր ժպիտը. ճիշտ է, նա դեռ ամբողջությամբ չէր ըմբռնում իր արարքի վնասությունը, բայց բնազդով կռահում էր, թե ինքն ինչ որ մի նվիրական գործ է կատարում:

Ավելորդ եմ համարում իմ մասին խոսելը, որովհետև այդ ինքնըստինքյան պարզ է: Ես անհուն խանդավառությամբ էի կատարում իմ քաղաքացիական սրբազան պարտականությունը, և ինչու՞ չկատարեի, չէ՞ որ ես գտել էի այն, ինչ որ տարիներին երազն է եղել, իմ հարազատ հայրենիքը, իմ սիրած պետականությունն ու ազատ և շողջողուն հեռանկարներով հարուստ կյանքը:

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի բոցերից ծնված այդ պետականության շնորհիվ էր, որ ես հայրենիք վերադառնալու հնարավորություն ստացա: Այսօր ես ամեն քայլափոփի ականատես եմ լինում այդ պետականության գոյության պայմանավորված ստեղծագործ աշխատանքի պտուղներին. ստեղծագործ աշխատանքի, որ ընդգրկում է հայ ժողովրդի կյանքի բոլոր բնագավառները:

Դարեր շարունակ հայ ժողովուրդը, զուրկ լինելով պետականությունից, ստիպված է եղել կրելու օտար բռնակալների անարգ լուծոք, քաղաքային, քաղաքային, քաղաքային սոցիալիստական ռևոլյուցիայի նա ձեռք է բերել պետականություն ու ինքնիշխան դարձել:

Հայաստանի Սովետական սոցիալիստական պետականության ստեղծման պատմությունը կազմված է փառապանծ էջերից. այդ փառահեղ պատմության ամեն մի էջը գրվել է համառ պայքարի ստեղծագործ աշխատանքի ու արյան գնով: Հայ ժողովուրդը անմահ կենինի, մեծ Ստալինի դեկամարտությամբ և ռուս մեծահոգի ժողովրդի աջակցությամբ միայն կարողացավ վերականգնել իր մաղուց փ վեր կորցրած պետականությունը:

Հայ ժողովրդի ստեղծագործ, տքնաջան աշխատանքի շնորհիվ միանգամայն փոխվել է երկրի դեմքը. նախկին հետամնաց ֆեոդոլ, նրա զավակների անդու աշխատանքի շնորհիվ, վերածվել է զարգացած արդյունաբերության ու գյուղատնտեսության երկրի: Հայաստանի ժողովրդական տնտեսության հարաճուն վերելքը ամեն տարի նոր ու փառահեղ հաղթանակներ է արձանագրում:

Հայ աշխատավոր ժողովրդի շահերն իր մեջ բյուրեղանման մարմնավորող այս պետականության ամրապնդումը ամեն մի ազնիվ հայի ամենակիրակալն ու սրբազան պարտականությունը պիտի լինի, ուր էլ նա գտնվելիս լինի:

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի շնորհիվ փրականացել, միս ու արյուն են դարձել մեր, հայ ժողովրդի դարավոր փրազները: Ծշմարտությունը շտեմներու համար կույր պետք է լինել, կամ քաղաքական ատելությունից կուրացած, որ բնական կուրությունից ավելի վատթար է:

Անգին ընկեր, երկրի քաղաքական ու տնտեսական վերելքը դիտարկող Հայաստանի Սովետական իշխանությունն անքակտելի, սերտ կապերով կապված է ժողովրդի հետ ու իր մեջ մարմնավորում է նրա խղճը, կամքն ու ձգտումները:

Աշխատավորության շահերի պաշտպան պետական ապարատը բոլորովին պարզ կառուցվածք ունի, դա ժողովրդապետության նոր տիպ է: Ապրել այսպիսի իշխանության հովանու տակ, նրա նոր ու ազատ քաղաքացին համարվել, մեծ ուրախություն ու պատիվ է ինձ համար ու ես պարտավորվում կզգամ բարեխղճությամբ ու անթերի կատարել սովետական քաղաքացու իմ պարտականությունները հանդես նրա:

Պայծառ ու հրաշալի օր է: Քաղաքը տոնակա տեսք է ընդունել, Երաժշտությունը հորդում է քաղաքի փողոցներով ու հրապարակներով. շենքերը դրոշազարդված են. անսովոր ֆուրբեռ է տիրում. ամենուրեք հնչում է կենսուրախ մարդկանց աշխույժով լի առողջ ծիծաղը: Սովետական քաղաքացիները վաղ առավոտից սկսած խումբ խումբ կամ մենակ ընտրական տեղամասերն են շտապում իրենց քվեն տալու, իրենց քաղաքացիական պարտքը կատարելու վճռականությամբ լցված:

Դարձյալ հիշում եմ քեզ, իմ ազնիվ ընկեր, թո պատկերը չի հեռանում իմ աչքերի առջևից: Աշակերտներիդ, բարեկամներիդ ու թո բախտն ալատեղ է, այս փրանավետ հանգրվանում, ուր ամեն ինչ կա — և՛ ուսում ու գիտություն, և՛ սեր ու երջանկություն, և՛ ազատություն ու կենսաշող ապագա:

Ալատեղ, այս գեղաժիժաղ երկրում կույրը նպատակ ունի. նա սովորական հունով չի բնական, չի քաղաքից տն ճահճացել, նա նոր է, հարափոփոխ ու կենսահորդ: Միութենական մյուս ռեսպուբլիկաների հետ միասին այս երկիրը մասն է կազմում մի

ընդարձակ, անծայրածիր ու բնական անսպառ հարստությունների տեր նոր աշխարհի, ուր սոցիալիստական աշխատանքն է իշխում, կյանքի ու վայելքի անսահման հնարավորություններ ապրում բոլորին, բոլորին:

9 փետրվարի 1947 թ.
Բ. Երևան

Լենինյան այս նոր աշխարհը պատրաստ է իր գիրկն առնելու և քեզ. արի՛, էլ մի՛ հապաղիր:

Ընկերական ջերմ ու անկեղծ բարևներով
Ֆո՛ Արամ Միրաֆյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԸ



Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Ս. Տ. Գևորգ Զ Բվետուփի մոտ



ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ՖԻՆԱՆՍԱԾԻ ՀԱՅՏՆԻ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆՑ ԴԻՍՈՒՍԸ Ի ՆՊԱՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՍՈՐՆՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՆ

Հայկական դատի ֆրանսացի բարեկամները հետևյալ կոչը հանձնած են Չորս Մեծերու Արտաքին Գործոց Նախարարներուն.



մեն համոզումի պատկանող ստորագիր ֆրանսացիներ՝ Միացյալ Ազգերու ներկայացուցիչներուն անհետաձգելի կոչ մը կուղեն, պահանջելու համար, որ այժմ, երբ խաղաղության դաշնագիրները հասարակաց հաղթանակին հոգեկան և քաղաքական հետևանքները պիտի նվիրադրածեն, Հայ ազգին դարավոր իրավունքները անպամ մը ևս չզոհվին:

Թուրքիոյ հայ բնակչության մեկ մեծ մասին տարագրությամբ ու ջարդովն է տր սկսան, 1895-են 1922, այն հրեշալին ունակությունները, որոնց ահափորությունը նվիրական, իր վարդին, կրցալ չափել հիտլերական գրավման ընթացքին: Այն պահուն, երբ ազատ ժողովուրդները վերջապես կուզեն իրավունքի և Արդարության թագավորությունը հիմնել, անհրաժեշտ է նվիրական հողին շահմանափակել՝ ամենուն կողմն սպասված դարմանման գործը, այլ Միացյալ Ազգերու պատվին համար իսկ, անոր ուժը տարածել նաև բարբարոսության առաջին զոհին վրա ևս — Հայ ժողովուրդին վրա:

Մենք հոս կողակոչենք Քիմանսոններու, Կլատսթոններու, Վիլսոններու հիշատակը, որոնց անդրդիրիմյան ձայնը չէ դադարած իրավունքը պահանջելի, տրովհետև վարկյանի դիվանագիտական և տնտեսական ջահերը կթվի թե կուզեն զայն լուծության դատապարտել: Հայ ժողովուրդը կենդանի իրականություն մըն է և ոչ թե — ինչպես շատ դուրին պատճառաբանություններ հասկցնել կթվին — հնագիտական հիշատակ մը: Հայկական Հանրապետության հողին վրա, ինչպես

Ֆրանսայի և Ամերիկայի մեջ, իր զավակները, ինչպես նույնը ըրին 1914-ին, միևնույն թռիչքով շարունակեցան Ազատության դրոշակներուն տակ:

Չէ՛ կարելի մոռնալ նախորդ պատերազմի առնել Հայ ժողովուրդին եղած հանդիսավոր խոստումները, որոնք հետո, Լոզանի խորհրդածողովին, ամբողջովին ոտքի տակ առնվեցան. ևրդմադրություն, որ ավա՛ղ, իր հեղինակներուն բախտավորություն չբերավ երբեք:

Հոս հարցը միջազգային բարոյականի մասին է, որուն լուծումը կընա գալիք դարերուն քննաչափ ծառայել, դատելու համար դիվանագիտական գործը, որուն այժմ ձեռնարկված է: Ներելի չէ, իրավագիտական այսքան բացահայտ կետի մը վրա, վարկյանի դիվանագիտական ճշիմացիո համաձայն գտնա պատեհապաշտ դիրք գրավել, որովհետև իրավունքը ո՛չ ժամանցումի կենթարկվի, ո՛չ ալ չքնանա:

Հայ ժողովուրդը կպահանջե պարզապես իրեն տրված քաջալերությանց նվիրագործումը, իրեն խղած խոստումներուն գործադրությունը, խոստումներ և քաջալերություններ, որոնց հավատաց ատեննք վստահությամբ մը, որ 1915—1920-ի ջարդերու ատեն, կազմակերպված Գերմանիոյ մեղսակցությամբ, իրեն արժեց իր մեկ, միլիոնի ավելի զավակներուն կորուստը: Դառն պիտի ըլլա, որ այսպիսի զոհողություն մը այսօր պատրվակ ծառայե հանձնառությանց վերջնական բռնաբարման:

Թող ներքի մեզի ավելցնել. — ներկա հայտարարությունը ստորագրողները թուրք ցեղին դեմ ոչ մեկ սկզբուն-

քային թշնամություն կանուցանեն: Մեր կարծիքով թուրք ժողովուրդը Հայկական հարցին արդար լուծմանը մեջ ամեն շահ տանի: Այն ատեն միայն, երբ պիտի մարի մրցակցության վառարան մը, որ միշտ կապառնա Մերձավոր Արևելքի մեջ հրդեհը բռնկեցնել, այս շրջանի մեջ վերջապես պիտի հաստատվի իրական խաղաղությունը մը, գրավակները ցեղերու հաշտության:

Ասոր համար, քաղաքական կամ կրոնական կարծիքն անկախաբար, պարկեշտ և գործնական լուծում մը միայն կա — Երևանի Հայկական Հանրապետության միացնել թուրքերեն տիրապետված Հայկական հայրենական ժառանգության գոնե մեկ մասը, այսինքն նախագահ Վիլսոնի իրավաբարական վճռով սահմանված շրջանները, որպեսզի Հայկական Պետության մաս կազմեն:

Զորավար էտուար Պրեմոն, հրամանատար Դեր-Կոմս Պրեմոն տ Աշի, Ալպեր ՊԱՅՆ՝ Սորպոնի մեջ փրոֆեսոր, Շարլ Պրեմոն՝ Համալսարանի փոխ-փրոֆեսոր, գորավար Փրեմո ՇԱՌՏԻՆՅՈՒ, Հայր Լուի ՄԱՌԻՆՍ՝ փրոֆեսոր Փարիզի Կաթոլիկ էնսեթիթութին, Մարսել ՔԱՇՆ՝ անդամ Ազգային Սահմանադիր ժողովի, էտուար ՍԱՊԼԻՆ՝ գրագետ, Փոլ ՊՈՒԱՅՆ՝ Արևելյան Լեզվաց Վարժարանի վարիչ, Հանրի ՊԵՆԱՋՆ՝ գրագետ, Ժորժ ԼԲՔՈՆ՝ անդամ Ֆրանսիական Ակա-

դեմիո և նախագահ Ֆրանսացի Գրագետներու Ընկերության, Հանրի ՄԱՋՆԻ՝ գրագետ, Լեոն ՄՈՒՍԻՆԱՔ՝ գրագետ և տնտրեն Զարդարակետներու Ազգային վարժարանին, Հայր ՏՅՈՒՊԱՐԼ՝ փրոֆեսոր Կաթոլիկ էնսեթիթութի, Փրեմո ՀԵՐՎԵ՝ անդամ Ազգային Սահմանադիր ժողովի, Ժյուսթեն ԿՈՏԱՐ՝ նախկին նախարար, Փոլ ԼԱՆԺՎԵ՝ փրոֆեսոր Քուլեթ տը Ֆրանսի, Ժան — Ռիշար ՊԼՈՔ՝ գրագետ, տնտրեն «Սը Սուառ»-ի, ՌՈՒՍԻ՝ անդամ էնսեթիթութի, Մորիս ԿՅՈՒՅՈՒ՝ Վիգոր Հյուկո հաստատության ընդհանուր քարտուղար, Մարսել ՓՈՒՆԱՆ՝ փրոֆեսոր Սորպոնի, ՊԱՌՏՆ՝ Զրագիտության էնսեթիթութի Լապոռաթուառի տնտրեն, Մաքս ԺԵԼԵՋՈ՝ Լապոռաթուառի տնտրեն և Սորպոնի դասախոս, ԷՎԱՆ՝ օգնական Գիտությանց ֆաբուլթի, Փոլ ԺՈՅ՝ փրոֆեսոր Սորպոնի, Օր. ՔԱՆԹԵՆ՝ Աշխատությանց պետ Սորպոնի, Ռենե ՕՏՅՈՒՊԵՐ՝ փրոֆեսոր Արևեստներու և Արհեստներու Ազգային Քոնսեպթաթուառի և Սորպոնի, Ռ. ՄԱՌԵՔ՝ Փարիզի Գիտությանց ֆաբուլթի դասախոսությանց պատվո պետ, էտուար ՊՈՆՐ՝ փրոֆեսոր Սորպոնի, Փրեմո ԺՐԱՐ՝ տնտրեն Կենսաբանության էնսեթիթութի, Շ. ՄՈՒՅՆ՝ փրոֆեսոր Սորպոնի, Ռենե ՎՈՒՐՄՍԵՐ՝ փրոֆեսոր Սորպոնի, Ժ. Է. ՄԱԿՈՒ՝ էնսեթիթութ Փասթորի սպասարկության պետ:

(«Երիտասարդ Հայաստան» թիվ 36, 1946 թ.)

ՇԵԼԼԵՆ ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՃԱԿԱՏԻ (ԷԱՄ) ՕՐԿԱՆ „ԷԼԵՑԹԵՐԻ

ԷԼԼԱՍԱ՝Ն ՀԱՅԵՐԻ ՆԵՐԳԱՂԹԻ ՄԱՍԻՆ

Հայերը կենդանի են: Հազարավորներ կպատրաստվին շատ քիչ ատենին մեկնիլ Հելլադային:

Հունաստանի հայերը (մոտ 30.000 հոգի) ողբերգական մնացորդներն են երկու միլիոննոց ժողովուրդի մը, որը 1922-ին առաջ կրնակեր Փոքր Ասիո մեջ: Համակ կենսունակություն և աշխատասիրություն արտահայտող այս ժողովուրդը, հելլեններու հետ, Օսմանյան վախճանության քաղաքակիրթ տարրը կկազմեն: Իրենց ձեռքին մեջ կենսորոնացուցած էին այդ երկրին վաճառականությունը, արվեստը և արտահայտչներն էին հին Թուրքիո մշակույթին: Վարժանի նման բանաստեղծներ միջազգային գրականության մեջ անմահ պիտի մնան:

Հելլեն բանակի կողքին կովեցան և քայլաքայլի շրջանին, Թուրքիո ամենակատարի հալածանքին ենթարկվեցան, հսկա հարստու-

թյուններ կորսնցուցին, խմբական սպանդի արհաւիրքը կրեցին և հալածված՝ ապաստանեցան Հունաստան գաղթականության մյուս գոհերու կողքին: Հոս ճանչցան անտարբերությունը և լքումը կառավարության: Անոնք, ոչ տուն առին, ինչպես մյուս գաղթականները, ոչ ալ վնասուց հատուցում, որովհետև բնակիչներու փոխանակման օրինագիծը չէր կանխատեսեր առկա:

Առանց բնակարանի, առանց հատուցման, առանց խնամատարական որևէ օգնության անոնք նետվեցան ամենին խիստ կյանքի պայքարին մեջ: Գացին հաստատվիլ, Հելլադայի քաղաքներուն և գյուղերուն մեջ:

Աթենքի և Պիրեայի շրջանին մեջ մնացին մոտ 20.000 հայեր, որոնք կպարապեին զանազան արհեստներով:

Այդ բանվորներուն մեծամասնությունը

անցուց և տակավին կանցնե աղքատության, զրկումի և հյուծումի շրջան մը:

Ջանադան արվարձաններու մեջ կապրին անոնք, ինչպես Գոթինիա (6.000)՝ Տուրկուքի (4.000), Նեա Զմիռնի (2.000) և այլն:

Հայերը իրենց զարգացած ազգային գիտակցութեամբ, ինչպես նաև ազատական գաղափարականով, պահեցին հոս ալ իրենց տոհմային գուլնը:

Որպես փոքրամասնութիւն՝ ճանչցված է ալնապաշտպանի Ազգերու Դաշնակցութեան Նախնական գրասենյակին և ժողովուրդ մըն է՝ որ որևէ հպատակութիւն չունի:

Համաձայնեցրը կազմվեցան յեկեղեցական խորհրդներու ձևով: Քրիստոնյաներ են անոնք և ունին իրենց ուրույն եկեղեցին և իրենց արքեպիսկոպոսը՝ ազատական լայն գաղափարներով օժտված կրօնապետ մը: Ստեղծեցին իրենց դպրոցները, տը հեղինակ և հայ ուսուցիչներ կուսուցանեն հայ մանուկներուն իրենց լեզուն և իրենց դժբախտ ժողովուրդին ողբերգական պատմութիւնը: 23 (վարժարաններու թիւը չափազանցված է. Մ. Թ.) նման վարժարաններ կ'գործեն միայն Աթենքի և Պիքեայի շրջանին մեջ: Անոնք կ'մատակարարվին ժողովուրդին: Հակառակ իրենց ծանր աշխատանքին, իրենց հաստատված նոր վայրին մեջ կշարունակեն հետևիլ իրենց մշակութային շարժումին: Կհրատարակեն գրական երկու հանդեսներ և լույս ընծայած են բազմաթիւ գիրքեր:

Գրավման շրջանին առաջիններն եղան, որ նետվեցան ազատագրական պայքարին մեջ: Այն պահուն, երբ իրենց սովորական հայրենիքը կ'մաքառեք ֆաշիզմի դեմ, իրենք որպես կենդանի մեկ մասնիկը անտը, անտարբեր չմնացին: Ըմբռնեցին մեծութիւնը մեր ազատագրական պայքարին և ալ ցաված ժողովուրդին անոթի բանակորները՝ խտացուցին զարբեր մեր գունդերուն: Տանջարաններու մեջ, Հայտարներու մեջ սպանութիւններու ընթացքին, կրեմաթորիտներուն մեջ, անոնք վճարեցին իրենց արյունի տուրքը:

Նեա Զմիռնիի հայկական թաղամասը, Գոթինիան, Թամպուրիան և հերոսական Տուրկուքին հավետ դարձնված պիտի ըլլան իրենց ցեղին պատմութեան մեջ փառապանծ Ստալինկրատի լուսափայլ խորհրդանշը հիշեցնող:

Ազատագրութենէն հետո հայերն ալ գտնուելեցան հետ-դեկտեմբերյան պետութեան ճնշումին տակ: Հետապնդումներ, բանտեր, խոշտանգումներ և ԱՆԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ:

Այսօր, բոլոր ալ ժողովուրդը դեպի իր մեծ հայրենիքը վերադարձի տեսիլքով միայն կ'ապրի:

Սովետ. Հայաստան աշխատանք կտանի, որպեսզի կարելի չեղածին չափ շուտ ներգաղթը տեղի ունենա: Այդ ուղղութեամբ հանձնախումբ մըն ալ հասած է, որը պիտի հսկէ առաջին քարավաններու մեկնումին:

Հայկական Ազգային Ժողովրդական Միութեանը՝ ժողովուրդի լայն խավերու մեջ խոր արմատ ձգած կազմակերպութիւն մը — այդ նպատակին ծառայելու համար զորաշարժի ենթարկած է իր ամբողջ ուժերը: Հայկական Բարեգործական Միութեանը, կեդրոնը ունենալով Ամերիկայի մեջ, արտասահմանի մեջ իր ըրած հանգանակութիւններով ներգաղթողներու ճամբորդութեան ծախքերը պիտի հոգա:

Փոքրամասնութեան ծոցին մեջ, վերջերս օտար թելադրութիւնով սկսած է շարժիլ հակասովետ «Դաշնակ» կուսակցութիւնը, որը օրաթերթ մը կ'հրատարակէ «Ազատ օր» անունով: Անշուշտ քաջութիւնը չունի բացի ի բաց ներգաղթի դեմ բրդեականտա ընելու, որովհետև այդ պարագային պիտի դիմագրավէ թշնամութիւնը ամենտուն:

Ան վշանա խառնակութիւն մը ստեղծել և հակազդեցիկ ձգտում մը մշակել հայոց մեջ և ալապիսով վնասել խորհրդային Հայաստանին: Երեակալական հատակագիծեր՝ որոնք դատապարտված են հատակագիծ մնալու միայն: Հայերը միշտ վիտսին իրենց երջանիկ ընկերակցական հայրենիքին մասին ու կսպասեն շոգենավերու, որ առնեն տանի գիրենք:

Պիտի մեկնին և իրենց ետին պիտի թողնէ արշունը իրենց զավակներուն, որ ուտեցն մեր ազատատենչ երկիրը: Պիտի մեկնին՝ իրենց հետ առանելով հուշերը այն գուրգուրանքին, զոր մեր երկիրը ցույց տվաւ իրեն հանրապ: Պիտի մեկնին՝ իրենց հետ առնելով պատվո յավագուն տիտղոսը իրենց մեծ պայքարներուն՝ տրոնք իրենց երկրին մեջ ոճիւր մը չեն, այլ հատկանիշը հերոսութեան, մեծութեան, արժանապատւութեան և մարդկութեան:

Հայացուց Ա.

(«Արաբե» թիւ 7, 1946 p.)

ՀԱՅ ԴԱՏԻՆ ՀԱՄԱՐ ԾԵՐԱԿՈՒՏԱԿԱՆ ՍՄԻՔԻ ԽՈՍՏՈՒՄԸ

Մերակուտական Ալեքսանդր Սմիթի օժանդակությամբ, Հայկական Դատի Ամերիկյան Հանձնախումբը և հարյուրավոր ամերիկացիներ, որոնք համակիր են Հայկական դատին, բացարձակ քվեով որոշում անցուցին՝ պահանջելով Հայկական դատի ներկայացումը Միացյալ Ազգերու Ժողովին: Որոշումը, որը ներկայացված էր սեպտեմբեր 25-ին, Նորթ Պրերիյն, Նեու Ճերզիի մեջ տեղի ունեցած հրապարակային ժողովի մը մեջ, ուղարկված է Միացյալ Ազգերու Ժողովին քարտուղար Թրյուպի Լիին:

Տեղական ալքառու ներկայացուցչական խումբը մը, Վեր. Ճոզեֆ. Ք. Թամսնի պըխավորությամբ, որը տեղական քաղաքային ժողովի նախագահն է, ներկա եղած էր այդ հրապարակային ժողովին: Վեր. Թամսնը նաև աստեղագետն է Նյու Ճերզիի Հայկական Դատի Ամերիկյան Հանձնախումբին:

Մերակուտական Սմիթ, հրապարակային ժողովին մեջ հայտարարեց, որ արդարությունը տիրապետելու է բռնության ուժին վրա: Պատերազմը պատճառներն են դորավոր պետություններու անսանձ կամքերուն և դավադրանքները տկար ազգերուն վրա:

«Մենք ձեզ հանդես երախտագիտական պարտք մը ունինք այն բանին համար, որ դուք դարերով, այնքան քաջարար կռիւցար հանուն արդարության, ըստ ան հայերուն: Աշխարհի հանուր ճնշված ազգերու շարքին, հայերն ու հրեաները նկատառության առաջին տեղերը կգրավին: Այս ժողովուրդները անհաշիվ դարերով ու տարիներով տառապած, հալածված ու չարաշարված են իրենց հավաքքին և դադարաւորներուն համար: Անձամբ մեր նախագահին հետ խոսած եմ հրեա ժողովուրդին համար և պիտի շարունակեմ: Այս պահուն սակայն ձայնս պիտի բարձրացնեմ և պիտի պահանջեմ արդարություն հայ ժողովուրդին համար, որը եղած է թափառական աշխարհի չորս անկյունները:

«Անոնք, իրենց հայրենի բնագավառներին քվիւցան, որովհետև անոնք բռնած էին Դաշնակիցներուն կողմը՝ նախորդ համաշխարհային պատերազմի ընթացքին: Անոնց տրված օժանդակությունը ճանչցված էր բոլոր

ազգերուն կողմէ, և անոնք իրավունք ստացած էին կազմելու սեփական և անկախ պետություն: Մեծ և անմահ Վիլսոնն էր անոնց դատի ախորժանը: Ան նշանակված էր նախկին Ազգերու Լիկայի կողմէն ճշտելու Հայաստանի սահմանները: Անոր վճիռը ընդունված էր բոլոր ազգերուն, նույնիսկ Թուրքիոյ կողմէն:

«Ահա այս Վիլսոնյան Հայաստանն է, որ հիմա կպահանջեն հայերը, որովհետև իրենց ցեղակիցները դեռ կմնան թափառական բազմաթիվ երկրներու մեջ, երբ իրենց հայրենիքը, իրենց բնագավառներն ու տունները դեռ կմնան թրջական տիրապետության ներքև: Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքին ևս, հայերը ինքզինքնին հայտնաբերեցին իրենց ցուցադրած զոհաբերություններով միջազգային ընդհանուր հաղթանակներուն համար: Մոտավորապես վեա միլիոն հայ մարտիկներ կային Միացյալ Ազգերու բանակներուն մեջ: Մերժել այս ժողովուրդի արդարացի պահանջները, կնշանակե ինքնին ժխտել, ինքնին ուրանալ ճշմարտությունն ու արդարությունը: Հայ ժողովուրդը ամբողջությամբ ոտքի կանգնելու և պահանջելու է, որ Հայկական դատը իրավացի և օրինական ունենալով իրենց պատեհությունը մը ունենա Միացյալ ազգաց ժողովներուն մեջ: Ասիկա անշուշտ փորձ մը պիտի ըլլա մեր կամեցողության և վստահելիության: Հայկական դատը այսօր կանգնած է հանուր աշխարհին դիմաց»:

Ժողովին խոսեցավ և Հայկական դատը պաշտպանեց նաև Յուճիս Լոռա, Նյու Ճերզիի նախկին կառավարիչ Հերի Ա. Մուրի ներկայացուցիչը, ավելցնելով, որ «Ամերիկայի մեջ, ամեն դատողության տեղ մարդ թե չիլն» պիտի համակրի և օժանդակե հայերուն, որ իրենց դատը լսելի դառնա Միացյալ Ազգերու Ժողովին մեջ:

«Փեթրըսըն Իվինկ Նյուզ»

Թարգմ. Ա. ՇԱՄԼՅԱՆ

(«Ներս. Հայաստան», հոկտ. 22, 1946 թ.)





ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ



այլական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիան, որը կազմակերպվել է Հայրենական պատերազմի ծանր օրերին՝ 1943 թվին, բոլորեց իր գոյության երեք տարին:

Գիտությունների Ակադեմիայի կազմակերպումը Հայաստանում խոշոր կուլտուրական երևույթ էր ռեսպուբլիկայի ինտելիգենցիայի ու ամբողջ աշխատավորության կյանքում:

Հունվարի 15-ին բացվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի ընդհանուր ժողովը: Հունվարի 16-ին ընդհանուր ժողովը լսեց և քննեց Ակադեմիայի նախագահության հաշվետվությունը անցած երեք տարվա ընթացքում կատարած գիտական աշխատանքների հիմնական արդյունքների մասին և զեկուցում 1947 թվի գիտա-հետազոտական աշխատանքների ծրագրի մասին:

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիան այդ երեք տարիների ընթացքում, որից մոտ մեկ ու կես տարին անցավ պատերազմական պայմաններում, վերածվեց մի լուրջ և խոշոր գիտական հաստատության և իր շուրջը համախմբելով Հայաստանի գիտնականներին դարձավ ռեսպուբլիկայի գիտության վեներոնը:

Ներկայումս Գիտությունների Ակադեմիայի կազմում կան 15 ինստիտուտ, 5 ինքնուրույն սեկտոր և 10 դասազան այլ գիտա-հետազոտական հիմնարկներ, ընդամենը 30 գիտա-հետազոտական ինստիտուտ և հաստատություն: Այդ ինստիտուտներում ու հաստատություններում աշխատում են Գիտությունների Ակադեմիայի 22 իսկական անդամ և 16 թղթակից-անդամ, 46 գիտության դոկտոր-պրոֆեսոր, 250 գիտության թեկնածու ու ավագ գիտաշխատող և մոտ 300 կրտսեր գիտական աշխատողներ: Ակա-

դեմիայի տարբեր ինստիտուտներում պատրաստվում է 100-ից ավելի ասպիրանտ: Զգալիորեն ընդարձակվել ու ամրապնդվել է գիտական հաստատությունների էքսպերիմենտալ և գիտա-տեխնիկական բազան: Ակադեմիայի գրադարանների գրքերի ֆոնդը գրեթե եռապատկվել է, անցնելով մեկ միլիոն հատորից: Ակադեմիայի գրադարանները փաստեմատիկ կերպով ստանում են ոչ միայն Սովետական Միության մեջ լույս ընծայվող գիտական գրականությունը, այլ և արտասահմանյան կարևոր գիտական հրատարակությունները:

Մինչև Ակադեմիայի կազմակերպումը Հայաստանում անբավարար վիճակում էին գտնվում ֆիզիկո-մաթեմատիկական և տեխնիկական գիտությունները: Երեք տարվա կարճ ժամանակամիջոցում գիտության այդ ճյուղերը ուժեղացվեցին և այսօր նրանք առաջատար տեղ են գրավում Ակադեմիայի սխառնում: Մեծ ուշադրություն է դարձվում ֆիզիկայի, տեսական ու էկրանական մեխանիկայի, մաթեմատիկայի և տեսական աստրոֆիզիկայի զարգացմանը: Այդ ուղղությամբ ձեռք են բերվել զգալի նվաճումներ:

Այդ նվաճումների թվին են պատկանում առաջին հերթին մեր Ակադեմիայի իսկական անդամներ Արիսանյան եղբայրների և նրանց ղեկավարությամբ աշխատող ֆիզիկոսների կատարած հայտնաբերությունները:

Լայն ծավալ են ստացել աստրոֆիզիկայի և աստղագիտության բնագավառում տարվող գիտական հետազոտությունները, որ ղեկավարում է Սովետական Միության խոշորագույն աստրոֆիզիկոսներից մեկը՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Վ. Համբարձումյանը:

Դրական լուրջ արդյունքների է հասել մաթեմատիկայի սեկտորի ղեկավար՝ Հայկա-


կան ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Շահինյանը ֆունկցիաների կոնստրուկտիվ տեսության հարցերի մշակման ուղղությամբ:

Նույնը պետք է ասել տեխնիկական գիտությունների՝ էլեկտրատեխնիկայի, հիդրոէներգիայի, կառուցողական տեխնիկայի բնագավառում կատարվող արդյունավետ աշխատանքի մասին:

Աչքի ընկնող նվաճումներ են ձեռք բերվել գյուղատնտեսական գիտությունների և բիոլոգիական գիտությունների բաժանմունքների դրծով, որոնք ղեկավարում են մեր Ակադեմիայի իսկական անդամներ Մ. Թումանյանը, Խ. Կոշտոյանցը և Վ. Գյուլբանյանը:

Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի սիստեմում ծանրակշիռ տեղ են գրավում հասարակական գիտությունները: Հայ ականավոր գիտնական պատմաբանները, լեզվագետները և գրականագետները Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ Հ. Օրբելին, Հ. Մանանդյանը, Ստ. Մալխասյանը, Գ. Ղափանցանը, Հ. Աճառանը, Ա. Տերտերյանը, Ակադեմիայի թղթակից-անդամ ու Ստալինյան լաուրեատ Բ. Պիոտրովսկին, դոկտոր-պրոֆեսորներ Լ. Մելիքսեթ-Քեկը, Ա. Ղարիբյանը, Վ. Չալոյանը և ուրիշ շատերը այս տարիների ընթացքում կատարեցին հայագիտության, լեզվաբանության, գրականագիտության բնագավառներում մի շարք լուրջ հետազոտություններ և հրատարակեցին մի շարք կապիտալ աշխատություններ, ինչպես օրինակ Հ. Մանանդյանի «Քրեական տեսություն հայ ժողովրդի պատմության», Գ. Ղափանցյանի «Հայ ժողովրդի ծագումը» և «Հայ լեզ-

վի ծագումը», Ստ. Մալխասյանի «Հայերենի բացատրական բառարան»-ը, Բ. Պիոտրովսկիի «Ուրարտուի պատմությունը», Ա. Ղարիբյանի, Ե. Տեր-Մինասյանի, և Մ. Գևորգյանի «Ռուս-հայերեն համառոտ բառարան»-ը, Վ. Չալոյանի «Դավիթ Անհաղթ»-ը և այլն:



Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի շենքը:

Ակադեմիայում կատարվող գիտական աշխատանքի բարձր մակարդակի առկայության մասին է խոսում այն փաստը, որ անցյալ տարի Ակադեմիայի իսկական անդամներ Ստ. Մալխասյանի, Վ. Համբարձումյանի և

թղթակից-անդամ Բ. Պիտոբյուկյանի աշխատությունները արժանացան բարձր պարգևի՝ Ստալինյան մրցանակի:

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայում ծավալուն գիտական, ստեղծագործական բեղմնավոր աշխատանք կատարելու համար պարտիան և կառավարությունը ըստեղծել են բոլոր հնարավորությունները:

Հունվարի 16-ին Ակադեմիայի ընդհանուր ժողովում նախագահության հաշվետու զեկուցումով հանդես գալով, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանն ասաց. «Երեք տարի առաջ, ընկեր Ստալինի անմիջական ցուցումով ստեղծվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիան: Այդ ամբողջ ժամանակամիջոցում Հայաստանի Կ(Բ)Պ Կենտկոմի և ռեսպուբլիկայի Մինիստրների Սովետի ամենօրյա օգնությամբ երկատասարդ Ակադեմիան ամրապնդվեց ու ընդլայնվեց:

Այս համառոտակի բնութագրելով Ակադեմիայի անցած երեք տարվա ուղին, նա կանգ առավ ինստիտուտների 1946 թվի կատարած աշխատանքների և 1947 թվի գիտական աշխատանքների պլանի վրա: Նա նշեց, որ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիան կարճ ժամանակամիջոցում դարձել է Սովետական Միության խոշոր գիտական հիմնարկություններից մեկը, իսկ նրա բուջեն 1944 թվի համեմատությամբ աճել է երեք անգամ:

Հունվարի 16-ի ընդհանուր ժողովում գաղտնի քվեարկությամբ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ միաձայն ընտրվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Վիկտոր Համազասպի Համբարձումյանը: Վիցե-պրեզիդենտ ընտրվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Վ. Գյուլբանյանը: Ակադեմիայի նախագահության կազմի մեջ ընտրվեցին Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ Ի. Նդիազարյանը, Հ. Բուսիսյանը, Մ. Թումանյանը, Գ. Ղափանցյանը, Ս. Կարապետյանը, Ա. Ալիխանյանը:

Բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարներ ընտրվեցին՝ ֆիզիկո-մաթեմատիկական, բնագիտական և տեխնիկական գիտությունների գծով Ի. Նդիազարյանը, բիոլոգիական գիտությունների գծով Հ. Բուսիսյանը, գյուղատնտեսական գիտությունների գծով Մ. Թումանյանը և հասարակական գիտությունների գծով Գ. Ղափանցյանը: Նախագահության գիտնական քարտուղար ընտրվեց Գ. Պետրոսյանը:

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի նորընտիր պրեզիդենտ Վիկտոր Համազասպի Համբարձումյանը ծնվել է 1908 թվին Թիֆլիսում, գրող-մանկավարժի ընտանիքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Թիֆլիսում: Քսան տարեկան հասակում գերազանց զնահատականով ավարտել է Լենինգրադի համալսարանի ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետը, իսկ այնուհետև Պոլկովոյի աստղագիտարանում տաղանդավոր պատանին իր գիտելիքները համարել է ուսուցչական պատրաստություն ունեցող: Ա. Բելոպոլսկու ղեկավարությամբ:

1931 թվին 23-ամյա Համբարձումյանը Սովետական Միության մեջ առաջին անգամ տեսական աստղագիտության դասընթաց է կարդում Լենինգրադի համալսարանում: Քսանհինգ տարեկան հասակում Համբարձումյանը պրոֆեսորի կոչում է ստանում, իսկ մեկ տարի անց ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Լենինգրադի համալսարանում աստղագիտության ամբիոնի կազմակերպման օրից նա դառնում է այդ ամբիոնի վարիչը: Վ. Համբարձումյանի աշխատությունները նվիրված են աստղաբաշխության և աստղագիտության հարցերի լայն շրջանին և նրա համար մեծ հռչակ են ձեռք բերել ինչպես Միության մեջ, այնպես էլ արտասահմանում: 1939 թվին Համբարձումյանը ընտրվում է Սովետական Միության Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ: 1943 թվից նա Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ է և նրա վիցե-պրեզիդենտը, միաժամանակ հանդիսանալով Լենինգրադի և Երևանի Պետական համալսարանների պրոֆեսոր:

Վ. Համբարձումյանը սովետական առաջավոր գիտության փայլուն ներկայացուցիչ է: Նրա աշխատություններից յուրաքանչյուրը առաջարկում է նոր խոսք է հանդիսանում հետազոտվող բնագավառում:

Հայրենական մեծ պատերազմի առաջին տարիներին Վ. Համբարձումյանը լինելով Լենինգրադի համալսարանի ռեկտորի տեղակալը գիտա-հետազոտական աշխատանքի գծով, մյուսների հետ միասին էվակուացվում է Նյաբուգա (Թաթարական ԱՍՍՌ): Այստեղ նա ղեկավարում էր դիտա-տեխնիկական մեծ աշխատանքներ, որոնք տեխնիկական ուղղությամբ աշխատանքների նշանակությունը: Այդ աշխատանքները հաջողությամբ ավարտվեցին և Համբարձումյանը հանդիսացավ պոլոդի միջավայրում լույսի առաքածանի նոր տեսության ստեղծողը: Պոլոդի միջավայրում լույսի տալ

րածման հաշվարկման նոր եղանակը», «Մոլորակների մթնոլորտների միջոցով լույսի տարածման մասին», «Պոտոր միջավայրում լույսի դիֆուզային արտացոլման» հարցի շուրջը աշխատությունները, որոնք հրատարակված են 1942—1944 թվերին, արժանացան Ստալինյան երկրորդ աստիճանի մրցանակի:

Վ. Համբարձումյանը կարողացավ լույսի տարածման ասպարեզում գտնել պրոբլեմների նոր, պարզ և օրինակելի լուծում, որոնք մինչ այդ համարվում էին անլուծելի: Համբարձումյանի ստացած արդյունքները բացառիկ մեծ գիտատեսական և գործնական նշանակություն ունեն, որովհետև վերաբերում են տեսանելիության պոլարիզմի միջավայրում, ինչպիսիք հանդիսանում են երկրի մթնոլորտը, ծովի ջուրը և այլն:

Սա է Վ. Համբարձումյանի լուրջ ավանդը սովետական գիտության մեջ: Նա շատ քանի է ուրիշ դեռ Սովետական Հայաստանում ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների զարգացման համար, մեծ աշխատանք է կատարում Հայկական երիտասարդ Ակադեմիայի գիտական հիմքը ընդլայնելու համար:

Վ. Համբարձումյանի գործին են պատկանում ավելի քան միսյուն գիտական աշխատություններ աստղաֆիզիկայի և աստղաբանության հարցերի շուրջը: Առանձնապես շատ աշխատություններ նվիրված են աստղադին դինամիկային և աստղերի ստատիստիկային:

Սովետական կառավարությունը, բառով քնահատելով երիտասարդ գիտնականի մատուցած ծառայությունները, պարգևատրել է նրան Լենինի և Աշխատանքային Կոմիտեի Դոկտի շքանշաններով: Վ. Համբարձումյանը ՀամԿ(բ)Պ անդամ է. նա Հայկական ՍՍՏ Գեոագրաֆիկ Սովետի դեպուտատ է:

Սովետական իշխանությունը Համբարձումյանի առաջ լայնորեն բառ արեց ուսումնական հաստատությունների և գիտական հիմնադրությունների դռները, բոլոր աշխատանքներն ստեղծեց, որ տոտոնոսովոր պատանուց դուրս գալ համալսարանին առանձինքն առաջնակարգ գիտնական:

Հունվարի 13-ին և 14-ին, նախքան ընդհանուր ժողովը, տեղի ունեցան Հայկական ՍՍՏ Գիտությունների Ակադեմիայի բաժանմունքների գիտական սեսիաները, որտեղ ամփոփվեցին երեք տարվա աշխատանքի արդյունքները:

Ֆիզիկո-մաթեմատիկական, բնական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի սեսիայում Հայկական ՍՍՏ Գիտություն-

ների Ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Նազարովը հաղորդում արեց կառուցվածքների սեյսմոկալիստության կապերի մասին հետազոտության պրոբլեմի ներկա միճակի մասին:

Մեծ հետաքրքրություն ներկայացրեց տեխնիկական գիտությունների թեկնածու Գրիգորյանի զեկուցումը բնակելի տների կամարածե ծածկերի նոր տիպի մասին տեղական շինանյութերից: Կամարածե ծածկերը գործնական մեծ հետաքրքրություն են ներկայացնում, որովհետև շինանյութի փայտեղենի, երկաթի, ցեմենտի և այլ նյութերի մեծ խնայողություն են տալիս:

Բաժանմունքը լսեց ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների թեկնածու Մ. Զըրբաշյանի զեկուցումը «Անսահմանափակ մարզերում պոլինոմների փոփոխության մասին»: Այդ զեկուցումը հանդիսացավ Ակադեմիայի մաթեմատիկական սեկտորում կատարվող հետազոտության բնագավառը աշխատանքի վկայություն:

Սեանի էրապեդիկայի արդյունքների մասին զեկուցեց ավագ գիտական աշխատակից Բ. Բեկ-Մարմարյանը: Պրոֆեսոր Դավթյանը պատմեց էլեկտրոլիտի լուծույթների մի քանի հատկությունների ուսումնասիրման ասպարեզում իր կատարած, աշխատանքների արդյունքների մասին:

Սեանի լսեց Հայկական ՍՍՏ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ի. Եղիազարյանի հաշվետու զեկուցումը՝ բաժանմունքի երեք տարվա աշխատանքի մասին: Զեկուցողը նշեց, որ բաժանմունքի գիտական հաստատությունները մեծ աշխատանք են կատարել և դա նշանակալից չափով առաջ է մղել ֆիզիկո-տեխնիկական գիտությունների զարգացումը Հայաստանում:

Գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի սեսիայում լսվեց Հայկական ՍՍՏ Գիտությունների Ակադեմիայի թրթուկից-անդամ Ա. Մաղաքյանի զեկուցումը՝ «Մոտավայրերի կատեգորիան որոշելու նոր մեթոդը»:

Զեկուցողը պատմեց արտադրության շրջանի համար իր մշակած նոր աղյուսակի մասին, որը կարող է կիրառվել ոչ միայն Կովկասում, այլ և ՍՍՏՄ մյուս լեռնային մարզերում:

Բնական գիտությունների դոկտոր Ա. Տեր-Կարապետյանը զեկուցեց «Բիոկատալիզատորների դերը անասունների կուսման» թեմայի շուրջը: Զեկուցողն առանձնապես նշեց բիոկատալիզատորների կիրառման նշանակությունը գյուղատնտեսական անասունների կերակրման ժամանակ

կերբերի յուրացումը և մարտողութիւնը, ինչպէս նաև անասունների մթերատվութիւնը և թռչնավորութիւնը բարձրացնելու նպատակով:

Սեսիայի աշխատանքի վերջում գյուղատնտեսական գիտութիւնների բաժանմունքի նախագահ, Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի իսկական անդամ Մ. Թումանյանը ընթարձակ զեկուցում տվեց բաժանմունքի ինտիտուտների ու սեկտորների եռամյա գործունեության մասին:

Հասարակական գիտութիւնների բաժանմունքի սեսիայում պատմական գիտութիւնների թեկնածու Ա. Հարութիւնյանը հանդես եկավ «Ընկեր Ստալինի ուսմունքը տոյգիստական գիտակցության, ուսուցիչն տեսութեան և քաղաքական պարտիայի մասին» զեկուցումով:

Սեսիայում լսվեցին Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի թղթակից-անդամ Լ. Մելիքսեթ-Բեկի «Նոր նյութեր և Արքայանի մասին», Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի իսկական անդամ Ա. Տերտերյանի «Շիրմանդան և մեր օրերը», բանասիրական գիտութիւնների թեկ-

նածու Գ. Սևակի «Սովետահայ պատմագիտի լեզուն», պատմական գիտութիւնների թեկնածու Կ. Ղափաղարյանի «Դվինի 1946 թվի հնագիտական պեղումները» զեկուցումները:

Բաժանմունքի աշխատանքի մասին հաշվետւութեամբ հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի իսկական անդամ Գ. Ղափանցյանը:

Բիոլոգիական գիտութիւնների բաժանմունքի սեսիայի նիստում լսվեց բիոլոգիական գիտութիւնների թեկնածու Ա. Յաքենկո-Խմելեակու զեկուցումը «Տեսակի և ընտանիքի նշաններ փայտանյութի կառուցվածքի մեջ»:

Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի իսկական անդամ Վ. Գուլբանյանը զեկուցեց ցորենի այլ տեսակների հետ հիբրիդացիայի ժամանակ Timopheev-ի ժանժանդակայնութեան մասին: Նաև հաշվետու զեկուցում տվեց բաժանմունքի աշխատանքի մասին:

Բաժանմունքների սեսիաներում լսված բոլոր զեկուցումները մտքերի աշխույժ փոխանակութեան առաջ բերեցին:

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՆ

19-րդ դարու համարյա մեր բոլոր երաժշտական գործիչները երազել են հայկական կոնսերվատորիա, երաժշտական դըպրոցներ ստեղծելու մասին: Սակայն Կոմիտասի ու մյուս երաժիշտների երազն իրականացել է միայն սովետական կարգերում:

Կոմիտասի անվան Երևանի կոնսերվատորիան իր գոյութեան ընթացքում արդեն բաց է թողել 16-րդ շրջանավարտները: Կոնսերվատորիան, իր հիմնադրման օրից, արդեն ավարտել են 116 մարդ: Ավարտողների մեջ կան օպերային ու կամերային երգիչ-

ներ, օրկեստրանտներ, դաշնակահարներ, ջութակահարներ, կոմպոզիտորներ, դիրիժորներ, երաժշտագետներ, երաժիշտ-մանկավարժներ և այլն:

Կոմիտասի անվան Երևանի կոնսերվատորիան վերածվել է բարձրագույն ուսհիմնարկի, բազմաթիվ կաֆեդրաներով, մի քանի տասնյակ երաժիշտ-մանկավարժներով, հարյուրավոր ուսանողներով և իր արժանավոր տեղն է գրավում Սովետական Միության երաժշտական բարձրագույն ուսհիմնարկների շարքում:

ՆՈՐ ՕՊԵՐԱՆԵՐ

Արվեստի վաստակավոր գործիչ կոմպոզիտոր Հարո Ստեփանյանն ավարտել է իր հինգ գործողութեամբ «Նունե» օպերան: Օպերայի լիբրետտոն կազմել են պրոֆեսոր Ա. Ադամյանը և ժողովրդական արտիստ Վ. Վաղարշյանը:

Արվեստի վաստակավոր գործիչ կոմպոզիտոր Կ. Զաքարյանն ավարտել է իր աշխատանքը «Աղասի» օպերայի վրա, գրված ըստ Խ. Աբովյանի «Վերջ Հայաստանի» վեպի:

Կոմպոզիտոր Ա. Հովհաննիսյանը գրել է երեք գործողութեամբ «Պեպո» օպերան ըստ Սունդուկյանի:

Արվեստի վաստակավոր գործիչ կոմպոզիտոր Ա. Տեր-Ղևոնդյանը աշխատում է ժամանակակից թեմատիկայով մանկական օպերայի վրա, որի լիբրետտոն գրում է դրամատուրգ Լ. Սաղաթելյանը:

Կոմպոզիտոր Աշոտ Սաթյանը գրում է Հայրենական պատերազմի թեմայով օպերա:

ԿՈՄՊՈԶԻՏՈՐ ԵՐՎԱՆԴ ՍԱՐԴԱՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՍԵՐԳ

Հունվարի 10-ին Հայֆիլհարմոնիայի համերգային դահլիճում տեղի ունեցավ համերգ՝ նվիրված կոմպոզիտոր Երվանդ Սարգսյանի ստեղծագործական և երաժշտամանկավարժական գործունեության 35-ամյակին։

Կոմպոզիտորի կյանքի և ստեղծագործության մասին իր ներածական խոսքում արվեստի վաստակավոր գործիչ Ս. Գասպարյանն ասաց. — Սարգսյանը 35 տարի է աշխատում է որպես կոմպոզիտոր-մանկավարժ։ Նրա ստեղծագործություններից հայտնի են «Օրոր նաղիկին», «Լուսնակն անուշ», «Նունուֆար», «Ձգեցիր զիս քո տուն», «Դրեկ յաման» և այլ բազմաթիվ երգեր։

Սարգսյանը Հայրենական պատերազմի տարիներին տվել է մի շարք մարտական երգեր, ինչպես օրինակ «Հայրենիքն է կանչում», «Ողջուն քեզ, Մոսկվա», «Նրդում», «Նամակ», «Սրբազան պատերազմ» և այլ երգեր։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի սովետական կոմպոզիտորների երաժշտագիտական և քննադատական սեկցիան վերանայելով իր աշխատանքների ծրագիրը՝ լրացրեց նոր ու ակտուալ թեմաներով։ Երագրում նախատեսված են արդիական թեմաներ, ինչպես օրինակ «Սովետահայ կոմպոզիտորների վեկալ լիրիկան և նրա զարգացման հետագա խնդիրները», «Սիմֆոնիկ ստեղծագործությունների զարգացման ուղիները և սովետական սիմֆոնիայի արդի պրոբլեմը», «Ժողովրդայնության պրոբլեմը սովետահայ կոմպոզիտորների ստեղծագործությունների մեջ», «Ժամանակակից թեմատիկան սովետահայ կոմպոզիտորների ստեղծագործությունների մեջ» և այլն։

Բացի վերոհիշյալ ընդհանուր թեմաներից, ծրագրում նախատեսված է հեղինակների առանձին ստեղծագործությունների քննարկումը։

Օրերս ստեղծագործական սեկցիայում քննության առնելով երիտասարդ կոմպոզի-

Սարգսյանը գրել է նաև մանկական օպերաներ. հիշատակության արժանի է «Պաշտ աղվեսը»։

Ստեղծագործություններին զուգընթաց Սարգսյանը ղեկավարել է մեծահասակների և մանկական երգեցիկ խմբեր ու բազմաթիվ համերգներ կազմակերպել Մոսկվայում, Անդրկովկասի քաղաքներում և արտասահմանում։

Ներածական խոսքից հետո տեղի ունեցավ համերգ, որի երկրորդ բաժնում ելույթ ունեցավ Ռադիոկոմիտեի ժողովրդական գործիքների անսամբլը ռեսպոնդիկայի վաստակավոր արտիստ Ա. Մերանդովյանի ղեկավարությամբ։

Համերգի վերջում ելույթ ունեցավ Ուսուցչի տան երգեցիկ խումբը, որը ղեկավարում էր արվեստի վաստակավոր գործիչ Մ. Մազմանյանը։ Խումբը կատարեց «Նոր օրորոցային», «Շուշան աղջիկ», «Աշուն» և «Սրբազան պատերազմ» խմբական երգերը։

տորներ Ա. Հարությունյանի, Ա. Բաբաջանյանի, Է. Միրզոյանի պոլիֆոնիկ ոճով գրված դաշնամուրային սոնատաները, որտեղ նշվեցին նրանց ստեղծագործությունների հաջողություններն ու թերությունները։

Վերջին ստեղծագործությունները ցույց տվին, որ վերահիշյալ երեք կոմպոզիտորների ստեղծագործական գործուղումը Մոսկվա տվել է իր դրական արդյունքները թե տեխնիկական և թե էմոցիոնալ հագեցվածության տեսակետից։

Նույն սեկցիայում քննարկվեցին կոմպոզիտոր Զ. Կիրակոսյանի ջութակի համար գրված ստեղծագործությունները։ Ելույթ ունեցողները նշեցին Կիրակոսյանի ստեղծագործական հաջողությունները հատկապես ջութակի բնագավառում. նշվեց, որ նրա այդ ստեղծագործություններն իրենապես հագեցված են և դրանց մեջ մեծ տեղ ունեն ժողովրդական երաժշտության հարուստ ինտոնացիաները։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՏԱՆԸ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Արվեստի գործերի վարչության Ժողովրդական ստեղծագործության տունը կազմակերպել է Գեղարվեստական խորհուրդ, որը սխատեմատիկ կերպով քննության է

առնում հայ գուսանների վերջին շրջանի ստեղծագործությունները։

Գեղարվեստական խորհուրդը հատկապես ընտրում է սովետական դարաշրջանի ար-

տահայտող գաղափարապես հագեցված ու արվեստով գրված երգեր:

Գեղարվեստական խորհուրդը քննության առավ գուսան Իգիթի Հայրենական պատե-

րազմի օրերին և դրանից հետո գրված ստեղծագործությունները և ընտրեց ու հաստատեց նրա մի շարք լավագույն գործերը:

ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒՄ Ա. ՈՒՐԱՐՏՈՒԻ ԱՐՎԵՍՏԱՆՈՑՈՒՄ

Քանդակագործուհի Ալծեմիկ Ուրարտուն ավարտել է ժողովրդական նկարիչ Մ. Սարյանի և ՍՍՌՄ ժողովրդական արտիստուհի Հ. Դանիելյանի քանդակագործական պորտրետները: Բացի վերոհիշյալներից, Երևանի Քաղսովետի գործկոմի պատվերով ընկ. Ուրարտուն պատրաստել է հայ մեծանուն կոմպոզիտոր Ալ. Սպենդիարովի արձանի էսքիզ-մոդելը, որը պատրաստված է նստած

դիրքով: Արձանի բարձրությունը պատվանդանի հետ լինելու է վեց և կես մետր և այն դրվելու է Ալ. Սպենդիարովի անվան կենդինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական թատրոնի հրապարակում:

Ուրարտուն այժմ աշխատում է մի նոր կոմպոզիցիոն պորտրետի վրա՝ ճշակական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ Ավ. Իսահայանը գրողների շրջանում:

ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ Գ. ԱՆԱՐՈՆՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Վերջերս արտասահմանից հայրենիք վերադարձած քանդակագործ Գրիգոր Ահարոնյանը աշխատում է ռեսպուբլիկայի նշանա-

վոր մարդկանց կերպարների և ինդուստրիալ թեմայով մի բազմաֆիգուրային կոմպոզիցիայի քանդակման վրա:

ՋԻՆԱԿԱՆ ԳՐՈՂ Պ-ՐՆ ՄԱՌ-ԴՈՒՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հունվարի 29-ին Երևան ժամանեց չինական հայտնի գրող պ-րն Մաո-Դունը իր կնոջ հետ: Կայարանում պ-րն Մաո-Դունին դիմավորեցին արտասահմանի հետ կապի Հայկական ընկերության վարչության նախագահ ընկ. Լ. Քալանթարը, նախագահի տեղակալ ընկ. Զ. Բաշինշաղյանը, Հայաստանի Գրողների Միության պատասխանատու քարտուղար ընկ. Միրասը և ուրիշները:

Երևանում գտնված ժամանակամիջոցում պ-րն Մաո-Դունը ծանոթացավ Երևանի տեսարժան վայրերի հետ: Պ-րն Մաո-Դունը իր կնոջ հետ այցելեց Մյասնիկյանի անվան Հանրային գրադարանը, Հայ տպագիր գրքի ցուցահանդեսը, հայ ձեռագրերի Մատենադարանը, Վ. Մ. Մուրումյանի անվան Պետական համալսարանը, Կրուպսկայայի անվան իգական միջնակարգ դպրոցը, Կերպարվեստի թանգարանը, Պատմական և Գրական թանգարանները, Արեղյանի անվան գրականության ինստիտուտը և Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Խաղողագործության ու Գինեգործության գիտահետազոտական ինստիտուտը, ինչպես նաև քաղաքի Կիրովյան ռաբոնի մանկամուտը:

Պ-րն Մաո-Դունը իր կնոջ հետ ներկա էին Սովետական Միության Հեղուս, Բանակի գեներալ Ի. Ք. Բաղդասյանի հանդիպմանը Երևան քաղաքի աշխատավորության հետ: Նրանք դիտեցին «Երկիր հայրենի» ներկայացումը Սոնդրովյանի անվան Հայկական դրամատիկական թատրոնում, «Խանդուկ»

բալետը Սպենդիարովի անվան օպերայի և բալետի թատրոնում: Հյուրերն այցելեցին նաև Երևանի կինոստուդիան, ծանոթացան ստուդիայի աշխատանքներին և դիտեցին «Հայրենի երկիր», «Հայ եկեղեցու ժողովը» ֆիլմերը և արտասահմանյան հայերի հայրենիք վերադառնալու կինոնկարը:

Պ-րն Մաո-Դունը զրույց ունեցավ Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստր Գ. Աղբալյանի և Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանի հետ:

Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերությունը կազմակերպեց պ-րն Մաո-Դունի հանդիպումն ու զրույցը ընկերության Գրական սեկցիայի բյուրոյի անդամների հետ:

Պ-րն Մաո-Դունի մեկնելուց առաջ արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության վարչության նախագահ ընկ. Լ. Քալանթարը ընդունելություն կազմակերպեց ի պատիվ պ-րն Մաո-Դունի և նրա կնոջ: Ընդունելությանը ներկա էին Հայկական ՍՍՌ գիտության, գրականության և արվեստի գործիչները:

Փետրվարի 2-ին պ-րն Մաո-Դունը իր կնոջ հետ մեկնեց Մոսկվա: Կայարանում պ-րն Մաո-Դունին ուղևորեցին արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության պատասխանատու աշխատողները և գրողները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎԻ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Հայկական Պետական կենտրոնական արխիվը պատրաստում է ուղեցույց-տեղեկատու արխիվում եղած փաստաթղթերի համառոտ բովանդակությամբ:

Ուղեցույցը կօժանդակի հիմնարկներին, ինչպես և առանձին քաղաքացիներին, արխիվային փաստաթղթերի օգտագործման հիման վրա, մոնոգրաֆիաներ, գիտական հոդ-

վածներ կազմելու, Հայաստանի պատմությունը ուսումնասիրելու, արխիվային փաստաթղթերը ցուցահանդեսներում տրվես ներմուշներ օգտագործելու և այլն:

Ներկայումս արխիվում աշխատանքներ են տարվում ուղեցույցը վերջնականապես խմբագրելու, համեմատելու և ըստ սկզբնաղբյուրների նյութերը ճշտելու ուղղությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒԽՈՋՆԵՐԻ ԷԼԵԿՏՐԻՖԻԿԱՑԻԱՆ

Մեծ աշխատանք է տարվում Հայաստանում կոլխոզների էլեկտրիֆիկացման գծով: Միայն Արտաշատի շրջանում 44 գյուղատնտեսական արտեյներին 37-ը էլեկտրիֆիկացված են: Ներկայումս Հայաստանում էլեկտրոէներգիայից օգտվում են 240 կոլխոզ:

ՀՍՍՐ Տեղական արդյունաբերության միախառնության Գյուղագործիքների գործարանը յուրացրել է պարզ կառուցվածքով փոքր հիդրոէլեկտրակայանների, 19 կիլովատտ կարողությամբ, թողարկումը: Գլխավորապես գյուղական վայրերի համար նախատեսված այդ էլեկտրակայանները սպասարկող անձնա-

կազմի կարիք չեն գտնում և աշխատացնելու համար պահանջում են նույնքան ջուր, որքան սովորական գյուղական ջրաղացները:

Գյուղական վայրերի էլեկտրիֆիկացիան լայն ծավալ է ընդունելու հետպատերազմյան հնգամյակում. ռեսպուբլիկայում կառուցվելու են 60-ից ավելի միջին ու փոքր էլեկտրակայաններ, տրոնք ապահովելու են 200 կոլխոզների էլեկտրաէներգիայով: Վերջերս գործող էլեկտրակայանների շարքը մտավ նոր կառուցվող կայաններից մեկը՝ Քյավառգէսը:

ԱՐԱՋԴԱՅԱՆԻ ՃԱՆՃՈՒՏՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Ավելի քան 6000 հեկտար տարածություն է կազմում Արազդալանի տափաստանը: Այդ հսկայական տարածությունը դարեր շարունակ մնացել է անօգտագործելի:

Նոր հնգամյակում հիմնովին կփոխվի Արարատյան դաշտի այդ մասի դեմքը և: Արդեն սկսված են ճահճուտների ցամաքեցման աշխատանքները: Փորվում են առաջին հորերը: Ցամաքեցումը կատարվում է կալի-

ֆորնյան մեթոդով: Ոռոգումը կատարվելու է Արաքսի, ինչպես նաև սեփական կալիֆորնյան հորերի ջրերի միջոցով:

Արազդալանի տափաստանի օգտագործման պրոբլեմը լուծելուց հսկայական չափով կաճի ու կապրդաճառ ռեսպուբլիկայի խաղողագործությունը, պտղաբուծությունը, բամբակագործությունը և այլ կոպտուրաների մշակությունը:





ԳԱՂՈՒԹԱՅԱՑ ԿՅԱՆՔ

ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԱԶԱՐ ԲԱՐԵՎ, ՀԱԶԱՐ ԱՐԵՎ

Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ 26-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ



այաստանի խորհրդայնացման բոլոր տարեդարձներուն բմենն շքեղն ու երջանիկը ներկա 26-րդ տարեդարձն է, վասնզի ան կը դադարի ու կհամադրվի այն մյուս երջանիկ թվականին, ՆԵՐՑԱՂԹԻՆ՝ որ իր կարգին եկավ ալ ավելի փառավորելու տարեդարձը և ավելի լուսավորելու այդ տարեդարձին արդեն իսկ լուսավոր նշանակությունը: Անցնող 1945-ին զուգահեյտը 25-րդ տարեդարձը ո՛չ նվազ կարևորության արժանի թվական մը և հանգրվան մը եղավ մեր ազգային-եկեղեցական պատմության համար: Հայաստանի լուսամիտ Հանրապետության ավագանին, քալելով մեր ազգի անցյալ և նորագույն պատմության ուղիղ և անդական ճանապարհին, հարգանք և իրատես ոգիով ընդունեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնա ծրագիրը՝ վաղմեկու ազգային-եկեղեցական համագումար և կատարելու հարապետական ընտրություն: Հայաստան սիրով բացավ փր դուռները արտասահմանի բոլոր պատգամավորներուն: Ես չեմ հիշեր, մեր եկեղեցական պատմության մեջ, ատկե ավելի փառաշուք: ավելի անմահ թվական մը՝ քան 1945-ի ակտը ու կատարված բոլոր հանդեսներուն մանրամասնություններն իսկ ամիսներն ի վեր խոստուն շարժանկարներով կցուցադրվին Սփյուռքի բոլոր գաղութներուն մեջ:

Ներգաղթը գործադրության դրվելիք հսկա ծրագիր մըն էր ու Սփյուռքին Հայաստան

հասնող եկեղեցական ու աշխարհիկ պատգամավորներ անձամբ տեսնելն հետո մեր նվիրական Հայրենիքի անհավատալի, աննրման վերելքը, յուրաքանչյուրը հազիվ իր շերտանը վերադարձած, սկսավ հարազատ թարգմանը ըլլալ հոն իր բոլոր տեսածներուն, խոսքով, գրով ու գրքուկներով, ու առանց ռիսքի վաճառականներ ըլլալու, մեծապես սատարեց ժողովրդի միտքը պատրաստելու դեպի ՆԵՐՑԱՂԹԻ՝ ներկա Հայաստան պետականաբայուն մըն է, իր բոլոր օրկաններով, վարչական, տնտեսական, կրթական, ելմարտական, ճարտարարուեստական, երկրագործական ու մանավանդ զինվորական: Հայրենական ահավոր պատերազմը տասնյակ հազարավոր դժներ տարավ մեզմե, ավա՞ղ, բայց կովող, հաղթական ու պատերազմը շահող զոհեր, որոնք մեռան պաշտպանելու համար տարիներն ի վեր հոն նշմարված բոլոր աշխարհի հիացումին առարկան հանդիսացած ստեղծագործ աշխատանքը:

Ահա թե փնշո՛ւ բացառիկ կարևորություն ու անկեղծ համատարած հիացումի առարկա կդառնա ներկա 26-րդ տարեդարձը, նոր հույսերու և նորագույն տեսիլքներու բոցավառ արշալույսներով: Մեր ծառայատեր ոգին միայն, մեր անկեղծ նվիրումը միայն, մեր սերը միայն պիտի գործեն հավերժացնելու հազարավոր լուսալի տարեդարձներ:

Հազա՛ր բարե, հազար արև՛ նման բոլոր տարեդարձներուն:

(Ժողովուրդ թիվ 657-658, 1946 թ.)

Է Զ Մ Ի Ա Մ Ի Ն

(Պատմական երաժշտական բատերգություն)

Ամերիկահայոց Առաջնորդարանի կողմն հոկտեմբերը հայ մշակույթի ամիս հռչակված է ու այս առթիվ Առաջնորդարանի Օժանդակ Միությունը կազմակերպած է բեմադրել «Էջմիածին» պատմական-երաժշտական թատերգությունը:

«Էջմիածին» ողբերգությունը հեղինակությունն է լոնտոնաբնակ ծանոթ նկարիչ, բանաստեղծ, գրադիտուհի Զապել Պոյանյանի:

Ծագումով հայ-անգլուհի, ծնած է հարբերդ և իր ուսումը ստացած Անգլիա: Անմեծ ծառայություն մատուցած է հայ գրականության, թարգմանելով հայ բանաստեղծության գոհարները անգլերենի, շքեղ հավաքածուի մը մեջ, և դարդարած է զայն իր դեղեցիկ սիրուն նկարներով, որ կկոչվի Առասպելներ և բանաստեղծություններ: «Էջմիածին» գեղեցիկ ոճով և լեզվով գրված թատերգությունը մըն է անգլերեն լեզվով, հայոց համար պատմական նշանակություն ունեցող դրվագ մը, որ կպատկերացնեն Գրիգոր Լուսավորչի ձեռքով հայոց քրիստոնեությունը ընդունելը, իբր պետական կրոնք, Տրդատ թագավորի օրով:

Սույն թատերգության երաժշտությունը գրած է ծանոթ և սիրված երգահան Ալան Հովհաննես, որու երաժշտագրած ընտիր կտորները, հայ գաղութը վվայելն մեծ հաճությամբ և հետաքրքրությամբ: Ա. Հովհաննես կրկին իր ստեղծագործ տաղանդին չըքնաղ կարողությունները, հոգեզմայլ շարականներու երանգներով ի հայտ կբերեն, մեծ փառ մը ավելցնելով խաղին վրա:

Բեմադրությունը ստանձնած է տաղանդավոր բեմադիր օր. Սիրին Գասպյան, շարժապատկերի և թատերական վարիչ, վկայալ Հարավային Կալիֆորնիո համալսարանին, որ Հոլիվուդի մեջ հռչակ կվայելն իբր բեմավար, և որ քաղաքս կգտնվի այս միջոցին հռչակավոր բեմավար Պեն Հեկտի «Սուան Սոնկ»-ի բեմադրության պաշտոնով: Երաժշտության ղեկավարն է օր. Ֆրոուան Մարտիրոսյան, վկայալ Նյու-Յորք համալսարանի երաժշտության ճյուղին, որ միևնույն ատեն ծանոթ և կարող ղեկավար մըն է երգիչ խումբերու:

«Էջմիածին» թատերգությունը իր նյութով և երաժշտությամբ, հայ տաղանդի փայլուն ստեղծագործությունն է և ապահովաբար ամեն հայու սրտին մոտիկ, հոգեկան մեծ վայելք մը տալ կխոստանա:



Զ. Պոյանյան

Խաղը կբաղկանա երեք արարեն: Պատմական այս դեպքը տեղի կունենա Դ դարում Դիոկղեսիանոսի օրով, երբ քրիստոնյաներու դեմ հալածանք կար, և Հայաստանն ալ դեռ կռապաշտ էր:

Ա. արար.—Հռովմի մեջ, Տրդատ՝ որ կայսեր մոտ քսան տարի ապաստանած է, հրաժեշտ կառնն անկն Հայաստան մեկնելու: Պալատին մեջ շքեղ ընդունելություն կա. երաժշտություն, պար, կերուխում: Խոսակցության ընթացքին Դիոկղեսիանոս կհայտնեն թե կսիրեն վանքի կույսերին Հոլիվուդին, ու խիստ նեղսրտած է անոր մերժումն:


Բ. արար.—Տրդատ Հայաստան վերադարձած է և իր գահակալության առթիվ Անահիտ աստվածուհվուն պաշտամունք կատարել կհրամայի: Գրիգոր Լուսավորիչ կմերժեն հպատակիլ, որուն հետևանքով կբանտարկվի խոր վիրապի մեջ 15 տարի: Այս շրջանին Հայաստանի մեջ քրիստոնեությունը կտարածվի և գաղտնի պաշտամունք կկատարվի:

Այս միջոցին Հռիփսիմեն և Գայիանեն կույսերը իրենց հետևորդներով Հոռովմեն կփախչին և Հայաստան կապաստանին: Դիոկղետիանոս լուր կղրկե Տրդատին վերադարձնելու համար Հռիփսիմեն: Այս անգամ Տրդատ ինքը կսիրահարի անոր:

Գ. արար.—Տրդատ ևս կմերժվի Հռիփսիմենն: Տրդատ մոլեգնած կապանեն Հռիփսիմեն և ինքն ալ կխենթանա: Գրիգոր Լուսավորիչ խոսքովիդուխտի միջոցաւ կփրկե Տրդատը, որը կընդունի քրիստոնեութիւնը: Խաղին գլխավոր դերերը ստանձնած են եղվարդ Արքայան, պարիթոն, Դիոկղետիանոսի դերով—ծանոթ է դադութիս հավաքութենէրուն իր գեղեցիկ երգերով:

Լեոն Չարլս (թեւոր), կարող դերասան Հոփուտեն, ստանձնած է Տրդատին դերը: Բեմական հատկութիւններով օժտւած է և ունի գոռ ձայն և պարթև հասակ:

Արուսյակ Տեյիւմենեյան (Րոզ Միրճոն) Մեթրոքալիթըն Օրեբայեն, դրամատիք սորանո, տաղանդավոր և օժտւած հայուհի մը, որ մեծ ապագա կիսոստանա շնորհիւ իր գե-



Տ. Տիմեյան

նին հարմար կրոնաշունչ երգեր նոթարած է:

Արաֆա Մելիքեյան, ծանոթ սիրված հայ երգչուհի, որ պալատական տիկնոջ դերը ստանձնած է, իր հարուստ սորբանի ձայնով և շնորհալի երևույթով:

Արաֆա Գալայեյան, սիրված երգչուհի, բոնթրալթո, Գայիանեի դերին մեջ—օժտւած է թատերական կարողութիւններով:


Սիլվիա Թանմիզյան, Պոսթընի թատերական դպրոցին շրջանավարտ, Տրդատի քրոջ՝ խոսքովիդուխտի դերը կկատարե: Տպավորիչ է իր ազնվական երևույթով, շարժումներով և զգայուն դերակատարութեամբ:

Էտվին Ալպեյան, բարիթոն, պալատական թիկնապահի դերով: Ծանոթ է. որպէս լավ երգիչ և վարժ դերակատար:

Ալեքսանդր Անտոնյան, բարիթոն, ուստիոյի և օրեբայի ծանոթ երգիչ, անտեսանելի Քրիստոսի ձայնը կներկայացնե:

Խաղին կմասնակցին բազմաթիւ պալատականներ, թիկնապահներ, կուսանոցի կույսեր, Պրեշտակներ, պարուհիներ և ժողովուրդ: Ծանոթ արվեստագետներե բաղկացած օրգեստրա մը կմասնակցի երաժշտութեան:

Բեմի հարդարումը ստանձնած է ծանոթ



Ա. Տեյիւմենեյան

ղեցիկ ձայնին և թատերական կարողութիւններուն:

Տիրան Տիմեյան, սիրված հայ թեւորը ստանձնած է Գրիգոր Լուսավորչի դերը: Իր զգայուն ձայնին ողբերգական հատկութիւնները բնորոշ դուրսութեամբ կցոլացնեն Լուսավորիչի երգած հոգեշունչ երգերը: Աւան Հովհաննէս մասնավորաբար Տիմեյանի ձայ-

արվեստագետ Տիգրան Տիեկիյան:

«Էջմիածին» թատրերգությունը գեղարվեստական տեսակետով կոստումնա հաջող մշակութային ձեռնարկ մը ըլլալ շնորհիվ իր երաժշտական ու թատերական ղեկավար

ներուն և մասնակցող տաղանդավոր արվեստագետներուն: Ամեն կերպով հանձնարարելի է Մեծագույն Նյու-Յորքի և մտավոր արվարձաններու հայ հասարակության:

ՎԵՐԺԻՆ ԷՔՍԵՐՉՅԱՆ
(«Էրաբեր», թիվ 42, 1946 թ.)

„ԼՈՒՍԱԻՈՐԶԻ ԿԱՆՅԵՂ“

1946-ի Ազգային Երեսփոխանական Ժողովի գումարման առթիվ, Ութըրթաունի Ս. Հակոբ եկեղեցւոյ հոգաբարձությունը լույս ընծայած է «Լուսաւորչի կանթեղ»-ը խորագրով գեղեցիկ ու պատկերազարդ հատոր մը, հարյուր վաթսուն էջ, որ հայտնապես ծրագրված է ամերիկահայ եկեղեցիներու պատկերավոր պատմությունը հատորի մը տակ հավաքելու մտածումով:

Այս սիրուն հատորը իր էջերուն մեջ կը պարփակէ Միացյալ Նահանգներու Հայաստանյայց Առաքելական եկեղեցւոյ ման պատկերը: Առաքելական բոլոր հայ եկեղեցիներու, եկեղեցականներու շուրջ համախմբված դպրաց դասերու, տիկնանց, օրհորդաց և երիտասարդաց կազմակերպություններու և եկեղեցիներու երեսփոխաններու նկարները խնամքով փնտրված ու դասավորված են, այդպիսով ամերիկահայ կյանքին ապագա պատմության կարևոր վախճանները մը հանդիսանալով:

Ամերիկահայ Հայ Առաքելական համայնքի եկեղեցականներին զատ, հատորին մեջ տրված են նաև Ամենայն Հայոց Վեհափառ Գևորգ Զ Կաթողիկոսի և Կիլիկիոյ Վեհափառ Գարեգին Ա-ի լուսանկարները, ինչպես նաև լուսանկարները Երուսաղեմի Տ. Կյուրեղ սլատրիարքին և Պոլսո պատրիարքական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյանի:

Ատոնցմէ դուրս կան նաև կարգ մը խմբանկարներ հին ու նոր մեր պատմական եկեղեցականներու, ուր կտեսնվին Թորգոմ արքեպ. Գուշակյան, Սահակ և Բաբքեն կաթողիկոսներ, Շահն արքեպիսկոպոս և այլն:

Կարելի էր անշուշտ, ամերիկահայ ողբացալ առաջնորդ Դուրյան արքեպիսկոպոսի նկարն ալ ղեկողել այս հատորին մեջ, երբ տրված էին նկարները մեր կարգ մը այն եկեղեցականներուն, որ աղերս չունին այս գաղութին եկեղեցական կյանքին հետ:

Կթլի թե, ժամանակի սղութունը, որուն միջոցին լույս տեսավ այս հատորը, կարգ մը նման վրիպումները անխուսափելի պիտի ընեն: Համենայն դեպս կատարված աշխատանքը և Ութըրթաունի հոգաբարձության մտածումը ամեն զնահատուկներն վեր է:

տանքը և Ութըրթաունի հոգաբարձության մտածումը ամեն զնահատուկներն վեր է:

Ինչպես հատորին սկիզբը դրված «Թանի մը խօսք»-ն կիմանանք, այս հատորին մեջ լայն տեղ տրված է, գովելի մտածումով, «Մեր Մայր Հայրենիքի» Խորհրդային Հայաստանի քսանհինգ տարվան հերոսական վերելքին» շքեղ երևույթին:

Սովետական Հայաստանի բանաստեղծություններու լայն տեղ տրված է հատորին մեջ:

Լայն տեղ տրված է նաև Սովետական Հայաստանի մասին հետաքրքրական տեղեկություններու: Հատորին մեջ տրված են նաև Հայաստանի պետական, մշակութային, պատմական ու դիտական մարզերու մեջ ուշագրավ հանդիսացած մարդոց նկարները: Հայկական հին ճարտարապետական հրաշալիքներու, այժմ ավերակ, ավա՞ղ, արժանի բաժին մը հատկացված է հատորին մեջ:

Հայերեն բնագրով և անգլերեն թարգմանությունով ամբողջությամբ տրված է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Գևորգ Զ-ին անդրանիկ կոնդակը:

Մասնավոր խնամքով զատված են նաև մեր հին բանաստեղծներին կրոնաշունչ և հայրենաշունչ կարգ մը սիրուն բանաստեղծություններ ալ, որ հատորին ընթերցման մասնավոր հրապույր մը կուտան:

Այստեղ քի դեպ է հիշել թե հատորը խմբագրողն ու դասավորողը եղած է Տք. Հովհաննես Մովսիկյան, որ աղապես, քի բազմազգալ վիճակին մեջ, կրցած է այս պատմաբար գործը, առանձինն ու նրկու շարժվա կարճ ժամանակին մեջ զլուխ հանել:

Մարդ արդարև կհիանա այս փրպան աշխատանք ու հանրային կյանքին նվիրված մտավորականին ունեցած եռանդին և գործը գլուխ հանելու կարողության վրա:

Այս տողերը գրողին կարծիքով, գրական տեղեցիկ մալելք առթող աղվոր հատոր մըն է Տք. Մովսիկյանի խմբագրությամբ լույս տեսած այս զնահատուկի գործը:

Ս. Հ. Թ.

(«Պայլա» թիվ 1507, 1946 թ.)

„ԱՄԻՍ Մ՝ Ի ՀԱՅԱՍՏԱՆ“

Ստորև տալիս ենք Սիոն եպիսկոպոս Մանուկյանի «Ամիս մի Հայաստան» գրքի գրախոսականը, արտատպելով այն «Պայքար» թերթից:

Անցյալ տարի, երբ մեր հոգևորական ու աշխարհական պատգամավորները վերադարձան խորհրդային Հայաստանին, տիրու-թի մամուլը սիրով հյուրընկալեց անոնց բոլոր թղթակցությունները: Ու մենք, ընթերցողներս, այնքան հրճվեցանք տրված տեղեկություններին, որ փորձեցանք անոնց հավաքածոն կազմել: Անոնք որ այսպիսի ծրագիր մը իրականացուցին, այժմ ունին լայնածավալ «Հատոր»-ներ, մեծ բազմանկյունավոր ու «թափթփված», քանի որ միայն թերթին ձևով երևցածները կրնան համաշափ հատորի մը մեջ ամփոփվիլ:

Ընթերցողներուն մեծ մասը, ապահովաբար հանդեսը կամ թերթը ոչնչացուց: Սիոն եպիսկոպոս, իր գեղեցիկ հատորով կուգա մեզ պակաս մը լրացնելու, նվիրելով ազգասեր հայորդիին այնպիսի էջեր, որ մերթ համառոտակի և մերթ մանրամասնորեն նշած են խորհրդային Հայաստանի պանծալի վերելքը վերջին քառորդ դարու ընթացքին: Պ. Հ. Շալյան, տպագրիչը կարողացած է սպիտակ և ողորկ թուղթ հայթայթել և իր արվեստին նորոգությունները ի գործ դնել ակնահաճո դարձնելու սրբազանին այս երկրորդ դաստիարակիչ հատորը:

Ամերիկահայ ներհում գրողատ Հ. Ավագյան անաչառորեն հյուսած է ներբողը «բրեքին» իր երեք էջերն բաղկացյալ «Հառաջաբան»-ով: «Սիոն եպիսկոպոս, որ լավ ուսած է շափի կանոնը, ճամբորդութիւն իր նկարագրութիւններուն մեջ կհիշէ միայն կարևորը, գլխավորը, զանց ընելով մանրամասնականն ու երկրորդականը. այդ պատճառով Կիսկ անձանձութիւն ու հետաքրքրութիւն կկարդացվին իր այդ էջերը, որոնք նվազ ճարտար գրչի մը ներքև կրնային տաղտկալի դառնալ»: Պ. Ավագյանի այս և նման տողերը կարգալի վերջ, ընթերցողը կնախապատրաստվի մտավոր ճամբորդութիւն մը դեպի հայրենիք, ինչպես և ըմբռնելու այն վայելքը, որուն պատրանքն անգամ պանդուխտ հայուն կպարգեն վերադրելու հին օրերը, տեսնելու իրականությունը մոտիկ անցյալի և ներկա նվաճումներուն, գուշակելու անարգել վերելքը ապագային:



Հատորը պատկերազարդ է. առաջին էջին վրա կերևի պանծալի Արարատը. սիրտը հայ ազգին, որ դեռ գերի է. սակայն իր

սպիտակափառ գագաթը, մղոններով տարածութիւն վրա, վեհորեն կհսկէ կատարված բարեփոխումներուն, հայորդիին նեցուկն է ան դարերն ի վեր ու ազատութեան թե գերութեան մեջ մեր աչքերը հառած են անոր



Սիոն եպիսկոպոս

սպիտակ գագաթին, որովհետև ան կժպտի կամ կարտաւի մեղի հետ. այլ խոսքով տեսակ մը հոգեկան հաղորդակցութիւն կա մեր և անոր միջև.

«Արարատի ծեր գմբեթից
Դար է եկել վարկյանի պես,
Ու անցել:

Մանախունայ սերունդների
Աչքն է դիպել լույս գագաթին,
Ու անցել:
Հերթը մի պահ բռն է հիմա
Դու էլ նայիր սեփ նակատին,
Ու անցիր»:

Հետզհետե մեր երևակայութեան մեջ մարմին կանեն Ս. Էջմիածինը, Ս. Հռիփսիմի գանգակատունը, Օջականի եկեղեցին, իշխան Վահան Ամատունիի հուշարձանը, Երևանի կառավարական պալատը, սինեմայի շենքը, Ստեփանակյան թատրոնը, խորհրդային Հայաստանի վարչական բաժանումները նշող քարտեզը և այլն: Նկեղեցական ու աշխար-

հական անձնավորություններու նկարներ ալ ընթերցողը ավելի կ'ամոտեցնեն. հատորին. անոնց մեջ նշմարելի են Վեհափառ Տ. Գեվորգ Զ. կաթողիկոս Ամենայն Հայոց, Գաբգին կաթողիկոս, համագումարի եկեղեցական դասը և բոլոր մասնակցողները. վարպետը՝ Ավետիք Իսահակյան, բազմաթիվ գրողներ, հասարակ ժողովուրդը, ինչպես և Երուսաղեմի, Կահիրեի և այլ կեդրոններու հոգևորական և աշխարհական անձնավորություններ:



Հեղինակին հետ ընթերցողը կսկսի «Ճամբորդել» Նյու-Յորքին: Համառոտիվ նկարագրված են նիստերը և օրակարգի հարցերուն նկատառումը, հայոց հայրապետի ընտրությունը և օծումը, պատգամավորներուն ի պատիվ սարքված ճաշկերույթը, տաան եպիսկոպոսներու օծումը, Սեանա կղզին ևն: Պետական համալսարանը իր ութը բաժանումներով մասնավոր հոգածությամբ ներկայացված է: Ընթերցողը հրճվանքով կ'հետևի այս հաստատության աստիճանական սաղմնավորման 1920-ին ի վեր: Արդարև հեղինակին քաղած տեղեկությունները դաստիարակիչ են և կ'հպարտեցնեն մեզ մշակութային հանդեպ մեր տաժած հոգածությանը համար: Գրադարանին 150,000 հատորները կրնան կրկնապատկվի, երբ սփյուռքի հայության գրասեր անձերը, հետ մահու կամ նույնիսկ կենդանության, համալսարանին ուղարկեն իրենց հավաքածոները, հետևելով արժանահիշատակ Ասդիկ Տեմիճյանի օրինակին:

Միոն եպիսկոպոսի զգայուն գրիչը ընթերցողը կ'առաջնորդի նաև Օշական. կիջնենք խորանին տակ՝ հայ տառերուն հեղինակին դամբարանը, ու կ'համբուրենք մեծ սուրբին, Ս. Մեսրոպ Մաշտոցի շիրիմը՝ երկյուղածությամբ և հուզումով: Հեղինակը մանրամասնորեն կ'նկարագրի արդի Օշական ավանը, մոտակա Աշտարակ գյուղը — Նեպոս Ե. Աշտարակեցիի ծննդավայրը:

Մեծ է Միոն եպիսկոպոսի խանդավառությունը, երբ ան կ'նկարագրի Երևանը իր արվարձաններով ու նորաշեն ավաններով: Սերբազանը տպավորված է Երևանի եռ ու զեռով, զվարթ բնակչության ստեղծած մթնոլորտով, մանկամսուրով, ճարտարարվեստական և մշակութային կեդրոններով ևն: Շենքերը ընդհանրապես շինված ըլլալով Արտիկի տուֆով, քաղաքը հագած է տեսակ մը «վարդագույն պատմուճան»: Արդարև, իր արդիականությամբ, Երևան կրնա մրցիլ քաղաքակիրթ աշխարհի որևէ ուստանի հետ:

«...Երևան Հայաստանի սիրտն է, իմացական ու տնտեսական կեդրոնը, որուն հետ հաղորդակցության մեջ են Հայաստանի բոլոր քաղաքներն ու ավանները և որմե կ'ստանան իրենց ղեկավարությունը»:

Խորհրդային Հայաստանի բարեխնամ կառավարությունը, ուրիշ արվեստներու կարգին, իր հոգածության առարկան ըրած է խաղողը և երաժշտությունը: Թվագրական կարգով հեղինակը կ'նշի բոլոր այն ներկայացումներն ու նվագահանդեսները, որոնց ներկա եղած են պատգամավորները: Ընթերցողը կ'ծանոթանա նաև մեր գլխավոր դերասաններու և երաժշտագետներու անուններուն:

Սակայն Միոն եպիսկոպոսի խանդավառությունը զազաթնակետին կ'հասնի, երբ ան կ'նկարագրի Ս. Էջմիածինը, ճշմարիտ եկեղեցականի մը տգլով: «Անունը միայն բավական է թրթռացնելու ամեն հարազատ հայու սիրտն ու հոգին. դարերով Ս. Էջմիածինը եղած է հայու հավատքին լուսարձակ փարոսը, հոգեվոր լույսի ջահը, որ անշեջ վառեր է, իր լույսը սփռելով տառապու ու տարագիր հայության վրա»: Անտարակույս հեղինակը ապրեցավ հոգեկան գերագույն վարկյաններ, երբ ինքն ալ մյուս տասը ծալրագույն վարդապետներու կարգին մատուց իր անդրանիկ եպիսկոպոսական պատարագը, իր օծումեն վերջ: «Երկու օր վերջ, ես ալ բախտը վրանենսյի մատուցանելու եպիսկոպոսական անդրանիկ պատարագս, Միածին Որդվույն իջման Ս. Սեդանին վրա: Հոգեկան անպատմելի հրճվանքով զեղուն էր հոգիս, սիրտս հուզված էր ու երջանկությամբ կ'ընթերցար»:

Ընթերցողը որքան պիտի ուզեր այցելել Գառնիի և Դեղարդի վանքը ուխտավորներուն հետ: Առաջնորդողն է Գառնին կաթողիկոս Կիլիկիո, որ իր «Պոռեանք և Խաղբակեանք» հատորներով նկարագրած է այս երկու պատմական ավաններու հնությունները:

Ո՞վ պիտի չուզեր տեսնել Գեղարդա վանքը՝ ժայռի մեջ փորված իր միակտուր հինգ եկեղեցիներով: Գառնին կաթողիկոս, իր հառաջացյալ տարիքը անտեսելով, սեպ ժայռեկեն ուխտավորները կ'առաջնորդի դեպի Մխիթար Այրվանցիի ճգնարանը: Երանի այս ուխտավորներուն, որոնք առիթը ունեցան գեթ տեսնելու մեր պատմական վայրերն մի քանին:

Հայաստանի հայությունը կ'հետաքրքրվի արտասահմանի հայ կյանքով: Հեղինակն իր վերջին տեղագրությամբ կ'հիշե թե որպիսի լավատեսությամբ մեր հայրենակիցները կ'ընահատեն հայ դատի հաջողության համար

մեր թափած ջանքերը ու որքան կբաղձան Կարսի, Արդահանի կցումը հորհրդային Հայաստանի:

Հեղինակը հատորին վերջավորությանը կցած է ցանկը Հայաստանի բանաստեղծներին, վիպասաններին, բանասերներին, գիտնականներին, գրագիտուհիներին, դերասանուհիներին շատերուն, ինչպես և ծաղկեփունջ մը Հայաստանի քերթողներին, քաղված իրենց գրական գործերեն:

Ա. ՊԱՏՄԱԳՐՅԱՆ ՊԱՆԵՍՏԻՆԻ ՄԵԶ

Երաժշտագետ-երգահան Ա. Պատմագրյան գեղեցիկ մտածումը ունեցած էր ընդառաջ երթալու արտահայտված փափաքին—Թեհրան վերադառնալի առաջ կրկին այցելել Պաղեստին և տալ համերգ-դասախոսություններու շարք մը:

Տարի մը առաջ էր, որ տեր և տիկին Պատմագրյանները Երուսաղեմ այցելեցին և Հայաստանի մանկատուններուն քի նպաստ մեծ համերգ մը տվին, որը արտակարգորեն փայլուն անցավ և արժանացավ նաև հրեա երաժշտագետներու փանդավառ գնահատության: Այդ համերգին գոյացած 400 պաղեստինյան տղիի շափ գումարը, վերջերս թերթերու մեջ հաճույքով կարդացինք, որ դրված է Պաղեստինահայ ներգաղթի Կոմիտեի տրամադրության տակ:

Մեր մեծ արվեստագետներու ներկայությունը Երուսաղեմի հայ երիտասարդության կողմե ամենաջերմ ընդունելության հանդիպեց: Արդեն իսկ իրենց ժամանումն քանի մը օր առաջ վերջ տրված թեյասեղանի մը ընթացքին ներկա գտնվող 80-ի շափ երկսեռ երիտասարդությունը որոշում կայացուց նոր համերգ մը կազմակերպելու: Ոգևորությունը ծայր տվավ և կարճ ժամանակվա ընթացքին համերգը պատրաստվեցավ, որը տեղի ունեցավ Ուայնմսի հանդիսասրահին մեջ հոկտ. 26-ին:

Մեր արվեստագետներու անվան հմայքը, ինչպես նաև անցյալ տարվան համերգին ձգած անջնջելի տպավորումը, քաշած բերած էին Երուսաղեմի գրեթե ամբողջ այս բազմությունը, որ գիտե միշտ գնահատել ազգային արժեքները: Լեցուն և խանդավառ սրահի առջև էր, որ տեղի ունեցավ համերգը:

Հայտագրին ճոխությունը, պեսպիսությունը և ռազմաթիվ հայաստանյան երգերու նորությունը ստեղծեցին այն խանդավառությունը, որ միմիայն Պատմագրյան համերգները չէին ստեղծել:

Հաջորդ օրը, հոկտ. 27-ին Ուայնմսի-ի

Սիոն եպիսկոպոս իր վերադարձին այցելած է նաև Թեհրան, Դամասկոս, Հալեպ, Պելլոս, Երուսաղեմ, Եգիպտոս: Խմբանկարներ առնված այս վայրերեն ընթերցողը ավելի կմոտեցնեն արտասահմանի հայության:

Ավելորդ է ըսել թե որքան մեծ ծառայություն մը մատուցած է մեզ Սիոն եպիսկոպոս իր այս հատորով:

ԱՍՏՂԻԿ ՍՈՒՐՑԱՆ

Նախածնունդամբ իր սրահին մեջ միջազգային մեծ համերգ մը կազմակերպված էր, որին կմասնակցեին օտարազգի մեներգողներ և երգչախումբեր: Մեր հյուր արվեստագետներու ներկայությունն օգտվելով հայ գաղութի ալ հրավիրվեցավ մասնակցելու այդ համերգին: Հաճույքով նկատեցինք այն անակնկալը, որ եղավ օտարներու համար այդքան բարձրորակ երգչուհու ներկայությունը, ինչպես նաև մարզված երգչախումբի երգեցողությունը: Հիշենք նաև այն, որ հայտագիրը կազմված էր Լեռնական դասականներ և մեր խումբը երգեց կտորներ Հենտելին, Բերլիոզին և Սեզար Ֆրանքին, խորապես տպավորելով ներկաները և մեծապես բարձրացնելով մեր ազգային վարկը հայտ օտարներու, որոնք թույն և անվերջանալի ծափերով վարձատրեցին թե երգչուհին և թե ղեկավարն ու իր խումբը:

Նոյեմբերի 3-ին նույն խումբը հատուկ օթուպուսներով մեկնեց Ցաֆֆա, որտեղ կազմակերպված էր մեծ համերգ մը քի նպաստ հայ բուժարանի: Համերգը կհովանավորեր տիկ. Մաթկեյ, կառավարչին տիկինը: Սինեմա նախդի տերը ձրիաբար տրամադրած էր իր սինեման, որը Ցաֆֆայի ամենանոր և շքեղ սրահն է:

Հայ գաղութը գրեթե ամբողջությամբ ներկա էր: Արդեն անցյալ տարվան համերգին գտած հաջողությունը մեծապես դուրացուցած էր կազմակերպիչներուն գործը և քանի մը օրվան ընթացքին ամբողջությամբ տոմսերը սպառած էին արդեն: Մեծ թվով օտար հրավիրյալներ կային, որոնց համար միանգամայն նորություն էր նմանօրինակ համերգ մը Ցաֆֆայի մեջ:

Գալով հայ գաղութին, ան խելահեղորեն խանդավառվեց հայտագրին առաջին իսկ համարեն, երբ հսկա երգչախումբը, առաջին անգամ ըլլալով Ցաֆֆայի մեջ, խորիստ և վեհորեն թնդացուց Սովետ Հայաստանի Պետական Հիմնը:

Ամենամեծ հաճույքով ներկաները նկատեցին, որ Պ. Պատմագրյան իր հայտագիրը լեցուցած էր մեծ մասամբ հայաստանյան նոր կենցաղի, ռազմի և ժողովրդական երգերով, որ պատճառ դարձավ, որ սրահը թնդար որոտընդոստ և խելահեղ ծափերու տարափին տակ, Համերգը ոչ միայն մեծապես հաջողեց նյութական հաստիքի տեսակետ, ոչ միայն եղավ ազգային բրորականդի հիմնարկի արտահայտություն մը, այլ մանավանդ հայաստանյան հոյակապ հանդես մը, որ հայրենադարձի այս խանդավառ օրերուն խորապես տպավորեց ներկաները։ Նույն օրը տեղ և տիկին Պատմագրյանները ճաշի հրավիրած էին իրենց երգչախումբը Հայոց Վարժարանի սրահին մեջ։ Ճաշկերույթն անցավ զվարթ և շենշող մթնոլորտի մը մեջ, ամենքը խանդավառված էին իրենց ունեցած հաջողության համար։ Երեկոյան երգչախումբը միշտ ուրախ ու խանդավառ օթոպլուսներով վերադարձավ Երեսուղեմ։

Նոյեմբերի 3-ին տիկին Պատմագրյան հրավիրված էր երգելու պետական ռատիոն։ Հայտագիրը կազմված էր իր նախասիրած հին դասական հեղինակներե—Կլյուք, Լյուկի, Հենտել և Կոլն։ Շնորհիվ այն հանգամանքի, որ ժամը նշանակված էր անգլիական հայտագրի ատեն, հազարավոր ունկնդիրներ լրանեցին հայ տաղանդավոր երգչուհու այնքան համբավյալ ձայնը։

Քանի մը օր վերջ, նոյեմբերի 9-ին, Մարաշի Հայրենակցական Միության նախաձեռնությամբ իր ակումբի մեջ Ա. Պատմագրյան տվավ դասախոսություն մը հայ երաժշտության անցյալի և ներկայի մասին։ Հետաքրքիրություններու խուռն բազմություն մը լեցված էր սրահը։ Պ. Պատմագրյան ոչ մի-

այն մեծ վարպետ մըն է երգի, այլ նաև խոսքի։ Ավելի քան մեկ ժամ տևող իր դասախոսության՝ ունկնդիրները պահեց էլեկտրականացած դրությունը։ Դասախոսության վերջավորության տիկին Պատմագրյան օրինակներով համեմեց դասախոսությունը, մեծապես հաճույք պատճառներով ներկա բազմության։

Ա. Պատմագրյանի վերջին և փայլուն ելույթը տեղի ունեցավ նոյեմբերի 10-ին, ռատիոն տված իր համերգով։ Պաղեստինի արաբական բաժնի վարչությունը ցանկություն հայտնեց հայ երգերի բաղկացած համերգ մը տալ, որի համար դիմեց մեր ղեկավարին։ Պաղեստինի ռատիոկայանն ուրիշ անգամներ հայկական համերգներ տրվել են, բայց միշտ եվրոպական մասի կայանն։ Այս առաջին անգամն էր, որ հայ արվեստը կենդանացվեց արաբական աշխարհին։ Խոսնակը երկարորեն և հանգամանորեն ներկայացուց երգչուհին, ղեկավարը, երգչախումբը և երգվող կտորները։ Բոլորը հայ երգեր։

Գտած ընդունելության լավագույն ապացույցն այն է, որ ռատիոյի վարչությունը արտոնություն խնդրեց Պ. Պատմագրյանի համերգն ամբողջությամբ, երգվելու իսկ ժամանակ, սկսվաժողովներու վերածել և երբեմն նվագել, որպես հայկական հայտագիր։

Ահա համառոտ գծերով այն բեղուն գործունեությունը, որ մեր տաղանդավոր արվեստագետները ունեցան քանի մը շաբթվան կարճ ընակության ընթացքին մեր մեջ, մեծապես խանդավառելով հայրենաբարձ զանգվածները հայաստանյան և եվրոպական հանճարներու արվեստով։

ՔՉԹԱԿԻՑ

(«Եփրատ» քիվ, 2790 1946 թ.)

ԳՆԱՀԱՏԵԼԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տեղեկանում ենք, որ Եկեղեցական Վարչության երկար տարիների անդամ երեցիոխ պ. Մատթեոս Թովմասյանը Թեհրանի թեմի Առաջնորդ Ռուբեն Կարիսկյանի Դրամբյանի տրամադրության տակ է դրել իր «Ռիթմ» ամսագրին սինեմայի ցուցադրման մեքենան, աթոռները և ամբողջ ինվենտարը, որպեսզի սրբազան հայրը հատկացնե որևէ հասարակական հաստատության կարիքները հոգալու փութաբորժման։

Պ. Մատթեոս Թովմասյանը մեր հասարակական անձնավելի ու անխոնջ գործիչներից է՝ Գացի այդ նա միշտ էլ առատաձեռնորեն մեծակցել է հանրային կարիքների հոգաց-

ման։ Սակայն իր այս նվիրատվությամբ պ. Թովմասյան գերազանցում է իր ամբողջ անցյալին և լավագույն ու գովելի օրինակ է ներկայացնում բոլոր նրանց, որոնք կարող են նման զոհողություններ անելով օգնել հասարակական հիմնարկների բարեկարգման։

Մենք մեծապես գնահատում ենք պ. Մ. Թովմասյանի այս սրտաբուխ և արժեքավոր նվիրատվությունը մաղթելով իրեն կատարյալ հաջողություն։

«ՎԵՐԱՄԵՆՈՒՆ»

(«Վերածնունդ» քիվ 246, 1946 թ.)

ՀԱՐԱՍԻՏ ԵԳԻՊՏԱՀԱՅՈՒ ՄԸ ՀՈՐԻՆԱԾ ՄԵՔԵՆԱՆ

Մեծ զարմանքով և հրճվածքով տեսանք տեղիվույս Հ. և Ն. Գալընյան եղբայրք աշխատանքին մեջ ինքնագործ շատ բարդ մեքենա մը, գործ Պ. Նուպար Գալընյանի: Այդ մեքենան շեռուցիչներու (բրիմուս օժախի) կտուցներ (ֆունիա) կպատրաստե, կարծես մարդկային ուղեղն մը ղեկավարված և եվրոպականի հավասար ճշտությամբ ու կատարելությամբ: Այս մեքենան մեկ շարժումի ընթացքին ապշեցրեցիչ արագությամբ 25 զանազան գործողություններ կլրացնե և ֆունիան դուրս կնետե հղկված, լվացված և մաքրված վիճակի մեջ. իսկ պղնձի փոշիները ուրիշ տեղ մը կկեղծոնացնեն ամենայն բծախնդրությամբ: Մեքենան կրնա արտադրել օրական 7000 ֆունիա:

Պ. Նուպար Գալընյան հինգ ամիս ճգնած է ջիններու համար այս մեքենան: Ան արդեն իսկ ձեռնարկած է շինությանը երեք նույնատիպ մեքենաներու, որոնցմե մեկը պիտի

ցուցադրվի մոտերս տեղի ունենալիք եգիպտական Ճարտարարուեստական ծուցահանդեսին, իբրև եգիպտական արտադրություն, իսկ հատ մըն ալ պիտի ղրկվի Սովետական Հայաստան իբրև նվեր:

Մեր այս հնարամիտ հայրենակիցը, որ համբավյալ ճշտող մեքենագետ մըն է, հայտնեց նույնպես, թե մտադրած է հառաչիկաներգաղթին իր աշխատանքին մեքենական ամբողջ սարքավորումը Սովետական Հայաստան փոխադրել տրամադրելու համար մեր սիրեցյալ հայրենիքին վերելքի նվիրական գործին:

Կշնորհավորենք մեր հայրենակիցը իր այս հաջողության, ինչպես նաև Մայր Հայրենիքի հանդեպ ունեցած սիրուն և խանդաղատանքին համար:

Գ. Ս. «Արև»

(«Նոր օր» թիվ 13, 1946 թ.)

ՄՈՐԻՍ ՍԱՐԳԻՍՈՅ ՄԵՌԱԾ

Հվիցեբրական թերթերը ցավով կգոժեն մահի ժրնեի Գեղարվեստից Վարժարանի ուսուցիչներին հայազգի Մորիս Սարգիստֆի, որ կթողու բազմաթիվ արժեքավոր երկասիրություններ:

Հանգուցյալը զավակն էր համբավավոր «Սարգիստֆ» ժամացույցներու հնարիչ ողբացյալ Սարգիս Սարգիստֆի:

(«Նվիրատ» 2778, 1946 թ.)

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Թեհրանի «Վեբրածնունդ»-ը հետևյալ տեղեկությունները կհրատարակե.— Պ. Հովհաննես Միքայելյան և պ. Ալեքսի Ղուկասյան, որոնք նախկին ուսանողներ են Կարկաթաթի Հայոց Մարդասիրական ճեմարանի, ներկայումս պատասխանատու պաշտոններ են վարում թե եկեղեցիով և թե վարժանների վարիչ մարմինների մեջ: Հայրենիքի բռնած կարոտով ու հավատքով ամեն մարդ լծված է աշխատանքի: Այսօր հեռավոր Հնդկաստանի երկնակամարի տակ ապրում են որպես հայ ու հոգվով միացած են մեր արտասահմանի հարազատ եղբայրներին, ու խորունկ կարոտ ունին Մայր Հայրենիքի հանդեպ:

Այցելեցեք Հնդկաստանի արև կարևոր քաղաքները, ուր հայեր բնակություն են հաստատել, և անկասկած պիտի տեսնեք հայ եկեղեցիների երկնասլաց գմբեթները:

Հայ Մարդասիրական ճեմարանը բաղկա-

ցած է տասը դասարաններից: Թեև նյութապես անկախ է, և կարող է որևէ ժամանակ գործադրել զուտ ազգային ծրագիր, բայց որպեսզի հայ ուսանողը դժուրություն ունենա Պետական Համալսարան մտնելու, կառավարության կրթական ծրագիրն է ընդունած: Դասախոսությունները մեծ մասամբ անգլերեն լեզվով են կատարվում: Բայց դասերից դուրս, ազատ ժամանակ, բոլոր ուսանողները խոսում են արևելահայ գրական մաքուր լեզուն:

Ճեմարանի հայ ուսանողներն են, ուր գաղութին հայկական գույն ու փայլ են տալիս: Ազգային տոները ամեն տարի տոնում են մեծ շուքով: Հնդկահայ գաղութը անսահման տեղ է տալիս ծաղկող Մայր Հայրենիքին հանդեպ:

(«Նոր օր» թիվ 31, 1946 թ.)



ԽՐԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀՈԴՎԱԾՆԵՐ ՅԵ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ
ԵՎ ՅԵ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ
ԽՐԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԵՆ
ՀՍ.ՅԵԱԿԱՆ. ՍՍՈ.
 ԷՋՄԻԱՍԻՆ, „ԷՋՄԻԱՍԻՆ“ ԱՍՏԱԳՐԻ ԽՍՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
 Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин“
 Redaction of the magazine „Etchmiadzin“, Armenia, USSR

Վ Բ Ի Պ Ա Կ

Էջ	Սյուճյակ	Տող	Տպագրված է	Պետք է լինի
7	աջ	10-րդ վերևից	բի	ձերի
35	»	10-րդ ներքևից	Սուրբ Աթոռ	Սուրբ Աթոռ
38	»	13-րդ վերևից	չենքը	չենքը
50	—	3-րդ ներքևից	գոյն	գոյն
53	աջ 10 և 21-րդ	»	Հերբի	Հերբի
57	»	7-րդ	Թաղեա	Թաղեա
62	»	3-րդ	ստանկոբ	ստանկոբ
69	ձախ	11-րդ	առողջապահության	առողջապահության
73	աջ	5-րդ վերևից	Արամ	Արամ
91	»	9-րդ ներքևից	Այրվանեցի	Այրվանեցի

Պատ

ՀԱՍՏԱՆԻ ՄԻՆԻՍՏԵՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՊՐԻՊՐԱՖ. և ՀՐԱՄ. Վարչության և Երևանի մարզպետության միջև